

Պատմութիւն թագայորի պարսից

Գիրք Ա

Ա

Թվին ՌՃՅ [1721], արիլի Է [7] ում, աղվան Մահմուտ շային, որ Ղանդայիարայ խուրուշ արավ ԺԲՌ [12.000] զօրօք՝ հեթեհիլ գալ ի վերայ պարսից: Իշխանքն պարսից յիմացան, վաղվաղակի գալօվ ի տուն թագայորին, ասացին թագայորին թէ՝ «Մահմուտ շային ի վերայ քեզ հեծեաց»: Ասաց թագայորն.«Ոչ հավայտամ այտ բանիդ»: Մեծայմեծք իշխանքն սահմանեցին ԻԹՌ [29.000] զօրք, ղկեցին պատերազմիլ. գնացին հասին: Չօրքն Մահմուտ շայինն ելաւ ընդդէմ իւրեանց պատերազմ: Չօրքն շայիուն յախտվեցավ, փախին, եկին, մտին Ըսպիան եւ ոչ ելան դուրս: ԺԷ [17] օրէն յետ, եկն հասաւ աղվանըն Ըսպիան, Ֆայրայբատ կասեն, նստաւ տեղն Ը [8] ամիս. շայ Յուսէն ոչ դուս եկաւ կռիվ: Ըսպիանայ մէջն ելավ սուղթիւն, հացի լիտրն մինչ ի 2 [6] թուման: Մնաց թագայորն ողորմելի. Էլչի ղրկեց Մահմուտին թէ՝ «Եկ իմ բախտս քեզ տամ»: Մահմուտն յետ ղկեց Էլչին, թէ՝ «Դուն դուս եկ»: Շայ Յուսէնըն թուրն գծեց կուլն գնաց Մահմուտին մօտ: Յեք որ հաս, հրայման ետ զիտրին, ըսպանեցին զշայ Յուսէնըն:

Յրայման ետ զօրքին՝ մտան ի քաղաքն, սուր քաշեց, յամենեքեան մեծայմեծ եւ իջխանք ընթռնեց, շայ Յուսէն ըսպանեցին Ե [5] որդին. մին որդի թաքուցեալ էր եւ փախեալ: Աղվան շայ Մահմուտ նստավ մինչ ի ՌՃՅԸ [1729] (sic) Ըսպիան. շայի մի որդին որ փախել էր՝ գնացել էր Թարվեզ, զօր էր ժողովել ԼԳՌ [33.000], մեծայոր էր շինել Ֆրայվօտուն խանն թէ՝ «Պատերազմ այ աղվանին հետ»: Ֆրայվօտուն խան վեր կացավ, գնալ ի վերայ աղվանին վերայ. մինչ ի Յամատան գալն՝ զօրքն շինեց ԾԵՌ [55.000] զօրք, գնաց Ըսպահնայի վերայ, կռիվ արին: Ֆրայվօտուն խան յախտեվցաւ, զօրք բովանդակ սրօվ անցան, ԵԸ [500] զօրքօվ եկավ Թարվեզ: Շայի որդին մնաց անհօրք: Մարդ ղրկեց Թիլֆու խանին վերէն, թէ՝ «Իմ հայրս աղվան ըսպանեց, թախտն, ես մնացի անտեր, պիտի որ գաս գնաս»: Գիր գրեց շային Թամազին թէ՝ «Ես գալ չեմ, օսմանցին ինձ վերայ պատերազմուն ունի»: Բարգացավ շայ Թայմազն, Յրայման ետ վրացի Մահմուտ Ղուլի խանին, թէ՝ «Գնա՛յ Վախտանք խանն բռնա՛յ բեր»: Պատրաստութիւնն ետես Մահմետ Ղուլի խանն, գնաց ի վերայ Վախտանքի: Վախտանք խանն իւր զօրքօվըն դուս եկավ քաղաքիցն, հաբլայ բարայ գուղն բովայտակ քաղաքայականն դուս եկավ Վախտանք խանին հետ: Ըսպանեցին Մահմետ խանին. չեկավ: Վաղդանկն վեր կացավ իւր հօրքօվն, գնաց Սնըխ-Քորքի կասեն, զՄահմետ խանն գտավ. կռվեցան: Մահմետ խանն յախդեցավ, փախավ, գնաց լազգու մէջն, 2Ռ [6.000] լեզգի ժողովեց, եկն ի վերայ Վախտանք խանին: Վախտանք խանըն յիմացավ որ Մահմետ խանըն գալիս այ: Իւր պատրաստութիւնն տեսավ: Վախտանք խանն ունի մին քաթալիկոզ, որ իւր կաթեղկոսն այ. ծածկայբար քաթալիկօզն խօսքն մեկ այ արել Մահմետ խանին հետ. Վախտանք խանն խաբար չի: Մարդ մի խաբար կու բերէ թէ՝ «Վախտանք խանն ողջ լինի, լեզգին գալիս այ, քաթալիկօզն կասեր թէ խանն ողջ լինի, սուտ այ»: Եւ նա հավատաց քաթալիկոզին:

Թվին ՌՃՅԲ [1723] ում, մայիս 2 քաթալիկօզն գիր էր ղրկել Մահմետ խանին թէ՝ «Գիշերն քաղաքի դուռն բաց գու թողնեմ, լուս չելած՝ մննիս քաղաքի մէջն»: Մին սըհաթին լեզգին մտավ քաղաքի մէջն, կռիվ ելավ քաղաքումն, ոչ կարեցավ գերի անել,

նսկի եւ արծաթ, ակունկ բովանդակ, ոսկեղէն, արծաթեղէն, առավ լեզգին, եւ քաթալիքօզն փախավ լեզգուն հետ, գնաց քաղաքիցն դուրս: Քաթալիքօզն Մահմետ Ղուլի խանին հետ մին դռնով հզօրք ժողովեցին, եկին մին անգամ ի վերայ Թիվլիզու: Վախդանք խանն իւր կինըն եւ իւր որդիքն առավ, դուրս ելավ քաղաքէն. մին որդին, որ է անունըն Շայնայվազ խան, փախավ գնաց Արզրում, Սարու Մուստայֆայ փաշին մօտ: Սարու Մուստայֆայ փաշէն մարդ ղրկեց Ըստայթօլ սուլթան Ահմէթին թէ՝ «Թիվլիզու խանի որդին եկել այ տեղս, ասում այ՝ եկէք ձեզ տամ մեր քաղաքն, որ է Թիվլիզ, իմ հայրըս գնաց Մօսկօվի մէջն, դուք տիրեցէք մեր քաղաքն»: Օսմանցիք պահեցին զՇայնայվազ խանը. հրաման ետ սուլթան Ահմատն՝ Սարու Մուստայֆայ փաշին, մեծաորք շինեց, ղրկեց ի վերայ Թիվլիզու վերայ ԺՌԲ [12.000] հզօրօք, առին Թիվլիզ: Երբ որ պռծան, Շայնայվազ խանին օսմանցին եղեր արկաթի մէջ, պահեց ի մէջ տան, 2 [6] պահայպանք են դրել ի վերայ նորա: Պահայպանի մէկն վրացի է, Մանկայսարի որդի կասէն, որ Ըստայթօլ ալիշ վերիշ կաներ. Սարու Մուստայֆայ փաշի զօրքումն եկել էր, որ բեղի իւղ կու ծախեր, փաշի իջադասիքն բովանդակ կու ճանաչեն, զերայ ընչու՝ հանայպազ փաշէնց տանըն կու լինէր, զերայ Շայնայվազ խանըն չէր լեզու գիտել օսմանցու, այս Մանկասար որդին, որ լեզու գիտեր լավ վրայցեվար: Փաշէն ասաց. «Դայ գնայ մօտն հաց տանի, հետն խօսայ, որ լեզու գիտայ»: Այս մարդս հանայպազ հաց կերայկուր կը տաներ: Մէկ օր մը իւրեանց խորհուրդն մէկ են արել, գիշերի կեսին փախել. ճալայ կասէն, վեր կառուն օծի մէջօվ փախավ գնաց ի մէջ Մօսկօվի: Օսմանցին հեծել ղրկեց, ոչ կարացին գտանել:

## Բ

Թվին ՌՃՐԲ [1723] թեբեմբերի 26, օսմանցի Թիվլիզ նըստեցավ: Սարու Մուստայֆայ փաշէն խաբար ղրկեց սուլթան Ահմատին թէ՝ «Աղվանն ուզում այ գայ Յերեվան. թէ որ եկավ, գը գայ Թիվլիզ, մեր ձեռացէն կառնէ, յետոյ մեր երկիրն կը տիրայ»: Հիացավ սուլթան Ահմատն, վաղվադակի Զօբնօղլի Աբդուլայ փաշէն մեծայոր շինեց ՅԵՌ [75.000] զօրօք, ղրկեց ի վերայ Երեվանայ: Եկաւ Աբդուլայ փաշէն Արզրում. ձմեռն եր ցուրտ, տեղն նստավ մինչ ի փետըրվարի է [7], յետոյ վեր կացավ գնալու ի վերայ Երեւանայ:

Թվին ՌՃՐԳ [1724] յունն, մարտի զ[6] յունն, եկաւ Արբայ-չայ կասէն, եկ ի տեղն Արզրումցի Եալղուզ Հասան կասէն, Ղօջ Ալի կասէն, այս երկոքեան ունեն ՌԸԾ [1.800]: Յառաջ քան զսփաշէն գալիս են կռիվ, փաշէն այ հրայման տվել, որ էն չարեաց չի գան. Եալղուզ Հասանըն, Ղօջ Ալին ՌԸԾ [1.800] զօրօվ եկավ, Եղեւվարդ կասէն, Եկան տեղն: Երեւանայ խանըն ԺՌԲ [12.000] զօրօք եկավ կռիվ, կռվեցան, Երեւանայ խանին հզօրքն յաղդվեց, փախավ, սրօվ անցան, ԺՌԲ [12.000] հզօրիցն մնաց ԸԾ [800] հզօր: Եկան մտան քաղակն, ոչ կարացին դուս լինել:

Եալղուս Հասանըն, Ղօջ Ալի՝ Եկան հասան Կարբի, քրիստոնի գեղն, ուզեցին որ գերի վարեն: Կարբեցիքն իւրեանց գեղն լավ շինեցին, պատերն, դարբասներն, ըսկսեցին կռվիլ օսմանցուն հետ: Կարբեցի Պրն. աղայ Բաբըն, Պրն. Ըստեփանըն, մարդ ղրկեցին քաղաքն, խանին, թէ՝ «Օսմանցին եկել այ, մեր գեղն պատել այ, մին փորքն հզօր ղրկայ մեզ, որ մենք կռիվ անենք օսմանցուն հետ»: Երեւանայ խանըն ղրկեց ոչ:

Մնացին հայքն մենակ, կռիվ առին, մինչ ի մեծ փաշէն եկավ Խ [40] օրէն յետ: Փաշէն մարդ ղրկեց Կարբու մէջն հայերին, թէ՝ «Դուք ըռայեցէք, ինչո՞ւ համար էք կռիվ անում, ձեռ ըռայ կտամ, ձեզ մին լաւ մեծայոր կը դնեմ, ըռայեայդ առէք»: Պարոն

աղայ Բաբն, Պրն. Սարգիսն, Պրն. Աւաբն, Պրն. Սկրտումն, Պրն. Պողոսն, ամենեքեան մին տեղ եկին, սինսթօս արին, կամեցան Կարբի տան օսմանցուն: Օվանեսի որդի, Պրն. Մանուկ կասի, վեր կալաւ, թէ «Ես վախ ունեմ թէ գեղն օսմանցվին, մեր խիզանըն գերի վարայ»: Փաշին մարդ ղրկեցին.«Մեզ Ժ [10] օր մուլիաթ տուր, յետոյ մենք քեզ մութեն ենք»: Փաշեն Ժ [10] օրն մուլիաթ ետ:

Կարբեցիք մարդ ղրկեցին Երեւան Միհրալի խանին, թէ՛«Օսմանցին մեզ յաղթում այ, մենք Եսպես խօսք ենք արել մինչ ի Ժ [10] օրն, քեզ մարդ ենք ղրկել, ինչ որ դուն կասես մենք Եսպես կանենք»: Միհրալի խանըն ղաբուլ չարավ թէ բարուք կը ղըրկեմ, դումբարայ կը ղրկեմ, կռիվ արեք, մինչեւ Աստուածատուր կաթիղիկոսն գնացել այ շահ Թամազին մոտ, տեսնեն ինչ խաբար կայ:

Եկ Ժ [10] օրն թամամվեցավ, օսմանցի ղրկեց թէ՛ Ժ [10] օրն եղավ, գեղն տվէք հզօրք օսմանցու մօտայ գեղի քրիստոնէքն իւրեանց թվանք, թուր, սրերն ամեն հազեր են արել»: Քրիստոնէքն խորհուրդ արին իւրեանց մէջն. «Պիտի տանք գեղն մուտի ըլնակն»: Յերթեվցավ որ ոչ անէ գերի: Ընծայ շինեց փաշին համար, գանձ ոսկեղէն, արծաթեղէ, պատվայկան քար, Պրն. աղա Բաբն, Պրն. Սարգիսէ, Պրն. Պողոսն, Պրն. Ավագն, վեր կալան այս պատվայկան քարերօվս, տարան փաշին: Փաշեն սորանց խօսացուց թէ «Քանի՞ մարդ կաք ի մէջ գեղուն»: Պրն. աղա Բաբն ասաց.«ՉՌ [6.000] մարդ ենք»: Փաշեն ասաց. «Որ ՉՌ [6.000] մարդ էք, ձեր թվանքներն, ձեր թրերն բերեք ինձ տվէք»: Քրիստոնէքս շատ վախեցան իւրեանց մտացն: ԺԵ [15] բէյրաղ դրին Պրն. աղա Բաբին հետն, գնաց Կարբու մէջն, ինչ չափ որ սուր կայր եւ թվանք, ժողովեցին, տվան օսմանցոց: Պրն. աղա Բաբի, Պրն. Պողոսի, Գ-Դ [3-4] իշխանքի՝ քուրք հաքցուց, ղրկեց Կարբու մէջն: Իւրեանց եդ 2 [6] բէյրաղ գերի մէջն:

## Գ

Օսմանցին իւր մեծ հզօրօք գալ Երեւանայ վերայ: Եղեւվարդայ վեր կացաավ մինչ ի Երեւան, Գ [3] ավուրն հասավ Երեւանայ մօտն, մին Սամբթէկի Դալմայ կասեն, ջրի վերէն, տեղն նստավ Աբդուլայ փաշէն: Մինչ ի Երեւան կես ժամէն տեղ այ: Երեւանանայ Դ [4] կողմի գեղն եւ գավառն բօվանդակ փախի եկին մտին քաղաքն:

Է [7] օր անցավ, օսմանցին չէր գնացել յէջմիածին. Ըստամբօլու մին Ֆարման Էկավ թէ՛ «Յէջմիածնու հեղ բան չունէք»: Էն թարիղին Աստուածայտուր կաթուղիկոսն յէջմիածին չէր, շահ Թամազն ուզել էր, գնացել էր Թարվեզ:

Յետի օրն յառաջ գնաց մօտն բերդին, մօտ սուրբ Ամենայն Փրկիչի լանչին, թօփերն սահմանեաց օսմանցին, սուրբ Մատուռ կասեն ԻԹ [29] թօփ տեղն սահմանեց, ԺԲ [12] թօփ Ամենափրկչի լանչին սահմանեց, Է [7] թօփ՝ Գ [3] բլուրի լանչին սահմանեց Թօփերն կրակեց ի վերայ քաղաքին Դ [4] կողմն. առավ քաղաքի օսմանցին, ոչ կարեցավ դուս գալ պարսից մարդն:

Երեւանայ խանն, որ կասեն Միհրայլի խան, հրայման ետ, քաղաքի թուրքն եկավ քրիստոնի մէջն մտավ, կռիվ արին օսմանցուն հետ՝ մինչ ի Կ [60] օրն: Շատ բազում օսմանցի սրով անցան, ոչ կարաց օսմանցին մտանել քաղաքն: Օսմանցին փորքայցավ, Աբդուլայ փաշէն ղրկեց Բէյազիդու ԼԵՌ [35.000] քուրդ եկավ, նորանք էլ ոչ կարեցան մտնել քաղաքի մէջն: Շատ բազում հզօրն սրով գնաց օսմանցու աջիգ եղան:

Աբդուլայ փաշեն գիր դրկեց դագաւորի սուլթան Ահմատին թէ՛ «Յերեվանայ հզօրքն շատ այ, չեմ կարում առնել»: Հրայմանեաց թագայորն, Քօթեաիայ փաշան ԺՌ [10.000] հզօրօք եկավ, եհաս Երեւան: Նորա զօրքն գնաց Երեւանայ տակին, Նորայ-գավիթ կասեն, Նորա մոտ իջավ հզօրքն Նորա:

Գ [3] օր անցկացավ, փաշէքն մէկ տեղ եկին մասլըհաթ արի, հինգշաբաթ օրն քաղաքի վերայ երիշ պիտեն անել: Հինգշաբաթ օրն որ լուսացավ, տասնեմինսը հոգին, Աստուած փրկէ, Տէրն ազատէ, օսմանցին երիշն արավ, սրօվ եւ թօվ, Չանգու ջուրն կասեն, մեծ գետ այ, որ ձիայորքն չի կարալ անցնիլ, այնպէս լցվեց օսմանցին այս ջրիս մէջն, որ ջուրն կտրվեց եւ ցամաքեցաւ: Օսմանցիք մտան քաղաքն. յառաջի ըսկիսքն քրիստոնէն կռվեց մինչ ի կէս օրն: Հայերի մեծայորն էր Հունդի բէկենց Յօհանն, Քէչի բէկենց Պողոսըն, Միրզայջանենց Թավի, Կառնիկ Օվանէսն. այս մեծայմեծկս ըսկսեցին կռվիլ օսմանցուն հետ:

Ձորայգեղեցի Գրիգոր վարդայայետն, ինչպի որ ժողովուրդ ունէր, բովան առավ մտավ Ձորայգեղայ Սուրբ Սարգիս վանքըն: Էն օրն ԲՌ [2.000] քրիստոնայ սրօվ անցան. տաչիգըն փախավ մտավ բերդի մէջն, քրիստոնէն մնաց ի քաղաքի մէջն:

Գրիգոր վար[դ]այայետ ինդրեց, ինչ որ ժողովուրդ կեր, եկան տեղն, գիշերվայ մին ժամին տեղն խորհուրդ արին. «Որպէս անենք վաղն օսմանցին մեզ գյուրն կու քաշայ, մեր արդարներն գերի կու վարէ»: Իւրեանց պատրաստութիւն տեսին, դրկեցին, Կոնտի թաղ կասեն, որ հարիւր տուն բօշայ կայ, քրիստոն մեծ մեծ իշխանք, գանձայ տեր բօշէք: Մինն որ է Բաբուռ օլլի Ղազարն, մէկն Կլդուզն, մէկն Դաւիթն, մէկն Բէյրամըն, մէկն Պետիքն: Այս հինգ բօշէս բօվայտակի բօշէքանց մեծայորքն են: Բօշէքն եկան վարդայայետին մոտ: Վարդայայետն Գրիգոր աստուածայբան, ըսկսեաց աղաղակ, աղաղակել ժողովուրդին, լալով աչքօվ աղերսալի: Բօշայ Ղազարն ասաց. «Վարդայայետ, երկու հարիւր պատվայկան մարդիք ունիմ, իւրանց թրերօվն, իւրանց թվանքներօվն»: Այս շինեց սահմանեցին: Ձորայգեղեցի Հունդու բէկենց Յօհանն ըսկսեց մարդ ժողովելն, Պրն. Փերիգուլն, Պրն. Արզում բէկն, Պրն. Թաթոսն, Պրն. Մլուն, Պրն. Մկրտիչն, Պրն. Մախլասն, Պրն. Նիկողոսն, Պրն. Սրիպիոնենց Ավետն, Պրն. աղայ Չատէն, Պրն. Նուրի, Պրն. Չօիրաբըն, Պրն. Ալեքանըն, Պրն. Աղամն, Պրն. Գալուստն, Պրն. Էրամն:

Սորանք գիշերն խորհուրդ արին իւրեանց մէջն, բազում հզօրք շինեն, որ յառավոտուն թէ օսմանցի գայ ի քաղաքի մէջն, հազիր լինեն, կռվեն: Լուսացավ յառայվօտն, Աստուծոյ ողորմութիւնն հասավ, օսմանցին չըմտավ քաղաքն, որ է օրն յուրբաթ: Էն յուրբաթ օրն քրիստոնէքն իւրեանց պատրաստութիւն տեսին. Փարայթար մին գեղ այ. Գօգումբէթ մին գեղ այ, Կայվայկերդ մին գեղ այ, Յառինջ, Յավան, Գավան, Ձագ, Նորայգեղն, բօվայդակ այս գեղերիս մարդն մտել ի քաղաքն. այս գեղերուս մարդն կամ քաղաքի մարդն կամ գեղերի մարդն միայրեցան, բօվանդագ եղան ամենեքեան, որ պատվայկան բան այ, կան մարդիգն եղան ԹՌ [9.000] քրիստոնէայ, որ այս բանայկան այ, անբանն ոչ կարայ առնուլ ի ձեռն սուր: Այսպէս յառայվօտուն լուսացավ շաբաթ օրն, բօշայ Ղազարն, բօշայ Կլդուզն, բօշայ Դաւիթն, Պետիկն, իւրեանց հզօրօվն եկին Ձորայգեղ, որ ունին սոգանք հզօրք ունին ԲՃԼԴ [234]: Հրայման յետ Գրիգոր վարդայայետն բօշէքանցն, թէ «Դուք պահեցէք Խ [40] շաղացի ճանայպարնէ. Ձորայգեղայ հզօրքն, որ է ԳՌ [3.000] պատվայկան գեղից մարդիք, ունեն գովայկան սրեր եւ կամ թվանքներ, սոցանց հրայման ետ Ծակ-քար կասեն, տեղն պահեն: Եկին Կունդի թաղի հզօրքն, սոքանք դաբախանի ճանայպարին պահելօվ. եկին Չունհայրենց թաղի հզօրքն ԹՃԾԵ [955]

պատվայկան մարդիգ, սրով եւ թրով, Տեր Սովսե կասեն, սոցանց մեծայորքն այ, սոքանք Դարբինոցի ճանայպար կասեն, տեղն պահելով: Եկի Յին Երեւանայ թաղի հզորքն, որ է մեծ հզորք, դռ [=4.000] պատվայկան մարդիգ, սոցանց մեծս յորքն Էր Փայլեվան Կիկողոսն, որ է Նալբանդ. մին մեծայոր Էլ Մարիամի որդի Անդոնն. մին մեծայոր Էլ Խաթունի որդի Բուրթիքն: Այս ԴԴ [4.000] հզորքըզ ունին երեք մեծ մեծայոր:

Եկին բովանդակ Ձորայգեղ ԹՌԴՃԻԳ [9423] հզորք, որ պատվայկան կովարար. մնացեալն կային մինչ ի ԻԸԴ [28.000] արայկան եւ իգական, որ անպետ են, բաց թողին իւրեանց ի վերայ տներուն, որ նստեն տներուն պահայպան լինեն: Մնացեալն կռիվ անօղն, սրերն կապած ի մէջ Ձորագեղու լցվեցան: Դարձեալ ծանիր օսմանցին քաղաքի Դ [4] կողմս պատել Էր, ոչ կարեր մտանել քաղաքն Դ [4] կողմէն, գերայ քաղաքի մէջն բովայդակ պարտեզ եւ բուրաստան այ, յայգեստան այ, երկու դուն ուներ, օսմանցի ոչ կարեր մտանել ի քաղաքն. գերայ, Ձորայգեղու կողմս ոչ կայ բուրաստան պարդես, բաց է, ոչ կայ ծառ, ոչ կայ յագեստան, հանայպագ օսմանցին տեղէն երիշ կաներ, հանայպագ թօփերն կրակելով ի վերայ քաղաքի:

Երեւանայ խանն, որ է Մեիրայլի խանըն, մելիգ Սըհակն, մելիգ Աղամալի որդին, եւ իւր աղպեր աղայ Վելին, Պրն. Կարայպետն, Պրն. Բարխուդարեց Մուքէլն, Մոծակեց Բաբայջանըն, երկուտասան մեծ իշխանք, Միհրալի խանըն իւրեանց դատրովն տարավ ի մէջ բերթն: Մնացեալ փորքն իշխաներն սկսեց իւրեանց պատրաստութիւնն տեսել. Եասամանի որդի Յարութիւնն, քրիստոնայքն Էլչի պատրաստեցին՝ որ դրկեն փաշին մոտ: Այս Յարութիւնն, քրիստոնէս, որ անցավ Չանգու գետն, օսմանցու ենկիչարին, ոչ եթող գնայ հասանի փաշին, ըսպանեցին գնա: Քրիստոնէքն ըսկսեցին իւրեանց պատրաստութիւն տեսանել: Էն թարիղին ԳԴ [3.000] Մըսըրայ՝ դուլ եկավ, Նորայգեղի տակին նստավ, յառանց ճաշի հրայմանին երիշ արին քաղաքի վերայ, կողմովն Ձորայգեղայ՝ մտավ ի քաղաքն օսմանցին: Ձորայգեղու հզորքն յաղտվեցավ, փախավ, եկ ի Խ [40] շաղացայ տակն: Գրիգոր վարդայպետն դրկեց հետեւ բօշէքանց, թէ՛ «Ձորայգեղայ հզորքն յախտվեցաւ, շուտով գաք»: Լսեցին այս բօշէքն, վաղվաղակի գալով Ձորայգեղի թաղն: Օսմանցին ամել այ մինչ ի Ձորայգեղու կէսն, ոչ է կարում գալ յառաջ, երկուղն շատ է օսմանցու, վախում է գալն յառաջ: Վարդայպետն ըսկսեց աղաղակել լալով աչօք աղերսալ ի բօշէքն: Բօշէք ըսկսեցին յաջն համբերել վարդայպետի: Բօշէքն ԲՃԼԴ [234] հզորով, Ձորայգեղու հզորովն, ըսկսեցին կռվել ի մէջ Ձորայգեղայ վերայ: Յայոց հզորի կռվի տեղն բայցրայգուն է, օսմանցու կռվի տեղն ցացայգոյն է: Ըսկսեցին բօշէքն թվանքներն կրակել ի վերայ օսմանցու: Օրն է երկուշաբթի, Աստուծոյ ողորմութիւն հասավ, յախովեցավ օսմանցին, ՉԴ [6.000] օսմանցին անցավ սրով, ՌԳՃ [1.300] քրիստոնիցն անցաւ սրով: Օսմանցին փախավ, անցավ ի ջուրն Չանգու, գնաց իւրեանց եօթեվանըն: Աբդուլայ փաշէն բարկացավ ինքինքեան, ոչ եթող ենկիչարին երիշ անելու:

## Դ

Չերայ սուլթան Ահմատն հրայման Էր տվել Սարու Մուստայֆայ փաշին, մին ալ Ըռաջաք փաշի, թէ «Գնաք Երեւանայ վերայ»: Նրանք չէին հասել, չէն եկել, խաբար եկավ Աբդուլայ Փաշին թէ «Սարու Մուստայֆայ փաշէն գալիս այ Ըռաջաք փաշին հետ»: Մինչ ի Ըռաջաք փաշի գալնըս մի անքամ երիշ արին Կունդի թաղի վերայ, այնչաք որ ենկիչարի որ կեր, բովանդակ գնացել են որ Կունդի թաղիցն երիշ անեն: Մեր հայքն բովայնդակ գնացին Կունդի թաղն. ըսկսեց օսմանցին մտանել քաղաքն: Բօշէքն պատվայկան կռիվ կանեն. ելավ կռիվ: Քրիստոնէքն յաղթեցին օսմանցուն, եփախ

օսմանցին դուրս ի քաղաքէն: Էն կռվին ԴՃ [400] հայք, Խ [40] բոշայ սրատվեցան, ոչ մեռան, հիվանդացան: Օսմանցին ոչ է կռվել ի վերայ քաղաքին, միչ ի գալն Ըռաջար փաշի եւ Սարու Մուստայֆայ փաշի: ԺԵ [15] օրէն յետ եկան, Բ [2] փաշէ խորհուրդ արին իւրեանց չար:

Քրիստոնէքըն լսեցին որ երկու փաշայ եկավ, երկու փաշին վերայ ԼԸԴ [38.000] հզօրք, քրիստոնէք Գրիգոր վարդայի մոտ գնացին, ասին. «Ինչպէս անենք վարդայայետ»: Ասաց վարդայայետն. «Որդիք, մին էլչին շինենք, զրկենք փաշին»: Քրիստոնէքն վախում են գնալ էլչութեան, զերայ ենկիչարին չէր թողնում հասանել ի մօտ փաշին, ըսպանում են:

Մին աստուածասեր քրիստոնայ, Միրզի որդի Ախիջան կասէն, այս ել յառաջ, ասաց. «Ես գը գընամ սերն Քրիստոսի խաթեր հմար, թող ինձ ըսպանեն. թէ զիս կու ըսպանեն՝ դուք ձեր պատրաստութիւնն տեսէք, եթէ սաղ բաց կու թողնեն՝ գնամ փաշի մօտն, ես մեր բանն կու շինեմ»: Սահմանեցին պատվայկան քարունկ եւ ակունք, տպայգիոն տվին այս Ախիջան քրիստոնին, էլ գնաց, անցավ ի ջուրն Չանկու: Ենկիչարիքն եկին վաղվաղակի, ընթռնեցին գնայ, տարան Խանեպաղ կասէն, Էն տեղն ըսպանեցին: Այս քրիստոնէս ուներ մին ծառայ, անունըն Սարգիս, որ Էյջմեածէ. այս ծառէս որ տեսավ իւր աղէն սուր քաշեցին, այս քրիստոն ծառէն պռծավ, ենկիչարու ձեռնէն փախավ: Ենկիչարիքն դառնելով ոչ կարացին ընթռնել գնայ: Ել եհաս ի լեռն մեծ, որ է Չանկու ջուրն անցնելով ի տակնէն նորայ: Այս ծառէս, որ է անունըն Սարգիս, զինքն ձգեաց ի լեռն ի վայր, ոչ մեռավ եւ ոչ ուշաթափեց, պահեց Աստուած: Ել ի մէջ քրիստոնէից ասաց. «Օվ եղբար իմ, մեր մեղքն բազմել այ, մեզ ճար չկայ, իմ աղէս ըսպանեցին, ես փախի, Աստուած պահեց զիսէ:

Ողորմելի քրիստոնէքն շատ տրմեցան, լացին աղաղակեցին առ Աստուած: Տէր Գրիգոր աստուածաբան վարդայ, ըսկսեց պատարագ մատուցանել, բովանդակ ժողովուրդն սրբայորեց, ելավ:

Վաղեան ըսկսեց օսմանցի գալ ի վերայ քաղաքին հինգ փաշի հզօրքով: Քրիստոնէքն բովանդակ մին տեղ եկին Ձորագեղ: Օսմանցուն հզօրն չորս բաժին եղան, Դ [4] կողմէն երիշ արին ի վերայ քաղաքին:

Օրն ուրբաթ, մտան քաղաքն: Աստուած փրկէ, Տէրն ազատէ. կռիվ ելալ յառավօտուն մինչ ի յերիզվայ պահն, զպանելով օսմանցի քրիստոնէն, քրիստոնէն օսմանցուն, մինչ ի ԻԴ [24] պահն: Աստուած ազատէ, Տէր փրկէ, այնչաբ յարուն թաքեց որ Չանկու ջուրն կամրայծառեց, յարունայ հոտն ի մէջ քաղաքէն կը բուրէ, ողորմելի քրիստոնէքն բովանդակ գուրն քաշեցին, ոչ մնաց քրիստոնայ. անմեղ արդարներըն գերի վարեցին, կուս աղչիքունքն ջրում խեղդեցավ, այսչաբ գերի գնաց ի ձեռն օսմանցու: Գերիքն լեցվեց օսմանցու չատիրներն, մնացել անտէր եւ անճաճանչ ողորմելի արդարք: Եղավ պղծութիւն, անօրէնութիւն, վասն քրիստոնի մեղացն, որ մեղքն բազմացավ քրիստոնի:

Թվին ՌՃՅԳ [1724]ումն, ունիսի Է [7]ումն, օսմանցին առավ քաղաքն, նստավ: Մնաց բերդն:

Ե

Աստուածայտուր կաթողիկոսըն գնացել էր շայ Թամագին մոտ: Շայ Թամագն 2Ռ [6.000] զօրով գնացել է Խորասան. կաթողիկոսին հրայման էր տվել թե՛ գնայ Էջմիածին: Կաթողիկոսն գալով Էջմիածին, օսմանցին լսեց թե՛ կաթողիկոսն գալիս այ, հրաման ետ ԳՃ [300] հզօրքի թե՛ «Գնացե՛ք կաթողիկոսն բերե՛ք տեղս»: Յզօրքն գնացին, Գառնի հասին, կաթողիկոսին մոտ: Յզօրքն ասեն. «Կաթողիկոս, փաշեն քեզ ուզում այ»: Կաթողիկոսն ասաց. «Յնագանդ եմ փաշին»: Վեր ելին, եկին ի մոտ Աբդուլայ փաշին: Փաշեն պատվայկան ըսգեստ հագցուց կաթողիկոսին, երեք օր փաշեն պահեց իւրն մոտն կաթողիկոսն: Երեք օրէն յետոյ ըսկսեց փաշեն խօսել ի հետ կաթողիկոսին թե՛ «Որպիսի կու լինի, թուրքն բերդն տալիս չէ»: Ասաց կաթողիկոսն. «Փորք մի համբերե, վաղն ես գը գընամ ի մէջ բերթն, խանին հետ կը խօսեմ, ես կաննեմ բերդն, քեզ կու տամ»:

Ելավ վաղեան կաթողիկոսն, ել եւ գնաց ի մէջ բերդն: Խանն լսեց թե՛ կաթողիկոսն գալիս, հրայման ետ Մահմետ Ղասում բեկին թե՛ «Գնա՛յ բերդի դուռն, կաթողիկոսն գալիս այ տեղս, բերդի դուռն բանաս ոչ, դուռն բերդի մէջէն, կաթողիկոսն բերդի դուրսէն՝ խօսացե՛ք, տես ինչ խաբար այ բերել շայիիցն»: Եկ եհաս Մահմետ Ղասում բէն ի դուռն բերդի, կաթողիկոսն ի դուրսն բերդէ, խօսացին: Մահմետ Ղասում բեկն ասաց. «Շայիիցն ի՞նչ խաբար ունես»: Ասաց կաթողիկոսն. «Շայիիցն ձեզ ճար չկայ, ձեր գլխու ճարն տեսե՛ք ձեզմէն, ֆիքր արե՛ք»:

Մահմետ Ղասում բեկն տրմեցավ բազումն. դարձավ գնալ մոտ ի խանին, ասաց զայս որ կաթողիկոսն պատմել էր: Խանն բազում տրմեցավ, լացավ, թե՛ «Վայ մեզ, մեր թագայորութիւնն գնաց»: Կրկին անգամ խանն դրկեց մելիք Սըհակն, Պրն. Կարայպետն, Պրն. Անդոնն, երեք մեծ իշխան, թե՛ «Գնացե՛ք տեսե՛ք կաթողիկոսն, ձեզ ինչպէս մեկնութիւն կտայ»: Եկին մելիք Սըհակն, Պրն. Կարայպետն, Պրն. Անդոնն, եկի ի դուռն բերդի, կանգնեցան ի բաձր բերթու, խօսեցան ի հետ կաթողիկոսի, որպէս պատմել էր Մահմետ Ղասում բեկ: Դարձան գնացին ի մօտ խանին, որպէս ասացել էր կաթողիկոսն: Խանըն տրմեցավ բազումն:

Խանըն հրայմանեայց, ինդրեց Մահմետ Ղասում բեկին, Սալայխան բեկին, Միհայխօռին, Ջառչի բաշուն, Ըռեհանլու Շիալի բեգին, Բայադ Աբաս Ալի բեկին, Յաջի Էլիագի Աբաս խան բեկին, Ղաշար Ըռայմագան բեկին, Դամուր Բուլաղի Նաղդալի բեկին, բովանդակ ինդրեց խանըն, եկին ի տուն խանի, իւրեանց մէջն արարին խորհուրդ: Մեժլում բեկն ասաց. «Բերդն տանք»: Չառչի բաշին ասաց. «Չէք տալ, թե՛ որ տվինք բերդն մեր, մեր տուն եւ տեղ գերի կու վարե օսմանցին»: Մահմետ Ղասում բեկն ասաց. «Ես էլ մին խորհուրդ ունեմ, ասեմ»: Խանըն ասաց. «Յրայման է, ասայ»: Ասաց Մահմետ Ղասում բեկն զխորհուրդն իւր թե՛ «Խանըն ողջ լինի, թե՛ որ քաղաքն կտաք ի ձեռն օսմանցու, ինդրիւր Լորայ հետ խորհուրդ արարե՛ք»: Խանն լսեց, հավանեցավ այս խորհուրդիս: Խանըն ինդրեց բերթի մէջի մէջի քըրիստոնէքն բերին ի տունըն խանին: Ասաց խանըն թե՛ «Պրն. մելիք Սըհակ, կամ Պրն. Կարայպետ, մեր շայիիցն մեզ ճար չկայ, իմ մեծայմեծ իշխանքներս բերդն տանք օսմանցուն. դուք ի՞նչ կասե՛ք»: Յայքն ասեն «Խանըն ողջ լինի, դուռն գիտես, ինչ որ կանես մեզ դաբել այ»: Ասաց խանըն թե՛ «Մահմետ Ղասում բեկն ասում այ, դրկենք կաթողիկոսն գայ տեղս, տեսնենք կաթողիկոսն ինչ կասայ»: Քըրիստոնէքս ասեն. «Բավական այ, խանըն ողջ լինի»: Սորանք էլ հավանեցան այս բանիս, խորհեցին որ դրկեն ի հետեւ կաթողիկոսի:

Բերդի թուրքն ոչ կարե դուս լինել ի բերդէն, մանավանդ՝ թե՛ որ թուրքն բերթիցն դուս գտանի, օսմանցին շուտով կու ըսպանե, վախում են մարդ դրկել կաթողիկոսին: Յայքերն ասացին. «Խանըն ողջ լինի, մին մարդ դրկե՛ք փաշի, կաթողիկոսն բերել



տայ, փաշէն ղրկայ տեղս որ հաշտութիւնն առենք»: Խանըն հաժանեցա՛մ այս խօսացն քրիստոնի, բերին Պրն. Անդոնըն, բերդի պատէն հետ պարանօք թողին վայր: Ենկիչարիքն վաղվաղակի եկի ընթրնեցին զևայ, տանելօ՛վ ի մոտ փաշի, գևացին եհացի մոտն փաշին: Եհարց փաշէն. «Այ քրիստոնեայ, թէ դուն ո՞ւր ես գնում»: Ասաց քրիստոնէս թէ՛ «Գիր եմ բեր քեզ»: Եհան սըզիրն, յետ ի ձեռն փաշի: Փաշէն եբաց գիրն, կարդաց, քրիստոնէս տեղն պահեց. Ծ [50] հզօրքն ղրկեց հետելըն կաթիղիկոսի: Գևացին եհացին Էջմիածին հզօրքն փաշին՝ մինչ ի երեք ժամս: Զզօրքն ասաց. «Կաթիղիկոս, փաշէն քեզ ուզում այ»: Ասաց. «Յնազանդ եմ»:

Կաթիղիկոսն լսեց, ահիւ եւ դողութեամբ հեծանել զձին, գոլոր հրայմանըն փաշին: Երբ եհաս ի տուն փաշի, ետես որ Պրն. Անդոնըն տեղն նստաց: Փաշէն նըսածուց կաթիղիկոսին: Ասաց փաշէն թէ՛ «Կաթիղիկոս, խանըն քեզ ուզել այ, գևայ, տես ինչ այ ուսում»: Ասաց կաթիղիկոսն. «Յրամանըն քոյին»: Փաշէն Պրն. Անդոնին պահեց, կաթիղիկոս ղրկեց: Ի մէջ բերթի գևաց, եհաս ըսբերթն, եկին մեծ մեծ իշխանքներըն, ուրախացան, ուրախութեամբ տանելօ՛վ ի տուն խանի: Գևաց եհաս ի տունըն խանի, տեսա՛մ ըսխանըն: Խանըն խնդրեց որչաբ որ իշխան ունէր խանըն, եկին տեղն, նստեցան, մասլիաթ արի, բօվայդակ հնազանդեցան կաթիղիկոսին: Խանըն հաժանեց կաթիղիկոսի խորհուրդին:

Ըսկսեց կաթիղիկոսըն գալ ի մոտ փաշի, գալ եհաս ի մոտն փաշի: Զրայման ետ փաշէն կաթիղիկոսին, նստեցա՛մ, հարցուցանէր փաշէն թէ՛ «Ի՞նչ խնդիրք ունի Միհրալի խանին»: Ասաց կաթիղիկոսն. «Փաշէն ողջ լինի, կուզեմ ձեր մէջն հաշտութիւն պարթե՛վենք»: Փաշէն հաժանեց այս խօսացն, հագցուց ըսգեստ պատվայկան: Կաթիղիկոսն ասաց. «Փաշէն ողջ լինի, մին բան խնդիրք ունեմ քեզանէ»: Փաշէն ասաց. «Ասա խնդիրքը՞ քոյ»: Ասաց խնդիրքն կաթիղիկոսն թէ՛ «Փաշէն ողջ լինի, խնդիրքս այս է, որ Մեհրալի խանին ըսպանես ոչ, բաց թողնիս, զևայ ի մոտ շային»: Փաշէն երդնմեցա՛մ թէ՛ «Չեմ ըսպանել, գևայ ի մոտ շային»:

Ել կաթիղիկոսն գևալօ՛վ ի մէջ բերդի, գևաց եհաս ի մոտն փաշին, հաշտութիւն ձգեց իւրեանց մէջն: Կաթիղիկոսն ԳՌ [3.000] ենկիչառի առա՛մ հետն իւր, գևաց ի մոտն, հրայման ետ կաթիղիկոսն թէ՛ «Դուռն բացեք բերդի»:

Բացի ի դուռն բերդի, բերդի յառաջ մտա՛մ կաթիղիկոսն, ԳՌ [3.000] ենկիչարի յետնէն, գևացին բերդի մէջն: Ենկիչարին վաղվաղակի գևաց պահեաց ըսթօփերն, յետոյ ԳԾ [300] բէյրաղ մտա՛մ բերթի մէջն: Կաթիղիկոսն նստա՛մ ի մէջ բերդին, մինչ ի օսմանցու հզօրքն բօվանտակ գևաց բերդի մէջն: Երեք յավուրէն յետոյ կաթիղիկոսն եկ ի դուրս բերթէն, փաշին հետ ըսկսեցին գևալ ի մէջ բերթն: Գևացի հասին բերդն. փաշէն գևաց Մահմետ Ղասում բէկի տանն իջա՛մ, կաթիղիկոսն գևաց հետեւ խանին, եհաս ի տուն խանի: Խանըն ասաց. «Խալիֆայ, վախում եմ»: Կաթիղիկոսն ասաց. «Վախել մի՛»: Ելա՛մ խանըն վախելօ՛վ, գալ ի մոտն փաշի, կաթիղիկոսն միմեանց հաշտացուց, համբուրեց միմեանց: Գիշերն տեղն կացին կաթիղիկոսին հետ: Վաղեան կաթիղիկոսն հրայման ուզեց փաշէցն թէ՛ «Խանըն ուզում այ գևայ»: Փաշէն ասաց. «ԲԾ [200] հզօրք կը դնեմ հետն, գևայ»: Եդ ԲԾ [200] հզօրք ի հետ նորա, կաթիղիկոսին հետ գևացին մինչ ի Զ [6] օրն, յանձացրին, դարձա՛մ կաթիղիկոսն, եկ ի բաղաքն:

Զրայման ետ փաշէն, ինչ որ թուրք կայ բերդին մէջն բօվանդակ՝ դուս լինին: Բօվանդակ դուս արա՛մ, էլ ոչ մնաց թուրք ի մէջ բերդին: Փաշէն հրայմանեց թէ՛ «Մահմետ Ղասում բէկի՛ սուլթան Ահմուտն ուզել այ, մին Աբաս Ալի բէկին, մին էլ



Շհալի բեկի»: Այս երեք մեծքրս ուզեց փաշէն, թէ, դրկում եմ թագայորին մոտ: Վեր կալան տարան քաղաքէն դուրս, դրին ի մէջ ջվալի, ձգեցին գետն Չէնկու: Եղավ իւրեանց հաշտութիւն: Կաթիղիկոսն գնաց Էջմիածին, հանդարտեցավ օսմանցին ի մէջ քաղաքն:

Թվին ՌՃՐԳ [1724]ուան, օգոստոսի Ի [20] մին (sic), եղավ վերջ, հանդարտեցավ օսմանցին, միչ ի նուեմբերն:

## Ձ

Նուեմբեր ամսի Չ [6]ուան, սուլթան Ահմատիցն մին գիր եկ հաս ի ձեռն փաշի: Բաց եւ կարդաց գիրն. հրայման այ տվել դագայորն որ՝ «Գնա՛յ ի վերայ Թարվեզու»: Ետես պատրաստութիւն իւր մինչ ի փետրվարի ամիսն, թվին ՌՃՐԴ [1725]ուան, ել ի թաշ, գնալով ի վերայ Թարվեզու: Ըսկիզբն գնաց ի վերայ Խօյու: Եհաս փաշէն ի մոտն Խօյայ, քրիստոնէքն մտել է ի մէջն բերդին Խօյու, Դ [4] կողմէ տաշիգի գեղարէնքն, մինչ ի մին Ժ [10] գեղ եկել են մտել ի մէջ Խոյոյ բերթ: Որ եհաս փաշէն, հայքն ուզեցին Խօյ տայն օսմանցու: Բերդի թուրքերն բարկացան ոյժ բազում, ասաց. «Մենք չէք տալ»: Արարին զխորհուրդն չար իւրեացն մէջն, իւրեանց մէջի քրիստոնէն սուրն քաշէն: Քրիստոնէքըն յիմացան, ոչ կարացին խօսել հետն իւրեանց թուրքի:

Ըսկսեց փաշէ թօփերն սահմանել. սահմանեց թօփերն ի վերայ քաղաքին կամ բերթին, կրակելով թօփերն ի վերայ բերդի, մինչ ի Խ [40] օրն, կրակն լից ի վերայ քաղաք: Խ [40] օրն եղավ, օսմանցին երիշ արավ բերդին, բօվանդակ իւր հզօրովն զօրայգունեղ եմուտ քաղաքն, եղավ պատերազմուն մինչ ի Չ [6] պահն: Օսմանցին սուրն քաշեց, բօվանդակ գերայ վարեց քրիստոնէք, շատ յարունհեղութիւն եղավ տեղն Խօյոյ: Փաշէն հանդարդեցավ տեղն մինչ ի ԻԸ [28] օր: ԻԸ [28] օրէն յետ՝ ել ի վեր, գնալով ի վերայ Թարվեզն, բաց եթող ի մէջ Խոյոյ Խ [40] բէյրաղ, գնալով ի վերայ Թարվեզու:

Աբդուլայ փաշէն գնալօ Թարվեզ, սուլթան Ահմատիցն մին գիր եկ ի ձեռն փաշին: Յայեցավ եւ կարդաց: Գրել էր սուլթան Ահմատն թէ՝ «Հասան փաշին հրաման տվի որ գնայ Քրմանշայու վերայ Համատանայ»: Հասան փաշէն Համատան գնալով, Աբդուլայ փաշէն Թարվեզ, ըսկսեցին իւրեանց պատերազմունքն: Աբդուլայ փաշէն գնաց եհաս Մարանդ, որ է Նոյայ մայրն թաղած է տեղն, ան գեղին Մարան կասեն, անդ-մարնդ: Բօվանդակ առավ, ան երկիններն, պռծավ: Ըսկսեց գնալ ի վերայ Թարվեզու, արգելով թօբերն, եւ իւր մեծ բազում հզօրքն գնալով եհաս Սօհիւեան կասեն, մին գեղ այ, ԳՃ [300] տուն այ, այս գեղիս մարդն գնացել այ Թարվեզ, ոչ կայ շէնութիւն ի մէջ գեղուն: Գ [3] օր տեղն նստավ փաշէ, Գ [3] օրէն յետ վեր կացավ գնալով Թարվեզ, գնաց եհաս Շօր-Ջուր կասեն տեղի, որ է Բ [2] ժամ ճանայարի: Փորքն փորքն յառաջ գնալով, յիմացան Թարվեզու հզօրքն: Դուս եկին կռիվ, Թարվեզու խանն, որ է անունըն Ալայ Դուլի խան, դուս եկ իւր մեծ բազում հզօրքովն, ելավ իւրեանց պատերազմունը: Ալայ Դուլի խանի հզօրքն յախովեցավ. ԺԴ [10.000] մարդ սրով անցան, փախավ Ալայ Դուլի խան, եմուտ ի մէջ քաղաքն, ոչ դուս եկավ:

Աբդուլայ փաշէն սահմանեց իւր թօբերն Կ [60], հայնապագ կրակելով ի վերայ քաղաքին, մինչ ի Կ [60] օրն: Կ [60] օրն թամամվեցավ, ըսկսեց փաշէն իւր հզօրքն երիշ անել քաղաքին, թօբերն կրակելով ի վերայ քաղաքի յօժարութեանն եմուտ քաղաքն, ելավ կռիվ ի մէջ քաղաքին, մինչ ի եօթն օրն սուր սրեղի եղավ ի մէջ քաղաքն, շատ բազում հզօրս անցավ Թարվեզու, այլոց յիմանալովն ՋեՌ [85.000] հզօրք անցավ սրով: Առավ քաղաքն, հանդարդեցավ Աբդուլայ փաշէն, ըսկսեց իւր

հզորքն տեսանել թէ որչայք այ մնացեալ. տեսավ հզորքն ճՃԸ [158] հզորիցն մնացել էր ԽԲԴ [42.000] հզորք: Անցեալն գնացեալն բովանդակ սրով անցավ, առավ նստավ մայրաքաղաք, անթիվ հզորէն գերայվարք գերիքն քաշեց օսմանցին եկ ի մէջ քաղաքն, վերջ ասելոյ: Վերջայորայպես էառ գԹարվէզ Աբդուլայ փաշէն, նստեցեալ ի մէջ քաղաքին երեք ամիս: Յետոյ երեք ամսոյ՝ վերջայպես իւր հզորքն բովանտակ հիվանդացան, ի մէջ իւրեանց անկեալ է մահ տարածամ, Աստուած բարկացեալ ի սոցանց: Ոմանք փախին, ոմանք մնացին, ոմանք տարածմով անցան:

## Է

Վերոյ ասայցեալ պատմութիւնս, որ գրել եմ եւ թարմանեալ եմ, քանզի պատմութեանս թվայկանէն, որ սկիսքն գրաց եմ, որ աղվանն առեալ էր ի Ըսպիան, աղվանն լսեց որ օսմանցու հզորքն նվազացեալ, աղվանն սկսեց Ըսպիանու սահմանից հզորքն գալ Թարվէզու վերայ: Վերջայորայպես եկ աղվանն եհաս Ֆալիան կասեն, մին մեծ գեղ այ, որ ԳՃ [300] փորքայգոյն գեղ էր, նորա հրայմանի տակն են, այսպիսի յայտ լիցի հետեւողաց եւ կարդացողաց որ յիմացուք գայս գեղերս, որ այսպիսի պատվայկան եղանակն կասեն Ֆալիան ԳՃ [300] գեղ ոչ էր նես: Այսպիսի յիմցուք որպես ասացանք: Նախ եւ առաջ ելավ կռիվ ի Ֆալիան ի հետ փարսոյ հզորին հետ: Այս Ֆալիան որ պատմեցի մեր սիրելի տերանց, այս Ֆալիան ոչ օսմանցին է առել ոչ աղվանն. այս յառաջի պատերազմն այ որ աղվանն եկեալ է ի Ֆալիան: Երբ եհաս աղվանըն Ֆալիան, զկսեց կռիվ պարսոյ հզորին մինչ ի Խ [40] օրն: Յաղդեաց աղվանն՝ հզորի պարոյ, սուրն քաշեց բովանդակ. մնացեալն գավառներըն կամ գեղերն՝ սկսեցին իրեանց պատրաստութիւնն տեսանել: Այս ԳՃ [300] գեղոյ մարդոյ կէսն սրով անցավ, մնացեալեր եկին մին պզտիկ բերդ կեր, որ է անունն Բէջի-Ղալասի, այստեղ ժողովեցան, ոչ եղան հնազանդ աղվանին:

Աղվանն եհաս Բէջի-Ղալէն, սկսեց կռվել, ոչ կարաց աղվանն յաղդել սորանց: Աղվանի մէջն մին խան կեր աղվանի, որ էր անունըն Չլալ խան, յեբեր, մին մարդ պատրաստեց, դրկեց սոցենձ մէջն թէ՛ «Մի՛ վախել, մեզ հնազանդ եղէք, մենք ձեզ լավ կը պահենք»: Այս մարդն որ գնաց եհաս ի մէջ Բէջի-Ղալու մէջն, եկի պարսոյ մարդիքն, շուտով այսոր տարան իւրեան քաղայքապետի մոտ, անուն էր քաղայքայպետի որ անուն գոչի Ղարայգօզլու Բալբալի Ղասում աղայ: Բալբալի Ղասումն եհարց այս մարդոյ թէ՛ «Ի՞նչ ես ուզում, կամ ո՞ր ես եկեալ»: Այս մարդս ասաց. «Գիր եմ բերել մեր խանիցն որ կարդաք, տեսնէք ի՞նչ է մէջն»: Բալբալի Ղասումն առավ գիրն, եբաց, կարդաց, ետես որ խանըն լավ պատվայկան բաներ այ գրել, հավանեցավ: Բալբալի Ղասումն խնդրեց, ամենեքեան իւր ժողովուրդն եկին ի դուռն Բալբալի Ղասում բեկի տեղն, եբաց գիրն, կարդաց: Ժողովուրդն միանգամ հավանեցան, հնազանդ եղան աղվանին, որ է մեծայորն Չլալ խան: Դուս եկին պարսից ժողովուրդն, մեծ ժողովուրդայպետն, որ է Բալբալի Ղասում բեկ, եկ եհաս ի դուռն Չլալ խանի: Չլալ խանն շուտով հագոց սորայ ըզգեստ պատվայկան. այս մարդս խնդաց եւ ուրախացավ. բովանտակ իւր ժողուրդն հանեց դուրս ի բերդէն: Աղվանըն գնաց եյմուտ ի մէջն բերդի: Վերջայպես Գ [3] յավուր նստցավ, յետոյ Գ [3] յավուրէն եհան սուրն, բովանդակ սուրն քաշեց, ապայ փոքրայցուց: Վերջայպես Զ [6] օր յետոյ վեր կացավ, որ գալու այ Թարվէզու վերայ:

Մանայանդ այս աղվանըս, որ ըսկսեց գալ ի Թարվէզոյ, Յամայդանայ խանըն, որ անունըն այ Ըռայմազան խան, լսեց, իւր պատրաստութիւնն տեսնել, որ էս պարսի թագայորին հնազանդ է: Քանզի որ աղվան, որ Ըսպիանըն առավ, դեռ Յամայդան չէր առել. օսմանցին էլ Թարվէզ էր նստաց, Յամայդան այսպիսի մնացեալ էր: Ի վերոյ

որ յիշեցանք, Ըռայմագան խանըն իւր պատրաստութիւնն յետես, աղվանն եկ տհաս Դարկազէն կասեն, տեղն Դարկազէն, որ է ԽՌ [40.000] տուն, որ շայի Այբագն բերել տեղն դրել, որ սուլունայ որ հավայտն աղվանի հավատիցն ունի: Այսպէս որ ասացանք միոյ հավատ են սոքանք աղվանին հետ: Երբ որ աղվանն հասավ տեղն, սոքանք հնայգանդ եղան՝ թէ միոյ հավատ ենք: Այսպէս է աղվանն, այս դար գազընցոց բովանդակ տուն տեղն դրկեց Ըսպհան ինչ որ լավ կտրիջ կեր՝ աղվանն հետ վեր կալավ, որ գնան կռիվ, տեղն դարկազէնուց: Վեր կացան, եկին Զամայդանայ վերայ որ Զամայդան առնեն:

## Ը

Ոչ կարացին առնել Զամայտան: Ըռայմագան խանն իւր հզօրովն դուս եկավ, Լալին կասեն, մին գեղ այ տեղն, կռիվ արին, Ըռայմագան խանըն յախտվեցավ, եփախ, եկ ի մէջ Զայմատու, ոչ ելավ ի դուրս: Աղվանն ոչ կարէր մոտ գալ ի բերթին: Մին ամիս աղվանըն նստեց Զայմատանայ մոտ, ոչ կարաց առնել: Յետ դառավ, գնաց վերջայպէս Ֆալիան, նստեց տեղն, ոչ գնաց Թարվեզու վերայ: Այսպէս որ ասացանք:

Աբդուլայ փաշէն լսեց որ աղվանն յետ դառավ, շուտով գիր դրկեց սուլթան Ահմատին թէ՝ «Աղվանն եկավ Զամայդան, չը կարաց առնել յետ դառավ գնաց. գնացել այ որ շատայցնէ հզօրն, գայ Զայմատանու վերայ: Երբ Զամատան առավ աղվանըն, զը գայ Թարվեզ էլ մեր ձեռնէն կառնէ»: Երբ որ սուլթան Ահմատն լսեց այս բանս, շուտով Դ [4] դռնայպետ դրկեց Զասան փաշին թէ՝ «Զեզ մեծայորեցի, որ գնաս ի վերայ Զայմադանայ»:

Զասան փաշէն իւր պակասութիւնն տես: Դրկեց բաջիլան, որ մին ասկ ա, որ բաջիլան կասեն, ԷՌ [7.000] բաջիլան քուրդ, բովանդակ երկաթ հագաց, մին այլակերպում՝ որ Աստուած փրկէ, Տերն ազատե զոցանց պատկերիցն, մարդ է հալում ի վախէն: Այսպէս դրկեց մառջանի արաք կասեն, ԸՌ [8.000] էլ տեղէն եկավ: Աբդիլավանդ կասեն, Էն էլ մին ազգ այ, 14.000 հզօրք տեղէն եկավ: 9.000 էլ ենկիչարի, 6.000 ջաբաջի, որ այլոց գիտութիւնովն որ այսպէս կասեն: 4.000 քուրդ ի Չանկանայ, 1.800 ջահ կասեն, խզըլայ ասկէն այ: Ղարայ-Չօրան կասեն, որ էլ քուրդ այ, 800 էլ տեղէն եկավ: Տարենայ բէկ կասեն, որ Չաղօվայ, Նորա տեղն որ 40.000 տուն ունի, որ սեվ չատեր այ, 1.600 տեղէն եկավ, որ եղավ վերջայպէս 43.400 հզօր, մինչ ի 28 օրն, այսպէ ջամ եղան որ ասացանք եւ յիշեցանք, մանայվանդ մինչ ի գնալն Չաղօվ, այսչաբօվս հզօր եղան, որ ասացեալ եւ յիշեց եմ ի վերոյ:

43.400 երբ որ գնաց տհաս ի Չաղօվ, Չաղօվու բէկն, որ է անունըն անվանի Ահմատ բէկ, որ սա լինի Չաղօվու բէկն: Վերջայպէս Զասան փաշէն ինդրեց Չաղօվու բէկին, հրայման ետ Նորա թէ՝ «Զեզնէ 24.000 հզօրք կուզեմ»: Ոչ կարեցավ պատասխանն տալ: Յայտ լիցի սիրելի մեր տերանց, որ Զասան փաշէն շատ վաղար իշխան է կամ փաշայ, որ բովանդակ երկիրն ի ձեռն Նորա կու սարսեն, ոչ մարդ կարէր Նորա պատասխան տալ, թէ մեծ կամ փորթն՝ բովանդակ ի Նորայէ սարսայբար են մանայվանդ: Վերջայպէս գնաց Ահմատ բէկն իւր ասգիցն, ինչ որ սեվ չատերանոց տուն ունէր, ամէն տանից մին մարդ, մին տանից երկու մարդ, մին տանից 3 մարդ, այսպէս ժողովեց 15.000, բովանդակ ձի գրիտոք, ամէն ի մէջ երկաթի, եկին ի մօտն Զասան փաշի: Զավանեցավ, էլ ոչ ուզեց հզօր, քանզի 24.000 էր ուզել, մանայվանդ հավանեցավ, էլ յառայվել չուզեց: Մինչ ի 2 ամիս նստեցին տեղն Չաղօվ, որ սորայ հզօրն եղավ 68.400 հզօրք, Էլին տեղէն գնալու ի վերայ Զամադանայ:

Չաղօվու վեր կացին Թաղիգերդուն, որ պարսի լեզվով, օսմանցու լեզվով՝ Թաղբասրայ, գնացին տեղն, տեղէն գնացին Քասրի խանըն, տեղէն գնացի Գիրենդ, տեղէն գնացի Յառնայվայ, տեղէն գնացի Մայտաշ, տեղէն գնացի Քրմանշայ: Վերջայպէս Քրմանշայ հասավ, Յասան փաշէն հիվանդացավ. մին թեթեւացի մահ սոցանց մէջն երեւաց փորբայգոյն, Յասան փաշէն տեղն հիվանդացավ, վերջայպէս եօթն օրէն վեր մեռավ մնաց:

Օսմանցու հզօրքն մտաց ոչ կարացին գնալ Յայմադանու վերայ: Յասան փաշէն ուն մի որդի, որ էր անունըն Ահմատ փաշայ: Սայ Ահմատ փաշէս խնդրեց օսմանցու հզօրքն, մեծայմեծքն, իշխանքն, իւրեանց մէջն խորհուրդ արարին, որ խաբար դրկէն սուլթան Ահմատին: Վերջայպէս մարդ դրկեցին սուլթան Ահմատին: Սուլթան Ահմատն լսեց ի վաղճանիլն Յասան փաշի, երկու դռնայպետ դրկեց սուլթան Ահմատն լավ սկեստով թէ՛ «Ահմատ փաշիէ մեծայորեցի, որ գնայ ի Յամատանու վերայ, իւր կապեալն կապեալ լինի, իւր արձակեալն արձակեալ լինի»: Վերջայպէս Ահմատ փաշէն տեղէն Քրմանշայու վեր կացավ իւր մեծ հզօրովն, գնալ ի վերայ Յամայդանայ: Քրմանշայու ելավ գնաց Բեսթուն, որ Բեսթուն կասեն մին մեծ խան այ, որ Շխալի խան այ շինել, այս խանըս, որ խիստ պատվայկան քան այ: Տեղէ ելին գնացին Սայինայ, որ մին լավ քաղաք այ, ոչ է քաղաք նմայնապէս, քան սքաղաք գեղեցիգ այ: Տեղէն ելին գնացին Քանկայվառ, որ մին բերդ այ, որ գեղ այ, որ սորանց մէջի պարսոյ մարդն բովանդակ փախել են: Այսպիսի օսմանցին գնում այ, տեղէն ելավ գնաց Սատավայ, որ մեծ դասաբայ է: Պարսոյ մարդն ըսկսեց օսմանցուն դէմ այ դեր կռվել: Պարսոյ մարդն մետասան օր կռիվ արավ ի հետ օսմանցոյ. պարսոյ մարդն փորքնիգ էր եւ օսմանցի անթիվ: Վերջայպէս օսմանցին առավ Սայդայվայ, տեղն յետեվեց գնալ Յայմադան:

Սատայվու ճանհայպարն բազում սար է կամ լեռան շատ է, ոչ կարեցավ էն ճանհայպարովն թօփ քաշել, մեծ մեծ թօփեր էր բերել, Կ [60] թօփ էր անվանով, այն փորքն թօփերն կանցներ այն ճանհայպարովն, մանայվանդ մին թօփն շատ մեծայգուն է, որ անունըն թօփի անվան գոջի Ասլան-թօփ: Այս որ չէր անցանել, ոչ գնացին այն ճանհայպարնովն: Դարձեալ յետ Սատայվու տակովն քաշելով եւ արգելօ այս թօքերն զայսպիսի որ ասացանք, որ յիշեցանք: Ել ի Սատայվու գնալով եհազ ի Լակլար կասեն տեղն, որ մի գեղ այ, այսոր մէջի մարդն շատ ախկատ էր, ոչ ուն մէջն իւրեանց մեծայորք: Այս ախկատ մարդիքս գեղոյ, եկին լալով ի մօտ փաշին թէ՛ «Փաշէն որջ լինի, մենք ախբաթ ենք, իտեղջ ենք, մեզ մին ճար արայ»: Երբ Ահմատ փաշէն տեսավ աս ախկատներս լալիս եւ որոտալիս, շուտով հրայման ետ թէ՛ «Բեյդադտար Մհամատին տվի այս գեղերս, գնա՛յ, լավ պահէ»: Այս Բեյդադտար Մհամատս, որ սեվագցի տիրացու Մկրտում կասեն, որ սեմերջի դարձեալ: Այս Մկրտում տիրացուս պաճառն ի՞նչ է որ Բեյդադդար այ դառել: Պաճառն այս է որ Ըստայբօլ հանայպագ բանի կու լինէր. բանն ի՞նչ էր սեմերջութեանն: Մին գերակի յավուր վեր կալ եւ գնալով բաղնիս, երբ եհաս ի բաղնիս, հանեաց իւր ըսգեստն, մտավ ի մէջ բաղնիսի: Ի մէջն բաղնիսի 2-է [6-7] ենկիչարի, ասոնց հետ ոչ գիտեմ ինչպէս բաներ ասել, այսոնք ընթռնեցին, տարան դշլէն, յօժարութեանն թուրքացուցին, շինեցին ենկիչարի: Այս էր պաճառն որ ասացանք եւ յիշեցանք: Վարջայպէս Լակլար յետ ի ձեռն Մհայմատի: Յետոյ Փաշէն գնալով ի վերայ Յամայդանայ, գնաց եհաս Սալիայվայ կասեն, մին գեղ այ, որ նորա մէջի մարդն փախել էր ի մէջ Յայմայդան: Ահմատ փաշէն տեղն նստավ Դ [90] յավուր, տեսավ որ պարսոյ մարդն դուս չի գալիս ի քաղքէն:

Ահմատ փաշէն երբ 2 [6] օր անցավ, ըսկսեց յառաջ գնալ: Գնաց Ենկիշայ կասեն, որ քաղաքին մոտ այ, այսչաբ որ մինչ ի կես սըհաթ այսչաբ հեռի է: 2 [6] յաւուրէն յետոյ պարսից ազկն դուրս եկավ քաղգէն, օսմանցին յետես որ պարսոյ մարդն գալիս այ, վեր կացավ շուտով, յառաջ գնաց օսմանցին, ելավ կռիվն Լալինայ դղումն մէջ, Լալին մէջ գօրովան եղաավ ասոնց կռիվն: Պարսոյ մարդն այնչաբ շատ են, այլոց ասացեալն որ կասեն Յամայդանայ մէջն կայ ՅՌ [300.000] հզօրք, մեծ կամ փոքրն. օսմանցուն կայր այսչաբ հզօրս՝ որ ի մէջ պատմութիւնս գրաց եմ եւ յիշեալ եմ: Վերջայպէս Գ [3] անգամ պարսոյ մարդն դուս եկավ, ոչ կարաց յախտութիւն տալ, յախտվեցավ, եփախ, եմուտ Յամայդանայ մէջն:

Օսմանցի գնաց պատեաց չորք կողմն քաղաքի, լարեաց թօբերն ի վերայ քաղաքին. ԺԵ [15] թօբ լարեաց ի դուռն Ջուլֆան, 2 [6] թօբն լարեց Մուխտարան, ԺԱ [11] թօբ լարեաց ի դուռն Սիջանայ, Ը [8] թօբ լարեաց ի դուռն Ղայտայրանայ, ԺԲ [12] թօբ լարեաց ի դուռն Յէյդարու, Ը [8] թօբ լարեաց ի դուռն Թուսուրքանու մէջի: ԾԵ [55] օրն ոչ կարացավ առնել Յայմայտան: ԾԵ [55] օրն որ վերջ եղավ, օսմանցին քաղաքին վերայ երիշ արաւ. օրն երկուշաբթի, Աստուած փրկէ Տէրն ազատէ, երբ որ Դ [4] կողմէն սկսեցին օսմանցին այլայկերպով երիշ անելով, երկինք գետինք շարժեցավ: Երբ օսմանցին գնաց եհաս բերդի տակն, որ մտանէ ի մէջն բերդի, պարսոյ մարդն ի մէջ բերդոյ՝ անպիսի կրակ կամ թէ սուր թաբեցուց ի գլուխոյ օսմանցոյ, Աստուած փրկէ Տէրն ազատէ, որ օսմանցին այնպէս թաբեցավ, ինչ որ երնայցէն անձրեւ լինի հեղում, մարդ մարդոյ վերայ է դասվեալ: Վերջայպէս օսմանցին յետ դառցավ, գնացին իւրեանց եօթեանն: Ահմատ փաշէն իւր հզօրին ականեց հայեցավ, որ իւր հզօրիցն ԺԲՌ [12.000] հզօրք էր անցեալ սրով կամ թվանթով. այսպէս յիմասցուք սիրելի մեր տերանց որ յիշեցանք: Յետ այնորիք վերջայպէս Ահմատ փաշէն հրայման ետ թօբայպետին հանայպագ Կ [60] թօբն կրակելով ի վերայ քաղաքին ԻԵ [25] օր, ոչ կարաց առնել քաղաքն:

Մին արգրումցի բաբուշի Ղարայ Բիբար կասեն, լավ պատվայկան լաղում գիտեր, որ լավ լաղումջի էր, մանայվանդ փաշէն ունէր լաղումջի ոչ: Էր այնպիսի վարպետ. եկ ի մօտ փաշին, ասաց. «Փաշէն ողջ լինի, ես լաղումով կառնեմ քաղաքն»: Փաշէն հավանեց ասոր ասաց բանի. փաշէն յետ ասոր Ի [20] հատ բանւոր յաշակերտ, իւրեանց հացն, իւրեանց ուտելիքն, ամենայն կերայկուրն սոցան: Ըսկսեցին լաղումին շինել. մտան ի տակն, կես ժամէն տեղ շինեցին, որ տարան բերդի մէջն մտան, գետնի տակն քանդելով մինչ ի մէջն բերդի: Մինչ ի ԺԴ [14] օրն թամամեցին, պռճան: Վերջայպէս եկ հաս ի ժամանակս ԶԸ [88] օր. ԶԸ [88] օրէն յետոյ ըսկսեցին կռիվն բազում. օրն ուրբաթ: Օսմանցին ըսկսեց քաղաքին վերայ երիշ անայ: Երբ որ ենկիչարի ըսկսեց քաղաքի վերայ երիշ, լաղումն կրակեցին: Աստուած փրկէ Տէրն ազատէ, երբ կրակեցին լաղումն՝ առավ բերդի կեսն ելավ երկինք: Որդի հօրն ուրացավ, հայր որդուն. օսմանցին մտավ ի մէջ բերդին, ըսկսեց սուրն քաշել: Որ սայ լաղումն Ջուլիանայ դռնիցն կրակեցին՝ օսմանցին սուրն քաշելով գնաց, օսմանցին մինչ ի եհաս քրիստոնի եկեղեցոյ դուռն: Այս ողորմելի քրիստոնէքըս ի մէջ եկեղեցոյ բովանդակ, որն սուրն քաշեցին, որն գերի վարեցին:

Մանայվանդ օսմանցու հզօրքի մէջն 2 [6] հայմանդանցի մեծ իշխանք կեր, որ Ահմատ փաշին հետ էր եկել, եւ իւր հզօր մէջումն են: Որ մէկի անուն էր մահտեսի Յարութին, մէկի անուն էր Պրն. Մաթեսու, մէկի անուն էր Մանի Մանասէ անվանի, մէկի անուն էր Մասեհ, մէկի անունն Վարդան, մէկի անունըն Մլու, որ ճշմարիդ Պետրոս: Այս իշխանքս Ահմաթ փաշին մոտ գնացին թէ՛ «Մենք քրիստոնէայ ենք, խարջ կտանք քեզ, մեր գերիքն հրայմայէ որ մեզ յետ տան, մանայվանդ դեռ քաղաքի մէջն կռիվ այ,

քաղաքի մին կողմն առնել այ օսմանցին, մին կողմն չէ կարում առնել, դեռ կռիվ ի մեջ քաղաքի»: Վերջայպես Ահմատ փաշեն հրայման ետ, գերիքն յետ տվին, կես այ կես որն տվին, որն տարան: Այսպիսի օսմանցին որ է ի մեջ քաղաքին, կռիվ գնաց եհաս Մուխտարանայ Մահլաթ կասեն: Է [7] օր տեղն կռիվ ելավ, Ալի Շիաբագ, Ալի Քրբիթ, Ալի Յասան բեք, այսոնք որ յիշեցայ, սորանք քաղաքի մեծ քաղայքապետն են, կռիվ արին: Էս քաղաքիս մեջն որ էր մին խան, անունըն Ըռայմազան խան կասեն, այս փախավ, քաղաքի մարդն մնաց անտեր: Սոքանք այսչաբ կռիվ արին օսմանցուն հետ. Է [7] օրեն յետոյ Մուխտարանայ թաղն առան, մնաց Յեյդարի թաղն, Մաթուլայ թաղն: 2 [6] օր էլ ասոնք կռիվ արին. վերջայպես բովանդակ օսմանցին առավ քաղաքն. անչաբ գերի արին որ ոչ ունի համբար, անքնընելի, անհսար, որպէ[ս] գերի վարեցին: Ահմատ փաշեն եկ ի մեջն քաղաքի, հրայման ետ թէ՛ «Էդ ըսպանաց մարդիքըն քաղաքիցն դուս քաշեցեք, որ քաղաքի մեջն հոտ չընի», որ այչաբ մարդ սրով անսավ խաներումըն մօլթանիին ըսպանել որ անթիվ, որ հայոց բառ՝ կովայպաշտ, օսմանցու լեզվավ՝ գուրի պարսի լեզոյ՝ մօլթանի. այս որ ասացանք որ շատ կօտորվել էր. ոսկին կամ արծաթն փողն՝ խալեջոնց տակ են մնացեալ, յարունի հետ խառնեալ փողն կամ դրամն, ոսկեղեն կամ արծաթեղեն, մնացեալ էր այսպես անտեր, որ այնչաբ դրամ վեր առավ օսմանցի՝ որ արծաթ դրամն տեսներ վեր ձգաց, ոչ վեր առնէ, որ այնչաբ գանձի տեր եղավ օսմանցին:

## Թ

Ահմատ փաշեն նստավ տեղն մինչ ի մին տարին: Սուլթան Ահմատն ի Ղարայ Մուստայֆայ փաշին տվեց Յայմայտան, եւ եկ Յամայտան: Ահմատ փաշեն վեր կացավ գնալով Բաղդադ: Երբ որ Ղարայ Մուստայայ փաշեն եկ ի Յամայտան նստավ, աղվանըն մարդ դրկեց թէ՛ «ՉՅամայդան դարդակեայ, վեր լել գնա»: Ղարայ Մուստայֆայ փաշայ գրեց աղվանին թէ՛ «Ես չեմ կարող ձեզ տալ իմ քաղաքն, ես իմ դագայորին գիր դրկեմ, իմ դագայորս ինչպես հրայման կտայ, ես անպիսի կանեմ»: Աղվանըն ասաց. «Լավ պատվայկան խորհուրդ այ այդ խորհուրդըդ որ դուն ասեր»: Յավանեցավ այս բանի աղվանն, համբերեց մինչ ի դագայորիցն խաբար գալն: Թագայորն հրայման ետ Դ [4] դռնայպետի՝ լավ ըսգեստ Ահմատ փաշին համար, գրել է թէ՛ «Ահմատ փաշայ, քեզ մեծայորեցի, որ գնաս աղվանին վերայ, Լ [30] փաշայ ի քեզ հասնի, որ հրայման եմ տվել, գան որ դուն լինես մեծայոր, գնաս ի աղվանին վերայ»: Ահմատ փաշես իւր պատրաստութիւնն տեսավ այսպիսի. Ահմատ փաշեն, արաբ շի Նասըրի կասեն, ԻԴԴ [24.000] արաբ պատրաստեց մինչ ի Լ [30] փաշի գալն, մինչ ի Դ [4] ամսոյ՝ եկին հասին Բաղդադ:

Վերջայպես Ահմատ փաշեն վեր կացավ այս Լ [30] փաշովս, իւրեանց պատվայկան հզօրբովս, գնալով աղվանին վերայ: Աղվանն լսեց թէ օսմանցին գալիս այ, այն ոք իւրեանց պատրաստութիւնն տեսին: Ահմատ փաշին հզօրքն, այլոց ասելոյ՝ ԳՃԴ [300.000] հզօրք ենկիչարի, կամ ջայբայջի, կամ ըսպայիի, կամ թարախալու ըսպայիի, կամ մերի բէյրադի, կամ սերդեգէշտի, կամ տալղիջ, կամ Դիեարբեկրու քուրդ, որ սուլթան Ահմատի մերն է, իւր քեսակիցն փող տվել ԷԴ [7.000] Դիեա[ր]բեգրուի քուրդ դրկել կռիվ: Վերջայպես այսչաբ հզօրք են որ վերոյ յիշայցելալ եմ այսպես, եւ Ահմատ փաշեն որ վեր կացավ գնալ ի վերայ աղվանին:

Բաղդադու որ դուս ելավ, եկավ Ղզրայբատ, որ մին գեղ այ, եկ եհաս տեղն. իւր հզօրն Գ [3] բաժին արավ. մին բաժին դրկեց Ղարայջօրանայ վերայ, մին բաժին դրկեց Բաջիլանայ վերայ, մին բաժին իւր հետ վեր արավ, եւ ինքն գնալով Չաղօվու վերայ: Դարձեալ յայտ լինի կարդացողաց եւ լսողաց, որ այնչաբ հզօրք էր որ երկիեր բռնել

Ահմատ փաշէն, գնաց եհաս Զրմանշայի. տեղն սստավ մինչ ի իւր հօրն գալն, ԺԶ [16] օր սստավ: Զգօրն եկ հասավ, այն յավուրն մին խաբար էր դրկել Ահմատ փաշին Ղարայ Մուստաֆայ փաշէն, թէ՛ «Աղվանն գալիս այ Զամատանայ վերայ, ես մենակ եմ, չունեմ հօրք, վախում եմ աղվանիցն»: Երբ որ այս խաբարս լսեց Ահմատ փաշէն, շուտով վաղվաղակի հեծան հեծելն գնալով եկին հասին Սայինայ, Սայնու յետ վեր կացի, գնացին Քանգայվար, Քայնգայվարու գնացի Մուշբուլախ, որ մին յախբուր այ նորայ դուս եկել, քանզի շատ ջուր այ դուս գալիս ես յախբուրես վերայ: Վեր եկին այս հօրքս փաշի, տեղես վեր կացին, գնացի Սուղուր, որ անվանի Սուղուր. Սուղուրու վեր կացին գնացին Թաժիթ. Թաժիթու վեր կացին՝ գնացի Թարջիլ. Թարջիլու վեր կացի գնացի Սատայվայ: Յայտ լիցի կարդայցողաց եւ լսողաց որ Ահմատ փաշէն հետն թօք չէ տանում: Պատճառն ինչ է. ըսկիզբն որ Ահմատ փաշէն որ գնաց Զամայտան, առավ վաթսուն թօք, տեղն բաց եթող. պատճառն այս է: Վերջայպէս Ահմատ փաշէն Սայդավու վեր կացավ, Սատայվու սարն անցավ, գնաց, մին ջուր կայ տեղն, որ անունն Չաֆռան կասեն, որ Զայմադանայ Դ [4] ժամէն ճանհայպար այ: Ղարայ Մուստաֆայ փաշէն լսեց որ Ահմատ փաշէն գալիս այ, վեր կացավ, եկավ Ահմատ փաշին դէմ, եկ եհաս ի մոտ Ահմատ փաշին: Ահմատ փաշէն սորայ լավ պատվայկան ըսգեստ հագծուծ, տեղէն վեր կացին գնացին Զամայդան:

Ահմատ փաշէն ոչ մտավ Զամայտան: Զամայտան մոտն մին գեղ կայ, որ անուն Լալին կասեն, մին կողմն Լալին, մին կողմն Գօրովան: Ահմատ փաշէն տեղն վեր եկավ իւր հօրօքն մնաց մինչ ի Գ [3] օր, աղվանին խաբար դրկեց թէ՛ «Ձեզ վերայ եմ գալիս»: Գնաց եհաս այս մարդս մոտն աղվանի, բաց եւ գիրն կարդաց որ գրել այ թէ՛ «Ձեզ վերայ եմ գալիս»: Աղվանն լսեց այս բանս, այլայկերպեցավ, այս գիր տանօղ մարդուս եդի ի մէջ երկաթի, պահեց:

Ահմատ փաշէն լսեց որ իւր Էլչին դրել են երկաթ, վեր կացավ Ահմատ փաշէս, գնալ ի վերայ աղվանի: Վեր կացավ Զամայդանանայ, եկ ի Մարանդ, Մարանդու վեր կացավ եկ ի Ղաջլբանթ կասեն. եկ ի տեղն աղվանն: Աղվանն ոչ եկավ յառաջ, օսմանցին գնաց յառաջ, մինչ ի Թարիջայ կասեն, որ դէպ ի Շանգվանայ հատումն այ, որ Շանգվան անվանի, նորա տակն անվանի, մինչ ի տեղն օսմանցին մին տուտն տեղն մին տուտն Զայմատան մոտ. այսպիսի որ ասացի եւ յիշեցի:

Յայտ լիցի լողաց եւ կարդացողաց, որ տասն օր օսմանցին տեղն սստավ, աղվանն չեկավ, յառաջ օսմանցին ըսկսեց գնալ, յառաջ գնալով գնաց մին օր յառաջ, որ մէջ Շանգվան, մէջ Ֆալիան, տեղն սստավ մինչ ի Զ [6] օր:

Աղվանըն եկ Զ [6] օրէն յետ, օսմանցին այնչաբ շատ էր որ միմեանց չեն ճանաչում, այսպիսի շատ են: Եկ աղվանըն, ելավ սոցանց կռիվն: Օսմանցին նախ եւ յառաջ սոցանց յախտեց, աղվանն եփախ: Աղվանի թագայորն շատ կախարդայկան բան է, կախարդայկան արուեստի հետեւաց էր: Երբ որ աղվանն եփախ, աղվանի դագայորն կախարդայկան գրով կամ արեստով ԲԴ [2.000] հօրով յետ դառցավ, ԳՃԴ [300.000] օսմանցու հօրքն յաղթեց ԲԴ [2.000] մարդով: Ահմետ փաշէն եփախ, ոչ կարաց դեմայդիր կանգնիլ: Դարծ սիրելիք մեր, դորա պատճառն ի՞նչ է որ ասում թէ կախարդայկան արուեստի տեղակ էր: Այս է պատճառն, որ օսմանցին եփախ եկ ի Զամատան, բովանդակ կասեն թէ՛ «Ես տեսայ ինձ վերայ, կրակ էր թաբումե. ոմանք կասեն թէ՛ «Թեվայոր յօձ էր գալիս ինձ վերայե. ոմանք կասեն՝ «Փափչելէս յառաջըս ծօլ էր դառել»: Այսպէս մարդն մին տեսիլ են տեսել ի մէջ կռիվն: Չայս բանս որ օսմանցին տեսավ, վախեց թէ Ես թագայորս սիաբ դռանայ սէյիտ է սա տըղայ: Ապայ պատճառն ինչ էս այս խօսացս. մանայվանդ աղվանի թագայորն սէյիտ էր, որ Էմիր կասեն, որ



Եմիր անվանի: Մանայվանդ այսոր պատճառն ինչ. Ես աղվանի խերն Եմիր էր անուն, որ կասի Եմիր վեիզ. օսմանցին հենց գիտեր թե ճշմարիտ Եմիր այ, աբայ անունն Եմիր Վեիզ կասեն: Օսմանցին որ տեսավ այսպիսի կախարդայկան բաներ, վախեցավ թե Եմիրայ մենք չենք կարալ սորայ հետ կռիվ անել, որ կերպիվ կերպիվ բաներ տեսին օսմանցի բովանդակ, այսպես ասաց: Դագայորն հրայման էր տվել, որ յաղվելն յետոյ մին էլ գնան ի վերայ աղվանին: Այս կախարդական բանն տեսավ օսմանցի, էլ ոչ կարաց հետն կռվել:

Սուլթան Ահմետին գրեցին փաշէքն մեծ կարդացողերն թե՝ «Այսպես հրաշք նշանց ետ մեզ, մենք չենք սորա հետ կռիվ անել»: Սուլթան Ահմատն Ահմետ փաշին գիր դրկեց թե՝ «Դուն գիտես, հաշտութիւն արայ»:

Ահմատ փաշէն դրկեց մին էլչին աղվանին շահին թե՝ «Մեր թագայորն ուզում այ որ մեզ հետ հաշտութիւն անայ»: Աղվանի թաքայորն ասաց. «Լաւ»: Օսմանցու էլչուն պատիվ ետ, լավ պատվայկան ըսգեստ հակցուց, դրկեց: Վերջայպես աղվանն մին էլչին շինեց, որ իւր մին մեծ խան Է, որ անունն Բլուջ Մհամատ, սորայ հետ յետ պատվայկան քարեր, պատվայկան ակունք, մին մեծ ֆիլ դրկելով աղվանն օսմանցու թաքայորին: Ելավ էլչին ի Ըսպհանայ, գնալով դէպի Ըսդաբօլ: Գալով եկ եհագ Յամայդան, էլչի որ Է Մահմետ խանն Բլուջ անվան. Յամայդան՝ Ղարայ Մուստայֆայ փաշէն Ես էլչուն լավ ազատ, լավ պատիվ, Ժ [10] օր տեղն պահեց: Տասն օրէն յետ վեր կացաւ էլչին տեղէն Յամայդանայ, գնալով գնաց Չաֆրան կասեն, Չաֆրան անվան գոջի. Չահռանայ վեր կացավ եկ ի Սատայվայ, տեղէն եկավ Քանգոյվառ. Քանգոյվառ եկ ի Սայինայ. Սայինու յեկ Բեսթուն. Բեսթունու եկ ի Քրմանշայի. Քրմանշայիու եկ ի Մայտաշ, տեղէն եկ Յառնայվայ, Յառնայվու հետ եկ ի Քրինդ. Քրինդու եկ ի Թաղթարայ, տեղէն եկ ի Չօղօլ: Վերջայպես Յամայդանու մինչ ի Բաղդադ տասնութ օրէն ճանայպարհ այ:

Վերջայպես եկ եհաս Բաղդադ, Ահմատ փաշէն պահեց 28 օր, պատվայկան պատվեց սորայ: 28 օրէն յետ վեր կացավ եկ ի Յիմամ Աղան կասեն, որ օսմանցվին մեծ գուտն այ, որ իւրեանց հաւատն, այն Է կանքացուցել: Եկ ի տեղն, ուխտ արավ գնդին, 2 օր տեղն կացավ, տեղէն վեր կացավ գնաց Յիմամ Աբաս: Տեղէն վեր կացավ, գնաց Թաբալու կասեն, տեղէն գնաց Քարթուտ մանայվանդ Քարթուտ քաղաքայպետ կասեն, որ քաղաքն նորա ձեռուն էր, որ անունըն Ալի Ահամդի. այս Ալի Ահանդէս այս էլչուն լավ պատվայկան պատվեց, Ը [8] օր տեղն պահեց: Ը [8] յավուրէն յետոյ ելավ տեղէն, գնալով եհաս Բաբայ Գուռզուռ կասեն տեղն. ապայ պատճառն ինչ Է Բաբայ Գուռզուռ ասելոյ. այն տեղն որ գետին քանդես կրակ դուս գու գայ գետնի տակէն, այս Է պատճառն: Վերջայպես տեղն խիստ պատվայկան տեղ այ: Էլչին ասաց. «Տեղս մի քանի օր կը նստեմ»: Տեղն նստեցավ 2 [6] օր: 2 [6] օրէն յետոյ, վեր կացավ գնալով եհաս Գօգթաբայ. Գօգթաբու վեր եկավ գնաց Էվրիլ, Էվրիլու հետ գնաց Մսուլ: Վերջայպես գեղեց գեղ այսպիսի հետեւեց գնալ: Յայտ լինի կարդացողաց եւ լսողաց, որ էլչին մին մեծ պատվայկան ֆիլ էր տանում սուլթան Ահմատին հմար: Այս ֆիլս ոտն ուռավ, մնաց ճանայպարհի, աբայ ոչ կարեցավ քալել: Էլչին հրայման յետ ֆլայ պահեն. «Դուք ֆիլն առէք տեղդ կացէք, միչ ի լայվանայ, առէք եկէք»: Ֆլայ պահերն որ են Բ [2] մարդ, այսոնք տեղն կացին թե լավանայ: Մին օր եղավ որ էլչին ֆլի մոտ Է, ջոկվել այ, մին խաբար եկ էլչուն թե՝ «Շուտով հասնիս Ըստամբօլ, շուտով յետ դառնաս, որ շահի որդին խորասանու հետ հօր այ ժողովել, գալիս այ աղվանին վերայ»: Որ լսեց այս բանս էլչին, ի բաց թող իւր ծանրայգոյն բաներն կամ ֆիլն, վաղվաղակի գնաց դէք Ըստամբօլ, Դիարբեգրու մինչ ի Բօլի կասեն, որ մին

դասաբայ այ, որ Ըստամբօլու մինչ գայ Բօլի վեց-տօթն յավուրէն ճանայպարի այ: Այսպէս յիմացի:

Դարձեալ յայտ լինի կարդացողաց եւ լսողաց որ աղվանի շային, որ յառաջայգոյն կեր, որ կասեն կախարդական արուեստի տեր է, այն շահն մեռել այ, այս ուրիշ դագայոր այ, որ անունըն այ շայ Աշրահ, այս է դրկել էլչին. մանայվանդ էն շահն որ կեր յառաջ, որ կասեն կախարդան արուեստ ունի, այն շահն չլում նստաց տեղն, իւր պատիջն հանդիբեց, եւ ինքն իբեան իւր միսն ատամօք ձեվատեց, խենդցավ եւ խելեռեցավ, այնպիսի մեռավ, որ ի կախարդայկան բանըն այդպիսի մին բան այ: Այսպէս այ որ ասացաք, ճշմարդայպէս. թողենք զայս:

Պատմենք զելչին, որ էր հասել Բօլի, տեղէն գնաց Բանջայ կասեն տեղն. վերջայպէս գնաց եհաս Իզիտ, տեղն նստավ տօթն յավուր: Օսմանցու թաքավորն ենքիչար Աղասի դրկեց, շատ բազում ենկիչարօք, եկին տարան Յուսկուտար: Երկու յավուր տեղն մնաց, երկու յավուրէն յետոյ տարան Ըստամբօլ, Ենկի Բաղչի դռնօվն, Դիվան Եօլօվն, Ենկի Դշի մօտօվ, Սալի բազարօվ, Ղարայ գօմրըկի մեջօվն, Էդրանայ դռնօվն դուս տարան, Էիբ սուլթան կասեն, դէնըն անցըրին, տարան Ջուվդղ կասեն տեղն, տեղ տվին, տեղն նստավ Գ [3] օր: Երեք օրէն յետոյ խաբար եկավ թէ ֆիլն մեռել այ, ոչ հասավ Ըստամբօլ, Դիարբեգրու գեսն, մին գեղ անվանի, որ անունըն Արմուտան. ոչ եմ խաբար թէ Արմուտան այ այս գեղիս անունն, այսպէս կարծեօք յիշեցի: Դառնալ ասելոյ էլչին ինչ որ պատվայկան բաներ բերել՝ տարավ թագայորին հավանացուց: Թագայորն էլչուն բերաց պատվայկան բաներին կամ ակունք կամ որպիսի բան, թագայորն լավ հավանեցավ թագայորն այս էլչուս, որ անվանի Մահմետ խան Բլուջ կասեն ասոր: Վերջայպէս վաթսուն յավուր տեղն կացավ էլչի, վաթսուն օրէն յետ՝ թագայորն հրայման ետ գնալու: Այս էլչիս ունէր հինգ հարիւր ձիայոր աղվան, տասեւհինգ զամբարակչի. զամբըրակչի ասելն ինչ պատճառ է, թէ ուղտոյ վերէն լարել են փորթագոյն թօթ, որ հարիւր մսխալ կամ հարիւր յիսուն դրամ առջիջ կու տանի: Այս զամարակչիքս, որ են քրիստոնայ, անվանի անունըն սոցանց՝ մին Ավաք, մինն Աստուածատուր, Յարութին Բաբան, մին Ախիջան, մին Դավիդ, մին Մինաս, որ է Երեւանցի, որ ջուղ յԵրեւանայ: Մնացեալն փերեցին, որ Ըսպիանայ հինգ յագ ճանհայպար հեռի, այսպէս որ յիշեցանք եւ ասացանք: Դարձեալ վերոյգրաց ասացեալ էս էլչու հօգօրին թէ այսչաք հօգօր ունէր, որ էր հինգ հարիւր տասն եւ հինգ հայգ, օսմանցու թագայորն ամենեցուն լավ պատվայկան ըսգեստ կամ դրամ, մին մարդոյ հարիւր մառչիլ, ամենից այսպէս տվեց, լավ պատիվ արավ: Վատսուն օրն թամամվեցավ, ըսկսեց էլչին անցավ Ուսկուտար, Ուսկուտարու վեր կացավ, վերջայպէս նսուն ինն օրն եկ եհաս Յամայտան:

Երբ եհաս Յամայդան, տասներեք յավուր տեղն մնաց: Տասներեք յավուրէն յետ՝ Ըսպիանայ գիր եկավ թէ՛ «Շայ Զուսէնի որդին, որ անվանի շայ Թահմազ, եկեալ է Ըսպիան, տիրել է աղվան, բօվանդակ սուրն այ քաշել, Ըսպիան առել այ ի ձեռաց աղվանի»: Այս էլչիս մնաց տեղն Յամայդան մինչ երեսուն եւ հինգ օրն:

Աբդռահման փաշայ կասեն, որ Յամատան էր, նորա ձեռին սայ Աբդռահման փաշէս եկ հարցուց էլչուն թէ՛ «Կուզե՞ս գնաս Ըսպիան»: Էլչին ասաց թէ՛ «Չեմ գնալ ես, կը վախեմ պարսոյ թագայորիցն»: Փաշէն ասաց. «Յամբերէ, ես գիր գրեմ իմ թագայորին, ինչպէս որ կասայ ես էնպէս կանեմ»: Գիր դրկեց դաբայորին թէ՛ «Շայ Թահմազն Ըսպիան առել այ ի ձեռացն աղվանի, էլչին մինչ ի ես թարիզս պահել եմ, ինչպէս որ հրաման կտաս այնպէս անեմ»: Թաքայորն գրել էր փաշին թէ՛ «Ես շատ ակուն պատվայկան քար եմ տվել իւրն, որ տանի իւրեանց դաբայորին, ձեռնէն առ իւրն բաց

թող»: Փաշէն առավ այս ակուբս, Էլչուն ի բաց թող: Էլչին ասաց փաշին, թէ վախում եմ գնալ Ըսպիան, ինձ մին Էլչի շինեցէք ձեր անվանովն, գնամ տեսնեմ հզօրն պարսոյ շայիի, յետոյ յետ գամ»: Աբդռահման փաշէն սորայ շինեց Էլչի, դրկեց Ըսպիան. երկու հարուր ձիայորօք այս խանըս գնաց եհաս Ըսպիան շայիին մոտ: Շային հարցուց թէ՝ «Դուն ո՞ր ես գնացել, կամ ո՞ր ես եկել»: Ասաց. «Խանըն ողջ լինի, աղվանն ինձ դրկել էր Էլչութեան, գնացի եկայ»: Շայիըն ասաց. «Ո՞ւմ պիտի ջուղաք տաս աղվանն գնաց ելայ»: Խանըն ասաց. «Թագայորն ողջ լինի, յառաջ քոյ հօր ժամանակի ես մին մեծ խան է, ապայ Աստուած մեզ բարկացավ, քոյ հօր թախտն գնաց մինչ ի ես թարիղս. հիմայ Աստուած ուզել այ քեզ, եկիր առիր աթոռն քոյ հօր. հիմայ խնդրեմ քեզն որ իմ առաջի տեղն էլ ինձ տաս»: Շային երեստ իւր յառաջի մեծութիւնն, զուգայորեց մին խան, տեղն մնաց, էլ ոչ գնաց օսմանցու մէջ, ոչ տարավ խաբար: Այս է որ յիշեցանք եւ ասացինք:

Վերջայայես, Մահմետ խանն Բլուջ, որ գնաց Ըսպիան թէ օսմանցու համար խաբար բերի, գնաց տեղն մնաց, ոչ յետ դառցավ: Աբդռայման փաշէն Յայմանդանու, գիր դրկեց սուլթան Ահմատին թէ՝ «Դու գրեցիր ինձ թէ եղ Էլչու ձեռին ինչ որ կայ առ յաբուցէն, բաց թող գնայ Ըսպիան. ինչ որ կեր յաբուցէն առի մեզ համար, դրկեցի որ մեր կողմանէն գնայ տեղն Ըսպիան, տեսնէ ինչ կայ, յետ դառնայ, գայ մեզ խաբար բերի. սայ գնաց էլ ոչ երեր խաբար»:

Գ [3] ամիս անցնելոյ յետ, Ըսպիանայ մին բաղդադցի քրիստոնայ եկավ, որ անունն անվանի Սարուխա, որ էր կաթուղիգ, եկ ի պատրի Անդոնի վանքումն իջավ Յամայդան: Օսմանցին լսեց որ սա եկել այ, Բ-Գ [2-3] չուխայդար դրկեց վաղվաղակի ասոր, յետոյ վեր կացին, գնացին փաշին մոտ, որ Աբդռահման փաշէն եհարց այս քրիստոնէս թէ՝ «Ըսպիանա՞յ ես գալիս, ի՞նչ խաբար ունես»: Այս քրիստոնէս ասաց. «Փաշէն ողջ լինի, Ըսպիանայ այս խաբարս ունեմ որ ձեր դրկած Էլչին եկավ տեղն, հասավ տեղն, շահն մեծ խան շինեց, նորայ համար էլ չի գալ: Մին խաբար էլ, որ շայի Թամազն Ըսպիան նստեց»: Թահմազ Ղուլի խանն գնաց Շերագու վերայ, որ աղվանն դեռ տեղն էր, մանայվանդ աղվանըն որ Ըսպիանայ փախել էր, գնացել էր Շերագ: Տեղն աղվան կեր, որ Չլալ խան կասեն անունըն, մին էլ մօլայ Չաֆռան կասեն, որ իւրեանց մեծ կարդայցողն էր: Ասոնք տեղէն Շերագ ՉԷՌ [6-7.000] զօրով, մօլայ Չաֆռանըն Շերագու երեք յավուր տեսներ որ Աբու Քուրանայ ջուր կասեն, որ Բախտիարու գը գայ Շերագու մոտովն կանցնի, այս ջրիս վերայ նստաց էր մօլայ Չաֆռանըն:

Թահմազ Ղուլի խանըն գնաց ՉԷ [6.000] զօրով, եհաս մօլայ Չաֆռանին, ելավ իւրեանց կռիվն: Մօլայ Չաֆռանըն յախտվեցավ, զօրքն անցավ սրով: Սա մօլայ Չաֆռանըս եփախ թէ գնայ ջրի կարմուշովն անցանի. Թահմազի զօրքն պատեաց ըսճանհայպարին ձորայ, ոչ կարեցավ փախչել, յինքն իւրան կամուրջէն ձգեց ջուրն եւ անցավ ջրով:

Թահմազ խանն տեղէն ելավ, գնաց Շերագ, ոչ մտավ Շերագ. այսպէս հեռայգուն քաղզէն իջավ: Աղվանըն լսեց թէ Թահմազ խանըն գալիս այ, դուս եկին քաղզէն բովանդակ: Թահմազ խանըն էլ տեղէն վեր կացավ, եկին հասին միմեանց. ելավ սոցա կռիվն: Աղվանն յախտվեցավ, եփախ:

Թահմազ խանըն վեր կացավ Շերագու, գնալով Եզդու վերայ, որ տեղն էլ շատ աղվան կեր: Այս աղվանիս մէջումն մին օսմանցի կայ, որ անունըն Թամուր խան, սա լսեց թէ Թահմազ խանըն գալիս այ, աղվանիցն ջոկվեց ճ [100] ձիայոր ունէր, Եզդու

տակովն փախավ գնաց Ղարայգոզլվի միջովն դուս ել: Հասավ Համայդանայ երկիրն, որ օսմանցին տեղն այ, Համայդանայ մէջն չը մտավ: Համայդանայ մոտն մին Չահտարանան կասեն, մին քանդաց ավերաց բերդ այ, գնաց տեղն, Էն բերդն ավերումըն շինեց սահմանեց, տեղն նստավ բնայկալավ ճ [100] մարդովն:

Վերջայպէս թողունք գայս յիշենք Թահմագ խանն: Թահմագ խանն Շերագու վեր կացավ իւր զօրքովն, գնաց Եզդու վերայ. կռվեց ի հետ աղվանին, յախտեց աղվանին, աղվանն՝ որն անցան սրով, որն փախին. այսպէսի որ յիշեցանք եւ ասացանք: Թահմագ խանըն Եզտ նստաավ 28 օր. ԻԸ [28] օրէն յետոյ վեր կացավ Թահմագ խանըն, յետ դառցավ որ գայ Ըսպիան: Շային լսեց թէ Թահմագ Ղուլին գալիս այ: Մարդ դրկեց Թահմագին թէ՛ Լօռն Բախտիարին զօրայցել այ, մեր գեղերն մեր գերայվարում այ. գնաս նորա վերայ»: Թահմագ խանըն գայս բանս լսավ, շուտով վեր ել, գնալով ի վերայ Բախտիարու: ԺԴ [14] օրն գնաց եհաս Բախտիարի, Բախտիարու հետ կռվեց, Բախտիարին յախտվեցավ, սրով անցան բովանդակ: Շահ Թահմագին խաբար գնաց Ըսպահան, շահն յուրախացավ եւ ինդաց, դրկեց Թահմագին լավ պատվայկան ըսգեստ հազճուճ:

Թահմագ խանն մարդ դրկեց շահ Թահմագին թէ՛ «Ուզում եմ գնամ Դասվել Շուշտարայ վերայ, որ նորանք էլ թաքավորին ներհակ են, որ ԻԶ [26] գեղ գեր են վարել»: Շայի Թահմագն գրեց թէ՛ «Էդ կողմդ ինչ որ ինձ ներհակ ասգն կայ, սուրն քաշես»: Թահմագ խանըն վեր կացավ, գնաց Դասվել Շուշտար, տեղն կռիվ արավ մինչ ի ԺԴ [14] օր: Աստուած փրկէ Տերն ազատէ, յարուն թաքեց, ինչ որ գետ այնպիսի գետի պէս գոջալ է վագ կու տար յարունըն: 14 օր որ կռիվ ելավ Դասվել Շուշտարու ազգն յախտվեց, ԺԵԸ [15.000] տուն գերի արավ, Թահմագ խանըն դրկեց խորասան, որ անվանի Մաշատ: Այսպէս գերայվարութիւն որ լսեց շահ Թահմագն կամ յախտութիւն, շատ բազում ուրախացավ, քաղաքումըն փողոցներ զարդարեցին, լավ ուրախութիւն արին, մանայվանդ սորայ զօրքն: Մտացենք ինչ չափ այ Շերագու հետ, որ եկել այ մինչ ի Դասվել Շուշտար, եօթն Ռ [7.000] զօրք ունի, ոչ է յառավել, մանայվանդ այս Դասվել Շուշտար որ յիշեցի եւ ասացի, որ կցորդ բախտիարու հետ մին են: Պատճառն ի՞նչ է որ սոքանք միայքան չեն գալիս կռիվ: Ղայլայի Դուխտարան կասեն, որ Բախտիարու մեծ գլխայորն այ, սոցանց մէջն խարդայխութիւն կայ, միմեանց խոռով են. երբ որ Թահմագ խանըն գալիս այ կռիվ, միմեանց օգնութիւն չեն անում. Թահմագն սոցանց փորքն փորքն սուրն այ քաշում:

Ղայլայի Դուխտարանայ մեծայորն որ լսեց թէ Թահմագ խանն այսչափ բազում կռիվ այ անում, ըսկսեց իւր պատրաստութիւնն տեսանել: Երբ որ պատրաստութիւնն տես պռճավ, ճխԵՌ [145.000] զօրի պատրաստութիւնն տեսավ, որ եղավ այսչափ ճխԵՌ [145.000] զօրք, առավ գնաց Ղայլայի Դուխտարանայ Դ [4] կողմն բռնեց, , նստավ: Հավուզայ կասեն, էլ սոցանց ասգէն են. երբեմըն սոսանք էլ ջոգվել են սորանց մեծայորին Ալի Մարդան խան կասեն. վերջայպէս սորանք իւրանց պատրաստութիւն տեսին:

Թողնենք ըսսայ, յիշենք Թահմագ խանըն, որ Դասվել Շուշտար առավ եօթն Ռ [7.000] զօրքով: Մարդ դրկեց շահին թէ՛ «Կ՛ուզեմ գնամ օսմանցու վերայ»: Շային դաբիլ չի եղավ, թէ «Ես նորանց էլչի եմ դրկել, տեսնենք ինչ խաբար գը գայ, յետոյ մեր պատրաստութիւնն կու տեսնենք»: Մտացենք թէ այս էլչիս ով է. Աբդուլ բաշի խան կասեն, որ Շխալի խանի ասգիցն այ, որ է Զրմանշայու խանըն:

Ահմատ փաշեն նստավ տեղն մինչ ի մին տարին: Սուլթան Ահմատն ի Ղարայ Մուստայֆայ փաշին տվեց Յայմայտան, եւ եկ Յամայտան: Ահմատ փաշեն վեր կացավ գնալով Բաղդադ: Երբ որ Ղարայ Մուստայայ փաշեն եկ ի Յամայտան նստավ, աղվանըն մարդ ղրկեց թէ՛ «ՉՅամայդան դարդակեայ, վեր լել գնա»: Ղարայ Մուստայֆայ փաշայ գրեց աղվանին թէ՛ «Ես չեմ կարող ձեզ տալ իմ քաղաքն, ես իմ դագայորին գիր ղրկեմ, իմ դագայորս ինչպէս հրայման կտայ, ես անպիսի կանեմ»: Աղվանըն ասաց. «Լավ պատվայկան խորհուրդ այ այդ խորհուրդըդ որ դուն ասեր»: Յավանեցավ այս բանի աղվանն, համբերեց մինչ ի դագայորիցն խաբար գալն: Թագայորն հրայման ետ Դ [4] դռնայպետի՝ լավ ըսգեստ Ահմատ փաշին համար, գրել է թէ՛ «Ահմատ փաշայ, քեզ մեծայորեցի, որ գնաս աղվանին վերայ, Լ [30] փաշայ ի քեզ հասնի, որ հրայման եմ տվել, գան որ դուն լինես մեծայոր, գնաս ի աղվանին վերայ»: Ահմատ փաշես իւր պատրաստութիւնն տեսավ այսպիսի. Ահմատ փաշեն, արաբ շի Նասրի կասեն, ԻԴԴ [24.000] արաբ պատրաստեց մինչ ի Լ [30] փաշի գալն, մինչ ի Դ [4] ամսոյ՝ եկին հասին Բաղդադ:

Վերջայպէս Ահմատ փաշեն վեր կացավ այս Լ [30] փաշովս, իւրեանց պատվայկան հզօրքովս, գնալով աղվանին վերայ: Աղվանն լսեց թէ օսմանցին գալիս այ, այն ոք իւրեանց պատրաստութիւնն տեսին: Ահմատ փաշին հզօրքն, այլոց ասելոյ՝ ԳՃԴ [300.000] հզօրք ենկիչարի, կամ ջայբայջի, կամ ըսպայիի, կամ թարախալու ըսպայիի, կամ մերի բէրաղի, կամ սերդեգէտի, կամ տալլիջ, կամ Դիեարբեկրու քուրդ, որ սուլթան Ահմատի մերն է, իւր քեսակիցն փող տվել ԷԴ [7.000] Դիեա[ր]բեգրուի քուրդ ղրկել կռիվ: Վերջայպէս այսչաբ հզօրք են որ վերոյ յիշայցելալ եմ այսպէս, եւ Ահմատ փաշեն որ վեր կացավ գնալ ի վերայ աղվանին:

Բաղդադու որ դուս ելավ, եկավ Ղզրայբատ, որ մին գեղ այ, եկ եհաս տեղն. իւր հզօրն Գ [3] բաժին արավ. մին բաժին ղրկեց Ղարայջօրանայ վերայ, մին բաժին ղրկեց Բաջիլանայ վերայ, մին բաժին իւր հետ վեր արավ, եւ ինքն գնալով Չաղօվու վերայ: Դարձեալ յայտ լինի կարդացողաց եւ լսողաց, որ այնչաբ հզօրք էր որ երկիեր բռնել Ահմատ փաշեն, գնաց եհաս Քրմանշայի. տեղն նստավ մինչ ի իւր հզօրն գալն, ԺԶ [16] օր նստավ: Յզօրն եկ հասավ, այն յավուրն մին խաբար էր ղրկել Ահմատ փաշին Ղարայ Մուստայֆայ փաշեն, թէ՛ «Աղվանն գալիս այ Յամատանայ վերայ, ես մենակ եմ, չունեմ հզօրք, վախում եմ աղվանիցն»: Երբ որ այս խաբարս լսեց Ահմատ փաշեն, շուտով վաղվաղակի հեծան հեծելն գնալով եկին հասին Սայինայ, Սայնու յետ վեր կացի, գնացին Քանգայվար, Քայնգայվարու գնացի Մուշբուլախ, որ մին յախբուր այ նորայ դուս եկել, քանզի շատ ջուր այ դուս գալիս էս յախբուրես վերայ: Վեր եկին այս հզօրքս փաշի, տեղես վեր կացին, գնացի Սուղուր, որ անվանի Սուղուրու. Սուղուրու վեր կացին գնացին Թաժիք. Թաժիքու վեր կացին՝ գնացի Թարջիլ. Թարջիլու վեր կացի գնացի Սատայվայ: Յայտ լիցի կարդայցողաց եւ լսողաց որ Ահմատ փաշեն հետն թօբ չէ տանում: Պատճառն ինչ է. ըսկիզբն որ Ահմատ փաշեն որ գնաց Յամայտան, առավ վաթսուն թօբ, տեղն բաց եթող. պատճառն այս է: Վերջայպէս Ահմատ փաշեն Սայդավու վեր կացավ, Սատայվու սարն անցավ, գնաց, մին ջուր կայ տեղն, որ անունն Չաֆռան կասեն, որ Յայմայդանայ Դ [4] ժամն ճանհայպար այ: Ղարայ Մուստայֆայ փաշեն լսեց որ Ահմատ փաշեն գալիս այ, վեր կացավ, եկավ Ահմատ փաշին դեմ, եկ եհաս ի մոտ Ահմատ փաշին: Ահմատ փաշեն սորայ լավ պատվայկան ըսգեստ հագծուձ, տեղեն վեր կացին գնացին Յամայդան:

Ահմատ փաշեն ոչ մտավ Յամայտան: Յամայտան մոտն մին գեղ կայ, որ անուն Լալին կասեն, մին կողմն Լալին, մին կողմն Գօրօվան: Ահմատ փաշեն տեղն վեր եկավ իւր հզօրքն մնաց մինչ ի Գ [3] օր, աղվանին խաբար ղրկեց թէ՛ «Ձեզ վերայ եմ գալիս»:

Գնաց եհաս այս մարդս մոտն աղվանի, բաց եւ գիրն կարդաց որ գրել այ թէ՛ «Ձեզ վերայ եմ գալիս»: Աղվանն լսեց այս բանս, այլայկերպեցավ, այս գիր տանօղ մարդուս եղի ի մէջ երկաթի, պահեց:

Ահմատ փաշէն լսեց որ իւր էլչին դրել են երկաթ, վեր կացավ Ահմատ փաշէս, գնալ ի վերայ աղվանի: Վեր կացավ Յամայդանանայ, եկ ի Մարանդ, Մարանդու վեր կացավ եկ ի Ղզըբանթ կասեն. եկ ի տեղն աղվանն: Աղվանն ոչ եկավ յառաջ, օսմանցին գնաց յառաջ, մինչ ի Թարիջայ կասեն, որ դէպ ի Շանգվանայ հատումն այ, որ Շանգվան անվանի, նորա տակն անվանի, մինչ ի տեղն օսմանցին մին տուտն տեղն մին տուտն Յայմատան մոտ. այսպիսի որ ասացի եւ յիշեցի:

Յայտ լիցի լողաց եւ կարդացողաց, որ տասն օր օսմանցին տեղն նստավ, աղվանն չեկավ, յառաջ օսմանցին ըսկսեց գնալ, յառաջ գնալօվ գնաց մին օր յառաջ, որ մէջ Շանգվան, մէջ Ֆալիան, տեղն նստավ մինչ ի 2 [6] օր:

Աղվանըն եկ 2 [6] օրէն յետ, օսմանցին այնչաբ շատ էր որ միմեանց չեն ճանաչում, այսպիսի շատ են: Եկ աղվանըն, ելավ սոցանց կռիվն: Օսմանցին նախ եւ յառաջ սոցանց յախտեց, աղվանն եփախ: Աղվանի թագայորն շատ կախարդայկան բան է, կախարդայկան արուեստի հետեւաց էր: Երբ որ աղվանն եփախ, աղվանի դագայորն կախարդայկան գրով կամ արեստով ԲՌ [2.000] հզօրով յետ դառցավ, ԳՃՌ [300.000] օսմանցու հզօրքն յաղթեց ԲՌ [2.000] մարդով: Ահմետ փաշէն եփախ, ոչ կարաց դեմայդիր կանգնիլ: Դարձ սիրելիք մեր, դորա պատճառն ի՞նչ է որ ասում թէ կախարդայկան արուեստի տեղակ էր: Այս է պատճառն, որ օսմանցին եփախ եկ ի Յամատան, բովանդակ կասեն թէ՛ «Ես տեսայ ինձ վերայ, կրակ էր թաբում». ոմանք կասեն թէ՛ «Թեվայոր յօժ էր գալիս ինձ վերայ». ոմանք կասեն՝ «Փափչելէս յառաջըս ծօլ էր դառել»: Այսպէս մարդն մին տեսիլ են տեսել ի մէջ կռվին: Չայս բանս որ օսմանցին տեսավ, վախեց թէ Ես թագայորս սհաբ դռանայ սեյիտ է սա տըղայ: Ապայ պատճառն ինչ էս այս խօսացս. մանայվանդ աղվանի թագայորն սեյիտ էր, որ Եմիր կասեն, որ Եմիր անվանի: Մանայվանդ այսոր պատճառն ինչ. Ես աղվանի խերն Եմիր էր անուն, որ կասի Եմիր վէիզ. օսմանցին հենց գիտեր թէ ճշմարիտ Եմիր այ, աբայ անունն Եմիր Վէիզ կասեն: Օսմանցին որ տեսավ այսպիսի կախարդայկան բաներ, վախեցավ թէ Եմիրայ մենք չենք կարալ սորայ հետ կռիվ անել, որ կերպիվ կերպիվ բաներ տեսին օսմանցի բովանդակ, այսպէս ասաց: Դագայորն հրայման էր տվել, որ յաղվելէն յետոյ մին էլ գնան ի վերայ աղվանին: Այս կախարդական բանն տեսավ օսմանցի, էլ ոչ կարաց հետն կռվել:

Սուլթան Ահմետին գրեցին փաշէքն մեծ կարդացողերն թէ՛ «Այսպէս հրաշք նշանց ետ մեզ, մենք չենք սորա հետ կռիվ անել»: Սուլթան Ահմատն Ահմետ փաշին գիր դրկեց թէ՛ «Դուն գիտես, հաշտութիւն արայե:

Ահմատ փաշէն դրկեց մին էլչին աղվանին շահին թէ՛ «Մեր թագայորն ուզում այ որ մեզ հետ հաշտութիւն անայ»: Աղվանի թաբայորն ասաց. «Լաւ»: Օսմանցու էլչուն պատիվ ետ, լավ պատվայկան ըսգեստ հակցուց, դրկեց: Վերջայպէս աղվանն մին էլչին շինեց, որ իւր մին մեծ խան է, որ անունն Բլուչ Մհամատ, սորայ հետ յետ պատվայկան քարեր, պատվայկան ակունք, մին մեծ ֆիլ դրկելօվ աղվանն օսմանցու թաբայորին: Ելավ էլչին ի Ըսպիանայ, գնալով դէպի Ըսդաբօլ: Գալօվ եկ եհագ Յամայդան, էլչի որ է Մահմետ խանն Բլուչ անվան. Յամայդան՝ Ղարայ Մուստայֆայ փաշէն Ես էլչուն լավ ազատ, լավ պատիվ, Ժ [10] օր տեղն պահեց: Տասն օրէն յետ վեր կացաւ էլչին տեղէն Յամայդանայ, գնալօվ գնաց Չաֆրան կասեն, Չաֆրան

անվան գոջի. Չահռանայ վեր կացավ եկ ի Սատայվայ, տեղէն եկավ Քանգոյվառ. Քանգոյվառ եկ ի Սայինայ. Սայինու յեկ Բեսթուն. Բեսթունու եկ ի Քրմանշայի. Քրմանշայիու եկ ի Սայտաշ, տեղէն եկ Յառնայվայ, Յառնայվու հետ եկ ի Քրինդ. Քրինդու եկ ի Թաղթասարայ, տեղէն եկ ի Չօղօվ: Վերջայպէս Յամայդանու մինչ ի Բաղդադ տասնութ օրէն ճանայպարի այ:

Վերջայպէս եկ տհաս Բաղդադ, Ահմատ փաշէն պահեց 28 օր, պատվայկան պատվեց սորայ: 28 օրէն յետ վեր կացավ եկ ի Յիմամ Աղան կասեն, որ օսմանցվին մեծ գուտն այ, որ իւրեանց հաւատն, այն է կանքացուցել: Եկ ի տեղն, ուխտ արավ գնդին, 2 օր տեղն կացավ, տեղէն վեր կացավ գնաց Յիմամ Աբաս: Տեղէն վեր կացավ, գնաց Թաբալու կասեն, տեղէն գնաց Քարթուտ մանայվանդ Քարթուտ քաղաքայպետ կասեն, որ քաղաքն նորա ձեռուն էր, որ անունըն Ալի Ահամդի. այս Ալի Ահանդէս այս էլչուս լավ պատվայկան պատվեց, Ը [8] օր տեղն պահեց: Ը [8] յավուրէն յետոյ ելավ տեղէն, գնալօվ տհաս Բաբայ Գուռգուռ կասեն տեղն. ապայ պատճառն ինչ է Բաբայ Գուռգուռ ասելոյ. այն տեղն որ գետին քանդես կրակ դուս գու գայ գետնի տակէն, այս է պատճառն: Վերջայպէս տեղն խիստ պատվայկան տեղ այ: Էլչին ասաց. «Տեղս մի քանի օր կը նստեմ»: Տեղն նստեցավ 2 [6] օր: 2 [6] օրէն յետոյ, վեր կացավ գնալօվ տհաս Գօգթաբայ. Գօգթաբու վեր եկավ գնաց Էվմիլ, Էվմիլու հետ գնաց Սուլ: Վերջայպէս գեղեց գեղ այսպիսի հետեւեց գնալ: Յայտ լինի կարդացողաց եւ լսողաց, որ էլչին մին մեծ պատվայկան ֆիլ էր տանում սուլթան Ահմատին հմար: Այս ֆիլս ոտն ուռավ, մնաց ճանայպարիի, աբայ ոչ կարեցավ քալել: Էլչին հրայման յետ ֆլայ պահեն. «Դուք ֆիլն առէք տեղդ կացէք, միչ ի լայվանայ, առէք եկէք»: Ֆլայ պահերն որ են Բ [2] մարդ, այսոնք տեղն կացին թէ լավանայ: Մին օր եղավ որ էլչին ֆլի մոտ է, ջոկվել այ, մին խաբար եկ էլչուն թէ՝ «Շուտօվ հասնիս Ըստամբօլ, շուտօվ յետ դառնաս, որ շահի որդին խորասանու հետ հօզօր այ ժողովել, գալիս այ աղվանին վերայ»: Որ լսեց այս բանս էլչին, ի բաց թող իւր ծանրայգոյն բաներն կամ ֆիլն, վաղվաղակի գնաց դէր Ըստամբօլ, Դիարբեգրու մինչ ի Բօլի կասեն, որ մին դասաբայ այ, որ Ըստամբօլու մինչ գայ Բօլի վեց-եօթն յավուրէն ճանայպարի այ: Այսպէս յիմացի:

Դարձեալ յայտ լինի կարդացողաց եւ լսողաց որ աղվանի շային, որ յառաջայգոյն կեր, որ կասեն կախարդական արուեստի տեր է, այն շահն մեռել այ, այս ուրիշ դագայոր այ, որ անունըն այ շայ Աշրահ, այս է դրկել էլչին. մանայվանդ էն շահն որ կեր յառաջ, որ կասեն կախարդան արուեստ ունի, այն շահն չուրմ նստաց տեղն, իւր պատիջն հանդիբեց, եւ ինքն իբեան իւր միսն ատամօք ձեվատեց, խենդցավ եւ խելեռեցավ, այնպիսի մեռավ, որ ի կախարդայկան բանըն այդպիսի մին բան այ: Այսպէս այ որ ասացաք, ճշմարդայպէս. թողենք գայս:

Պատմենք գելչին, որ էր հասել Բօլի, տեղէն գնաց Բանջայ կասեն տեղն. վերջայպէս գնաց տհաս Իզիտ, տեղն նստավ եօթն յավուր: Օսմանցու թաքավորն ենքիչար Աղասի դրկեց, շատ բազում ենկիչարօք, եկին տարան Յուսկուտար: Երկու յավուր տեղն մնաց, երկու յավուրէն յետոյ տարան Ըստամբօլ, Ենկի Բաղչի դռնօվն, Դիվան Եօլօվն, Ենկի Ղշի մօտօվ, Սալի բազարօվ, Ղարայ գօմրըկի մեջօվն, Էդրանայ դռնօվն դուս տարան, Էիբ սուլթան կասեն, դէնըն անցըրին, տարան Ջուվդղ կասեն տեղն, տեղ տվին, տեղն նստավ Գ [3] օր: Երեք օրէն յետոյ խաբար եկավ թէ ֆիլն մեռել այ, ոչ հասավ Ըստամբօլ, Դիարբեգրու գետն, մին գեղ անվանի, որ անունըն Արմուտան. ոչ եմ խաբար թէ Արմուտան այ այս գեղիս անունն, այսպէս կարծեօք յիշեցի: Դառնալ ասելոյ էլչին ինչ որ պատվայկան բաներ բերել՝ տարավ թագայորին հավանացուց: Թագայորն էլչուն բերաց պատվայկան բաներին կամ ակունք կամ



որպիսի բան, թագայորն լավ հավանեցավ թագայորն այս էլչուս, որ անվանի Մահմետ խան Բլուջ կասեն ասոր: Վերջայպես վաթսուն յավուր տեղն կացավ էլչի, վաթսուն օրէն յետ՝ թագայորն հրայման ետ գնալու: Այս էլչիս ունէր հինգ հարիւր ձիայոր աղվան, տասեւհինգ զամբարակչի. զամբըրակչի ասելն ինչ պատճառ է, թէ ուղտոյ վերէն լարել են փորթագոյն թօթ, որ հարիւր մսխալ կամ հարիւր յիսուն դրամ առջիջ կու տանի: Այս զամարակչիքս, որ են քրիստոնայ, անվանի անուներն սոցանց՝ մին Ավաթ, մինն Աստուածատուր, Յարութին Բաբան, մին Ախիջան, մին Դավիդ, մին Մինաս, որ է Երեւանցի, որ ջուղ յԵրեւանայ: Մնացեալն փերեցին, որ Ըսպիանայ հինգ յագ ճանհայպար հեռի, այսպէս որ յիշեցանք եւ ասացանք: Դարձեալ վերոյգրաց ասացեալ էս էլչու հզօրին թէ այսչաբ հզօր ունէր, որ էր հինգ հարիւր տասն եւ հինգ հայգ, օսմանցու թագայորն ամենեցուն լավ պատվայկան ըսգեստ կամ դրամ, մին մարդոյ հարիւր մառչիլ, ամենից այսպէս տվեց, լավ պատիվ արավ: Վատսուն օրն թամամվեցավ, ըսկսեց էլչին անցավ Ուսկուտար, Ուսկուտարու վեր կացավ, վերջայպէս նսուն ինն օրն եկ եհաս Յամայտան:

Երբ եհաս Յամայդան, տասներեք յավուր տեղն մնաց: Տասներեք յավուրէն յետ՝ Ըսպիանայ գիր եկավ թէ՛ «Շայ Յուսէնի որդին, որ անվանի շայ Թահմազ, եկեալ է Ըսպիան, տիրել է աղվան, բօվանդակ սուրն այ քաշել, Ըսպիան առել այ ի ձեռաց աղվանի»: Այս էլչիս մնաց տեղն Յամայդան մինչ երեսուն եւ հինգ օրն:

Աբդռահման փաշայ կասեն, որ Յամատան էր, նորա ձեռին սայ Աբդռահման փաշէս եկ հարցուց էլչուն թէ՛ «Կուզե՞ս գնաս Ըսպիան»: Էլչին ասաց թէ՛ «Չեմ գնալ ես, կը վախեմ պարսոյ թագայորիցն»: Փաշէն ասաց. «Յամբերէ, ես գիր գրեմ իմ թագայորին, ինչպէս որ կասայ ես էնպէս կանեմ»: Գիր դրկեց դաքայորին թէ՛ «Շայ Թահմազն Ըսպիան առել այ ի ձեռացն աղվանի, էլչին մինչ ի ես թարիզս պահել եմ, ինչպէս որ հրաման կտաս այնպէս անեմ»: Թաքայորն գրել էր փաշին թէ՛ «Ես շատ ակուն պատվայկան քար եմ տվել իւրն, որ տանի իւրեանց դաքայորին, ձեռնէն առ իւրն բաց թող»: Փաշէն առավ այս ակութս, էլչուն ի բաց թող: Էլչին ասաց փաշին, թէ վախում եմ գնալ Ըսպիան, ինձ մին էլչի շինեցէք ձեր անվանօվն, գնամ տեսնեմ հզօրն պարսոյ շայիի, յետոյ յետ գամ»: Աբդռահման փաշէն սորայ շինեց էլչի, դրկեց Ըսպիան. երկու հարուր ձիայորօք այս խանըս գնաց եհաս Ըսպիան շայիին մոտ: Շային հարցուց թէ՛ «Դուն ո՞ւր ես գնացել, կամ ո՞ւր ես եկել»: Ասաց. «Խանըն ողջ լինի, աղվանն ինձ դրկել էր էլչութեան, գնացի եկայ»: Շայիըն ասաց. «Ո՞ւմ պիտի ջուղաբ տաս աղվանն գնաց եկայ»: Խանըն ասաց. «Թագայորն ողջ լինի, յառաջ քոյ հօր ժամանակի ես մին մեծ խան է, ապայ Աստուած մեզ բարկացավ, քոյ հօր թախտն գնաց մինչ ի ես թարիզս. հիմայ Աստուած ուզել այ քեզ, եկիր առիւր աթոռն քոյ հօր. հիմայ խնդրեմ քեզնէ որ իմ առաջի տեղն էլ ինձ տաս»: Շային երեստ իւր յառաջի մեծութիւնն, զուգայորեց մին խան, տեղն մնաց, էլ ոչ գնաց օսմանցու մէջ, ոչ տարավ խաբար: Այս է որ յիշեցանք եւ ասացինք:

Վերջայպէս, Մահմետ խանն Բլուջ, որ գնաց Ըսպիան թէ օսմանցու համար խաբար բերի, գնաց տեղն մնաց, ոչ յետ դառցավ: Աբդռայման փաշէն Յամանդանու, գիր դրկեց սուլթան Ահմատին թէ՛ «Դու գրեցիր ինձ թէ էդ էլչու ձեռին ինչ որ կայ առ յաբուցէն, բաց թող գնայ Ըսպիան. ինչ որ կեր յաբուցէն առի մեզ համար, դրկեցի որ մեր կողմանէն գնայ տեղն Ըսպիան, տեսնէ ինչ կայ, յետ դառնայ, գայ մեզ խաբար բերի. սայ գնաց էլ ոչ եբեր խաբար»:

Գ [3] ամիս անցնելոյ յետ, Ըսպիանայ մին բաղդադցի քրիստոնայ եկավ, որ անունն անվանի Սարուխա, որ էր կաթուղիգ, եկ ի պատրի Անդոնի վանքումն իջավ

Համայդան: Օսմանցին լսեց որ սա եկել այ, Բ-Գ [2-3] չուխայդար դրկեց վաղվադակի ասոր, յետոյ վեր կացին, գնացին փաշին մոտ, որ Աբդուհաման փաշէն եհարց այս քրիստոնէս թէ՛ «Ըսպիանա՞յ ես գալիս, ի՞նչ խաբար ունես»: Այս քրիստոնէս ասաց. «Փաշէն որջ լինի, Ըսպիանայ այս խաբարս ունեմ որ ձեր դրկած էլչին եկավ տեղն, հասավ տեղն, շահն մեծ խան շինեց, նորայ համար էլ չի գալ: Մին խաբար էլ, որ շայի Թամազն Ըսպիան նստեց»: Թահմազ Ղուլի խանն գնաց Շերագու վերայ, որ աղվանն դեռ տեղն էր, մանայվանդ աղվանըն որ Ըսպիանայ փախել էր, գնացել էր Շերագ: Տեղն աղվան կեր, որ Չլալ խան կասեն անունըն, մին էլ մօլայ Չաֆռան կասեն, որ իւրեանց մեծ կարդայցողն էր: Ասուք տեղէն Շերագ ՉԷՆ [6-7.000] զօրով, մօլայ Չաֆռանըն Շերագու երեք յավուր տեսներ որ Աբու Քուրանայ ջուր կասեն, որ Բախտիարու գը գայ Շերագու մոտովն կանցնի, այս ջրիս վերայ նստաց էր մօլայ Չաֆռանըն:

Թահմազ Ղուլի խանըն գնաց ՉՆ [6.000] զօրով, եհաս մօլայ Չաֆռանին, ելավ իւրեանց կռիվն: Մօլայ Չաֆռանըն յախտվեցավ, զօրքն անցավ սրով: Սա մօլայ Չաֆռանըն եփախ թէ գնայ ջրի կարմուշովն անցանի. Թահմազի զօրքն պատեաց ըսճանհայպարին ձորայ, ոչ կարեցավ փախչել, յինքն իւրան կամուրջէն ձգեց ջուրն եւ անցավ ջրով:

Թահմազ խանն տեղէն ելավ, գնաց Շերագ, ոչ մտավ Շերագ. այսպէս հեռայգուն քաղզէն իջավ: Աղվանըն լսեց թէ Թահմազ խանըն գալիս այ, դուս եկին քաղզէն բովանդակ: Թահմազ խանըն էլ տեղէն վեր կացավ, եկին հասին միմեանց. ելավ սոցա կռիվն: Աղվանն յախտվեցավ, եփախ:

Թահմազ խանըն վեր կացավ Շերագու, գնալով Եզդու վերայ, որ տեղն էլ շատ աղվան կեր: Այս աղվանիս մէջումն մին օսմանցի կայ, որ անունըն Թամուր խան, սա լսեց թէ Թահմազ խանըն գալիս այ, աղվանիցն ջոկվեց ճ [100] ձիայոր ունէր, Եզդու տակովն փախավ գնաց Ղարայզօզլվի միջովն դուս ել: Հասավ Համայդանայ երկիրն, որ օսմանցին տեղն այ, Համայդանայ մէջն չը մտավ: Համայդանայ մոտն մին Չահտարանան կասեն, մին քանդաց ավերաց բերդ այ, գնաց տեղն, էն բերդն ավերումըն շինեց սահմանեց, տեղն նստավ բնայկալավ ճ [100] մարդովն:

Վերջայպէս թողունք գայս յիշենք Թահմազ խանն: Թահմազ խանն Շերագու վեր կացավ իւր զօրքովն, գնաց Եզդու վերայ. կռվեց ի հետ աղվանին, յախտեց աղվանին, աղվանն՝ որն անցան սրով, որն փախին. այսպէսի որ յիշեցանք եւ ասացանք: Թամազ խանըն Եզդո նստաավ 28 օր. ԻԸ [28] օրէն յետոյ վեր կացավ Թահմազ խանըն, յետ դառցավ որ գայ Ըսպիան: Շային լսեց թէ Թահմազ Ղուլին գալիս այ: Մարդ դրկեց Թահմազին թէ՛ Լոռն Բախտիարին զօրայցել այ, մեր գեղերն մեր գերայվարում այ. գնաս նորա վերայ»: Թահմազ խանըն գայս բանս լսավ, շուտով վեր ել, գնալով ի վերայ Բախտիարու: ԺԴ [14] օրն գնաց եհաս Բախտիարի, Բախտիարու հետ կռվեց, Բախտիարին յախտվեցավ, սրով անցան բովանդակ: Շահ Թահմազին խաբար գնաց Ըսպահան, շահն յուրախացավ եւ ինդաց, դրկեց Թահմազին լավ պատվայկան ըսգեստ հազճուճ:

Թահմազ խանն մարդ դրկեց շահ Թահմազին թէ՛ «Ուզում եմ գնամ Դասվել Շուշտարայ վերայ, որ նորանք էլ թաքավորին ներհակ են, որ ԻՉ [26] գեղ գեր են վարել»: Շայի Թամազն գրեց թէ՛ «Էդ կողմդ ինչ որ ինձ ներհակ ասան կայ, սուրն քաշես»: Թահմազ խանըն վեր կացավ, գնաց Դասվել Շուշտար, տեղն կռիվ արավ մինչ ի ԺԴ [14] օր: Աստուած փրկէ Տերն ազատէ, յարուն թաքեց, ինչ որ գետ այնպիսի գետի պէս գոջալ

Է վագ կու տար յարունըն: 14 օր որ կռիվ ելավ Դասվել Շուշտարու ազգն յախտվեց, ԺԵՌ [15.000] տուն գերի արավ, Թահմագ խանըն ղրկեց Խորասան, որ անվանի Մաշատ: Այսպես գերայվարութիւն որ լսեց շահ Թամագն կամ յախտութիւն, շատ բազում ուրախացավ, քաղաքումըն փողոցներ զարդարեցին, լավ ուրախութիւն արին, մանայվանդ սորայ զօրքն: Մտացենք ինչ չափ այ Շերագու հետ, որ եկել այ մինչ ի Դասվել Շուշտար, եօթն Ռ [7.000] զօրք ունի, ոչ է յառավել, մանայվանդ այս Դասվել Շուշտար որ յիշեցի եւ ասացի, որ կցորդ բախտիարու հետ մին են: Պատճառն ի՞նչ է որ սոքանք միայքան չեն գալիս կռիվ: Ղայլայի Դուխտարան կասեն, որ Բախտիարու մեծ գլխայորն այ, սոցանց մեջն խարդայխութիւն կայ, միմեանց խոսով են. երբ որ Թահմագ խանըն գալիս այ կռիվ, միմեանց օգնութիւն չեն անում. Թահմագն սոցանց փորքն փորքն սուրն այ քաշում:

Ղայլայի Դուխտարանայ մեծայորն որ լսեց թէ Թահմագ խանն այսչափ բազում կռիվ այ անում, ըսկսեց իւր պատրաստութիւնն տեսանել: Երբ որ պատրաստութիւնն տես պռծավ, ճիւտն [145.000] զօրի պատրաստութիւնն տեսավ, որ եղավ այսչափ ճիւտն [145.000] զօրք, առավ գնաց Ղայլայի Դուխտարանայ Դ [4] կողմն բռնեց, , նստավ: Զավուզայ կասեն, էլ սոցանց ասգէն են. երբեմըն սոսանք էլ ջոգվել են սորանց մեծայորին Ալի Մարդան խան կասեն. վերջայպես սորանք իւրանց պատրաստութիւն տեսին:

Թողնենք ըսսայ, յիշենք Թահմագ խանըն, որ Դասվել Շուշտար առավ եօթն Ռ [7.000] զօրքով: Մարդ ղրկեց շահին թէ՛ «Կ՛ուզեմ գնամ օսմանցու վերայ»: Շային ղաբիլ չի եղավ, թէ «Ես նորանց էլչի եմ ղրկել, տեսնենք ինչ խաբար գը գայ, յետոյ մեր պատրաստութիւնն կու տեսնենք»: Մտացենք թէ այս էլչիս ով է. Աբդուլ բաշի խան կասեն, որ Շխալի խանի ասգիցն այ, որ է Քրմանշայու խանըն:

## ԺԱ

Թահմագ խանս երբ ըսկսեց համբերել որ համբերեց, օսմանցին իւր պատրաստութիւնն տեսավ. Զամայդանու փաշէն, որ անվանի Աբդուլըռմայման փաշայ, սա գիր գրեց սուլթան Ահմատին թէ «Ղզըլբաշն կուզայ մեզ վերայ կռիվ գայ, քոյ պատրաստութիւնն տես»: Սուլթան Ահմատն հրայման ետ Դիարբեկրու փաշին թէ՛ «Տեղըտ մեր է բէյրադի բացէք սերդէն գէշտի տալ Ղլիջ զօրք ժողովեցէք, գնացէք Զամայդանայ վերայ, որ Ղզըլբաշն գալիս այ»: Վերջայպես 33.000 մլի քուրտ տալ Ղլիջ սերդէն գէշտ, բովանդակ եղավ այսչափ: 33.000 զօրք եկին Զայմայտան, ի մեջ կեր 6.000 ենկիչարի, որ ամեն 45.000: Սուլթան Ահմատն Ղզըլբաշի էլչին եղ ի մեջ երկաթի, ոչ թողեց յետ գալ: Ղզըլբաշն լսեց այս բանս, նայ էլ իւր պատրաստութիւն տես ԺԲՌ [12.000] հզօրք իւր պատրաստութիւնն: Աբդուռման փաշէն գրել էր թէ՛ «Մեր զօրքն փորք այ»: Սուլթան Ահմատն գրել էր Ուրֆու փաշի վերայ թէ՛ «Տեղեդ զօրք ղրկեցէք Զայմայտան»: Ուրֆու փաշէն իւր երկրիցն մին մարդ էր պատրաստել, որ է անունն Թօխմախ, որ է քուրդ, սայ շինեց եօթն Ռ [7.000] մարդոյ գլխայոր, որ բովանդակ քուրտ, ղրկեց Զայմայտան, եկ եհաս Զայմատան: Երբ հաս Զայմատան, Աբդուռման փաշէն հրայման ետ, ղրկեց Նայիայվանդ կասեն, որ Ուլուկերտու մտն այ, որ օսմանցուն այ Ուլուկերտ Ղզըլբաշէն այ, մանայվանդ Ուլուկերտու մինչ ի Նայիայվանդ՝ երեք յավուրէն ճանհայպար այ. այսչափ հեռի է Ղզըլբաշն օսմանցուց: Օսմանցին իւր պատրաստութիւնն տեսավ թամավ եղավ:

Գանք յետ եւ ինք Թահմազ խանին: Թահմազ խանըն լսեց որ իւրեանց էլչին օսմանցին դրել այ երկաթի մէջ. յայտնի այ կռիվ ունի: Թահմազ խանն ԷՌ [7.000] զօրք ունէր յառաջ ըսկիզբն. աբայ ավելայցուց զօրք իւր, եղաւ ԺԲՌ [12.000]: Սկսեց գալ օսմանցու վերայ: Եկ տհաս Ուլուկերտ, 29 օր կացաւ տեղն, ոչ է դրկում էլչի թէ՛ «Ձեզ վերայ եմ գալիս»: Նմայնապէս օսմանցին գիտաց որ իւրանց վերայ այ գալիս. նմայնապէս օսմանցին էլ չի խօսում: Նմայնապէս թէ միմեանց պատերազմի խաբար չէն. այսպիսի: Վերջայորապէս Թահմազն մարդ դրկեց Աբդռահման փաշին թէ՛ «Յայմադան բաց թող, գնայ»: Աբդռահման փաշէն ջուղաբն ետ թէ՛ «Մինչ ի Ժ [10] օրն ինձ համբեր, Ժ [10] օրէն քեզ ջուղաբն տամ»: Թահմազն հավանեցավ այս բանի, Ժ [10] օր հմբերից: Ես Ժ [10] օրիս համբերութիւնն պատճառն ի՞նչ է. Ալի փաշայ կասեն, որ սուլթան Ահմատի մեծ վագիրն այ, սա վեզիրս ծածկայբառ գիր էր դրկել Թարվեզու փաշին, որ է Իբրայիմ փաշայ, Յամայդանայ փաշին, Սենու փաշի, որ է անոււնըն Ուսէն փաշայ: Քրմանշայու փաշէն, Ջին Յասան կասի, նայ հնազանդ չէր վեզիրին, նորա գիր չէր դրկել, նա խաբար չէր այս բանիս. Թամուր խան կասեն, որ աղվանիցն փախավ եկավ, որ Չահդարանայ բերդն շինեց, տեղն մնաց, սա էլ չէ հնազանդ վեզիրին. Ես երկու, որ մինն Ջին Յասան փաշէն, մինն Թամուր խանն, հնազանդ չէն, նորա հետ ներհակ են. այսպէս որ ասացինք եւ յիշեցինք:

Գանք պատմենք Յայմադանայ փաշէն, որ լինի Աբդռահման փաշայ: Սա դրկեց Թամուր խանին հետեւաց թէ՛ «Ղզըլբաշն գալիս այ Յայմադանու վերայ, վեր կաց, եկ»: Մանայվանդ Թամուր խանն զօրքն շինել այ ՉՌ [6000], ՉՌ [6000] զօրքովն եկ ի Յամատան, տհաս, Գ [3] օր տեղն նստավ, գնաց փաշի մոտ թէ՛ «Եկ, քեզ հետ մին խորհուրդ ունիմ, ասեմ»: Փաշէն ասաց խորհուրդն իւր: Թամուր խանն խորհուրդի պաճառն ի՞նչ է. այս օ որ ասում թէ՛ «Ղզըլբաշն շատ այ, գալիս զօրքն շատ այ, բազում են. ինչ որ թօք կայ բերդուս մէջն դուս արկենք, թօքով գնանք կռիվ, ինչ որ տեղս զօրք ունես, բովանդակ ամենք գնանք կռիվ»: Փաշէն ասում այ թէ՛ «Չէ, ես թօք չեմ քաշել բերդես, թագայորիցն կամ վեզիրիցն հրայման չկայ որ ես թօք դուս արկեմ, ինձ գրել այ վեզիրն թէ դու տեղըդ նստի՛ որ Ղզըլբաշն գայ, որ լինի Թահմազ խանն ի մոտ բերդի, դուն դուս գնայ կռիվ: Ինձ գրել այ է Թամուր խանըն ՂՌ [90.000] զօրքով դրկայ կռիվ, դուն բերթն պահոյ քո զօրքն. ինձ էսպէս են գրել»: Աբայ աս խօսաց պատճառն ի՞նչ է. վեզիրն խօսքն մեկ արել շայիի հետ Թարվեզու փաշին, Յայմայդանայ փաշին, Սինու փաշին, այսոնք չորքս մի խօսաց են՝ հնայզանդ որ լինի վեզիրի, դրկաց գիրն ծածկայբար, որ դրկել էր փաշեբանցն թէ՛ «Որ Թահմազ խանն երբ Յայմատանու վերայ կամ Թարվեզ կամ Սինու, դուք բաց թողէք Յայմայդան երկիրն, դուս ելէք, կռվէք ոչ»: Յետ այնոքիք փաշէն Յայմատանայ գնաց ոչ: Բերին Թամուր խանըն, դրկեցի ՉՌ [6.000] զօրքով:

Գնաց Թամուր խանն, տհաս Ուլուկերտու մոտ, մին ջուր կայ, որ անոււնըն Աբիմուշ կասեն: Աբիմուշ ասելու պատճառն ի՞նչ է, թէ մկան ջուր է՛ լեզվաւ պարսոյ. այսպէս որ ասացի եւ յիշեցի: Թամուր խանըն տեղն նստավ մին օր. 2 [6] ժամէն ճանայպարի այ: Թամազն լսեց որ Թամուր խանն եկել այ, Թահմազ խանն վեր կացավ սորայ վերայ: ԺԲՌ [12.000] Թահմազի զօրքն էր, ՉՌ [6.000] Թամուր խանի: Սոբանք կռիվ առին մինչ ի 3 ժամ: 3 ժամէն յետոյ Թամուր խանն յախտվեցավ, եփախ: 2 [6] յավուրէն ճանայպարի եկ հաս Յայմադան, մին օր մին գիշեր ոչ էր Թամուր խանն եկել Յամայտան, իւր փախաց զօրքիցն եկ հաս Յամայտան: Եւ յինքն Թամուր գնացել էր իւր շինաց բերդն, որ Չահպարան կասեն: Այս խաբարս որ եկ հաս Յայմադան, գիշեր էր. գիշերվայ մին ժամին խաբար եկ տեղն Յայմայդան: Եբոր Աբդռահման փաշէն լսեց Ես խաբարս, գիշերն իւր խիզան կամ որդիքն եւ իւր դստերն առավ, դուս ելավ ԽԵՌ [45.000] զօրքովն, գիշերն փախավ: Յառայոտենց մին օսմանցի չմընաց ի մէջ

Հայմադանայ: Թահմազն Թամուր խանիցն շատ երկկուղ ունէր, նորանից շատ կը վախէր. գնաց Թամուր խանի յետեւիցն թէ բարթէ բռնաց Թամուր խանին: Թամուր խանն տեղէն փախավ, գնաց դէբի Թարվէս, ոչ կարացավ բռնիլ Թամուր խանն փախչել էս տեղն: Մին գիր էր գտել ճանայպարհին որ վեզիրի ձեռայցագիրն, գրել այ թէ՝ «Աբդռահման փաշայ, թէ Ըղզըլբաշն գայ ձեզ վերայ, դուք փախէք, կռվէք ոչ»: Գ [3] փաշի այսպէս այ գրել: Թամուր խանըս էս գիրս վեր կալաւ, պահեց, գնաց Թարվէզ, էլ Թարվէզու փաշին բան չասեց, տեղն կացավ մինչ ի 2 ամիս. այս որ ասացանք եւ յիշեցանք:

Գանք ասենք Թահմազ խանըն, Գ [3] յավուրէն յետոյ եկավ մտավ Համայտան, ըսկսեց զօրքն յառայվելացան, էլ 33 օր տեղն նստավ. շատ օսմանցին են բռնել, բերին սուրն քաշեցին օսմանցու: Զըրիստոնէք կէր ի մէջ Հայմատանայ մէջն, որ բեզերկան, որ է մինն բաղդադցի, անունըն Սարուխան, մինըն ըստամբօցի, անունըն Հանայ: Այս երկուսըս, որ են կաթուրիկ քըրեստոնայ, մին մին մուլուլցի ասօրենեաց ասգէն, որ էր անունըն Աբդի, մին արզումցի, Ղարաքիբար կասեն որ էր լաղումջի, որ օսմանցվի լաղումջին էր, մին մուշեցի, որ անունըն Թօռուն կասեն: Այս հինգ քրիստոնէս պատրու վանքն են մտել, պատրին պահել էր: Եկին Ղզըլբաշերն, գտան սոցանց թաքելով, տարան թէ ըսպանեն: Համադանցի մին աստուածայսէր քրիստոնայ, որ անունըն Մանայսէ, էկ եհաս, ոչ թողեց ըսպանելու, թէ՝ «Եսուք հայ են, գնանք խանին մոտ, թէ որ խանն հրայման կտայ թէ ըսպանեցէք, դուք յետոյ ըսպանեցէք»: Առաջ գնաց խանին մոտ, հանըն հարցուց այսոնց թէ՝ «Դուք ո՞ր տեղանց էք»: Քրիստոն Սարուխանս ասաց. «Ես բաղդադցի եմ»: Վերջայպէս ամենեցուն հարցուց: Յետոյ Սարուխանին հարցուց թէ՝ «Դուն ի՞նչ ունես ծախելու այս տեղ»: Ասաց Սարուխանըն թէ՝ «Ես արջում ունեմ, որ ծախել պիտի քոյ զօրից. մին մարդ իմ արջումն 6 քիսի պանգար եւ աշմազ 24 քիսի, 16 քիսի քեշի, վերջայպէս սամուր, դախում, սաթրաջ, ջըղայվայ, ըռավանդ, մինչ ի 175 քիսակի ապրանքըս՝ քոյ զօրի մին մարդ առել այ, չի տալիս»: Հարցուց խանն թէ՝ «Դու էն մարդն ծանօթ ես, գիտե՞ս»: Սարուխան ասաց. «Ես էլ գիտեմ, կը ճանաչեմ, պատրին էլ գիտայ»: Հրայման ետ գնացին, էն մարդն գտան բերին. աս մարդիս երթնվեր էր առել բօվանդա: Կ խան բերեց իւր տուն, խանն ասաց. «Քեզ ըսպանում չեմ, քեզ ազատ կանեմ, ապրանքդ քեզ չեմ տալ, գնայ, Աստուած քեզ էլ կտայ, Աստուած էդ ապրանքդ ինձ համար էր պահել, որ ես գամ էս երկիրս, ինձ տայ»: Էս Սարուխան քրիստոնէս ոչ կարաց պատասխան տալ: Համատանցի տանուտեր Մանայսէին ինդրեց թէ՝ «Էս մարդիքս քեզ եմ տալիս, տար, հաց տուր, ջուր, թէ որ պահի, յեք որ կուզեն գնան իւրեանց քաղաքն»: Մանասէն ասոնց տարավ իւր տուն, 3 օր պահեց. յետոյ 3 յավուրէն գեղօվի, սոցանց խարջն քաշեցին, մինչ ի 4 ամիս: 4 ամիսն թամամվեցավ, ղրկեցին իւրեանց երկիրն այս մարդիքս: Այս է որ ասացանք եւ յիշեցինք:

Թամազ խանն նստեց մինչ ի 35 օր ի մէջ Հայմայտանայ: 35 օրէն յետոյ զօրքն շինեց 15.000, վեր կացավ գնալով Սենու վերայ: Եօթն օր գնաց, հասավ Սենայ, բռնեց հրեակն թավելով, 256 թուման փող առավ յօժարութեան, մեծ մեծ թուրքերիցն, որ շատ գէնգին են, կամ գանձ շատ ունեն, որիցն 30 թուման, որիցն 50, որիցն 20, որիցն 100, որիցն 60, այսպիսի իւրեանց կրաողութիւնին դատար: Յետոյ Սիուն խանն, որ է անուն անվանի Սըֆան վերդի խան, ուզեց գնա ըսպանել: Մեծայմեծք ոչ թողին ըսպանելու, ԳՌ [3.000] թուման առավ, ոչ ըսպանեց: Մանայվանդ պատճառն ի՞նչ է սորա ըսպանելոյ. այս է պատճառն որ ասում. «Օսմանցին որ եկ մ'երկիրն յէ՞ր չը կռիվ արիք, քան ըսերկիրն տվիք օսմանցուն, դուք եղաք խան, երկիրն քանդեցիք եւ ավերեցիք»: Այս էր պատճառն:

## ԺԲ

ԲՌ [2.000] մարդ տեղն թող բաց, ելավ ԺԸՌ [18.000] զօրքով, ըսկսեց գնալ Թարվեզու վերայ: Գնաց եհաս Սախկա կասեն տեղն, Սաղկու մին ի Թարվեզ 2 [6] յավուրե ճանհապար այ. տեղն ստավ Գ [3] օր: Օսմանցին լսեց որ Թահմազ խանն գալիս այ, որ Թամուր խանն տեղն այ: Թամուր խանըն գնաց Թարվեզու փաշին մոտ թե՛ «Թահմազն գալիս այ, վեր կալ քաղաքես զօրքն, գնանք կռիվ»: Շատ բոշաղ կեր մեշն Թարվեզու:

Մինչ ի օսմանցիք իւրեանց պատրաստութիւն տեսնելն, Թահմազ խանն Սաղկու մի յիրիկուն ԻԴ [24] ժամն տվաց ձիայորեց իւր զօրքովն, մին գիշերն ի միասին կես օր եկ հաս Թարվեզ: Եկ Թարվեզու մոտն, մին գեղ այ, եկ ի տեղն, որ օսմանցի ոչ է կարծում թէ Թահմազն շուտով գը գայ, օսմանցին իւր մեշն կարծում են թէ Թահմազն Յ-Է [6-7] յավուր գը գայ, քանզի 2 [6] օրէն ճանհապարհ այ. այսպէս են կարծում: Թահմազ խանն մին օր կեսն հասավ տեղն: Որ եհաս տեղն, օսմանցի տեսավ Թահմազին. չէր հավատում թէ էս Թահմայզն այ: Երբ որ մոտացավ Թահմազն, յետոյ տեսին որ այ է: Օսմանցին դուս էքավ: Երբ դուս եկին օսմանցիք, դէրի կողմն Մարանդու, կռիվն եղավ սոցանց: Թարվեզու փաշէն յառանց կռիվն տեսանել, եփախ: Մնաց Թամուր խանըն տեղն մենակ, 2Ռ [6.000] զօրքով կռիվ արավ ի հետ Թահմազին: Թահմազին ուներ ԺԸՌ [18.000] զօրք, Թամուր խանին ուներ 2Ռ [6.000] զօրք, ոչ էր իւրն զայս զօրքս: Թարվեզու մեշ է ենկիչարի կամ բոշաղ կամ առնայուտ, կես մենըն փախին, կես մէն մնացին ի մոտ Թամուր խանին մոտ: Է [7] օրն կռիվ արավ Թահմազ խանին հետ 2Ռ [6.000] զօրքով. պատվայկան կռիվ արավ Թամուր խանն գը [6.000] զօրքով: Կռիվն որ եղավ այսչաբ օր, Թամուր խանին մնաց ԳՌ [3.000] զօրքն: Թահմազ խանըն քաղակիցն մին ժամէն ճանհայպար հեռի է, Թամուր խանն ի մեշ քաղաքին այ:

Թամուր խանըն իսկորեց իւր զօրքին, եկին ի մոտ Թամուր խանին, ասաց. «Էզ կուզեմ էս բերդէս դուրս ըլիմ, էս բերթս մեզ պիտոյ չէ. մենք փորքն ենք եւ փորքացել ենք, մեզ պիտոյ չէ այսպիսի բերդն. դուս գնանք, կռվենք ի հետ Թահմազին. թէ որ յաղդենք էլ՝ յետ դառնանք գանք Թարվեզ, թէ որ յախտվեցանք՝ գնանք դէրի Երեւան»: Թամուր խանըս ԳՃ [300] բոշաղ եթող ի մեշ բերդին պահայպան: Թամուր խանն դուս եկ գնաց կռիվ. ըսգեստն իւր երկաթից կամ ըսգեստըն ձիոյ բովանդակ երկաթ: Թամուր խանըն գնաց հաս Թահմազ խանի. կռիվ ելավ Դ [4] ժամ: Մանայվանդ Թամուր խանի զօրքն ԲՌԸԸ [2.800], Թահմազին ԺԸՌ [=18.000] զօրք. այսպէս որ ասացի եւ յիշեցի: Վերջայպէս Դ [4] ժամ որ կռիվ եղավ, Թամուր խանըս յախտվեցավ, փախավ. մնաց զօրքն ԳՃ [300], որ բովանդակ սրով անցան: ԳՃ [300] զօրքով փախավ դէր Երեւան, գնաց, եհաս: Թարվեզու փաշին կամեցավ որ սորայ ըսպանայ. «Ո՞ր փախեր ինձ բաց թողեր»: Փախավ Թարվեզու փաշէն, ոչ կարեցավ ըսպանել. այս է որ ասացի եւ յիշեցի:

Թահմազ խանըն վերջայպէս գնաց մտավ Թարվեզ: Թարվեզու մեշն օսմանցի մին պզտիկ բերդ այ շինել. էս ԲՃ [200] բոշաղս որ Թամուր խանըն դրել էր պահայպան, սոքանք մեշն են: Թահմազն հրայման ետ զօրգին, բովանդակ սուրն քաշեց, բերդն քանդեց, ավերեց բովանդակ: Վերջայպէս տեղն ստավ, ըսկսեց զօրքն աճեցուցանել. աճեցուց զօրքն, եղաւ վերջայպէս ԻԴՌ [24.000]. տեղն մտացում այ որ գնայ Երեւանայ վերայ: Որ Երեւան Թարվեզու ԺԲ [12] յավուրն մարդոյ ճանհայպարի այ, որ լինի մարդս ոտոք, այսչաբ -ճանհայպարի այ. այսպիսի որ յիշեցի: Դարձեալ այսչաբ որ օսմանցի այ անցնում, սուլթան Ահմատն խբար չէ. վեզիրի արարողութեանն այ: սուլթան Ահմատն ոչ է խաբար, անպիսի կարծում այ թէ՛ Թարվե կամ Յայմայտան

կամ Սենայ կամ Քրմանշայ իւր ձեռնին այ. այսպէս այ կարծում. մանայվանդ ոչ է խաբար սուլթան Ահմատն: Այսպէս որ ասացի եւ յիշեցի:

## ԺԳ

Թահմազ խանն որ նստավ Թարվեզ Բ [2] ամիս. Բ [2] ամսոյ յետոյ խաբար եկավ Խորասանայ, որ լինի Մաշատ, թէ՛ «Աղվանն զօրք այ ժողովել, գալիս Յարաթու ի վերայ Մաշատու, որ ունի ԽՌ [40.000] զօրք»: Այս բանըս լսեց Թահմազ խանն, վաղվաղակի ելավ գնալով ի վերայ Մաշատոյ: Ի՛Ե [25] օրէն գնաց տհաս Մաշատ, զօրք ժողովեց, տեղն ելավ, գնաց ի վերայ Յարաթու: Յարաթ որ յիշեցի, նմանայպէս ի ձեռնն աղվանայ. այս աղվանըս որ յիշեցի, անուն անվանի Ղլիջի կասեն, որ է Ղլիջի աղվան: Վերջայպէս գնաց տհաս Յարաթ. Յարաթու մոտն իջավ զօրքն Թահմազ խանի, ըսկսեց կռվիլ: Վերջայպէս աղվանն դուս եկավ, կռիվ արին ԺԲ [12] օր. տիվ եւ գիշեր սոցանց կռիվն ելավ: Աղվանըն գնաց եմուտ ի մէջ Յարաթայ, ոչ դուս եկավ: Յարաթ որ յիշեցի, մին պատվայկան քաղաք այ, լավ զօրագուն զօրք պիտի որ Յարաթ առնէ: Է [7] օրէն յետոյ աղվանն քաղաքէն, որ Մաշատ լինի, դուս եկավ, կռիվ ելավ տիվ եւ գիշեր, վեց օր: Աղվանն գնաց եմուտ ի մէջ բերդն Յարաթ, մինչ ի ԽԸ [48] օրն ոչ դուս եկավ: ԽԸ [48] օրէն յետոյ դուս եկ աղվանն, կռիվ ելավ սոցանց մէջն ԻԸ [28] օր, աղվանն բազում յախտվեց, եփախ, եմուտ Յարաթայ մէջն, այլ ոչ դուս եկ աղվանն, մինչ ի ինսուն մին օր:

Ինսուն մին օրէն յետոյ աղվանին մէջն դուզնութիւն, քաղցացութիւն եւ սովութիւն ի մէջ Յարաթու, քաղցացութենէ միմեանց միս կուտէին, այսչաբ սովութիւն եղավ: Թահմազն հրաման ետ իւր զօրքին թէ «Աղվանըն երբ որ դուս գայ, բան չունէք, թողեցէք մեր մէջն ման գայ, հաց ուտայ»: Երբ որ աղվանն սովութիւն էր քաշում, մին մին քաղցացութենէ դուս գու գէն, վասն մին փորքն հացի համար: Այսպէս որ աղվանն որ դուս գեր հաց տի կշտացնեն, հաց տին իւրեանց, ղրկեն բերդի մէջն: Այսպէս խաբելով աղվանի մեծայորքն, դուրս եկավ, լավ ըսգեստ հազցուց աղվանին, ղրկեց բերդի մէջն, յետոյ ամենըն դուս եկավ այսպէս: Վերջայպէս այսպիսի խելօքն առավ Յարաթ, մտավ քաղքի մէջն, բռնեց մեծ մեծ խաներն, իւրան ղուլ շինեց, որ իւրան գինոր: Այս աղվաներիս տուն եւ դստերքն, ամեն մին տուն՝ մին երկիր ղրկեց, այսպիսի տներն հեռացուց, ոմանց տուն Ըսպիան, ոմանց տուն Շերագ, ոմանց տուն Մաշատ. այսպէս: Յետոյ այս աղվաներուս իւրան հետ ժուռացավ, որ էր այս աղվաներս ԷՌ [7.000] որ սորան հնազանդ եղան. այս է որ յիշեցի:

Վերջայպէս Թահմազ խանն Յարաթու մին խան շինեց, ինքն վեր կացավ տեղէն, եկավ Մաշատ, որ անվանի Խորասան, տեղն նստավ:

Օգբէկի կողմէն մին մարդ էր դուս եկել, որպէս մին գող, երկիր թալանելով ման էր գալիս: Օգբէկի դագայորն ոչ կարացավ ընբռնել. այսպէս իւրան գլխոյ երկիր, գեղ, գավառ՝ սուրն քաշելով ման էր գալիս. գալով գալով եկավ դէբի Խորայսանայ երկիրն այս գող մարդս: Մանավանդ Թահմազ խանն շատոց էր լսաց էս մարդիս բանըն, որ սայ լավ կռիվ անող այ, յօժար մարդ այ, որ օգբէկն չի կարում ընբռնել սորայ: Թահմազ խանն երբ որ լսեց թէ էս մարդս մտել այ իւր քաղաքն, վեր կացավ, ԳՌ [3.000] պատվական մարդիգ վեր առավ, գնաց այս մարդիս վերայ: Այս մարդս լսեց որ Թահմազ խանն գալիս այ. ԶՌ [6.000] զօր եկ հաս Թահմազ խանին կռիվ արին: Թահմազ խանըն յախտեց այս մարդիս, ընբռնեց էս մարդս, զօրն բովանդակ կօտորեց: Այս մարդս բերեց Մաշատ, որ անվանի Խորասան, ԾԵ [55] օր պահեց: ԾԵ [55] օրէն յետոյ այս մարդիս ըսպանեց:



## ԺԴ

Թահմազ խանըն մարդ դրկեց օգրեկին թէ՛ «Զեզնէ ԳՃԴ [300.000] թուման փող կուսեմ որ տաս ինձ. կտաս՝ լավ այ, չես տալ՝ քեզ հետ պատերազմն ունեմ». այսպէս գրեց դրկեց: Այս մարդ, որ ի Թահմազ խանէ գնաց, եհաս տեղն, Էս մարհիս դրին երկաթի մէջ, պահեցին: Թահմազ խանըս Մաշատ իւր պատրաստութիւն տեսնում այ: Չայս թողութ, բայց յիշենք օսմանցին, որ Թարվեզու փախել էր:

Այս Թամուր խանս որ փախավ, գնաց Երեւան: Սայ որ մին գիր էր գտել, որ վեզիրի ձեռայգիրն փաշեքանցն գրել էր՝ «Թահմազն որ գայ բան չունէք, կռվէք ոչ, փախէք»: Այս գիրս պահել է Թամուր խանըն, մինչ ի այս թարիղս: Էս գիրս վեր առավ, գնաց Ըստամբօլ, տարավ Էս գիրս սուլթան Ահմատին նշանց ետ: Սուլթան Ահմատն ոչ էր խաբար թէ այսչաբ երկիրն ձեռացէն գնացել այ. վեզիրի արարողութիւն էր: Բարկացավ, ենկիչար Աղասին եկ ի տեղն, տվին վեզիրն, ըսպանեցին, որ անուկըն Ալի փաշայ: Մին նոր վեսիր դրին: Ենկիչարին ինդրեց թագաւորիցն թէ՛ «Մենք աճայմայ վերէն կռիվ կուզենք, ենկուչարի դարայ դազանն մնացել այ աճամի ձեռին. մենք կռիվ կանենք, որ մեր դարայ դազանն գերի այ ի ձեռն ղզըլբաշի. պետ է որ ազատենք»:

Սուլթան Ահմատն վաղվաղակի Գ-Դ [3-4] դռնայպետ դրկեց Ահմատ փաշին թէ՛ «Զեզ մեծայորեցի, գնաս Յամայտանու վերայ»: Ահմատ փաշէս ետես իւր պատրաստութիւնն եւ իւր զօրքն, եւ էր զօրքն Ահմատին ՉԴ [6.000] ենկիչարի, ԳԴ [3.000] ըսպայիի, ԵԴ [5.000] արաբ, որ բաբայի կասեն, ՉԴ [6.000] քուրտ, ՉԴ [6.000] բաշիլան, որ եղաւ ԻՉԴ [26.000] բօվայտակ: Ըսկսեց Բաղտատու գնալ ի վերայ Յամայտանայ: Բաղդադայ վեր կացավ 2 [6] օրն Չաղօվ, Չաղօվու ելավ գնաց Թաղիքասրայ, Թաղիքասրուր գնաց Խանն, Խանիցն գնաց Քրինդ, Քրընդու գնաց Յառնայվայ, Յառնայվու գնաց Մայտաշ, Մայտաշու գնաց Քրմանշայ, Քրմանշայ գնաց Բեսթուն, Բեստու գնաց Սայինայ, Սահնու գնաց Քանգայվառ, Քանգայվառու գնաց Սատայվայ, Սատավու գնաց Լալբար: Տեղն որ հասավ, իւր զօրքն շատ պատվավկանայգուն էր. սկսեց տեղն թօբերն լարել, սահմանել:

Պատճառն ի՞նչ է այս բանիս որ տեղն լարում այ թօբերն Յամայտանայ մօտայ: Պատճառն այս է, որ շահ Թահմազն լսեց որ օսմանցին գալիս այ իւր վերայ, շահ Ըսպիանայ դուս եկավ ՃԴ [100.000] զօրքօվ: Էն թարիղին Թահմազ խանն դեռ Խորասանայ կողմումն այ, որն որ աղվանայ եկել նորա հետ կռիվ անում: Լսեց Թահմազ խանն թէ օսմանցին գալիս այ Ըսպիան վերէն, շային գիր գրեց թէ՛ «Օսմանցին որ գայ քեզ վերայ, դուն կռվիս ոչ, մինչ ի ես գամ»: Օսմանցին եկել հասել այ Յամայտան. շահն լսեց ոչ՝ խօսքն Թահմազ խանի, եկ եհաս Յամատանայ մոտն, մին Ղզըլ Եօյխուշ կասեն տեղն, զօրքն իջավ շահի: Ահմատ փաշէս գնաց յառաջ, եղավ սոցանց կռիվն: Շահն յախտվեցավ, փախավ, ԼԸԴ [38.000] շահի զօրքն սրօվ անցան, այլոց խօսելովն. այսպէս որ ասացի եւ յիշեցի:

Շահըն փախավ գնաց Ըսպիան, տեղն նստավ: Մայեար խան կասեն, մին Էլ Ղոնջի բաշի կասեն, շահն Էլչի շինեց, դրկեց Ահմատ փաշին թէ «Զեզ հետ հաշտութիւն կանեմ»: Ահմատ փաշէն ասաց. «Լավ այ»: Յաշտութիւն արին իւրեանց մէջն: Օսմանցի առավ Յայմայտան, հաշտութիւն արին, պոճան: Իբրայիմ աղայ կասեն, Ահմատ փաշի Սաղ Ղօլ աղասին էր, տեղն Յամայտան մեծայոր շինեց Ահմատ փաշէն Իբրայիմ աղին: Ահմատ փաշէն գնաց Բաղդադ: Թողունք ի բաց. յիշենք զԹահմազ խանն:

## ԺԵ

Սա Թահմազ խանըս, որ էր խորասան, ի հետ աղվանի պատերազմում էր, որ Աբդալի աղվան կասեն, ուզում էր գայ Ըսպհանայ վերա: Թահմազ խանըս ճանհայարին բռնեց, ոչ թողեց գայ Ըսպհանայ վերայ, կռիվ արավ մինչ 32 օր, աղվանն բովանդակ սուրն քաշեց, գնաց խորասան: Եւ իւր զօրքն տեսավ, լավ պատրաստութիւն ետես, ԽԸՌ [48.000] զօրք ձիայոր, ՉՌ [6.000] ոտայոր, ամենեցուն պատվայկան ըսգեստ երկաթ հագցուց, ելավ խորասանայ գալ դէքի Ըսպին: ԼԸ [38] օրն եկ եհաս Ըսպհան իւր պատվայկան զօրքովն, մանայվանդ երբ որ Թահմազ խանն եկ եհաս Ըսպհան, Աշրավապատ կասեն, տեղն իջավ Թահմազ խանն: Նմանայպէս որ յիշեցի պատմութիւնս:

Դարձեալ շահն Թահմազին ուներ մեծ մեծ իշխաներ: Թահմազ խանն դեռ չեկաց ժամանակն, շահին ասացին թէ՛ «Շային ողջ լինի, Թահմազ խանն որ գալիս այ, մենք լսել ենք որ գը գայ, քեզ գը բռնայ գտընայ երկաթի մէջ, քո թաքայորութիւնն կը կորուցանէ»: Թագայորս ոչ հավատաց: Գ [3] յավուր անցնելոյ յետ, մին Դավիդ քեք կասեն, որ էր քըրիստոնայ, որ թաքայորի մին մեծ իշխան է կամ թէ խան, այսպիսի: Այս Դավիթս գիշերն եկ դաքայորի տունն ծածկայբար, գնաց դաքայորին մոտ, ասաց այս Դավիթ քրիստոնէս թէ՛ «Թագայորն ողջ լինի, Թահմազ խանն քեզ ներհաք այ, քեզ գը բռնայ, քոյ թաքայորութիւնն կը տիրայ»: Թաքայորն որ լսեց էս բանս, ոչ քուն եղավ. գիշերն լուսացավ, շուտով իւր իշխաներն խնդրեց, եկին ի դուռն թագայորի, ԻԳՌ [23.000] զօրք բովանդակ սրով թրով պատրաստեց իւր դռանըն իւրեանց պատրաստութիւնին հագեր են: Դարձեալ Թահմազ խանն դեռ չի հասել Ըսպհան, մոտացել է մինչ ի Բ-Գ [2-3] օրն գը գայ Ըսպհան. յերբ որ Գ [3] յավուրն անցավ եկ եհաս Ըսպհան, պիտի որ իջանէ մոտն Ըսպհանայ, ոչ է գալիս քաղքի մէջն, քաղկիցն հեռի է իջանում: Որպէս լսեց շային, Թահմազ խանն գալիս այ, վեր կացավ շային քաղքէն իւր զօրքով եւ դուս ել, հեռացավ մինչ կէս ժամ: Աբայ պատճառն ի՞նչ է. վախում այ թէ Թահմազն բռնայ իւրն. այս կողմանէն վախում այ շահն:

Թահմազ խանն լսեց թէ շահն քաղաքիցն դուս եկել է: Թահմազ խանըն շուտով իջավ ձիուցն, ոտոք գնաց թաքաւորին ոտն համբուրեց, ասաց. «Թաքայորն ողջ լինի, եղ բանըդ որ դու լսել ես, եղ խօսքդ քեզ ներհակ մարդի խօսք այ, մի հավատաւ եդպէս բանին, ես քոյ խաթեր հմար՝ խորասանայ տեղս եմ եկել, որ քեզ տեսնեմ, ինչ որ դուն հրայման կտաս, ես էնպէս կանեմ, ես ինձու գլուխ բան չեմ բռնում. թէ որ հրայման կտաս՝ գնամ խորասան, թէ որ կուզե՞զ՝ գնամ Ղազվին, թէ որ կուզեմ գնավ օսմանցու վերէն. ինչ որ դուն հրայման կտաս՝ ես էնպէս կանեմ»: Վերջայպէս շայիին հավատացուց կախարդ լեզվով:

Շահն յետ դառցավ, եկ եմուտ քաղաքն, նստավ քաղաքին մէջ, խնդրեց Թահմազին: Շահն եկ ի դուռն շայի Թահմազի, տեղ նշանց ետ: Նստավ Թահմազ խանն: Շային ասաց. «Թահմազ խան, քոյ զօրքըդ բեր քաղաքի մէջն, դուն էլ եկ քաղաքի մէջն»: Թահմազ խանն ետ ի պատասխանն թաքայորին ասաց. «Թաքայորն ողջ լինի, թէ որ զօրքս բերեմ, քաղաքիս մէջն շատ նեղութիւն կտան քաղաքին»: Լեզով հավանեց շահին: Շահն ասաց. «Լավ այ, թող դռան կենայն, մի՛ն բերել քաղաքս»: Յետոյ թաքայորին հետ մին էնպէս լեզով եխպարսիրութիւն արավ, որ զարմանալի, շային հավատաց սորայ, ինչ որ յիշխանութիւն ուներ՝ ետ ի ձեռ Թահմազ խանի, ասաց. «Դուն գիտես, ինչ որ կանես՝ արայ, մին բան մի՛ անել, ասաց, օսմանցուն հետ կռիվ մի՛ անել, որ ես հաշտութիւն եմ արել, լավ չէ, թաքավորաց խօսքն մին պիտի»:

Թահմազն ասաց. «Թաքայորն ողջ լինի, լավ խօսկ այ, ինչ որ քո հրայմանց խօսքն այ՝ ես էն կանեմ»:

Թահմազ խանըն ըսկսեց իւր զօրքն հայիլ, տեսանել թէ քանի մարդ ունի, կամ քանի իշխան ունի. հանայպագ սորայ սովորութիւնն այսպէս էր, ամիսն մին անգամ իւր զօրքն կը թվեր, որ տեսնէ քանի այ, կամ փախաց չլինեն: Այսպէս զօրքի թիվն մտացն կը պահեր: Վերջայպէս իւր զօրքն տեսավ, թվեց, պռծավ: Յետոյ ըսկսեց շահի զօրքն թվելու. շահի զօրքն էլ թվեց, պռծավ: Շային չի խօսում, մանայվանդ այնպէս հավատացուցել որ շային ասում այ. «Ինչ որ կանայ Թահմազ խանն ինձ բավական այ»:  
Այսպէս հավատացել այ խանի: Ըսկսեց շայիի զօրքիցն 2Դ [6.000] դրկեց Թարվեզ, ԵԴ [5.000] դրկեց Ղազբին, ԲԴ [2.000] դրկեց Մազանդարան, վերջայպէս ինչ որ շայիի լավ պատվայկան զօրք ուներ, բովանդակ այսոյին անդին դրկեց: Յետոյ ըսկսեց շայիի տունն գալն հանայպագ:

Շահն ըսկսեց Թահմազին պատիվ: Կանչեց Թահմազ խանն, գնաց թագայորի տուն պատիվ. 2 [6] օր անցավ, Թահմազ խանն գնաց թաքայորի տուն, թաքայորին ասաց. «Թաքայորն ողջ լինի, ինձ պատվաց ես, գնանք իմ չատուրումն, մէկ տեղ հաց ուտենք, յետոյ ես գնամ մ'երկիրն»: Նմայնապէս Թահմազն մին խաբեբայ ձայն էր հանել, թէ «Ես գնում եմ իմ երկիրն»: Այսպէս որ յիշեցի եւ ասացի: Վերջայպէս Թահմազն որ ինդրեց թաքայորէն ի տուն իւր, թաքայորն հնազանդ եղավ, վեր ել, գնալով ի տունն Թահմազին: Գնացին հասին ի տունն Թահմազին, լավ պատիվ, լավ ուտելիք, այսպէս:

Թահմազ խանըն ըսկսեց թաքայորին թէ՛ «Թաքայորն ողջ լինի, քեզնէ մին բան եմ ինդրում, պիտի որ ես ինդիրս կատարես»: Թաքայորն ասաց. «Ասայ»: Թահմազն ասաց. «Լսել եմ թէ քոյ հրայմանքդ գինի կը խմես. թէ հրայման կտաս՝ մին փորքն գինի բերեն տեղս, մին լավ շէնութիւն անեն կամ ուրախութիւն անենք»: Շահ Թահմազն ասաց. «Լավ այ»: Դրկեց շուտով Զուղայ Զալանթարին, որ անունըն Օվանես, որ է Բարումի որդի Զալանդար Օվանեսն, Ի-Լ [20-30] շուշայ գինի, որ քեշաշ է, գինի բերեն ի տուն խանի: Նստեցան տեղն, լավ ուտել, խմել, յուրախութիւնն, մինչ ի գիշերան կես: Երբ որ գիշերան կեսն թամամ եղավ, Թահմազ խանն հրայման ետ շայիի զօրքին թէ՛ «Գնացէք քնեցէք, որ շային քնում այ»: Շային այնպէս գինով այ որ խելքն մին բան չէ կտրում, այնպիսի հառբաց է:

Երբ որ շայիի զօրքն գնացին իւրեանց բանն կամ քնիլ, Թահմազ խանն մտավ տունն, շային միևակ տեղն նստաց, մէկ սիլա մն այս երեսին, մին այն երեսին զարկեց, ընթռնեց ըսայ, պարանօք կապեց ինդրեց իւր զօրքիցն Գ-Դ [3-4] ուժով մարդ, եկի շահին կապեցին, ոտնքըն երկաթեցի, դրին տան մէջն: Երբ որ լուսացավ, ըսկսեց շայիի մեծ մեծ իշխաներն բռնել. բռնեց բովանդակ շայիի իշխաներն, սուրն քաշեց:

Թահմազն մտավ շայիի տուն, շայիի կինըն եւ կամ քուրն տանէն դուս քաշեց, շայիի մերն եւ իւր որդի, շայի Թամլազն, ոտներն երկացեց, դրկեց խորասան, որ անվանի Մաշատ: Շայիի քուրն իւրան կին շեն, շայիի կինն տարավ իւր տուն, ոչ թողեց դուրս գալ, խատանակեց շնութեամբ. այսպէս որ ասացի եւ յիշեցի: Թաքայորին ինչ որ ասք կամ բարեկամ, կամ կինն, կամ քուրն, ինչ որ ուներ շայիի տան մէջն կամ ասք կամ ետդայկան, բովանդակ տարավ իւր տուն, բովանդակ ավերեց շնութիւնով, անըսկամութիւնով. այսպէս որ ասացի: Երբ որ շային բռնեց որ դրկայ խորայսան, Աստուած փրկէ Տէրն ազատէ, ես քաղաքիս մէջն մին լալ, մին որոտմութիւն, մին սուք, Աստուած փրկէ Տէրն ազատէ, ես քաղաքիս մէջն բովանդակ սեվ են հագել,

մեծ կամ փոքր, այրայկանն սրղովեր սեվ հագել, էգականն բովանդակ իւրեանց ըսգեստն սեվ, լալով աջօք աղերսալի: Պատճռան՝ շային հայմար: Դարձեալ այսպէս լալում ողբում եղավ ի մէջ Ըսպհանայ. այսպէս որ յիշեցի եւ ասաց: Վերջայպէս շային ղրկեց խորասան, Թահմագ խանն Ըսպհան նստավ:

Շային մին որդի ուներ, որ անուն է շայ Աբագ, որ էր 2 [6] ամսոյ երեխայ: Թահմագն ինդրեց զօրացն, եկին ի դուռն Թահմագ խանի, բովանդակ տեղն եկին: Թահմագն հարցուց իւր զօրացն թէ. «Գիտե՞ ձեզ ինչ պաճառի ինդրեցի»: Չօրքն ասացին. «Ոչ գիտենք»: Ասաց. «Իմ ինդիրքս այս է որ ձեր շային ղրկեցին խորասան. կուզեմ որ շայի որդին շայ շինենք, փողի սիքէն սորայ անվանովն յիշենք, որ սորայ աստղն լայվ այ, ես սորայ անունովն կռիվ ան, որ լավ բախտ ունի»: Բերին 2 [6] ամսոյ երեխէն, թաքայոր շինեց, ղրկեց Ղազբին, որ մին կին սորայ կաթն կուտացներ: Այս խաբէութիւնովս երկրին մարդն խաղաղացուց: Մին պատճառ էլ ես գտավ թէ՝ «Ձեր շային գինայ խումեր, լօթի էր, չէր կարում իւր երկիրն պահել, էսպէս արի, ղրկեցի խորասան, որ բարքի խելքն գլոխն գայ»: Էլ ինքն թաքայորն այս խաբելով երկերի մարդն իւրան սիրեց թէ՝ «Խանըն լավ այ ասում»: Այսպէս որ յիշեցի:

## ԺԶ

Վերջայպէս Բախտիարու մարդն լսեց թէ շային բռնվել, իւրեանց մէջն մին շայի դրին, զօրք ժողովեցին, եկին Ըսպհանայ մտոիգ: Գեղերուցն գերի վերացին, գնացին 2-է [6-7] գեղ այսպէս գերի արին, սրով անցրին. այսպէս որ ասի: Վերջայպէս Թահմագ խանն լսեց, Ըսպհանայ վեր կացավ, գալով Բախտիարու վերայ: Ըսպհանայ եկ հասավ Գանդման կասէն տեղն. տեղէն վեր կացավ գնաց Սասկերտ. Դասկերտու վեր կացավ գնաց Ֆռնդգան կասէն տեղն. վերջայպէս վեր կացաւ տեղէն գնաց Բախտիարու հողն մտավ: Բախտիարին լսեց փախավ գնաց Ջլման կասէն մին բերթ այ տեղն, մտավ, ել ոչ դուս եկավ: Էս Ջլմանայ մին կողմն Աբուբուրանայ շուրն այ, մին դէհն սար այ: Թահմագ խանըն բաց թողեց, եկ եմուտ Յավուզայ, որ կէսն արաբ այ, կէսն լօռ, կէսն խորիջի, կէսն շիայ. այս կերպիվ կերպիվ ասգ են: Սոքանք որ լսեցին որ Թահմագն գալիս այ, իւրանց մին գլխայոր ունեն, որ անունըն Ալի Մարդան խան, որ Յավուզու մեծ խան այ, որ սայ այ մեծայոր: Լսեց որ խանն գալիս այ, եկ սորան դեմ լավ փէշքաշով: Երբ Թահմագ խանն տես այս Ալի Մարդան խանին, շուտով ըսգեստ հագցուց պատվայկան, այս Ալի մարդան խանի շինեց մեծայոր, որ գնայ Բախտիարու վերայ:

Թահմագ խանն վեր կացավ տեղէն, խուրմայվատայ միջովն, խզըլայ միջովն տվեց, եկ հաս Քրմանշահ: Տեղն Քրմանշայ նստեց ԼԸ [38] օր, տեղն կացավ, իւր զօրքն թվեց, ետես: 30 օրէն յետոյ վեր կացավ գալ Բաղդադու վերայ: Քրմանշայու վեր կացավ եկ եհաս Մայտաշ, իւր զօրքն թվեց. Մայտաշու վեր կացավ եկ Յառնայվայ. Յառնայվու եկ Քրենտ. Քրենտու վեր կացավ Քուիթօռ: Քուիթօռայ ասելու պաճառն ի՞նչ է, թէ տղայ մարդի սար, որ մին մարդ որ ծեր լինի, չի կարալ դէն անցնիլ, որ անչար դժվար ճանհայպար է. կասեն Քուիթօռայ ի լեզվոյ քրդի: Վերջայպէս խանն եկ տեղն ի Դ [4] ժամէն: Քուիթօռայ մարդերի ճանհայպարերն ոչ մարդ գայ ոչ մարդ գնայ. մանայվանդ այսոր պատճառն ի՞նչ է. Էս Քուիթօռու էն կողմն օսմանցու հողն այ, Էս կողմն Ղզըլբաշի, այս Քուիթօռուս մին ճանհայպար ունի, Էլ յառայվել չունի: Այս Քուիթօռու ճանհայպարէն Գ [3] ժամէն տեղ կայ, մին քարվարն սրայ, որ անվանի խան, անոր անունըն քրդի լեզոյ կասեն խունայի Մեհմուն: Աբայ Էս խանումըս օսմանցու զօրք կայ պահայպան, որ ճանհայպարն պահում այ Թահմագ խանի: Թահմագ խանն գիտայ որ տեղն մարդ կայ: Երբ որ գիշերի կէս եղավ, հրայման ետ

զօրքին իւր բօվանդակ, ձիայորն ոտովացուց, ամէն մարդ իւր ձին յետնէն քաշէ, ճանհայպարօքն չը գնայ, Ես լեռ սարօվս ինքն խանն յառաջ գնաց, այսչաբ զօրքն իւր յետնէն գնացին, Ես լեռիս գլխօվն անցան, Ես գիշերան կէտուն, գնաց մտան օսմանցու հողն: Երբ որ մտան օսմանցու հողն, կէս սիաթ այ մնացել որ արգելակն դուս գայ:

Երբ որ անցավ Թահմագ խանն այս լեռնէս, այս օսմանցու պահայպանըն ոչ է խաբար թէ Թահմագ խանն անցել այ Թահմագ խանն. այսպէս որ ասացի եւ յիշեցի: Վերջայպէս Թահմագ խանն հաս Չաղօվ: Չաղօվու մէջն մին բէկ կայ, որ անունըն Ահմատ բէկ: Այս Ահմատ բէկս ոչ էր խաբար թէ Թահմագն գալիս այ, քանզի Ահմատ բէկն որ ճանհայպարին պահայպան էր դրել, Էն պաճառէն չէր հավատում թէ Թահմագն գը գայ. իւր դրաց պահայպանքըն քնացեր, բաց թողել Թահմագ խան, ինքն յանցել, կացել, եկել, մտել իւրեանց հողն, իւրեանք ոչ են խաբար: Թահմագ խանըն գնաց եհաս Չաղօվ. բէկն դուս եկավ ՉՌ [6.000] պատվայկան զօրօք, կռիվ եղավ մինչ ի կէս օրն. Ահմատ բէկն յախտվեցավ, փախավ: Մին դաջար հասավ, մին ժամէն ճանհայպար է, նետօվ տվել էր գլխին, նետն գլխումն մնացել է, այսպէս մխրժվաց ընբռնել էր սորայ, բերեց խանին մոտ: Խանըն տվեց այս դաջարիս 113 թոման փող:

Վերջայպէս Չ [6] օր տեղն նստեցավ. Չ [6] յավուրէն յետոյ տեղէն ելավ, գնալօվ Բաղդադու վերայ: Գնաց եհաս Գ [3] ժամէն ճանհայպար մին ջուր կայ, որ մեծ գետ այ, որ Չանգանու ջուր կասեն, տեղն հասավ: Այս ջուրս շատ վարարացել եւ շատացել այ. մնաց տեղս Բ [2], մտաց ոչ է կարում անցանել, որ անչաբ շատ է ջուրն: Խնդրեց իւր զօրքն, ասաց. «Ով որ գիս կուզայ՝ ջուրն թաքի, ձիօվ անցնի»: Յառաջ Թահմագ խանն ձին քշեց, ջուրն ինքն անցավ, այս ԽԸՌ [48.000] ձիայոր զորքս Թահմագ խանին հետնէն դառ, Էն ջուրն, անցան ջրի Էն կողմս: Ը [100] մարդ ջրով խեխտվեց, այլ ոչ յառայվել: Մնացին ոտայորն, որ ՉՌ [6.000] էր, ջրին Էն կողմս. պիտի որ անցնին: Թահմագ խանն ըսկսեց երկաթէ ճօպան շինել տալ, ԺԲ [12] օրն երկաթէ ճօբանն շինեցին, լեղնորդ ձգեցին ջուրն, ճօբանի մին տուտն անցկացրուց ջրի այն կողմն, որ լինի ճօբանս Դ [4] հատ, կապեց Էն, Ես կողմէն, Էն կողմէն, վերէն տախտակ դրին, հող ածին: Այս օտայորս անցըրին ջրի Էն կողմս: Յետոյ դառցան թօբերն անցկացընել. բօբերն Էլ անցկացըրին, պոծան: Յառաջ կուզէր որ Բաղդադու վեր գնայ, Էլ ոչ գնաց Բաղդադու վերայ: Ըսկսեց գնալ Քարթուտայ:

Գնաց եհաս Թաբալու կասեն, մին պատվայկան գեղ այ: Ես Թաբալուս գեղի մարդն փախել էր գնացել Քարթուտ, ոչ կէր մարդ ի մէջն փողոյ: Տեղէն գնաց Լէլան, որ մին լավ գեղ այ. Ես Լէլանու մարդն շիայ յա, որ ունի հավատն պարսոյ մարդոյ, որ լինի Ղզըլբաշ: Ես գեղս հնազանդ եղան Թահմագին: Թահմագ խանն ինդրեց, Ես գեղիս մեծայմեծն շուտով եկին ի տուն Թահմագին: Թահմագն ասաց. «Գիտէ՞ք ես ձեզ ի՞նչ պաճառի ինդրեցի»: Ասացին. «Ոչ գիտենք թէ ինչ պաճառի ես ինդրել»: Ասաց խանն թէ «Ձեզնէ կուզեմ Գ [3] պատվայկան մարդ, որ ճանհայպարն գիտնայ լավ, Ժրայգլուխ լինի այս գեղիս»: Մարդիքն բերին, իւրեանց մէջն մի մարդ կեր, որ անունըն Քայեայ Ղասում, որ լինի իւրեանց լեզվօվ տանուտեր, որ իւրեանց գեղին եօթն տարոյ տանուտերութիւն էր արել. սորան հավանեցան, դրին խանին հետ, որ ճանհայպարի ցոյց տայ: Խանն այս մարդուս լավ ըսգեստ հագցուց, իւրան լավ ձի, իւր ամենայն ինչ որ պիտոյ էր, թէ թուր, թէ թվանք, ինչ որ պետ կէր, իւրան խանն տվեց: Վերջայպէս Լէլանու վեր կացին գնալօվ Բաղդադու վերայ: Այս ճանհայպար ցուց տվօղ մարդ յառաջ ընկավ խանին հետ, այսչաբ զօրքս յետնէն խանի գնալօվ հասին Ղարայ Թաբայ կասեն տեղն: Այս Ղարայ Թաբիս մարդն սորանց հետ միոյ հավատ են, որ լինի Ղզըլբաշ: Տեղս նստավ Ը [8] յավուր: Ը [8] յավուրէն յետոյ վեր

կացին գնալով Ղզրայբաթ կասեն, որ մին գեղ այ, անունըն Ղզրայբատ: Խանն գնաց տեղն, Ղզրայբատու մարդն բովանդակ փախել են Բաղդադ տեղն: Դարձեալ այս խանս ի՛նչ պաճառ էր եսպես ձախ եւ ծուռ այ քալում, կամ յետ այ գնում, կամ յառաջ այ գնում, կամ ուղիղ ճանապարհովն այ գնում: Պաճառն այս է. որ օսմանցին տեսնի որ խանն յետի այ գալիս, օսմանցին դուս գայ, հետն կռվեն: Օսմանցին ոչ է դուս գալիս: Վերջայպես խանըն տեղէն Ղզրայբատու հետ գնալով, գնաց եհաս Մանդալի: Մանդալու մարդն ոմանք շինայ են, ոմանք սունլու. Էն որ սունլու էր փախավ, գնաց Բաղդադ. Էն որ շիայ էր՝ մնաց Մանդալի: Խանն Մանդալի նստավ ԺԲ [12] յավուր, տեղէն վեր կացավ գնալով Յիլու վերայ: Ալի Մարդան խան, խուրմայվատոցի Բաբայ խանն, սոքանք է ԼԴ [30.000] զօրքով եկին, որ խանն էր հրայման տվել: Երբ որ Բաբա խանն, Ալի Մարդան խանն հասին խանին, խանն էլ ոչ գնաց Յիլու վերայ, Բաբայ խանին, Ալի Մարդան խանին դրկեց Յիլու վերայ:

## ԺԷ

Ինքն (Թահմազ Ղուլի խանն) նստավ տեղն Մանդալի եօթն յավուր: Եօթն յավուրէն յետոյ վեր կացավ գնալ Բաղդադու վերայ: Գնաց եհաս Բաղդադ: Բաղդադու մին ժամ կամ Բ [2] ժամէն տեղ այ, որ Յիմամ-Ազամ կազեն, որ օսմանցու գունտն այ, որպես մեր սուրբ հայրապետերն մեր օրէնքն կապեցին եւ կազմեցի, այն նման նորանց օրէնքն Յիմամ-զամ կապեց, շինեց սահմայնայդրեց: Վերջայպես խանն գնաց տեղն, իջավ, Յիմամ-Ազամի մէջումն մեծ մեծ կարդացողեր կայ. խանն ասոնց լավ ըսգեստ հագցուց, լավ պատվեց: Տեսին որ լավ այ պատում, Յիմամ-Ազամի շխերն գրեցի Յիմամ-Ալու, Յիմամ-Մուսի, Յիմամ-Բաղերի, Յիմամ-Քազումի, Յիմամ-Աբասի, Յիմամ-Չէնալ, Յիմամ-Չէյնաբտու. ասոնց ամենեցուն գիր դրկեցին թէ՛ «Թահմազն լավ այ պատիվ տալիս մեզ, լավ դուրք այ, սորան հնազանդ եղէք, որ մենք հնայզանդ եղանք մեզ լավ այ պատիվ տալիս»: Սոքանք որ լսեցին՝ բովանդակ հնազանդ եղան Թահմազին:

Վերջայպես Թահմազ խանըն, որ Ալի Մարդան խանըն, Բաբայ խան բեկն, որ դրկել էր Յիլու վերայ, սորանք Յիլայ առել են, պռծել, շատի ջուրն յանձին կացել, որ գնան Յիմամ-Ալի կամ Յիմամ-Մուսայ: Խան լսեց, շուտով մարդ դրկեց թէ՛ «Գնակ ոչ Յիմամ-Ալու վերայ կամ Յիմամ-Մուսու, ինձ հնազանդ են եղել»: Այս Բաբայ խանս՝ լսեց խանի հրաման տված խօսացն, ոչ Յիմամ-Ալու կամ Մուսու վերայ: Յիմամ-Ալու, Յիմամ-Մուսու տակօվն Բաբայ խան, Ալի Մարդան խանս իւրեանց զօրքովն եկին դէբի Բաղդադ, որ Էն ջրի Էն կողմն: Երբ որ Բաբայ խանըս կամ Ալի Մարդան խանս ըսկսեցին դէբի Բաղդադու, քաշեցին ըսուրն այնչաբ օսմանցի կամ արաբ որ անթիվ: Դարձեալ Բաղդադու ջրի Էն կողմն այնչաբ օսմանցի սուրըն քաշեցին, Էն չօլն բովանդակ յարուն էր դառել, յարունայ հոտէն մարդ չէր կարում անցնիլ, որպես որ տօթ է եւ շոգ է ժամանակն, հոտնիցն մարդ չէր կարում դէն անցկենայ:

Վերջայպես Բաբայ խանն եկ հասավ Բաղդադ, ջրի Էն կողմօվն, Ղարշու Եախայ կասեն, Բաբայ խանն եկ տեղն իջավ: Ղարշու Եախայ ասելու պաճառն ինչ է. այս է որ Բաղդադու բերդի մին դուռն ունի, որ Ջսիր-Ղաբըսի կասեն, որ Էն դռնօվն բերդիցն Էն գրգըն Ղարշու Եախէն, որ էս կողմն Բաղդադ այ, Էն մին մեծ քաղաք այ որ քան ըսԲաղդադ մեծ. շատ է ջուրն միջօվն նայ անցնում, Էն դէհն Ղարշու Եախէն այ, էս կողմն Բաղդադ, մէջտեղն մին կամուրջ կայ, այս դին այն դին կանսին: Կամուրջըն ինչպես այ. Բ [2] երկաթ է, գնչիր կապել են, մեծ մեծ բարթէք վերէն սահմանել են որ մարդ գնայ գայ կամ թէ ձիայոր գնայ գայ:

Վերջայապես Բաբայ խանն Բաղդադու էն կողմն բռնեց, Թահմազ խանն էս կողմն, միջ ի ԽԸ [48] յավուր: ԽԸ [48] յավուրն անցնելոյ յետ, ըսկսեց Թահմազ խանն թօբերն Չաղօվու բերել տալ: Թահմազ խանն ԻԵ [25] թօբ էր բերել հետն Չաղօվ, բաց էր թողել, հետն թօբ չի ման ածել, թօբերն իւրանից 2 [6] եօթն յավուր բաց կը թողնի, այսպիսի կանոն ունի Թահմազ խանն: Վերջայապես թօբերն ետ հասավ Բաղդադ, թօբերն լարեցին ի վերայ Բաղդադու, ըսկսեցին թօբերն կրակել ի վերայ Բաղդադայ: Օսմանցին բերդի մէջէն ըսկսեց թօբերն կրակել ի վերայ Թահմազի: Օսմանցու թօբերն շատ բազում մեծայգուն էր, մին թօբն Խ [40] հօխայ բարուտ կուտեր. մին անգամ օսմանցին էս թօբըս կրակեց Թահմազի վերէն, թօբի գուլուլէն եկ հասավ Թահմազի զօրքի մէջն, մինչ ի Ը [100] մարդ վեր առ գնաց թօբն: Թահմազ խանըն տեղէն զօրքն վեր կալավ, հեռացավ, հեռայգոյն իջավ, ոչ օսմանցու բօբն հասավ Թահմազին, ոչ Թահմազի թօբն հասավ օսմանցուն. այսպիսի հեռայգուն նստեցին մինչ ի ԾԵ [55] յավուր: Դարձեալ օսմանցին որ էն մեծ թօբն կրակեց Թահմազի վերէն, բերդի պատն բօվանդակ ավերել էր, շատ տուն էր ավերել. քաղաքի մէջն օսմանցին էլ ոչ կրակեց այս թօբս: Վերջայապես 55 յավուր թամամ եղավ, օսմանցին ըսկսեց քաղաքիցն դուս կալ որ լինի կռիվ: Թահմազն էլ իւր պատրաստութիւնն տես: Օսմանցին Բ [2] կողմօվ դուս եկավ, մին Յիմամ-Ազամայ դռնօվն, մին Աղ-Ղաբու կասեն, էն կողմէն: ԻԴԴ [24.000] ենկիչարի կամ եամաղ, որ ենկիչարու եամաղ է, այսչաբ Աղ-Ղաբուցն դուս եկան, ԺԴ [10.000] Յիմամ-Ազամայ դռնից դուս եկան. փաշէն դուս չի եկել, դեռ քաղաքայկանն դուս չի եկել, փաշէն չի թողնում թէ քաղաքայկանն դուս գայ: Պաճառն ի՞նչ է. քաղաքայկանի կեսն ղզըլբաշ այ, վախում այ դուս թողնել. այսպես որ յիշեցի եւ ասացի:

Վերջայապես օսմանցին քաղաքէն դուս եկ: Թահմազ խանն տեղէն վեր կացավ. Թահմազ խանն ոչ է բերում թօբ: Յառաջ օսմանցին թօբն յառաջարկում այ, ինչ որ զօրք կայ թօբի յետոյ կանքնաց. այսպես եկ յառաջ, Ժ [10] թօբ այ դուս արկել օսմանցին: Թահմազն որ եկ՝ մոտացավ օսմանցին, թօբերն կրակեց: Թահմազն որ տես թօբերն կրակեց օսմանցին, իւր զօրքն Դ [4] բաժնին Թահմազ խանըն թօբն ոչինչ եղայ: Օսմանցին մինչ ի թօբերն մին անգամ էլ լցնելըն, Թահմազ խանն շուտօվ դ [=4] կողմէն եկ հաս, ոչ թողեց թօբերն լցնել: Խառնվեցան միմեանց մինչ ի եօթն ժամն: Վերջայապես օսմանցին յախտվեց, եփախ բերդն: Սրօվ էր անցել օսմանցուց ԸԴ [8.000], Թահմազիցն 2Դ [6.000]. այսպես որ յիշեցի:

Օսմանցին էլ ոչ դուս եկավ քաղգէն: Քաղաքին մէջն անկեալ սովութիւն, քաղձածութիւն, շան մսի հօխէն մինչ ի Խ [40] մառչիլ, ոչ կեր թէ առնեն, ուտեն: Այսպես 2Ը [88] օր Թահմա նստեց տեղն, օսմանցին էլ ոչ է դուս գալիս: Թահմազ խանն ըսկսեց զօրիցն ղրկել Մսուլայ կողմն: Գնացի Մսուլայ կողմն, էդ գեղորէնքդ բօվանդակ սուրն քաշեցին, որ բանական մարդն անբանական մարդն ոչ էին ըսպանում, կամ փորք տղայքըն ոչ էին քերի անում, այն որ բանական մարդ այ ըսպանեն էնոր, անբանական է, ոչ է ըսպանում: Այսպես ղսըլբաշն գնաց մինչ ի Մսուլ, ոչ մտավ: Մսուլայ մոտն մին Զագրաթի-Եօնուզ կասեն, որ լինի Ունան. մինչ ի տեղն գնացին, տեղնէն յետ դառնան:

Վերջայապես մինչ ի Թ [9] ամիս Թահմազն տեղն նստավ: Թ [9] ամսոյ յետոյ սուլթան Մահմուտն Թօբալ Օսման փաշէ մեծայոր էր շինել ԲԾԾԴ [250.000] զօրօք, որ գալիս էր Թահմազին: Եկավ հասավ, հասավ Մսուլ Թօբալ Օսման փաշէն: Թահմազն լսեց. Թահմազն էլ չի ղրկեց Բաղդադայ մէջն թէ՛ «Ահմատ փաշայ, եկ բերդն տուր ինձ առանց կռիվ»: Ահմատ փաշէն գրեց թէ՛ «Դու գնայ օսմանցուն յախտայ, եկ, էս բերթս քոյն այ, մինչ ի օսմանցուն բօվանդակ յախդես ոչ՝ էս քեզ չեմ տալ էս քաղաքն»: Էսպես



մնաց: Վերջապես Թօբալ Օսման փաշեն եկ հասավ Բաղդադայ հողն, գալով մօտացավ: Թահմազ խանըն 20 [6.000] զօրք բաց թող Բաղդադի վերայ, Թահմազ խանն գնաց Օսման փաշի վերեն:

Օսման փաշեն շուտով եկ հաս եւ ջուրն բռնեց: Թահմազն ոչ կարաց, Թահմազ խանն ոչ կարացավ հասնել բռնայ ըզջուրն: Վերջապես օսմանցին տես որ Թահմազն գալիս այ, իւրեանց պատրաստութիւնն տեսին: Թահմազն գնաց մտացավ. Թահմազն ոչ էր տարել թօք: Օսմանցին բերել էր թօք, ճԵ [105] թօք: Ըսկսեցին իւրեանց կռիվն: Թահմազն յառաջ ինչ թվանքի ուներ զօրքի գառայէն կանքնացուց, որ ԺԲՌ [12.000] թվանքի ըսկսեցին կռիվն: Թահմազն յառաջ յախտեց օսմանցուն: Օսմանցին փախավ գնաց ջրին մոտ, մին բլբայ կեր տեղն մաթարիս բռնեց: Բլբայ ասել ի՞նչ պաճառ է այս է պաճառն, որ անձրեւ որ շատ էր եկել, սելաֆի ջուրն քանդել այ, խոր խոր ձոր այ շինել, այսպէս որ փոս փոս այ: Օսմանցին եսկիչարին մտավ տեղն. եսկիչարին թվանքն կրակում այ, դիբջում այ Թահմազի զօրին: Թահմազի զօրն որ թվանքն կրակում այ, ոչ է դիբջում օսմանցուն: Նմանայպէս օսմանցին գետնի տակէն այ, Թահմազի զօրքն գետնի երեսին: Քանի ժամանակ որ Թահմազի թվանքին յառաջէր, օսմանցու եսկիչարին ոչ կարեցավ դուս գալ. երբ որ Թահմազի թվանքին յետ դառավ ծարավութենէ, օսմանցու եսկիչարին դուս էթավ: Աստուած փրկէ Տէրն ազատէ. պարսոյ զօրին վերայ այնպէս կրակ վեր ածին, որպէս երկնքէն անձրեւ կը հեղայ, այնպէս թվանքի գուլուլէն վեր կու թաբեր ի վերայ պարսոյ զօրին: Պարսոյ զօրի յախտվելու պաճառն ի՞նչ էր. պաճառն այս է որ օսմանցի շուտով ջուրն տիրեց, Թահմազն ոչ կարացավ շուտով հասնիլ, Թահմազին ջուր չունէր. ջուր ուներ, հեռի էր. ապայ այն էլ ինչպէս ջուր էր, գետնի տակէն մին սեվ ջուր էր դուս գալիս, մին սրհաթ հեռի: Թահմազն թվանքիքն, որ յառաջին քանի որ նոր եղավ կռիվն, որ մի ժամ լավայգոյնին, երբ որ Բ [2] ժամն թամամվեցավ, Աստուած փրկէ Տէրն ազատէ, օսմանցու կողմէն մի քամի վեր կացավ, բովանդակ այս թվանքից բերանն հողով ավազով լցուց, ծկակ եղան: Բաբելայ կրակ շողն, որ այնպէս շող այ, որ մարդոյ շոր էլ այրում այ, արեւն այնպէս շող այ. քամին մին կողմէն, կրակ շոքն մին կողմէն, ծարավութիւնն մի կողմէն, Թահմազ խանն որ տեսավ իւր թվանքիքն ծարավու ծկակ են եղնում, թվանքիքն ետ քաշեց, թէ՛ «Գնացէ կէս ժամէն ճանհայարէն ջուր խմեցէքէ:

Երբ որ թվանքին ետ դառավ, օսմանցու եսկիչարին դուս եկավ մաթարիսի մէջիցն, ըսկսեցին պարսոյ զօրին վերայ կրակ թաբեցընել: Մամիշ փաշ մին կողմէն, Ուսէն փաշէն մին կողմէն, Ըռուստամ փաշէն մին կողմէն, պարսոյ զօրին չորք կողմն բռնեցի: Պարսոյ զօրքն յախտվեց, ձիայոր փախին, ոտայորն բովանդակ անցան. ձիայորք էլ անցան, մանայվանդ մին փորքն ձիայորն պռծավ: Թահմազ խանն կորուցին ի մէջ զօրի, ոչ գիտեին որ կողմն այ գնացել, ոչ գիտեին ըսպանե՞լ են: Այսպէս պարսոյ զօրի կէսն գնաց Մատալու վերայ, կէսն գնաց Ղզրայբատու վերայ, կէսն գնաց Ղազովու վերայ. այսպէս մին փորքն փորքն ցրվեցան:

Պարսոյ զօրի մէջումն կեր 2 [6] քըրիստոնայ, որ Թահմազին դուլ են կամ իւզբաշի. որ մին էր Դավի, անունըն Դաւիթ կոչի. մինն Գօրըցիցեցի բէկ կասեն. մինը Գեղաթունու դուն կասեն, որ անվանի Գեղայթունի, Գեղաթունի չորս կողմէն կասեն, գեղն Սոթ անվանի, այս սոթեցի Ատումի որդի Աբիջանս, չաբնեցի Այտոլէն բէկի որդի Աղայջանըն, եւ չաբնեցի Մռավենց Տէր Մուսէսի որդի Բալիզն, եւ ճաթայկերենց թօբուզի որդի Յախնազարս: Վերջապէս էս 2 [6] քըրիստոնէս ունի ԵՃ [500] զօրք, ոչ ուն յառայվել: Պարսոյ զօրն որ յախտվեց, Թահմազ խանն որ կորուցել են, էս Յախնազար հայ քըրիստոնէս խանին հետ գնացել էր, որ մարդ չէր տեսել: Մնացեալ

քրոխտոնէքն փախել են, Ղազով գնացել են: Ղազով մին Ջան խան կասեն, որ Ըսպիանի Մահմատ Ալի խանի որդին, սայ եկել էր Ղազով, էս քրոխտոնէքս որ գնացին տեղն, Ջան խանն ասաց. «Դուս չիք որ ես յետ կը դառնամ մէկ էլ օսմանցու վերայ»: Էս հայքըն դարուլ չարի թէ՛ «Մեր խանն գտնէք ոչ, մենք չենք գնալ մէկ էլ օսմանցուն հետ կռվել»: Այս հայքս սորայ ոչ եղան հնայգանդ, ելին դուրս քաղաքէն դէրի Յամայդան. գնացին հասին Քրմանշայ:

Քրմանշահ խաբար եկ թէ խանն Յամայտան այ. ուրախացան, ինդրութիւն արին: Թահմազ խանըն ճանհայպարերն մարդ եդ որ մարդ չըփախչի, ինչ որ փախաց զօրք կեր՝ սաղըն եկ տեղն խանին մոտ: Չ [6] խան էր պռծել. խաներն կանչեց, հարցուց թէ «Դուք ո՞ր էք փախչում, էս ձեզ տարել եմ որ կռիվ անէք, էս ձեզ տարել չեմ որ դուք փախչիք»: Շուտով հրաման ետ, էս վեզ խանի գլուխն կտրեցին: Կանչեց մեծ մեծ իւզբաշէքն, էս օր ճԾԲ [152] մարդոյ գլուխ կտրեց, թէ «Ո՞ր փախաք կռվիցն»: Էս պաճառին Գ [3] յավուրն Չ-է [6-7] խան շինեց, ինչ որ ըսպանեց թաքարտան նոր շինեց, մինչ ի վաթսուն յավուրն ԺԵՌ [15.000] զօրք շինեց, որ էս ԺԵՌ [15.000] որ շինել այ՝ իւր փախած զօրիցն այ. ինսընեւերկու Ռ [92.000] զօրիցն մնացել էր ԺԵՌ [15.000] զօրք, որ օսմանցու կռվումն բովանդակ գնացել էր:

## ԺԸ

Վասուն յավուրն որ թամամ եղավ, ըսկսեց (Թահմազ Ղուլի խանն) ԺԵՌ [15.000] զօրով գնալ Թօբալ Օսման փաշի վերայ: Երբ որ Օսման փաշէն, որ խանին յախտեց, Օսմանն փաշէն դրկել էր Ահմատ փաշին թէ «Դուս եկ բերդիցն, Թ [9] ամիս թողել էս Ղարլբան, եկել այ դաքայորի երկիրն բովանդակ ավերել այ, դուն բերդիցն դուս չես գալիս, դուն թաքայորին ներհաք էս»: Ահմատ փաշէն ասաց. «Էս բերդէն դուս չեմ գալ, էս Ղզըբաշի կռիվն տեսել եմ, վախում եմ դուս գալն, թեպէտ դուն էլ տեսար, ամայ էդ Ղզըբաշն չէր որ դու յախտեցիր, Ղզըբաշն գալ պիտի»: Վերջայպէս դուս չեկավ: Թողնենք գայս, յիշենք Թահմազ խանն:

Թահմազ խանն Կ [60] յավուրէն վերայ ԺԵՌ [15.000] զօրով ըսկսեց գալ օսման փաշի վերայ: Յամայտանայ վեր կացավ, եօթն օրէն վերայ եկ Չաղով, ԺԵ [15] յավուրէն ճանայպարի այ: Վերջայպէս Չաղովու Գ [3] յավուրն գնաց հասավ Քարթուտ մին Ղաֆիլ տեղն, գիշերով դուս եկավ մին սարի տակից, հանեց զսուրն ի վերայ Օսման փաշի: Օսմանցին տես որ Թահմազն գալիս այ յառատոսէ որ լուսն մութն բաժանելու, օսմանցու կեսն քնած կեսն արդուն: Վերջայպէս յախտեց օսմանցվին, Օսման փաշէն բռնեց ըսպանեց, գլուխն դրկեց Ահմատ փաշին: Այնչաք օսմանցի սուրն քաշեց, որ իւր զօրքն, որ սրով անցան, Գ [3] քանըս յառավել Թահմազի զօրացն սրով անցան:

Թահմազն տեղէն վեր կացավ գալ Բաղդադու վերայ: Եկ հաս Բաղդադ, Ահմատ փաշի հետ եխպայր եղան:

Թահմազն գնաց ի վերայ Բախդիարու, գնաց եհաս Բախտիարի, կռվեց Բախտիարուն հետ, Բախտիարին յախտվեցավ, բովանդակ գերի վարեց, որն ըսպանեց: Վերջայպէս գնաց Շերագ, որ իւրան մին խան ուներ, անունըն Մահմատ խան, ի Բլուջ: Նորա դրկել էր Բլուջի վերայ, որ հնագանդ չէն Թահմազ խանին, սորայ դրկել նորանց վերայ: Այս Ահմատ խանս գնացել էր Բլուջի երկիրն, զօրք ժողովել որ գայ Ըսպիանայ վերայ, որ սայ էլ ներհակ եղավ խանի: Գնաց Բանդարայ երկիրն, շատ մարդ կօտորեց, բազմանալով էլ եհաս Շերագ, տեղն նստավ, իւր պատրաստութիւնն տեսնում այ, որ գայ Ըսպահնայ վերայ:

Թահմազն մարդ ղրկեց թէ՛ «Դուս իմ ծառէն ես, իմ հացն կերել ես, եղպես մի՛ անել, լավ չի, ես քես բերել եմ, եղ տեղտ եմ հասայցուցել, քեզ խան եմ շինել, Ե-2 [5-6] խանի գլխայոր եմ շինել, եղպես մի՛ անել, իմ հացն քոյ աչքերդդ կու խավարայցունայ, եղպես մի՛ անել»: Գ [3] անգամ, Դ [4] անգամ էսպես խաբար ղրկեց. այս խանս լսեց ոչ: Մահմատ խանն գիր ղրկեց Թահմազին թէ՛ «Էս գլուխըս այ քոյ ճանապարհ, որպես Աստուած կու գայ՝ այնպես պիտի լինել, եայ դուս գիս կսպանես, եայ ես քեզ. այսպես յիմացի: Թահմազ խանն էլ ոչ խօսաց: Թողունք զայս, յիշենք Թահմազ խանն՝ որ օսման փաշին յաղթեց:

Օսման փաշին ըսպանեց, գնաց Բաղդադու վերայ. Ահմատ փաշին հետ եխպար եղավ թէ՛ «Էս քեզ շատ կու սիրեմ: Պաճառն ի՞նչ է շատ ուզելուս. ես Թ [9] ամիս քո Դ [4] կողմի բռնեցի, քոյ բերդի մէջն հացի հօխէն Կ [60] մառչիլ եղավ, դու քոյ թաքայորի բերդն ինձ չը տվիր, հացն քեզ հալալ այ, որ քոյ թաքայորին այսչաբ տերութիւն կանես. այս կողմանէն քեզ շատ կուզեմ որ դու այդ բնութիւնն ունիս, ես քեզ ախպերայցայ, ոչ դուս ինձ վատ աչօվ տես, ոչ ես քեզ»: Թահմազ եւ Ահմատ փաշէն եղան եխպայր:

Թահմազ խանն գնաց Յավուզայ, Ալի Մարդան խանն, Բաբայ խանն վեր կալավ իւր հետ, գնաց Բախտիարու վերէն: Էս բախտի տես. իւրեանց մէջն մին մեծայոր են շինել, որ անունըն Ալի շայի, իւրեանց գլխոյ ուզում են երկիր տիրեն: Աբայ այսոր պաճառն ի՞նչ է, որ սորանք իւրեանց գլխոյ երկիր են ուզում տիրեն: Լսեցին թէ Թահմազ խանն յախտվել այ, ըսկսեցի չորս կողմէն ներհակ դուս գալ. այս է պաճառն: Վարջայպես Թահմազ խանն ուներ ԺԵՌ [15.000] զօրք, ոչ ուներ յառավել. մանայվանդ Թահմազ խանի ունէ յառաջ քանս Օսման փաշի կռիվն ստուն ԲՌ [92.000] զօրք, Օսման փաշէն որ յախտեց, Թահմազին զօրքն բօվանդակ տեղն սրօվ անցան, մնացեալ ԺԵՌ [15.000] զօրք: Վերջայպես Թահմազ խանն գնաց Յայվիզայ: Ալի Մարդան խանն, մին էլ Բաբայ խանն, սոքանք ունեն զօրք ԼՌ [30.000] զօրք. այս երկու խանս միայորեցան եղան ԽԵՌ [45.000] զօրք: Գնացին հասին Ջմլան կասեն տեղն: Բախտիարես դուրս եկավ շատ բազում զօրք, եղավ սոցանց կռիվն մինչ ի ԺԸ [18] յավուրն: ԺԸ [18] յավուրեն յետոյ Բախտիարին յախտվեց, Թահմազն ըսկս սուրն քաշել, անչաբ մարդ սուրն քաշեց որ, Աստուած փրկէ Տերն ազատէ, յարունըն գետի պես գը գընար. այսպես որ ասացի եւ յիշեցի: ԽԸ հազար [48.000] տուն գերի վարեց, բօվանդակ տներն ղրկեց Խորասան, որ անվանի Մաշատ. տուն եւ կանայք ջոգ ղրկեց, մարդիքն արայկան ջոկ. արարկանըն ԺԲՌ [12.000] սաղ էր ընքռնել, այս տասներկու հազարս որ սաղ ընքռնել, սոցանց ո՞րպես ղրկեց Խորասան. ըսկսեց ԳՃ [300] մին, ԴՃ [400] մին, երկու հարիւր մին, այսպես փորքը փորքը ճանայպարհեց Խորասան. երեք հարիւր Բախտիարի էլ ջուղայեցուցին տվել, որ խարջն քաշում են ջուղայեցիք. Բ [2] ամիս խարջն քաշեցին, երկոյ ամսէ յետոյ ղրկեցին Շերագ. այսպես երկրէ երկիր խարջ տալօվ, պահելօվ, տարան Մաշատ:

Վերջայպես Թահմազն տեղէն վեր ել գնաց Շերագու վերայ, որ Մահմատ խանն ներհակ այ ի հետ Թահմազ խանին հետ: Գնաց եհաս Շերագ. Շերագ որ մտոեցավ, Մահմատ խանն լսեց որ Թահմազն գալիս այ: Դուս եկավ քաղզէն, եղավ սոցանց կռիվն: Մահմատ խանն յախտվեցավ, փախավ: Չօրքն սրօվն անցան: Մահմատ խանըն փախավ գնաց Բանդարայ մօտիգ մին բերդ կայ, որ Այվազայ բերդ կասեն, մտավ տեղն: Էն բերդի մէջումն մին շի կայ, որ անուն շի Ջաբար, Էն բերդն գը մնայ, որ խիստ շատ կախարդայկան արուեստի տեղակ այ, որ թուրքերն, որ են անօրէն, այնպես կը հայվատան որ սրբի տեղ այ իւրեանց մէջ: Պաճառն, այս կախարդական բանն որ կերպիվ ցուցում նշանց կտայ, որ է կախարդական, այս կերպօվս նորայ լավ

կը հայվատան: Վերջայպէս Մահմատ խանն գնաց տեղն շխին մոտ թէ՛ «Աստուծոյ խաթեր հմար ես բանըս իմ գլուխս եկավ, Թահմազ խանն զիզ կու ըսպանէ, զիզ ազատէ, սերն Աստուծոյ»: Շի Ջաբարն գիր դրկեց Թահմազ խանին թէ՛ «Իմ խաթեր հմար ըսպանես ոչ»: Թահմազն ասաց. «Քո խաթեր հմար չեմ ըսպանել, դրկայ, գայ ինձ մոտ»: Մահմատ խանի դրկեց իեմուտ Թահմազ խանի: Թահմազ խանն ասաց. «Մահմատ խան, ես ես քեզ գրեցի Բաղդադու հետ թէ եղպէս մի՛ն անել, ինձ մի՛ ներհակ լինել, դուն գրել էիր թէ Եայ դուն զիս կու ըսպանես Եայ ես քեզ: Յիմայ Աստուած քեզ ետ ի ձեռն իմ, ես քեզ պիտի որ ըսպանեմ»: Մահմատ խանն ասաց. «Դուն գիտես, քո ձեռն եմ, որպէս որ կուզես այնպիսի արա»: Թահմազն ասաց. «Շի խաթեր հմար չեմ ըսպանել քեզ, մին փորքն ղաղախ կանեմ»: Յրայման ետ զինուորին թէ՛ «Էտոր աչքն հանեցէք շուտով»: Չինորի մինն հանեց գուրն, հանեց Բ [2] յաչքն բնիցն, քօռացուց, յետ ի ձեռն հարիւր թուման դրամ, դրկեց Մաշատ թէ՛ «Գնա՛յ, Էդ փողովըս որ քեզ տվի, Էտոր ընթրատն կեր, ինձ աղօթք արայ»: Դրեց ԺԵ [15] մարդի հետ, դրկեց Մաշատ:

Խանն Շերազու հետ եկ Ըսպհան, որ իւր պատրաստութիւնն տեսնի, գնայ Շրվանդայ վերայ, տեսավ իւր պատրաստութիւնն, վեր կացավ, գնաց Շամախու վերայ:

## ԺԹ

Վերջայպէս Թահմազն ըսկսեց գնալ Շամախու Շրվանայ վերայ, Ըսպհան իւր պատրաստութիւնն տեսավ: Յայտ լիցի կարդացողաց եւ յիշողաց որ Էն թարիղին որ շայի Թահմազն որ Ըսպհան առավ, Գիլան մօսկօվին ձեռն էր, մօսկօվն Գիլան նստաց էր: Երբ որ շայի Թահմազն Ըսպհան առավ, գրեց սուլթան Ահմատին թէ՛ «Իմ երկիրն ինձ տուր, մինչ ի ես թարիղս աղվանն իմ երկիրն տիրել էր, հիմայ Աստուած տվեց իմ երկիրն աղվանի ձեռնէն. արդ ինդրեմ քեզնէ որ իմ երկիրն ինձ տաս, որ իմ հօր օջախն խավարի ոչ»: Սուլթան Ահմատն գրեց շայիին թէ՛ «Լավ ես ասում, մօսկօվն Գիլանու դուս արայ, ես էլ իմ առաց երկիրն քեզ տամ. գնայ տիրէ»: Շային գրեց մօսկօվին թէ՛ «Իմ երկիրն ինձ տուր, որ օսմանցուն գրել եմ, օսմանցին ասում այ թէ մօսկօվն իւր առած երկիրն տայ, ես էլ իմ արաց երկիրն տամ»: Մօսկօվն գրեց շայիին թէ՛ «Ես այսչաբ այնչաբ դրամ եմ կորուցել, այսչաբ սօլդադըս, տեղըդ փչացել այ, ես Գիլանն քեզ չեմ տալ, թէ որ յիմ խարջաց դրամն կտաս կրկին, տարին ուսուն հազար թուման էլ կտաս, քո երկիրն քեզ կտամ, որ տարէն ուսուն հազար թուման տաս ինձ»: Վերջայպէս շային ղայիլ եղավ ոչ, առավ այսչաբ դրամ սակայվիք կամ փորքս, որ շային մօսկօսին հետ լավ հաշտ եղան, ինչ որ եխպայր: Մօսկօվն Գիլանն բաց թող գնաց իւր երկիրն, պիտի որ շային տարէնըն ՁՌ [80.000] թուման տայ շային մօսկօվին:

Վերջայպէս մին տարի անցավ որ փողի վատենայ: Մօսկօվն մին Էլչին շինեց, դրկեց Ըսպհան որ շայիիցն երկրի դրամն առնի: Ես Էլչիս որ եկ Ըսպհան, որ սորայ անունըն ընդունի Սիմոն Իբրայիմիչ, այս անունն ընդունի: Սիմոն Էլչին երբ որ եկ հաս Ըսպհան, ետես որ շային չկայ. Թահմազն շահին վեր այ առել թախտէն, շայի չկայ որ իւր երկրին դրամն ուզայ կամ առնէ: Թահմազն խնդրեց Էլչուն. եկ ի տունն Թահմազ խանի: Թահմազ խանն հարցուց Սիմոն Էլչուն թէ՛ «Յո՞ւր ես եկել, ի՞նչ ես ուզում»: Սիմոն Էլչին ասաց. «Թագայորին գիր եմ բերել»: Խանն ասաց. «Ինձ տուր գիրն, տեսնեմ ի՞նչ այ գրել քոյ դագայորն»: Սիմոն Էլչիս ասաց «Ես քեզ գիր չեմ տալ, ես գիրն բերել եմ որ տամ թաքայորին, ես պիտի որ տամ թաքայորին»: Տվեց ոչ Թահմազ խանին: Թահմազ խանն ասաց. «Գիրն որ ինձ չես տալիս, տեղըս նստի, մինչ ի ես

գնամ աղվանայ եկել կռիվ, գնամ այ որ հետ կռվիմ, յետ գամ, յետոյ քոյ ջուղաքն տամ»: Սիմոն Էլչուն մին լավ տեղ յետ:

Էլչի Սիմոնն Ըսպիան ստավ, մինչ ի Թահմազն գալն երկու տարի անցավ: Յետոյ ել Թահմազ խանն Ըսպիան կրկին անգամ: Երբ որ Թահմազ խանն ել Ըսպիան, Էլչուն ինդրեց, ել ի տուն խանի: Թահմազ խանն ասաց. «Սիմոն Էլչի, քոյ թաքայորի գիրն տուր ինձ, ես քոյ ջուղաքն տամ, գնաս»: Էլչին ասաց. «Ես քեզ գիր չամ տալ, մանայվանդ քեզ մին խօսք ունեմ ասելու»: Թահմազ խանն ասաց. «Ասայ»: Էլչին ասաց. «Իմ թաքայորն գրել այ թէ՛ դուն որ քոյ թաքայորն յաքշտակել ես, դուն ես Էդ քաղաքիդ տերն. եթէ դուն ես Էդ քաղաքիդ թագայորն՝ իմ դատաստանն դու արայ. ես քոյ երկիրումն պարտայկան ունեմ, որ ինձ հոգով պարտայկան եմ կամ մարմնով, թէ իմ դրամն դուն կտաս, լավ այ, թէ չես տալ, իմ պարտականն իմ ձեռն տուր, ես իմ հախս կառնեմ»: Թահմազն ասաց. «Էն մարդն որ քեզ պարտայկան այ, ինձ Էլ այա, պարտական. պաճառն ի՞նչ Է. պաճառն այս Է որ իմ թաքայորն խենդ էր, գինախում էր, գինի կը խմեր, խելքն դռնուկ կտար, մեր երկիրն իւր խելացիցն բովանդակ յետ ի ձեռն օսմանցու կամ թէ քոյ. իմ թաքայորն քեզ վերայ կռիվ չուներ, քեզ ի՞նչ պիտոյ էր, որ դուն գաս Գիլան առնես կամ քոյ դրամն կամ քոյ զօրքն փչանայ. քեզ ո՞վ էր ասում այսչաբէն տարոյ թաքավոր, որ տեղըտ ստտաց այ մին թաքավոր, մեր երկրու վերայ պատերազմուն չի արել, դուն ի՞նչպէս երկիր Գիլան առեր»: Այսպէս Էլչուն հետ լեզվաց կռիվ տվին:

11 օր անցավ, մօսկօվիցն մին մեծ Էլչին Էլ եկավ հինգ հարիւր զօրքով, լավ պատվայկան մալով, որ մօսկօվի թաքայորին ասզ լինի կամ թէ բարեկամ: Ել եհաս Ըսպիան: Ասոր լավ ուտելիք, ընթելիք գինին՝ Ջուղայ տվին, որ Թահմազ խանն հրայման ետ թէ Ջուղու տան գինին: Այսպէս վեց օրն թամամեցավ, վեց յավուրէն յետոյ ինդրեց խանն Էլչուն որ նոր Է եկաց: Էլչին գնաց ի տուն խանի, խօսեցին: Գիր էր բերել տեղէն թաքայորիցն. յետ Թահմազ խանին, կարդաց, ամէն բանն յիմացավ որ գրել էր Մօսկօվի թաքայորն: Յետոյ Էլչին յետ ել ի տունն իւր, մին լավ հայելի, մին լավ սհաթ ոսկի, որ Է մեծայգուն, դրկեց խանին: Խանն տեսավ, հավանեցավ:

Մանայվանդ խանն իւր պատրաստութիւնն տեսել այ որ գնալ պիտի Շրվանայ վերայ: Մանայվանդ յառաջ պիտէր գնալ Շրվանայ վերայ, որ վերոյ յիշեցեալ եմ, քանզի որ աղվանն կրկին անգամ աղվանն ել ի Յարաթու վերայ, յետ դառավ, չը կարաց գնալ: Վերջայպէս Ըսպիանայ ելավ, երկու Էլչին Էլ վեռ առավ հետն, գնալով Շրվանայ Շամախու վերայ: Գնաց եհաս Թարվեզ տեղն, իւր պատրաստութիւնն տես: Մօսկօվիցն մին Էլչին Էլ եկավ կրկին անգամ բարկացաց Է՝ «Մեր ջուղաքն տուր, մեր Էլչիքն այսչաբ ի՞նչ պաճառ Է որ դուն պահում ես»: Սիմոն Էլչուն դրկեց յառաջայգուն, մնացորդ Էլչուն պահեց մին քանի օր: Յետոյ ես Էլչեանց այս պատասխանն ետ խանն թէ՛ «Գնացէք զեր թաքայորին եսպէս խաբար տարէք թէ, ես քեզ հետ կռիվ ունեմ, Էդ գիրդ որ դուն դրկել ես, Էդ գրիդ ես դրամ չեմ տալ, եայ դուն զիս ես հողումն կը փչացուցանես, եայ ես քեզ ծովումն ձգանց կուտացուցանեմ»: Այս պատասխանըս ետ խանն: Էլչին գնաց:

Նայ Թահմազ խանն Էլ գնալով Շրվանայ, առաջ գնաց Երեւանայ վերայ, գնաց եհաս Երեւան: Օսմանցին ոչ դուս եկավ: Թահմազ խանն գնաց Երեւանայ չորք կողմն բռնեց: Օսմանցին ոչ կռիվ արին, հնազանդ եղան: Խանն հրայման ետ. «Ով որ կու գայ տեղս կենայ, ով չի ուզել գնայ իւր երկիրն»: Այսպէս հրայման ետ օսմանցու, որն գնաց, որն մնաց Երեւան: Երեւան առավ վերջայպէս: Մեծ մեծ թուրքերն որ կային Երեւան, որ լինին քաղաքի իշխան, ոմանց 50 թուման, ոմանց 20 թուման, ոմանց 40

թուման, ոմանցէ 10 թուման, մարդոյ 400 այ: Զրիստոնէն էլ այսպէս սման որ յիշեցի վերոյ: Մին երեւանցի, Ղայդամի որդի Օվակիմ կասեն, որ նորանից 30 քիսակ փող են առել. այլոց մտացածրն որ այսպէս կասեն:

## Ի

Թողեմք զայս, յիշեմք Թահմագ խանն, որ ելա գնալ Գանջու Երեւան: Գնաց, Ղօրու կասեն, որ Արայմուսու մոտն այ, որ մին կողմն Արայմուս, մին կողմն Արայխուս, մին կողմն Աղայսօր, գլխու վեր հեռայգուն Գօզ Զիլիսայ կասեն, տեղն իջավ իւր զօրքովն: Գօզ Զիլիսայ ասելու պաճառն ի՞նչ է. Քապուտ եկեղեցի, որ շայի Աբազի ժամանակովն շատ ճգնայորք կլլինի տեղն աղօթարար, շայի Աբազն որ գը գընայ, տեղն մին կապուտ ծով կը ծակէ տեղն, շաբաղն ոչ կարայ մտնել այն գեղն, մէջ տեղն մին եկեղեցին, չորս կողմն ծով: Շայի Աբազն այնպիսի էր կարծում թէ սոքանք այլազգ են, չեն հնազանդում: Մանայվանդ շայի Աբազն որ այս տեսութիւնն տեսավ, զօրն յետ քաշեց, ասաց. «Տեսնեմ էս ի՞նչ հնարք այ»: Շայի Աբազն մարդ զցեց, իւր առաց քաղաքներէն քրիստոնայ բերին, հարցուց թէ՛ «Էս ի՞նչ ասգ այ տեղս որ այսպէս հնարք տեսնի»: Զրիստոնէքն ասացին. «Թաքայորն ողջ լինի, սոքանք քրիստոնայ են, կրօնայօրք են, որ տիվ եւ գիշեր աղօթք կառեն ճանայպարհն Աստուծոյ»: Շայի Աբազն ասաց. «Ես դորանց հետ բան չունեմ, դորանք որ աղօթարար են, էս ի՞նչ բան ունեմ դորանց հետ»: Շայի Աբազն անունըն դիր Գօզ Զիլիսայ:

Արայխուս ասելն՝ թէ կրօնայորաց ոչխարն էն գեղումն կը խուզեն, որ առնեն ըզբուրդն, որ անվանի Արայխուզ: Արայմուս, որ ոչխարն տեղն կետ կու տային, որ լինի Արամուս: Այսպէս որ յիշեցի որ այս լսողաց իմ խօսք այլոց:

Վերջայպէս խան եկ տեղն, զօրքի երիվարիքն բաց թողին, լավ կանաչով լի այ: Լիացան մինչ ի 25 օրն. 25 օրէն յետոյ վեր կացավ գնաց Գանջու վերայ: Վերջայպէս Գանջայ օգմանցին լի այ: 33 օր կռիվ արին. 33 օրէն յետոյ յախտվեցավ օսմանցին, այսչաբ յարուն հեղուրթիւնն: Գանջու մոտ մին գեղ կայ, որ Զիլիսայ-Քանթ կասեն. Թահմագի զօրն տեղն դառին, օսմանցու մարդիցն երկուդից փախել են, մտել են հայերին տուն: Թահմագի զօրքն գնին, գտնեն, հանեն սուրն քաշեն. շատ յարունահեղուրթիւն. այսպէս որ յիշեցի:

Գանջու վեր կացավ գնաց Շամախու. Շամախի էլ առավ, Շրվան առավ: Վերջայպէս գնաց լեզկու վերայ. Յաջի Դավուտ բէկ կասեն, որ լեզլու մեծայորն այ. այսոր էլ յախտեց, վերջայպէս պոճավ: Երկրէն դրամ գծեց, շատ դրամ առավ տեղէն: Գալօզ Թիլվիզու վերայ, եկ եհաս Վրաստան: Վրաստանայ մեծ մեծ ազնեորդիքն, մեծ մեծ իշխանքներն, եկին խանին տես: Այս իշխաներիս լավ պատվայկան ըսկեստ հաքցուց, լավ պատվեց: Խնդրեց որ Կախեթու ազնեորդիքն գան. Կախեթու ազնեորդիքն դեռ եկել չէին, խնդրեց սոցանց: Մանայվանդ այս Կախեթու ազնեորդիքն շատ բազում զօրեղ են, ոչ ունեն երկուդ խանիցն: Վերջայպէս խանն որ խնդրել էր, եկին հասին խանին մոտ: Խանն ասոնց էլ լավ ձի, լավ ըսգեստ հազցուց:

Մին ազնեորդի կեր մեշներումն, որ բօվանդակի մեծայորն էր: Սորան խանն ընթռնեց թէ՛ «Քոյ որդին կուզեմ որ ինձ նշենեմ»: Այս մարդիս անունըն Չօրհաբ. Չօրհաբ քրիստոնէս ասաց. «Խանն ողջ լինի, էդ խնդիրդ որ դուն արեր, լավ խնդիր այ, իմ որդին քեզ կտամ, ինձ էլ էս երկիրս մեծայոր շինայ»: Խանն հավանեցավ այս խօսացն: Այս Չօրհաբ քրիստոնէս գիշերն պահայպանք այ պահում. խանն վախում այ թէ փախչի: Վեց յավուր անցավ, խանն խնդրեց Չօրհաբին. «Ես քեզ բան ասի, ինչպէս ելավ»:

Չօհրաբս ասաց. «Խանն ողջ լինի, բարի ես ասում, ինձ բաց թող, գնամ, իմ պատրաստութիւնն տեսնի, իմ աղչիզն կամ իմ որդին բերեմ»: Խանն ասաց. «Դուն գիր գրայ որ բերեն»: Չօհրաբս ասաց. «Լավ այ, գրեմ»: Չօհրաբս գրեց երկու գիր. մին գրեց թէ՛ «Իմ որդին մօրն հետն դրկեցեք, որ խանին եմ տալիս»: Մին գիր ծածկայբար դրկեց թէ՛ «Տեսեմ, իմ երկրի քրիստոնէք, ես մարդս ինձ բռնել այ, թէ քո որդին ինձ տուր. տաք ո՛չ էդ քրիստոնէդ, մենք ո՞նց տան անօրէնիտ:

Ես երկրի մարդն լսեց այս բանս, իւրեանց պատրաստութիւնն տեսին, խանն ես աղչիզաս հերն գիր դրկեցին թէ՛ «Էդ աղչիզդ դրկեցէ, ոչ դրկեցին»: Ես գնացող մարդիզս յետ դարցան, եկին ի մոտ խանին, ասացին. «Խանն ողջ լինի, տվին ոչ, մեզ սուրն են քաշում, պռանք, փախինք»: Խանն բարկացավ, խնդրեց Չօհրաբին թէ՛ ես հիմայ կը ըսպանեմ: Չօհրաբն ասաց. «Խանն ողջ լինի, ես քեզ ասի, ինձ մեծայոր շինայ, Եսպէս բանի խաթեր հայմար, որ ինձ հնազանդ չեն. որ գիս մեծայոր շինես, բովանդակ ինձ հնազանդ կու լինին»: Խանն այս մարդիս մեծայոր շինեց, որ գնայ իւր երկրի մարդն իւրան հանազանդայցուցանէ: Այս Բ [2] մարդօվ, ձեռին գիր՝ խանի կնքօվ կընքվաց, մին առավ գնաց իւր երկիրն:

Որ հասան տեղն, եկին մեծայմեծք իշխանք, այս գիրս կարդացին թէ՛ «Ես մարդս ձեզ մեծայոր շինեցի»: Այս մեծայմեծ իշխանքըս, տվին ես մեր մարդին, ըսպանեցին: Մին մարդն գնաց խաբար տարավ խանին. «Թեվին ոչ, մին հնկերս ըսպանեցին, ինձ բաց թողին որ գամ, խաբար բերեմ. Չօհրաբն էլ չէ քեզ հնայզանդ, որ դու մեծայոր շինեցեր. իմ հնկերն Չօհրաբն ըսպանեց»: Խանն բարկացավ, զօրքն վեր առավ, գնաց սոցանց վերայ, գնաց եհաս: Սոցանց կռիվ եղաւ, Թահմազն յախտվեցավ, փախավ: Թահմազ խան էլ ոչ գնաց ասոնց վերայ. թողեց գնաց Թիլֆիզ: Օսմանցին Թիլֆիզ բաց էր թողել, գնացել տեղէն. Թիլֆիզու գնաց Երեւան տեղն: Թողնենք գայս, յիշենք սուլթան Մահմուտն:

## ԻԱ

(Սուլթան Մահմուտն) որ Զօրբիլուօղլին շատ բազում զօրօք եկել այ Ղարս, Գ [3] հարիւր հազար զօրօք, որ պիտի գան պարսոյ վերայ: Թահմազ լսեց, Երեւան իւր պատրաստութիւն տես, գնալօվ Աբդուլայ փաշի վերայ: Թահմազի զօրքն Երեւանայ բռնել էր մինչ ի Էջմիածին, նստաց է այսչաբ զօրքեր որ մտածենք, եօթանասուն հինգ զօրք, տասն երկու հազար ոտայոր, մնացեալն ձիայորք, բովանդակ ի մէջ երկաթի, պատվայկան զօրք: Խանն վեր կացավ գնալ օսմանցու վերայ: Էջմիածնայ վեր կացին Թալիշ. Թալիշու վեր կացին գնացին Մաղարայ, որ Առբայ-Չային մոտ այ, որ Թալիշու մէջի տեղն Գ [3] յավուրէն ճանայպար այ. այսպէս որ ասացանք եւ յիշեցանք, յայտ լիցի կարդացողաց եւ լսողաց: Խանն որ Թարվիշու վեր կացավ, քսան եւ ուրք հազար երիվարքըն հետն շուրջ գու գեր. որի որ երիվարքըն մներ ճանայպարիի, շուտօվ երիվարք կտէր. այսպէս որ յիշեցի: Դարձեալ այս խանս որ այսչաբ երիվարիկ հետն շուրջ այ ածում, պաճառն ի՞նչ է հինգ յավուրին, չորս յավուրին, երեք յավուրին ճանայպարին մին գիշեր այ քալում. պաճառն այս է որ շատ երիվար են ճանայպարիի մոււմ, Էն որ մոււմ այ ճանայպարի, թողում այ ըսբաց երիվարայ տալիս զօրքին: Վերջայպէս Մաղարու վեր կացավ Առբայ-Չայ, անցկացավ մին գիշեր, գնաց Սուրբաթան կասեն, գնաց տեղն, այլ ոչ գնաց յառաջ:

Օսմանցին լսեց որ Թահմազն գալս այ, ըսկսեց չարիսի Ֆալաթն շինել. շինեց չարիսի Ֆալաթն, ենկիչարին մտավ ի մէջն չարիսի Ֆալաթի. օսմանցին էլ ոչ է գալիս յառաջ: Թահմազն գնաց յառաջ. օսմանցիք դուս եկին: Թահմազն փախավ. օսմանցին



այնպիսի կարծեց թէ Թահմազն փախաւ կամ վախեցաւ: Էն օրն Թահմազն յետ քաշվեց, իւր խաներին խրատեց թէ՝ «Իմ խաներ կամ բեկեր, թէ օմանցի չարիսի Ֆալաքիցն դուս գը գայ, Աստուած ինձ այ տվել, թէ որ չարիսի Ֆալաքիցն չի դուս գալ, Աստուած նորանց այ տվելէ:

Յառայվօտուն օմանցին չարիսի Ֆալաքիցն դուս եկաւ. Թահմազն ըսկսեց փախչել: Օմանցին կարծեց թէ Թահմազն փախչում այ, օմանցին եկ յառաջ: Թահմազն փախաւ մինչ ի մէկ ժամէն ճանայպարհ. Թահմազն ըսկսեց յետ դառնալ: Յայտ լիցի կարդացողաց եւ լսողաց, օմանցին այնչաբ զօրք ունի, որ յաչքումդ քանի զօրութիւն կայ հայում ես, բօվանդակ օմանցի այ, ուր քօլ լիքն որդնի պէս են շարժում, որ այնչաբ զօր կայ օմանցուն:

Վերջայպէս Թահմազն յետ դառցաւ, օմանցու հետ խառնվեցան. Աստուած փրկէ Տէրն ազատէ, յարունն երկինք գետին կապեց, յարունհեղութիւն շատ ալալկործում: Օմանցին յախտվեց. օմանցի որ ես ճանայպարհիս վերայ թաբաց, նման այ լաշ լաշի վերայ, մարդ ոչ կարէր ճանայպարօվն գնայ, լաշերն կոխ տալօվ. ձիանոնց ոտի տակն ամէն լաշ. հայում ես, լաշ այ երեւելի. այլ գետին կամ քար ոչ է երեւում, որ այսպէս լաշ այ: Փաշին սաղ բռնեց, ըսպանեց, թաղեց, վերէն էլ մին լավ պահարան շինեց, լավ քարօվ մին լավ գաջ ու կիրօվ ըսպիտակեցուց, մին պատվայկան պահայրան շինեց:

Չօրքն մինչ ի Մժնկերտ, մինչ ի Յսան Ղարայ գնաց. եկին Վանայ կողմէն, շատ գերի արին, ինչ որ հայի գեղարէնք կեր օմանցու երկրումն, գերի վարեցին, ղրկեցին Խորասան:

Տեղէն յետ դառցաւ խանն գալ Ըսպիան. ոչ գնաց Ըսպիան, գնաց Տամդան կասեն տեղն, իւր զօրօվն տեղն նստաւ, ինդրեց, ինչ որ պարսայ երկրումն մարդ կեր, յիշխան էր, եկին ամէն: Խանն ասաց. «Գի՞տ ձեզ ինչ պաճառի ինդրեցի, ասաց, քանի ժամանակ այ որ թուր եմ տալիս ձեր խաթեր հմար մինչ ի ես թարիդս, ձեր դուշմանն հատացըրի, աղվանն, օմանցին, մօսկօվն բօանդակ փախցր կօտորեցի, պռծայ: Յիմայ ձեզմէն շայի դրեք»: Երեք անգամ ասաց աս խօսքս: Մին երկու մեծ իշխան ըսկսեց թէ «Խանն ողջ լինի, շայ Թահմազն բեր դիր իւր թախտն, էլ մեր թագաորն նա լինի»: Շուտօվ հրայման ետ, ըսպանեցին այս մի քանի իշխանիս: Յետոյ կրկին անգամ հարցուց. բօվանդակ վախեցան, ասացին. «Խանն ողջ լինի, [դ]ու ես մեր դաքայորն»: Երեք անգամ որ այսպէս ասին «Դու ես մեր թաքայորն», Թահմազն ասաց. «Ինձ էք ուզում թաքայոր, գիր տվէք որ ես ձեր թաքայոր ղաբիլ լինեմ»: Բերին ժողուրդն գիր տվին թէ «Դու ես մեր թաքայորն, էլ քեզնէ ավել թաքայոր չունենք, դուն ես մեր թաքայորն»: Գիրն տվին, ուրախութիւն արին, պռծան, եղաւ թաքայորն:

Ըսկսեց օմանցուն էլչի ղրկել թէ՝ «Իմ երկրիցն ինչ զատար որ գերի էգ տարել, յետ տվէք»: Աբդուլ Բաշի խանն գնաց որ գերիքն օմանցու երկրից ժողովէ: Գնաց էլչին սուլթան Մահմուտին մոտ, որ էսպէս քանի համար այ եկել: Սուլթան Մահմուտ հրայման ետ, ինչ որ գերի կեր օմանցու երկրումն տվին, յետ բերին, յետ առաւ օմանցուցըն: Եղաւ թագայոր պարսից:

Վերջ. ամէն:

## ԳԻՐՔ Բ

### Ա

Յետ գումարելոյ աղվանից Մահմուտ սուլտանին ի վերայ արքային պարսից շահ սուլտան Յիւսէինին, յորժամ էառ զվեժ քաղաքն Շօշ զաթոռ թագաւորութեան Նորա եւ սպան զնա եւ զորդիս Նորա, յամին հազարերորդի հարիւրերորդի եօթանասներորդի հայկազեանս թուականի [1721], ի ժամանակի, յորժամ սասանեալ, դղրդեալ, խռովեալ ծփիւր աշխարհն Պարսից, եւ իշխանք գաւառացն ի հերձիլ լայնածաւալ միապետութեան Նորա՝ հակառակ միմեանց յարուցեալ տագնապէին եւ զաշխարհն ամենայն հարուածովք սրոյ եւ գերութեան յաւեր ածել ձգէին տունս Յայոց, որ ըստ երեւելի մասին ընդ պարսից տերութեան դրաւեալ կայ, ի սակս բազմանալոյ անօրէնութեանցն զմեծամեծ պատուհասս ընդունէր: Չի ոչ եթէ միայն առ ի Ներքուստ վրդովմանց աշխարհին ի յընդանի գաւառակից պետաց հակառակ միմեանց յարուցելոց զհարուածս սրոյ եւ սովու կրէր, այլ եւ ի հազարացոց սահմանակից պետութենէ անտի եւ ի լակզի թաթարացն յարձակելոց զանհամար անձանց՝ արանց եւ կանանց, երիտասարդաց եւ կուսից, մանկանց եւ տղայոց առհասարակ՝ զչարաչար գերութիւն եւ զկոտորումն ընդունէր:

Արդ ի սկսանիլ չարեացս այսոցիկ, զորս հանդերձեալ ենք պատմել, մի ոմն յորդոց անտի պարսից արքային ապրեալ ի միջոյ եղբարցն իւրոց կոտորելոց, Թամազ անուանեալ, փախստական լինէր, գայր, հասանէր յԵկբատանս, որ այժմ Թաւրեզ անուանի: Ձեռն ի գործ արկանէր զգօրս գումարել, ի մարտ պատերազմի միսիլ ընդդէմ աղուանից սուլտանին եւ զվեժ քաղաքն Շօշ, զաթոռ թագաւորութեան հօր իւրոյ, ի ձեռաց Նորա թափել: Չիշխանս իւրաքանչիւր տեղեաց յինքն ձգել ձեռն արկանէր եւ զխորհրդականսն առ ինքն կոչէր: Գունդ կազմեր զօրացն, որք մերձենային առ նա եւ էին իբրեւ երեսուն եւ երեք հազար սպառազէնք: Վառէր, կազմեր, պատրաստէր եւ ի վերայ Նոցա զիշխան մի, Ֆրավօտոս անուանեալ, զօրավար կացուցանէր: Եւ առաքէր ի վերայ աղուանից սուլտանին. եւ ինքն զտեղի առեալ անդէն ի Թաւրեզ քաղաքի ամրանայր: Եւ եղև յերթալ զօրուն եւ ի հասանիլն Նոցա ի Յամատան՝ յաւելան ի Նոսա այլ բազում գունդք, եւ եղեն իբրեւ յիսուն եւ հինգ հազար վառեալ սպառազէնք: Խաղացին անտի, զնացին տագնապաւ եւ հասեալ բանակեցան զՇօշաւ: Ընդդէմ ելին Նոցա աղվանքն, ճակատեցան, ի դիմի հարան միմեանց երկոքին դիմամարտքն եւ զերեսս դաշտին դիակամքք անկելոց ծածկեցին: Ի պարտութիւն մատնեցաւ Ֆրավօտոսն, եւ անկան զօրք Նորա սրով սուսերի, եւ ինքն հինգ հարիւրով միայն մազապուրծ գերծեալ փախստական դառնայր առ շահ Թամազ տերն իւր ի Թաւրեզ: Չայն տեսեալ շահ Թամազն սրտաբէլ եղև, զահի հարաւ, թէ զուցէ յետինս ամենայն չարեաց ի վերայ իւր հասցէ, զի ոչ մնացին առ նմա զօրք, բայց եթէ փոքր մի աւելի քան զհինգ հարիւր սպառազէն:

Յրեշտակս արձակեաց շահ Թամազն ի Վիրս առ Վաղդան իշխանն Մցիսիթայ՝ գալ հասանիլ յիւր թիկունս: Յրովարտակս առաքեաց առ նա ասել, թէ «Գոռոզն աղվանից վտարանջեաց ի տերութենես մերմէ, գումարեցաւ ի վերայ հօր իմոյ, էառ զՇօշ քաղաքն եւ սպան զհայրն իմ եւ զեղբայրս իմ, եւ բռնացեալ յաւեր ածէ զթագաւորութիւնն մեր: Արդ փութա՛, աճապարեա՛ գալ առ իս, եւ հասցուք վանել զկործանիչս թագաւորութեան մերոյ»: Պատասխանի արար անդէն Վաղդանն, թէ «Ոչ կարեմ անտեր թողուլ զերկիրս եւ գալ, քանզի եւ ի վերայ իմ յարուցեալ են թշնամիք ի մարտ պատերազմի»: Ընդ որ բարկացեալ շահ Թամազն՝ հրաման ետ Մահմետ Ղուլի խանին, որ իշխանն էր միում ի կողմանցն Վրաստանի, երթալ, բռամբ ածել զնա առ ինքն: Ազդ եղև Վաղդանայ գալուստն Նորա, ել արտաքս ի քաղաքէ անտի զօրօքն

հանդերձ եւ այլ եւս բազում երիտասարդօք քաղաքին ի դաշտ տեղի եւ մնայր գալստեան նորա: Իբրեւ ետես, զի յամեաց նա, ել ի ճանապարհ՝ պատահիլ նմա, ուր եւ գտցէ: Եւ եգիտ զնա ի տեղի մի, որ յայլազգեաց բարբառս Սնուդ-բօրի անուանի: Ի վերայ յարձակեցաւ, եհար եւ սատակեաց զգօրս նորա եւ դարձաւ ի քաղաք իւր:

Այլ Մահմետ Ղուլին առանց զօրաց զինու փախստական եղեալ յերեսաց Վաղդանայ՝ առ լակզի թաթարսն էանց: Եւ էառ ի նոցանէ յիւր թիկունս զվեց հազար լակզի եւ դիմեաց գալ ի վերայ Վաղդանայ, ի մտի եղեալ՝ յանկարծակի յեղակարծիւ գիշերայն հասանիլ ի վերայ, զդրունս քաղաքին անսիգ անփակ գտանել եւ զօրօքն հանդերձ վաղվաղակի ի ներքս միսիլ, եւ զամենայն գործն չարեաց փութանակի ի միում ժամու վճարել: Եւ ի սոյն գործ զկաթուղիկոսն վրաց օգնական իւր ուներ, որ ի ներքուստ ի քաղաքէ անտի ծածուկ նենգութեամբ մատնտու քաղաքին լինէր: Եւ զայս յայն սակս գործել յանձն առեալ էր, զի Մահմետ Ղուլին, որ ուրացող ոմն էր, սմա ազնակից էր, եւ գրով եւ բանիւ զգաւառն Կախէթու պարգեւել խոստանայր, եթէ մատնութեամբ սորա զՄցխիթ եւ զՎաղդանն ի ձեռս իւր արկանիցէ: Չի եւ ինքն կաթուղիկոսն յազատ տոհմէ լեալ՝ աշխարհական իշխանութեամբ եւս գաւառաց ինչ Վրաստանի ճոխացեալ էր եւ զԿախէթն եւս ի վերայ այնոցիկ յաւելուլ ցանկայր:

Յամին հազարերորդի հարիւրերորդի եօթանասներորդի երկրորդի հայկազեանս թուականի [1723] յամսեանն մայիսի, յաւուրն երկրորդի, կաթուղիկոսն այն գիրս ինչ ի ծածուկ գրեալ՝ առ Մահմետ Ղուլին առաքէր. ժամադիր պայմանադիր նմա լինէր՝ անսիգ անփակ զդրունս քաղաքին թողուլ: Եւ զայս նենգութիւնս նորա Վաղդանն ոչ իմանայր: Ի վերայ այսր ամենայնի յորժամ այր ոմն զլուր գործոց եւ գալստեան Մահմետ Ղուլւոյն հասուցանէր Վաղդանայ, ի նմին ժամու կաթուղիկոսն առ նմա եղեալ՝ զբանն զայն սուտ եւ ընդունայն ցուցանէր, եւ Վաղդանն անգիտացեալ նենգութեանց նորա՝ հաւատայր նմա եւ անկասկած լինէր, թեպէտ եւ զգօրսն հանապազ ի պատրաստութեան պահէր: Զանզի ուրացօլն այն յառաջմէ զկաթուղիկոսն գաղտնի նենգութեամբ զինքն թշնամի իւր եւ իշխանին Վաղդանայ հաւատարիմ երեւեցուցանել խորհրդակցեալ էր, եւ նա այսպիսի խորամանկութեամբ զմիտսն Վաղդանայ գողանայր: Եւ եղեւ ի ժամադրեալ աւուրն, մինչ չեւ լուսացեալ էր օրն, հասին լակզիքն ի Մցխիթ քաղաք, ի ներքս մտին յանկարծակի եւ լցին զքաղաքն ամենայն: Յարին զնոսա, որք ընդդէմ էլին, եւ առին յաւար զստացուածս քաղաքին, զոսկեղէս եւ զարծաթեղէս եւ զայլ բազում ինչ, բայց զմարդագերի ոչ արարին: Վասն զի զօրքն, որք պահապանք բերդին էին, տեսեալ զամբոխն թաթարաց՝ մարտ եդին կարճել զչարիսն նոցա, եւ նոքա այնուհետեւ անկարացեալք գերի վարել՝ յաւարն փութացան: Այլ Վաղդանն ի լինիլ խռովութեանն այսպէս յեղակարծիւ՝ ոչինչ կարաց առնել, բայց միայն առեալ զկինն եւ զորդիսն իւր՝ ել ի քաղաքէ անտի յանձանօթս եւ փախեաւ ի Մօսկովաստան: Իսկ կաթուղիկոսն, որ մատնիչն էր քաղաքին, իբրեւ էլին լակզիքն ի քաղաքէ անտի եւ մեկնեցան, ել եւ ինքն ընդ նոսա եւ զնացեալ յարեցաւ ի Մահմետ Ղուլին, եւ զօրս բազումս ժողովեցին յարձակիլ միւսանգամ ի վերայ Մցխիթայ:

Մի ոմն յորդոց անտի Վաղդանայ, Շահնայվազ անուանեալ, փախստեայ զնայր, անցանէր ի սահմանս օսմանցոց եւ հասանէր ի Կարին քաղաք առ Մուսթաֆա փաշայն Կարնոյ: Չի սա ի խուճապիլ հօր իւրոյ ի փախչիլ՝ ոչ կարաց ընդ նմա լինիլ եւ փութացաւ ի Յոռոմաստան անկանիլ: Ընկալաւ զնա փաշայն եւ վաղվաղակի տեղեկացեալ ի նմանէ զամենայն անցս, որք ընդ հայր նորա անցին, սուրհանդակս առաքեաց ի Կոստանդնուպօլիս առ Ահմետ սուլտանն օսմանցոց՝ հովարտակօք

հանդերձ ասել նմա, թե «Մի ոմն յորդուց իշխանին վրաց եկն առ իս եւ ասէ, թէ՛ հայր իմ նեղեալ յերեսաց թաթարաց՝ եթող զերկիր իւր եւ էանց ի Մոսկովաստան, եւ արդ եկայք, առէք զՄցխիթ թաղաքն եւ դուք տիրեցէք երկրի մերում»: Յայնժամ պատասխանի արար նմա սուլտանն հրովարտակօք եւ զօրավար կացոյց զնա ամենայն զօրացն յայնմ կողման. պատուեր ետ նմա առ իւր ունիլ զորդին Վաղդանայ եւ երթալ առնուլ զՄցխիթ թաղաք: Ել փութանակի Մուստաֆա փաշայն երկոտասան հազար զօրօք ի վերայ Մցխիթայ եւ էառ զնա յամին հազարերորդի հարիւրերորդի եօթանասներորդի երկրորդի հայկազեանս թուականի [1723] յամսեանն դեկտեմբերի:

Եւ ի վճարիլ այսմ ամենայնի՝ հրաման ետ զորդին Վաղդանայ ի զգուշութեան պահել. եւ պահէին զնա վեց պահապանօք ի կապանս ի տան միում ի Մցխիթ թաղաքի: Դեպ եղել, նօք ի կապանս ի տան միում ի Մցխիթ թաղաքի: Դեպ եղել, զի մի ոմն ի պահապանաց անտի յազգէ վրաց էր եւ նա ինքն էր, որ մատուցանէր նմա զկերակուր: Եւ զայս գործ յայն սակս նմա յանձն արարեալ էին, զի սա միայն ի մեջ նոցա, որք պահապանք էին, գիտէր զվրացի խօսիլ. եւ որդին Վարգանայ վրաց լեզուով միայն կարէր խօսիլ եւ ոչ իմանայր զհազարացուց բարբառն: Հրաման եղեալ էր ի փաշայն վրացույն այնմիկ՝ զայն սպասավորութիւնն առնել եւ խօսակից լինիլ նմա: Եւ եղել ի հանապազորդէլն նորա ի խօսակցութիւն ընդ նմա, ի հասարակ մարդկային գթոյ եւ ի համազգային սիրոյ շարժեալ՝ կարեկից լինէր նմա եւ հնարս վասն ազատութեան նորա խորհէր ընդ նմա: Եւ յետ ոչ բազում աւուրց, ի հասարակ գիշերի, մինչդեռ այլ պահապանքն ի քուն էին, հնարս գործեալ եհան զնա ի կապանաց եւ ի տանէ անտի, եւ փախուցեալ զերծան երկոքինն ի Մոսկովաստան: Իբրեւ ազդ եղել փախուստն նոցա փաշային, հեծեալս արծակեաց զկնի նոցա, այլ ոչ կարային գտանել:

## Բ

Իբրեւ տիրեաց օսմանցին Մցխիթայ, զբնակութիւն կալաւ նստիլ անդ, յամին հազարերորդի հարիւրերորդի եօթանասներորդի երկրորդի հայկազեանս թուականի [1723] յամսեանն դեկտեմբերի: Յաւուրսն յայնոսիկ ազդ Սարու-Մուսթաֆա փաշային, թէ սուլթանն աղվանից յետ նուաճելոյ զթաղաքն Շօշ՝ հասեալ է ի Համատան, եւ դէմ եղեալ է անտի այսր արշաւել: Հրովարտակս գրեաց փաշայն առ սուլտան Ահմէտն՝ իրազեկ առնել զնա, թէ «Աղվանն հանդերձեալ է յերեվան գալ, եւ յորժամ այս լինի, այնուհետեւ յաջողի նմա արշաւել ի վերայ Մցխիթայ՝ հանել ի ձեռաց մերոց»: Իբրեւ ծանեաւ զայս սուլտանն, փութանակի զԱբդուլլա փաշայն, որ մականուամբ Զօփուրլու անուանիւր, զօրավար կացոյց եւ առաքեաց զնա եօթանասուն եւ հիգ հազար զօրօք ի վերայ Երեվանայ:

Եկն եհաս նա ի Կարին թաղաք եւ անդէն զտեղի էառ ամիս մի, զի ձմեռն էր: Եւ ի ժամանել ամսեանն մարտի՝ չու արար անտի, եկն եհաս եւ բանակեցաւ նա ի տեղի մի, որ յայլազգեաց բարբառս Առփաչայ կոչի: Եւ առաքեաց առաջի երեսաց իւրոց ի գրգիռ մարտի զերկուս յիւրոց զօրականաց անտի, որոց միում անուն էր Եալդուզ Հասան, եւ ինքն էր կարնեցի, եւ երկրորդին՝ Ղօջ Ալի: Եւ երկոքին ունէին զօրս իբրեւ հազար ութ հարիւր: Այն ինչ հասին նոքա ի տեղի մի Եղեվարդ անուանեալ մերձ Երեվանայ, ազդ եղել իշխանին Երեվանայ, որում անուն էր Միհրալի. եւ ել նա ընդդէմ նոցա երկոտասան հազար սպառազինօք: Ի դիմի հարան միմեանց երկոքին դիմամարտքն, եւ յայնմ վայր բազում վիրաւորք յերկոցունց կողմանց անկանէին: Հարին, կոտորեցին օսմանցիքն ի զօրացն պարսից աւելի քան զմտասան հազար սպառազէն, եւ մնացեալքն փախստեայ լինէին իշխանաւն հանդերձ եւ եկեալ ի թաղաք անդ ամրանային եւ միւսանգամ ելանել արտաքս ոչ իշխէին:

Այլ Ղօջ Ալին եւ Եալղուզ Յասանն յառաջ խաղացեալ՝ գային պատէին զգիւղաքաղաքն Կարբի, որ մերձ Երեւանայ, եւ ասպատակել կամէին: Չայն իբրեւ տեսին կարբեցիք, զահի հարան յերեսաց խոցա եւ ի վերայ ուստերաց եւ դստերաց իւրեանց տարակուսեալ վարանէին: Որք աստուածասերք էին ի նոսա, աղօթիւք առ Աստուած պաղատէին՝ ողորմիլ, անխայել յանձինս իւրեանց եւ ոչ մատնել ի սուր եւ ի գերութիւն զուստերս եւ զդստերս իւրեանց: Ապա զխաւորքն խոցա խորհուրդ արարեալ ընդ միմեանս, զայր մի ի միջոյ իւրեանց առաքեցին ազդ առնել իշխանին Երեվանայ եւ ասել, թէ «Ահաւասիկ զօրն օսմանցւոց եկեալ հասեալ պաշարեաց զԿարբի: Եթէ կամք իցեն տերութեանդ, առաքեսցես մեզ զօրս ի պահպանութիւն, եւ մեք պատրաստեալ կամք դնել զանձինս ի վերայ քաղաքիս. ի մարտ պատերազմի ելցուք ընդդէմ խոցա եւ վանեսցուք»: Այլ իշխանն Երեվանայ ոչ լուաւ խոցա օգնել ինչ, զի եւ անձին իւրում չէր բաւական: Եւ կարբեցիքն զառաջինն ոչ փութացան բանս հպատակութեան առ օսմանցիսն առաքել, այլ աճապարեցին զտունս իւրեանց ամրացուցանել, եւ զանցս մտից գեղջն ինուլ, իբր թէ ընդդէմ կալոց իցեն խոցա:

Եւ այսպէս զգուշացեալ կային յաւուրս ինչ, մինչեւ եկն եհաս անդ Աբդուլլա փաշայն ամենայն զօրօք, զի նա էր գլուխ ընդհանուր զօրուն: Վասն զի կարբեցիքն համարէին, թէ իշխանն Երեվանայ զօրս առաքէ ի պահպանութիւն իւրեանց, եւ ոչ գիտէին, թէ նա ամենեւին անզօր անզօրավիգ՝ յամրութիւն բերդին միայն ապաստանեալ կայ: Բայց ի ինամոց Աստուծոյ եղեւ այս, զի Աբդուլլա փաշայն ոչ վաղվաղակի յարձակեցաւ ասպատակել զգիւղաքաղաքն, այլ նախ առաքեաց բանս խաղաղութեան խօսիլ ընդ նոսա եւ ասել, թէ «Դուք ի սկզբանէ ի վաղ ժամանակաց հետե հպատակք էիք, եւ այժմ ընդէ՞ր ամբառնայք ընդվզիլ. զի՞ կայ ձեր զինուորիլ վասն երկրիս, որոյ տերութիւնն ոչ է ձեր, եւ ի տարապարտուց զգիւղն ձեր ի սուր եւ ի գերութիւն մատնէք: Եւ արդ դարձարուք դուք յառաջին հպատակութիւնն ձեր, եւ ես ոչ թոյլ տաց զօրաց իմոց առնել ինչ չար ձեզ. պահապանս եղից առ ձեզ զգունդ մի, եւ ամենեւին ձեզ վնաս ինչ ոչ հասցի»: Իբրեւ ի միտ առին զբանս զայս առաջակայք գիւղաքաղաքին, յերկիւղէ եւ ի յուսոյ տագնապեալք՝ խորհուրդ առնէին ի մէջ իւրեանց: Ոմանք ասէին. «Մի՛ գուցէ այսպիսի բանիւք նենգութեան զմեզ նուաճեալ՝ ստեսցէ խոստման իւրում, եւ ի գերութիւն վանեսցէ զմեզ եւ զկանայս եւ զմանկունս մեր»: Այլք ասէին. «Ոչ այդպէս է, այլ հարկ է մեզ հպատակ լինիլ, զի ոչինչ կարողութիւն է մեր, եւ ոչ յուստէք օգնութիւն ընդդէմ կալոյ այնչափ զօրաց բազմութեան»: Ապա հաստատեցին ի մէջ իւրեանց այսպէս պատասխանի առնել. «Տացես մեզ, ասեն, զաւուրս տասն, մինչեւ զմերս զամենեսեան ի հպատակութիւն հաւանեցուցուք: Չիջաւ պարզամիտ բանից խոցա փաշայն, զի ոչ կամեր զգիւղաքաղաքն ասպատակել եւ գերկիրն անմարդի առնել:

Յետ այսորիկ առաջակայք գիւղաքաղաքին զայր մի առաքեցին ի ծածուկ առ Միհրալի իշխանն Երեւանայ՝ ասելով, թէ «Մեք ահաւասիկ պաշարեցեալ ի զօրացն օսմանցւոց՝ առ հարկի բանս եդաք զօրագլխի խոցա ետ տասն աւուրց զԿարբի տալ, զի ոչ կարեմք զդէմ ունել այնչափ զօրաց խոցա բազմութեան»: Իբրեւ լուաւ Միհրալին զբանս զայս, ոչ հաճեցաւ ընդ դաշն խոցա, այլ պատուէր ետ խոցա մարտնչիլ քաջութեամբ եւ ոչ անձնատուր լինիլ: Եւ խոստացաւ խոցա զբարութեւն եւ զայլ պիտոյս առաքել: Պատճառս քաջալերելոյ զնոսա դնէր զայս, թէ «Կաթողիկոսն ձեր առ շահ Թամազն գնացեալ է՝ հոգալ վասն վտանգաց պատերազմիս, որ ի վերայ մեր կայ. եւ արդ, երկայնամիտ լերուք, մինչեւ զլուր ինչ առ ի խոցանէ եւ զօգնութիւն ընկալցուք»: Ճշմարիտ էր այս, զի Աստուածատուր կաթողիկոսն հայոց յաւուրսն յայնսիկ կոչեցեալ ի շահ Թամազէն՝ գնացեալ էր առ նա. այլ զսոյն զայս պատճառս յուսադիր լինելոյ խոցա դնելն ամպարիշտ իշխանին՝ անօգուտ անմտութիւն էր: Ի կորուստ անձանց խոցա վարէր զնոսա թշուառականն, զի էր օտարագգի եւ անհաւատ, եւ ոչ ինչ փոյթ էր նմա

գերութիւնն եւ կոտորումն քրիստոնեայ ազգին մերոյ: Վասն զի եթէ հարազատ հաւատարիմ ինամածու իցեր, զիա՞րդ մարթ էր նմա զնոսա այսպէս իբրեւ զղջխար ի սպանդ վարել. քանզի զի՞նչ համեմատութիւն էր անպարիսպ, անխրամ եւ անզօր գիւղաքաղաքի միոյ առ այնչափ բազմութիւն զօրացն, որք պաշարեցին զնա. թեպէտեւ էին ի նմա բազումք, որք կարէին զինուորիլ:

Այլ զլիսաւորք գիւղաքաղաքին խորհուրդ արարեալ ընդ միմեանս՝ արհամարիեցին զբան նորա իրաւամբք, եւ յանձն առին անձնատուր լինիլ զօրացն օսմանցւոց: Պատրաստեցին տանիլ նմա զըծայս յոսկւոյ եւ արծաթոյ եւ յականց պատուականաց, զի հաճեսցեն զփաշայն: Եւ ի ժամադրեալ աւուրն առաքեցին առ նա ի ձեռն նոցա, զորս ընտրեցին: Ընկալաւ զնոսա փաշայն եւ սկսաւ հարց փորձ առնել զնոսա, թէ «Ո՞րչափ եւ քանի են անձիւքն ի գիւղաքաղաքի ձերում»: Եւ նոքա ասեն. «Են արդեօք իբրեւ վեց հազար»: Ապա ասէ փաշայն. «Եթէ ճշմարտիւ խոստանայք մեզ հպատակ լինիլ, հանէք յամենայն տանց եւ յանձանց զամենայն զէն պատերազմի եւ բերէք առ մեզ»: Եւ նոքա յանձն առին այնպէս առնել: Եւ առաքեաց ընդ նոսա փաշայն զգունդ մի զինուորաց եւ եկեալ հանին զամենայն զէն յիւրաքանչիւր անձանց եւ առ իւրեանս պահեցին: Ապա խիլայս ետ փաշայն չորից զլիսաւորաց գիւղաքաղաքին, որոնց միոյն անունն էր Աղա Բաբ, երկրորդին՝ Սարգիս, երրորդին՝ Պօղոս, եւ չորրորդին՝ Աւագ: Եւ պատուիրեաց փաշայն զնոյն, զոր եղ ի նմա, պահել զգուշութեամբ եւ ինքն պատրաստեցաւ երթալ ի վերայ Երեւանայ:

## Գ

Չու արար Աբդուլլա փաշայն ի դաշտէ անտի Եղեվարդայ, եւ եկն բանակեցաւ ի տեղի մի հանդէպ Երեւանայ՝ Սամբէկի Դալմա անուանեալ յանուանէ ջրմղոյն, որ անդ լեալ է: Եւ որք շուրջ գերեվանաւ գտան բնակք ի գեօղս եւ յագարակս, ամենեքէսն փախուցեալք ի քաղաք անդ մտին:

Եւ յետ եօթն աւուրոց պաշարման Երեւանայ, մինչդեռ հէնն օսմանցւոց չէ եւս յեջմիածին միտցեալ էր յասպատակել, եհաս հրովարտակ յօսմանցւոց սուլտանէն, յորում պատուիրէր փաշային անխայել յեջմիածին եւ ոչ կոխան տալ զօրաց իւրոց, պահապանս դնել նմա յիւրոց անտի զօրաց, զի մի՞ ոք ինչ յափշտակիցէ անտի, կամ խուկցէ զոք անդ յեղելոց: Եւ եղեւ այս ի յաջողելոյ ինամոց գթութեանն Աստուծոյ: Չի ի ժամանակին, յորում լինէր զօրացն օսմանցւոց ի Յայաստան միսիլ, ոմն բարեպաշտ մեծատուն ի հայոց ազգէ, Սեդրոս անուանեալ, որ իրաց պիտոյից արքունի պաղատանն ծառայելով, շնորհս գտեալ էր եւ էր ինքն անուանի քան զամենայն մեծամեծս հայոց, որք ի Կոստանդնուպօլիս են, բարեխօս եղեալ էր վասն Էջմիածնին, որպէսզի առ ինամս ազգիս հայոց եւ առ օգուտն արքունի հրաման տացէ սուլթանն եւ պատուիրեսցէ փաշային՝ ի սուրբ Էջմիածինն անխայել, եւ ոչ թոյլ տալ զօրաց իւրոց զայն սուրբ տեղին ասպատակել: Եւ փաշայն, ըստ բանից սուլտանին հրովարտակի, զգուշացոյց զզօրսն յասպատակելոյ, եւ եղ անդէն գունդս զինուորաց ի պահպանութիւն: Ընդ յայտոսիկ աւուրս Աստուածատուր կաթուղիկոսն Յայոց ոչ կայր յեջմիածինն, այլ ի Թաւրեզ առ Թամազ շահն զնացեալ էր:

Եւ յորժամ Աբդուլլա փաշայն դիմէր յառաջ՝ առնուլ զբերդն Երեւանայ, նախ պատգամաւորս առաքեաց խօսիլ ընդ նոսա բանիւք խաղաղութեան, զի առանց զինու մարտի տացեն զբերդն: Պատասխանի արար նմա իշխան քաղաքին, որոյ անունն էր Միհրալի, եւ ասաց, թէ «Առաքեսցուք զբանս ձեր առ շահն մեր, եւ եթէ հաճեսցի եւ հրաման տացէ մեզ, տացուք ձեզ զբերդն. իսկ եթէ ոչ, ոչ իշխեմք մեք մեզէն տալ»:

Իբրեւ ետես փաշայն, զի այս ոչ էր պատասխանի՝ խաղաղութեամբ տալոյ զբերոն, պատրաստեցաւ ի պատերազմ:

Ապա յառաջ մատոյց օսմանցին զգօրս իւր հանդէպ Երեվանայ պաշարել զնա եւ սկսաւ զդոբն կարգել, կառուցանել եւ արծակել ի վերայ բերդին:

Յայնժամ հրայման ետ Միհրալին պարսկացն՝ երթալ խառնիլ ընդ հայսն, եւ ի միասին մարտնչիլ: Մարտ եղին ընդդէմ օսմանցոց զաւորս վաթսուն, եւ զբազումս կոտորեցին ի թշնամեաց, եւ ոչ ետուն նոցա մտանել ի ներքս: Տեսեալ Աբդուլլա փաշային զնուագիլ իւրոցն՝ առաքեաց ի մարըս եւ կոչեաց անտի յիւր թիկունս. եւ եկին ի նոցանէ ԼԵՌ [35.000] վառեալք ի պատերազմ, եւ ոչ նոքօք կարաց յաղթել քաղաքին:

Իբրեւ ետես փաշայն զհաստատութիւն քաղաքացոցն եւ զնուագութիւն իւրոցն, լքաւ այնուհետեւ զգօրսն յառաջ միտելոյ: Եւ առաքեաց հրովարտակ առ սուլտանն իւր ասել, թէ «Բազում են զօրք քաղաքիս, եւ ի մէջն անկան բազումք. (զի՞նչ արդեօք հրամայես մեզ առնել. առաքե՛ս մեզ զօրս ի թիկունս եւ կամ հրաման տաս դառնալ յետս)»: Յայնժամ սուլտանն հրամայեաց փաշային Քոդահիոյ հասանիլ նմա ի թիկունս: Եւ եկն եհաս նա տասն հազար վառեալ զօրօք եւ բանակեցաւ մերծ:

Եւ յետ երից աւուրց ի մի վայր ժողովեալ փաշայքն, խորհեցան եւ եւս յառաջ մղել զգօրսն. եւ այլ ոչ թուլանալ: Եւ ի լուսանալ առաւօտու, յաւուրն հինգշաբաթի, յառաջ մղեցին զգօրսն եւ մերծեցան յարծակաքաղաքն Երեվանայ: Եւ զի գետ մեծ կայ առաջի քաղաքին, Չանգու անուանեալ, եւ եղել ընդ անցանելն իւրեանց զայն գետ, ծածկեաց բազմութիւն նոցա զերեսս ահագին ընդարծակ գետոյն, եւ իբր ցամաքեալ՝ ոչ երեւեր ջուր գետոյն: Եւ էանց օսմանցին ի գետն եւ եհաս քաղաքին եւ ոչ կարաց միանգամայն յառաջ խաղալ, զի մարտիկքն քաղաքին մարտ եղեալ ընդդէմ նոցա՝ արգելուին մինչեւ յօր հասարակ: Եւ սոքա էին միայն հայք, քանզի պարսիկքն ընդ իշխանի քաղաքին փախուցեալ ի բերդն ամրացան եւ զհայսն թողին յանպարհսպ քաղաքի անդ մարտնչիլ: Յայնմ աւուր երկու հազարք ի քրիստոնէից ի սուր անկան: Եւ զլիաւորք պատերազմողացն հայոց էին սոքա. Զունդիբէկեան Յօհաննէսն, Քիջիբէկեան Պօղոսն, Կառջիկ Յովհաննէսն եւ Միրզէջանեան Դաւիթն:

Վարդապետ ոմն էր ի քաղաքի անդ, Գրիգոր անուամբ. սա մտեալ ի վանս սրբոյն Սարգսի, որ ի Չորագիւղ անուանեալ թաղի անդ Է. զբազմութիւն ժողովրդեանն հայոց կոչեալ ժողովեաց յայն վանս, եւ յառաջնում ժամու գիշերոյն սկսան խորհուրդ առնել մեծամեծքն ընդ վարդապետին եւ ասեն. «Չի՞նչ արասցուք. վաղիւն զմեզ զամենեսեան ի սուր սուսերի մաշէ օսմանցին եւ զկանայս եւ զմանկունս մեր ի գերութիւն վարէ»: Եւ խորհեալ հաստատեցին ի մէջ իւրեանց առնել, զոր կարեւոր տեսանէին ի փրկութիւն անձանց իւրեանց եւ զաւակացն: Ի քաղաքի անդ ի տեղին որ Կոնդի թաղ անուանիւր, էին քրիստոնէայ բօշայք, ճ [100] տուն, մեծատունք եւ քաջասիրտք, վարժք զինու պատերազմի: Եւ նոցա զլիաւորք ի ժամանակին յայնմիկ էին սոքա: Առաջին էր պարոն Ղազարոսն Բաբուրեան, երկրորդն էր պարոն Կլդուզն, երրորդն էր պարոն Դաւիթն, չորրորդն էր պարոն Բէյրամն, եւ հինգերորդն էր պարոն Պետրոս: Սոքա եւ այլքն առհասարակ կոչեցեալք՝ եկին ժողովեցան առ Գրիգոր վարդապետն: Յայնժամ ժողովուրդքն վարդապետին հանդերձ լալագին աղաղակեցին առ նոսա յօգնութիւն հասանիլ, զի կարասցեն զանձինս իւրեանց եւ զկանայս եւ զմանկունս զերծուցանել յանօրինաց, որք հասեալ պատեալ պաշարեալ տազնապեն, եւ յարծակին յաւար հարկանել: Պատասխանի ետ Ղազարն եւ ասէ ցվարդապետն. «Վարդապետ,



ահաւասիկ ես զերկու հարիւր քաջամարտիկ երիտասարդ ունիմ, որոց ամենեքեան ունին զգէսս եւ վարժք են սրոյ եւ հրացանաց արձակելոյ, զնոսս ես ժողովեցից եւ նոքօք հանդերձ ոգւով չափ պատերազմեցայց»: Չհետ Ղազարու, եւ այլ մեծամեծքն հայոց խոստացան զնոյն առնել, որք էին՝ Ունդուբէկեան պարոն Յօհանն, պարոն Փիրիգուլն, պարոն Արզումբէկն, պարոն Թադէոսն, պարոն Մղունն, պարոն Մկրտիչն, պարոն Մալխասն, պարոն Նիկողայոսն, պարոն Սրապիոնեան Աւետիսն, պարոն Աղազատէն, պարոն Նուրին, պարոն Չօհրապն, պարոն Ալէքսանն, պարոն Աղամն, պարոն Գալուստն եւ պարոն Երամն:

Սոքա ամենեքեան միաբան ի միասին խորհուրդ արարեալ ժողովեցին զընտիր ընտիր երիտասարդս ի գիւղօրէիցն Երեվանայ եւ եղէն ինն հազար վառեալք ի պատերազմ, ի Փարաքարայ, ի Գուգումբէթայ, ի Կաւակերտայ, ի յԱռնշոյ, ի յԱւանայ, ի Չազաւանայ, ի Չազայ եւ ի Նորագեղջէ. զի ամենայն այր կարօղ պատերազմի գիւղօրէիցս այսոցիկ եկեալ ժողովեալ կային յարձակաբաղաքն Երեվանայ: Այլ եւ ի քաղաքէ անտի Երեվանայ ի թաղէն, որ Հին Երեվան կոչի, ժողովեցան բազում խումբք երիտասարդաց վառելոց ի պատերազմ, որոց կառավարքն էին գօտեմարտիկ Նիկողայոսն, Մարիամեան որդի Անտոնիոսն եւ Խաթունեան որդի Բուրթիկն եւ տեր Մովսէսն: Եւ ամենեցուն գումարն եղել ինն հազար չորս հարիւր քառասուն եւ երեք սպառազէն քաջ պատերազմօղք, ամենեքեան վառեալք սուսերաւ եւ թվանկաւ: Սոքա ամենեքեան զկանայս եւ զմանկունսս եւ զարս անպէտս մարտի ի տունս իւրեանց թողեալ՝ եկին գումարեցան կառավարչօքն իւրեանց հանդերձի թաղ մի Երեվանայ, որ Ձորագիւղ անուանի, պատերազմիլ վասն անձանց եւ վասն կանանց եւ որդւոց իւրեանց: Եւ բաշխեցին իւրաքանչիւր թաղից գունդս գունդս՝ պահել զմուստ ճանապարհաց քաղաքին: Եւ կային պատրաստութեամբ, զի եթէ իներքս միտեսցին զօրքն թշնամեաց, պատերազմեսցին, իսկ եթէ ոչ, զտեղի կալցեն: Չի շուրջ զքաղաքան էին այգիք եւ ծառատունկք ուռեաց բազում խիտք, զորս ի վաղ ժամանակաց տնկեալք էին լինիլ ի պահպանութիւն, ի պատսպարութիւն քաղաքին: Իսկ եւ արտաքոյ ծառաստանացն Եր մեծ գետն Չանգու, եւ վասն սմին իրի զօրն օսմանցւոց զանգիտեր միանգամայն ի քաղաք անդ միսիլ, զի ի մէջ խիտ ծառաստանաց անհնար Եր զգէսս ի գործ արկանել, այլ զտեղի առեալ յայնկոյս զետոյն՝ զդոքս արձակէր ի վերայ քաղաքին եւ զհնարս ինդրէր յառաջ ընթանալոյ: Եւ երբեմն երբեմն ըստ մասին յառաջ միսիւր, ոչ ընդ իւրաքանչիւր կողմն քաղաքին, այլ ընդ կողմն Ձորագեղջ, ընդ որ կողմն նուազ Եր ծառատունկ:

Իսկ իշխանն Երեվանայ եւ ամենայն մեծամեծք նորա ի ներքս ի բերդի անդ կային եւ անտի զդոքս արձակեալ պատերազմէին: Սակայն յետ մերձենալոյ զօրացն օսմանցւոց ի քաղաք անդ՝ այնուհետեւ դոքքն նոցա առ ոչինչ օգտէին, զի դոքքն ի բարձուստ արձակեալ զառաջիկայ մերձաւորսն ոչ կարեն հարկանել, այլ զպատշաճ հեռայկայս: Իշխանն Երեվանայ առեալ Եր ի ներքս յամրոցն Երեվանայ ի մեծամեծացն հայոց զերկրոտասան անձիսս ամենայն տամբն նոցա, որոց զլիսաւորքն էին մելիք Սահակն՝ մելիք Աղամալի որդին եւ եղբայր նորա Աղայ Վելին, պարոն Կարապետն, Միքայել Բարխուդարեան եւ Բարաջանն Մոծակեան եւ այլք ընդ սոսա:

Արդ, իբրեւ այնպէս պատրաստութեամբ կային քրիստոնեայքն արտաքոյ բերդին, եկին եւ այլ երեք հազար զօրք յեգիպտացւոց կուսէ յօգնութիւն օսմանցւոց եւ բանակեցան առ Նորագիւղիւ առանձին: Եւ լեալ սոքա յանդգնագոյնս քան զառաջինս՝ առանց կարգի եւ հրամանի դքսին իւրեանց Աբդուլլա փաշային, զազանաբար արձակեցան յառաջ՝ ի քաղաք անդ միսիլ, ընդ կողմն Ձորագեղջ, եւ զհետ նոցա այլք եւս բազումք յառաջնոցն խառնադանջք: Համարէին սոքա զգործն

յաղթութեան ինքեանք միայն վճարել եւ առանձին զանուն եւ զփառս քաջութեան ժառանգել, միանգամայն եւ աւարին յառաջ քան զառաջին զօրսն հասեալ ի վերայ՝ զչար ցանկութիւնս իւրեանց լիագոյն լնուլ: Եւ եղել ի միսիլն Նոցա ի թաղն Ձորագիւղ անուանեալ՝ տկարացան մարտիկքն, որք անդ կային, եւ փախեան յերեսաց Նոցա մինչեւ ի թաղն Աղօրեաց: Ազդ եղել բօշայիցն, որք յայլ թաղս կային, եկին հասին անդ երեք հարիւր միանգամայն եւ մարտ եղեալ սրով եւ թվանգալ՝ յաղթեցին թշնամեաց ինամօքն Աստուծոյ եւ կոտորեցին ի Նոցանէ զվեց Ռ [6.000] եւ զմնացեալսն ի փախուստ դարձուցին: Չի տեղին, ուստի մարտնչէին քրիստոնէայքն, Էր բարձր, եւ տեղին թշնամեացն Էր ցած: Բայց յայնմ աւուր անկան ի քրիստոնէից ոգիք իբրեւ հազար եւ երեք հարիւր: Տեսեալ Աբդուլլա փաշային զանկարգութիւն եգիպտացւոց՝ բարկացաւ սրտմտութեամբ եւ պատուէր ետ իւրոցն՝ առանց հրաման տալոյ իւրոյ մի՛ ոք յառաջ խաղալ:

## Դ

Յրաման ելեալ Էր ի սուլտանէն առ Սարու Մուստաֆա փաշայն՝ երթեալ ի վերայ Երեվանայ, Նիզակակից մարտակից լինիլ Աբդուլլա փաշային, եւ Նա գիտեր, զի գալոց էին: Ազդ եղել Աբդուլլա փաշային, թէ ահա Սարու Մուստաֆայն եւ Ռաշաքն մերձ են հասանիլ: Այլ Նա, մինչչեւ եկեալ էին, միւսանգամ յառաջ մղեաց զզօրսն ընդ կողմն, որ Կոնդի թաղ կոչի: Յայնժամ գունդքն հայոց աճապարեցին յայն կողմն՝ զդէմ ունիլ Նոցա, մարտ եղին քաջութեամբ, հարին զՆոսա եւ ի բաց դարձուցին: Յայնմ Նուազի չորեք հարիւր սպառազէնք ի հայոց անտի, եւ քառասուն բօշայք եղեն խոցք եւ անկան ի մահիճս, այլ ոչ մեռան: Յայնմիտե տ այլ ոչ եւս յաւել զօրն օսմանցւոց յառաջ միսիլ մինչեւ ի գալ երկուց փաշայիցն, զորս ասացաք, եւ յետ հնգետասան աւուրց եկին հասին երկու փաշայքն, ԼԸ [38] հազար զօրօք: Եւ եղել յետ հասանելոյ Նոցա խորհուրդ արար ընդ Նոսա Աբդուլլա փաշայն ի չորից կողմանց յառաջ մղել զզօրսն եւ անդով մարտնչիլ եւ ոչ թոյլ տալ զօրուն յետս ընկրկիլ:

Իբրեւ լուան քրիստոնէայքն, զի երկու փաշայք եւս եկին յաւելան ի զօրս օսմանցւոց, եւ յամենայն կողմանց իբրեւ զաւազ ծովու բազմութեամբ պատեալ պաշարեալ սպառնային զինքեանս կլանեալ, զահի հարան յերեսաց Նոցա, զի գիտացին այնուհետեւ, թէ որչափ եւ կոտորեցին Նոքա, այլք զիտ Նոցա գալ եւ լնուլ զտեղիս Նոցա ոչ պակասին: Իսկ զայս ինքեանց առնել ոչ Էր հնար, որովիտեւ ի քաղաքի անդ փակեալ պատեալ, պաշարեալ կային յամենայն կողմանց, իբրեւ զճկունս ի ցանց. եւ ոչ ուստեք Էր լոյս Նպաստութեան: Ժողովեցան առ Գրիգոր վարդապետն եւ ասէն. «Չի՞նչ արասցուք, զի թշնամիքն օրըստօրէ զբազմութիւն իւրեանց առաւելուն, եւ մեք օրըստօրէ պակասեալ Նուազիմք»: Պատասխանի ետ վարդապետն եւ ասէ. «Յրեշտակս արձակեցուք առ Նոսա խօսիլ բանս հպատակութեան եւ ինդրեցուք զհաշտութիւն»: Եւ ասէն. «Չո՞ առաքեցուք առ Նոսա»: Չի երկնչեր իւրաքանչիւր ոք զայս յանձն առնուլ: Քանզի յայլում Նուազի Յարութիւն անուամբ ոմն առաքեցաւ ի Նոցանէ եւ մինչչեւ Էր հասեալ Նորա առ փաշայն՝ կալան զինուորքն եւ սպանին, վասնզի զինուորացն, որք զքաղաքն յաւար առնուլ ցանկանային, ոչ Էր հաճոյ հաշտութեան պատգամաւորութիւնն:

Ապա մի ոմն ի Նոցանէ, Ափիշանեան Միրզէ անուանեցեալ, յառաջ մատեաւ ղնել զանձն ի փրկութիւն հասարակաց եւ ասէ. «Ես վասն սիրոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յանձն առնում զնալ ի պատգամաւորութիւն, եւ եթէ սպանցեն զիս, յօժարութեամբ մեռայց. իսկ եթէ ապրեցայց, հասից առ փաշայն եւ զոր ինչ յանձնեք ինձ առ Նա խօսիլ, խօսեցայց»: Ապա հանդերձեցին զնա ընծայիլք եւ արձակեցին:

Չնայած ընդ նմա եւ ծառայ նորա: Իբրեւ այն ինչ մերձ եղել ի բանակն օսմանցոց, յարձակեցան ի վերայ նորա զհնուորքն, կալան զնա. եւ տարեալ զնա խոտորեցուցին ի տեղի մի եւ փողոտեցին: Իբրեւ ետես ծառայն զանցս տեառն իւրոյ, փախեալ եւ ի պնտիլ զհնուորացն զկնի նորա՝ ընկեց զինքն ի լեռնէն բարձու ի գետն Չանգու, եւ ինամօք Տեառն ապրեալ էիսս առ առաքիչսն իւր, պատմեաց նոցա զամենայն անցս, որք ընդ տեր իւր անցին, եւ ասէ. «Աւա~ղ մեզ քրիստոնէիցս, զի մեղք մեր մեծամեծք բազմացեալ են եւ անարժանս առնեն զմեզ ողորմութեանն Աստուծոյէ:

Յայնժամ ձայն բարձեալ ժողովրդեանն՝ ողբով մեծաւ աղաղակեցին առ Աստուած քաւիչ լինիլ եւ մի՛ արգելուլ զողորմութիւն իւր ի քրիստոնէից, եւ կոծեցան ի վերայ սպաննեցելոյն: Ապա վարդապետն այն ժողովեալ զժողովուրդն յեկեղեցին՝ մատոյց զպատարագ եւ խոստովանութեամբ մեղաց իւրեանց պատրաստեցան եւ հաղորդեցան ի կենարար մարմնոյ եւ յարենէ Տեառն մերոյ, եւ կային յիւրաքանչիւր տեղիս պատրաստութեամբ, ուր պիտոյ էր կալ:

Եւ եղել ի վաղիւ անդր, որ օրն էր ուրբաթ, զօրքն օսմանցոց ի չորս առաջս բաժանեալք, միտեցան ի քաղաքն ի չորից կողմանց: Եւ մարտ եղեալ յառաւօտ միևչել ցերեկոյ, տքա՛ աստի, եւ նոքա՛ անտի, խառնեցան ընդ միմեանս հայքն եւ օսմանցիք եւ կոտորեցին զմիմեանս, եւ անչափ եղել հեղումն արեան, միևչել կարմրանալ Չանգու գետոյն եւ երկիրն՝ որ առ գետովն. եւ հոտ արեանց եւ դիականց կոտորելոցն զքաղաքն բովանդակ միևչել ի հեռաւոր տեղիս լցին: Եւ առաւ քաղաքն յեօթներորդում աւուր ամսեանն յունիսի, յամին հազար հարիւր եօթանասուներորդի երրորդի հայկազեանս թուականի [1724]: Կոտորեցան հզօրքն հայոց ի սուր սուսերի եւ գետահեղձ եղեն բազումք ի նոցանէ: Ի գերութիւն վարեցին օսմանցիքն զկանայս նոցա եւ զմանկունս եւ տարեալ լցին զնոսս ի բանակս իւրեանց եւ չար գործովք ապականեցին զնոսս:

Եւ այս զհա՛րդ մարթ էր լինիլ, եթէ ո՛չ մատնեալ էր զնոսս Աստուած ի ձեռս անօրինաց: Եւ Է՛ր աղագաւ արդեօք մատնեաց զնոսս Աստուած, զորս արեամբ Միածնի իւրոյ զնեալ եւ սրբեալ, յորդեգրութիւն իւր ընկալեալ էր: Ոչ ի յօժարութենէ իւրմէ մատնեաց Աստուած, այլ մեղք եւ անօրէնութիւնք նոցա բռնադատեցին զարդարութիւն նորա, քանզի բազմացան մեղք եւ անօրէնութիւնք նոցա եւ բողոքեցին յերկինս: Եւ զի՛նչ էր պատճառն բազմանալոյ մեղաց նոցա: Այս իսկ էր, զի կարգաւորք եւ աշխարհականք առ հասարակ ի բաց թողեալ զուսումն աստուածային պատուիրանաց եւ այլ մասանց քրիստոնեական վարդապետութեան՝ զբարւոք ապրիլն ըստ մարմնոյ միայն հոգային: Եւ թեպէտ օրըստօրէ ժամակարգութիւնք եւ պատարագք լինէին յեկեղեցիս, սակայն զայս ամենայն տիմարութեամբ, առանց ծանօթութեան իմանալի խորհրդոցն եւ առանց ներքին աստուածապաշտութեան կատարելին: Եւ միով մեկին բանիւ ասեմ, թէ նոքա առ հասարակ միայն զսուրբ կնիքն քրիստոնեական ունէին յոգիս իւրեանց, եւ անուամբ միայն եւ արտաքին իրօք միայն զքրիստոնեական կրօնս պահէին, իսկ զներքին, որ ճանաչումն ամենասուրբ Երրորդութեան եւ մարդեղութեան բանին եւ փրկարար գործոց նորա եւ կրից, ըստ պատշաճեալ իւրեանց չափուն ոչ ունէին եւ ունելոյ անփոյթք էին, եւ ոչ գէթ ըղձային ճանաչել կամ ուսանիլ: Եւ վասն այսորիկ մի՛ ոք զարմացի, թէ զհարդ Աստուած թոյլ տայ անհաւատից զայսպիսի չար գործովք ապականել եւ ի հաւատոցն ուրացուցանել, վասնզի զԱստուած ոչ ճանաչէ եւ զՔրիստոսի տնօրէնութիւնսն եւ զպատուիրանսն ոչ իմանայ եւ անփոյթ է ուսանիլ, այնպիսի թեպէտ եւ ոչ զայսպիսի անցս կրեսցէ, անպիտան է ի հաւատս եւ արժանի է ընդ մեջ կտրելոյ եւ զբաժին նորա ընդ անհաւատսն դնելոյ:

## Ե

Իսկ իշխանն Երեվանայ եւ որք ընդ նմա մեծայմեծքն պարսից եւ հայոց ի բերդի անդ ամրացեալ կային, իբրեւ այս ամենայն իրք եղեն, լքան, լուծան, պարտասեցան եւ հատան ի յուսոյ զբերդն ի ձեռս իւրեանց ունելոյ, եւ այնուհետեւ զանձինս իւրեանց միայն ապրեցուցանել հոգային: Յառաջ զան զաւուրս զայսոսիկ, մինչդեռ մարտնչեր օսմանցին ընդ քաղաքին Երեվանայ, շահ Թամազն, որ կայր ի Թաւրեզ, ել անտի վեց հազար զօրօք գնալ ի հորասան պարսից. զի զանգիտեր այնչափ զօրօք գալ հասանիլ ի պաշտպանութիւն Երեվանայ քաղաքին: Եւ յելանել իւրում անտի զկաթուղիկոսն Աստուածատուր, զոր առ իւր ունէր, որպէս ի վեր անդր պատմեցաք, արձակեաց յիւրմէ գնալ յԷջմիածին: Իբրեւ եհաս նա անդ, լուաւ վասն նորա Աբդուլլա փաշայն եւ առաքեալ կոչեաց զնա: Եւ իբրեւ եկն նա, ընկալաւ զնա պատուով, եւ հրամայեաց նմա զհանդերձ շքոյ զգեցուցանել եւ նստոյց զնա առ իւր, եւ խօսեցաւ ընդ նմա բազում քաղցրութեամբ: Եւ զերիս աւուրս շքով մեծաւ պահեր զնա ի բանակի անդ: Յետ այնորիկ խօսիլ սկսաւ ընդ նմա վասն իրաց առաջիկայ պատերազմին եւ ասէ զնա. «Չի՞նչ արասցուք, զի յետ այսչափ նուաճելոյ մերոյ զքաղաքս զայս, նոքա՞ որք ի ներքս ի բերդի անդ ամրացեալ կան, դեռ եւս պնդեալ են պահել զնա եւ ոչ տան մեզ, զի խաղաղութիւն լիցի»: Պատասխանի ետ կաթուղիկոսն եւ ասէ. «Փոքր մի եւս համբէ՛ր, եւ ես գնացեալ խօսեցայց ընդ նոսա եւ հրահանգեցից զնոսա ի հնազանդութիւն, եւ տացեն զբերդն:

Իբրեւ զնաց մատեաւ կաթուղիկոսն առաջի բերդին, ազդ եղել իշխանին, թէ կաթուղիկոսն եկեալ կայ առաջի բերդիս: Եւ առաքեաց նա զմի ոմն յառաջակայից իւրոց խօսիլ ընդ նմա ի ներքուստ եւ հարցանել, թէ վասն որո՞ց իրաց եկեալ իցէ, եւ զի՞նչ լուր ունիցի ի շահ Թամազէն: Եկն եկաց նա ի տեղին խօսելոյ, եհարց զկաթուղիկոսն եւ ասէ. «Վասն որո՞ց իրաց եկեալ ես, եւ զի՞նչ լուր է ի շահէն մերմէ»: Պատասխանի ետ կաթուղիկոսն, թէ «Ձեզ անտի նպաստութիւն ինչ լինելոյ ոչ գոյ ինչ յոյս, այլ դուք ձեզէն զօգուտն անձանց ձերոց խորհեցարուք»: Իբրեւ լուաւ զայս իշխանն, յոյժ տրտմեցաւ եւ աւաղս եւ եղուկս կարդաց անձին իւրում եւ ելաց: Եւ առաքեաց ցերիս ի մեծամեծացն հայոց զորս առ իւր ունէր, զԿարապետն, զՍահակն եւ զԱնտոնն եւ ասէ. «Գնացէ՛ք տեսէ՛ք, զի՞նչ կամի բանիւն այնու ծանուցանել մեզ կաթուղիկոսն ձեր»: Իբրեւ եկին, պատմեաց նոցա կաթուղիկոսն զիրս շահ Թամազին, եւ եցոյց նոցա զխաղաղութեան բանսն փաշային, թէ «Խոստացաւ խաղաղութեամբ արձակել զձեզ, եթէ խաղաղութեամբ տայցէք նմա զբերդն»: Եւ երթեալ պատմեցին զբանս զայս իշխանին, եւ կաթուղիկոսն զնաց անտի պատասխանի առնել փաշային. եւ խնդրեաց զաւուրս ինչ լռել, մինչեւ խորհեսցին, եւ ինքն զնաց յԷջմիածին:

Յայնժամ իշխանն զմեծամեծս իւր ժողովեաց ի խորհուրդ, թէ զի՞նչ արասցեն: Եւ եղել ի խորհիլն նոցա, մի ոմն ի նոցանէ, որոյ անունն էր Մեժլում բէկ, ասէ. «Ինձ թուի, թէ հարկ է մեզ տալ զբերդն, եւ լաւ լինի մեզ դաշամբ ազատութեան անձանց մերոց տալ զնա, քան ընդդիմանալ նոցա յաւուրս ինչ եւ կորուսանել միանգամայն զսա եւ զանձինս մեր»: Պատասխանի ետ եւ այլ ոմն ի բազմելոցն, որ Չերչի-բաշի անուանեալն էր, եւ ասէ. «Եթէ տայք օսմանցւոց զբերդս զայս, ստուգիւ գիտասջիք, զի տունս մեր աւար հարկանեն եւ զընդանիս մեր ի գերութիւն վարեն. վասնզի թէպէտ եւ այժմ ազատ արձակել զմեզ խոստանան, բայց ետ տալոյ մերոյ զբերդն՝ ստեն»: Ապա ետ պատասխանի եւ այլ ոմն ի նոցանէ եւ ասէ. «Ոչ այդպէս, այլ զկաթուղիկոսն հայոց ի ներքս առցուք՝ տեղեկանալ միւսանգամ ի նմանէ վասն իրիս այսորիկ»: Յայնժամ Միհրալին զբանս զայսոսիկ, զորս ասացին առաջակայքն իւր, եդ առաջի մեծամեծացն հայոց, զորս ի բերդն ընկալեալ էր, եւ ասէ, թէ «Այսպէս եւ այնպէս

ասացին պարոնայքն մեր վասն բերդիցս եւ վասն անձանց մերոց. եւ արդ դուք զի՞նչ ասէք»: Պատասխանի ետուն նոքա եւ ասեն. «Յրամանքն քո է»: Ապա ասէ Միհրալին. «Առաքեսցուք զոմն բերել զկաթուղիկոսն առ մեզ»: Բայց ոչ զոք ի պարսկաց անտի համարձակեցան յղել, քանզի ստուգիւ գիտէին, զի օսմանցիքն ընդ գտանելն զոք ի պարսկաց անտի արտաքոյ բերդին՝ նոյն ժամայն խողխողէին:

Ապա սահմանեցին զմի ոմն ի հայոց անտի առաքեալ հրովարտակօք առ փաշայն եւ ինդրել ի նմանէ, զի զկաթուղիկոսն հայոց միւսանգամ ի բերդն յղեսցէ, որպէսզի միջնորդութեամբ նորա դաշն խաղաղութեան հաստատեսցի: Եւ հանդերձեցին զպարոն Անտոնն առաքել. եւ իջուցին զնա առասանաւ ի պարսպէ անտի ի վայր, զի զդրունս բերդին ոչ կամէին բանալ, թէպէտ եւ սպիտակ նշանակն խաղաղութեան արդէն կանգնեալ էին ի յամբարտակի անդ բերդին: Իբրեւ գնացեալ մերձեցաւ նա ի բանակն օսմանցւոց, հասին ի վերայ ոմրա ոմանք ի զօրուէն եւ ածին զնա առ փաշայն, թէ «Դու ուստի՞ եւ ո՞ւր ուղղեալ էիր գնալ»: Պատասխանի ետ Անտոնն. «Ի բերդէ անտի առաքեցեալ եմ բերել զգիր առ վսեմութիւնդ»: Եւ հանեալ զգիրն ետ ցփաշայն: Իբրեւ ծանեաւ փաշայն զգրեալսն, առաքեաց վաղվաղակի ի զօրականաց իւրոց յէջմիածին՝ բերել զկաթուղիկոսն առ իւր: Իբրեւ եկն կաթուղիկոսն եւ եկաց առաջի, հրաման ետ նմա փաշայն բազմիլ. եւ խօսեցաւ ընդ նմա եւ ասէ. «Միհրալի խանն ինդրէ գբեգ. երթ առ նա եւ տե՛ս՝ զինչ բանք են նորա առ մեզ:

Եւ եկն կաթուղիկոսն ի դուռն բերդին: Առին զնա ի ներքս, եւ ածին յապարանս իշխանին: Եւ ամենայն մեծամեծքն պարսից եւ հայոց ժողովեցան անդ եւ ակն կալեալ սպասէին բանից նորա, որպէս զի զհարդ ինչ առնել ցուցցէ նա վասն զանձիս իւրեանց ապրեցուցանելոյ, այնպէս առնիցեն: Ապա կաթուղիկոսն բազում բանիւք յուսադիր արարեալ զնոսա՝ հաւանեցոյց հաւատալ խոստման փաշային եւ տալ զբերդն:

Եւ առեալ ի նոցանէ զբանս տալոյ բերդին, ել գնաց առ փաշայն: Եւ մատուցեալ նմա զպատգամս նոցա՝ աղաչեաց զփաշայն զղաշինսն ազատ արձակելոյ զնոսա հաստատեալ: Յանձն էառ զայս փաշայն եւ իսիլայս պարգեւեաց կաթուղիկոսին: Ապա կարգեաց զզօրս իբրեւ զերիս հազարս՝ երթալ ընդ կաթուղիկոսին, մատուցանել զգիրն հաշտութեան եւ մտանել ի բերդն: Գնաց կաթուղիկոսն կարգեալ զինուորօքն, մերձեցաւ ի բերդ անդ եւ մատոյց նոցա զգիրն: Առին նոքա զգիրն եւ տեսին՝ զինչ գրեալ էր, եւ բացին նոցա զդուռն: Եւ յառաջ եմուտ ի ներքս կաթուղիկոսն, եւ զօրքն զկնի: Եւ փութացեալ զինուորացն՝ կալան զդոքսն բերդին պահել: Կաթուղիկոսն նստաւ ի հրապարակի բերդին, մինչեւ ամենայն զօրքն օսմանցւոց ի ներքս մտին խաղաղութեամբ:

Ապա ել գնաց Միհրալի խանն եւ կաթուղիկոսն ընդ նմա՝ յանդիման լինիլ փաշային եւ յարգել զնա առաջակայիւք եւ զօրագլխօքն իւրովք հանդերձ: Եւ ընկալեալ եղել Միհրալի խանն ի փաշայէն համբուրիւ խաղաղութեան:

Յրաման յետ փաշայն, զի ամենայն պարսիկքն ի բերդէ անտի արտաքս ելցեն: Եւ ամենեքեան ելին: Եւ ապա ասէ՝ թէ՛ «ԶՂասում բեկն, զՇհալի բեկն եւ զԱբաս Ալի բեկն ի Կոստանդնուպօլիս առաքելոց եմ, քանզի ինդրեաց զսոսա Ահմետ սուլտանն մեր»: Եւ էառ զերիս զայսոսիկ եւ ետ դնել ի քուրձ մի եւ հրամայեաց ընկենուլ ի Չանգու գետն, եւ այնպէս կորոյս զնոսա: Իսկ զՄիհրալին եւ զայլ առաջակայսն խաղաղութեամբ արձակեաց երթալ ուր եւ կամեսցին: Եւ յետ վճարելոյ ամենայնի եւ խաղաղելոյ զօրացն օսմանցւոց՝ գնաց կաթուղիկոսն յէջմիածին:

Յամին ՌՃՅԳ [1724], օգոստոսի ԻԱ [21] նուաճեցաւ բոլոր Երեւան քաղաքն ընդ իշխանութեամբ օսմանցւոց, եւ զտեղի Էառ անդէն զօրն օսմանցւոց մինչեւ ի նոյեմբեր:

## Զ

Յամին հազարերորդի հարիւրերորդի եօթանասներորդի երկրորդի հայկազեանս թուականի [1724], ի վեցերորդում աւուրն նոյեմբերի, Եհաս հրովարտակ յօսմանցւոց սուլտանէն առ Աբդուլլա փաշայն՝ երթալ ի վերայ Թաւրեզու: Եւ սկսաւ կարգել զգօրսն ամենայն պիտոյից պատրաստութեամբ: Եւ ի լրանալ ամենայն պատրաստութեանցն եւ ի ճանապարհ՝ գնալ ի վերայ Թաւրիզու յամսեանն փետրուարի յամին Ռ երրորդի՞ Երրորդի ՅԴ երրորդի [1725]: Եւ յառաջ Եհաս նա ի գաւառն Խոյայ: Եւ եղեւ ի մերձենալ նորա ի Խոյ՝ ամենայն պարսիկք գիւղօրէիցն նորա փութացեալ մտին ի բերդն Խոյոյ, ուր էին մտեալ եւ հայք բազումք: Եւ յորժան ի պաշարման եղեալ նեղեցան եւ տազնապէին, ոմանք յառաջակայիցն հայոց կամէին, զի տացի բերդն, իսկ պարսիկք բարկացեալ ընդ այն՝ խորհէին զհայսն կոտորել եւ կորուսանել ի միջոյ իւրեանց. զի ասէին, թէ «Ոչ կամիմք օսմանցւոց տալ զբերդն»: Եւ լուռ եղէն հայքն: Ապա օսմանցին զղոբսն կառոյց ընդդէմ բերդին եւ զաւուրս Խ [40] արծակեալ՝ զբազում աւերս եւ զկոտորումն Էաժ ի վերայ նորա: Ապա զգօրսն յառաջ մղեաց միանգամայն եւ տմուտ ի քաղաքն եւ Էառ զբերդս: Եւ մինչեւ ցվեց ժամ կոտորելով զհակամարտսն, որք էին պարսիկք, սրով սուսերի ելից դիակամք զբերդն. եւ զբրիստոնեայսն գերի վարեաց: Եւ յետ նուաճելոյ զբերդն Խոյայ՝ զԻԸ [28] օր եկաց անդ փաշայն օսմանցւոց եւ յետ այնորիկ ի մասնէ զօրաց իւրոց պահապանս կացուցեալ ի բերդի անդ՝ խաղացոյց անտի զգօրսն՝ գնալ ի վերայ Թաւրիզու:

Ընդ այն աւուրսն Յասան փաշայն առաքեցաւ ի Յամատան, որպէս ցուցաներ զայս հրովարտակն, որ Եհաս Աբդուլլա փաշային ի սուլտանէ իւրմէ, յորում գրեալ էր, թէ «Յրաման Ետու Յասան փաշային՝ երթալ ի վերայ Յամատանայ»: Եւ ինքն Աբդուլլայն, որ ուղղեցաւ գնալ ի Թաւրեզ, երթայր յուշիկ՝ նուաճելով՝ զգաւառնսն, յորս հասաներ: Եհաս ի Մարանդ գիւղաքաղաք, որոյ բնակիչքն համբաւեն, թէ անդ թաղեալ կայ մայրն Նոյի, զՄարանդ անունն ստուգաբանելով՝ մայր-անդ. եւ Էառ զգաւառն զայն բովանդակ: Եւ անտի յառաջ խաղայր գնայր, եւ գնալով Եհաս ի Սօֆիա գիւղաքաղաք, եգիտ գնա անմարդի, ամայի լեալ ի բնակչաց իւրոց, զի բնակիչք նորա առեալ զլուր կոտորածի եւ գերութեան Երեւանայ՝ փախուցեալ էին ի Թաւրեզ: Յետ սորա Եհաս ի տեղի մի Շօր-Ջուր անուանեալ, որ մերձ է Թաւրեզու: Ազդ եղեւ իշխանին Թաւրեզու, որոյ անունն էր Ալայ-դուլի. եւ ընդդէմ նմա բազում զօրօք եւ մարտեաւ ընդ Աբդուլլա փաշային, ի պարտութիւն մատնեցաւ նա, եւ անկան ի զօրաց նորա իբրեւ տասն Ռ [10.000]: Եւ ինքն մնացեալ զօրօքն ի փախուստ դարձեալ՝ տմուտ ի Թաւրեզ քաղաքն եւ անդ ամրացաւ:

Իսկ զօրքն օսմանցւոց յառաջ խաղացեալ՝ եկին պատեցին պաշարեցին զԹաւրեզ եւ կարգեալ կառուցին զղոբսն՝ արծակել ի վերայ քաղաքին: Եւ զԿ [60] օր հանապազ հրացանօք եւ դոբիւք հրձիգ արարեալ զշինուածսն նորա զփայտակերտս եւ կավակերտսն քանդեալ կործանեցին: Եւ յետ Կ [60] աւուր, իբրեւ ետես Աբդուլլայն, զի տակաւին յամառեալ պնտեալ ընդդէմ կան, հրաման Ետ ամենայն զօրացն առ հասարակ յառաջ խաղեալ եւ ի քաղաք անդ միսիլ եւ միանգամայն զղոբսն ի վերայ արծակել: Եւ նոցա ամենեցուն առ հասարակ գազանաբար յարծակեալք՝ միտեցան ի քաղաք անդ եւ զաւուրս եօթն մարտ եղեալ ընդ հակամարտսն՝ զութսուն եւ հինգ Ռ [85.000] զօրս կոտորեցին, եւ առին նուաճեցին զքաղաքն: Եւ զժողովուրդ քաղաքին եւ զկանայս եւ զմանկունս նոցա գերեցին, եւ յաւար առին զստացուածս նոցա: Իբրեւ

դադարեցան ի կոտորելոյ, եւ խաղաղեցաւ քաղաքն, հանդէս արար զօրաց իւրոց Աբդուլլա փաշայն, եւ ետես զի ի հարիւր յիսուն եւ ութ հազարացն քառասուն եւ երկու հազար միայն մնացեալ էր: Իբրեւ անցին աւուրք ամսոյ միոյ յետ նուաճելոյ գաւառին Թաւրիզու, անկաւ հիւանդութիւն մահու ի զօրսն օսմանցւոց, քանզի եհար զնոսա բարկութիւնն Աստուծոյ յաղագս անպատմելի եղեռնագործութեան նոցա, զոր արարին եւ առնէին անողորմութեամբ իւրեանց եւ շնաբարոյ զագրագործութեամբ: Եւ ի հիւանդութենէ աստի բազումք սատակեցան եւ բազումք եւս գաղտագնաց փախստական եղեալ՝ ցրուեցան, եւ եղեւ յոյժ նուազութիւն զօրացն օսմանցւոց:

## Է

Յամին հազարերորդի հարիւրերորդի եօթանասուներորդի չորրորդի աղուանն, որ զմեծ Շօշ քաղաքն առեալ տիրեր, իբրեւ լուաւ զնուազիլ զօրացն օսմանցւոց, որ եղեւ ի հարուածոյ մահաբեր հիւանդութեան անկելոյ ի զօրսն, որպէս յառաջ քան զայս կարգեալ զլուխդ պատմեցաք, եւ նա բազում զօրօք գալ ի վերայ Թաւրիզու: Եւ եհաս ի գիւղաքաղաք մի մեծ Ֆալիհան անուանեալ, ընդ որով են երեք հարիւր գիւղօրէք: Եւ զօրացն պարսիցն ընդդէմ ելեալ նմա՝ պատերազմեցան ընդ զօրս նոցա գաւուրս Խ [40]: Եւ եհար զնոսա աղուանն սրով սուտերի: Եւ տիրեալ միանգամայն երեք հարիւր [300] գիւղիցն Ֆալիհանայ՝ կոտորեաց զերիտասարդս նոցա սրով սուտերի, եւ զամենայն որ միանգամ կարօղ էր զինուորիլ. եւ նուազ արար զարս գաւառացն կիսոյ չափ: Տեսեալ զայս չարիս մնացեալ գաւառացն՝ շուրջանակի վառեցան զինու, կազմեցան պատրաստեցան ելանել ընդդէմ նմա ի պատերազմ. եկին ի միասին եւ մտին ի բերդ մի փոքրիկ անմարտնչելի, որ ի բարբառս այլազգեաց անուանեցեալ է Քէչի-Գալէ, այս է՝ այծի բերդ: Լուաւ զայս աղուանն, եկն եւ պաշարեաց զնա: Իսկ որք ի ներքս էին, յամրութիւն բերդին յուսացեալ՝ ոչ կամէին գալ ի հնազանդութիւն, այլ մարտնչէին:

Տեսեալ զօրագլխին աղուանից, որոյ անունն էր Չըլալ, զի ոչ ինչ հնար գոյր յաղթելոյ նոցա, քանզի չունէին զգնտակաւոր դոքս ձգելոյ ի վերայ բերդին, խորհեցաւ պատրանօք զնոսա ըմբռնել: Եւ առաքեաց զայր մի ի պատգամաւորութիւն հրովարտակօք՝ խօսիլ ընդ նոսա բանս խաղաղութեան եւ ասել նոցա, թէ «Մի՛ երկնչիք, միայն հնազանդ լերուք մեզ, եւ մեք անվնաս թողումք զձեզ եւ ոչ թոյլ տամք ումեք չար առնել ձեզ»: Իբրեւ եհաս պատգամաւորն ի դուռն բերդին, առին զնա պարսիկքն ի ներքս, եւ տարան առաջի քաղաքապետին իւրեանց, որոյ անունն էր Խարակօզլու Քալբալի Ղասում աղա: Եհարց քաղաքապետն ցայրն եւ ասէ. «Չի՞ եկեալ ես դու առ մեզ»: Եւ նա ասէ. «Չգիր բերել եմ յիշխանէ մերմէ»: Եւ մատոյց նմա զգիրն: Իբրեւ ընթերցաւ զայն քաղաքապետն, յոյժ հաւանեցաւ բանից եւ կոչեալ զամենայն ժողովուրդ բերդին՝ ետ զգիրն ընթեռնուլ յականջս ամենեցուն: Եւ լուեալ՝ ամենեքեան հաւանեցան ընդ բանս պատրանաց գրոյն, եւ յանձն առին հնազանդիլ Չըլալին, եւ ելին արտաքս ի բերդէ անտի քաղաքապետին հանդերձ: Եւ քաղաքապետն եմուտ առ Չըլալ զօրագլուխն աղուանից, եւ նա առ երեսս ընկալաւ զնա պատուով եւ ինդութեամբ, եւ հրամայեաց զգեցուցանել նմա զպատուական պարեգօտ, եւ նստոյց զնա առ իւր: Եւ այնպէս մինչեւ ցերիս աւուրս սիրով եւ քաղցրութեամբ զնա եւ զժողովուրդն պահեր, եւ խոստանայր արձակել, մինչեւ ամենայն ժողովուրդն ելին ի բերդէ անտի: Եւ յետ այնորիկ հրաման ետ զօրաց իւրոց կոտորել զամենեսին: Եւ կոտորեցին զնոսա եւ ոչ զոք ի նոցանէ ապրեցուցին: Եւ ել անտի Չըլալ իշխանն աղուանից զնալ ի վերայ Թաւրիզոյ:

Իբրեւ լուաւ Ռամազան փաշայն, որ յայնժամ տիրեր Յամատանայ, ամրացոյց զՅամատան զօրօք: Քանզի աղուանն յառաջագոյն դիմելոց էր ի վերայ Յամատանայ,



որ է ի մի կողմն, եւ ապա անցանել գնալ ի վերայ Թաւրիզու: Ի ժամանակին, յորժամ օսմանցին զԹաւրեզ էառ, աղուանն զՅամատան ոչ էր առեալ, այլ անդէն ի Շօշ նստեալ: Արդ աղուանն ի դիմելն իւրում երթալ ի Յամատան՝ եկն ի եհաս ի քաղաք մի Դեր-Կազին անուանեալ, յորում կային քառասուն հազար տունք: Եւ բնակիչք քաղաքին յայլ ուստեք էին ածեալք ի վաղուց ի շահ Աբբասէն, որք եւ աղանդով համաձայնք էին ընդ աղուանից, իսկ ի պարսից տարածայնէին, որպէս եւ օսմանցիքն: Եւ ի սակս այսորիկ դիմեաց աղուանն յուսով մեծաւ հնազանդեցուցանելոյ զնոսա եւ զնպաստութիւն մեծ ընդունելոյ ի նոցանէ: Իբրեւ եհաս անդ, մեծաւ յօժարութեամբ ընդ առաջ ելեալ նմա՝ ընկալան զնա հպատակութեամբ, զի ասացին, թէ, «Աղուանքն ընդ մեզ զմի աղանդ ունին եւ ոչ են իբրեւ զպարսիկս»: Չտեղի էառ անդ աւուրս ինչ եւ յետ նուաճելոյ զքաղաքն ամենայն՝ զգերդաստանս նոցա ամենեցուն եհաս անտի եւ առաքեաց երթալ բնակիլ ի Շօշ քաղաքի: Եւ զընտիր ընտիր պատերազմօղ երիտասարդս նոցա սպառազինեաց ընդ իւր երթալ ի վերայ Յամատանայ:

## Ը

Յորժամ Չըլալ զօրագլուխն աղուանից բազում զօրօք մերձենայր հասանիլ ի Յամատան, ազդ եղել Ռամազան փաշային Յամատանայ, եւ ել ընդդէմ նորա զօրօք ի դաշտն Լալին անուանեալ՝ պատերազմիլ ընդ նմա: Ի պարտութիւն մատնեցաւ Ռամազանն եւ փախեաւ եմուտ ի քաղաք անդ, եւ այլ ոչ ել արտաքս: Յառաջ խաղաց աղուանն եւ եկն մարտնչիլ ընդ քաղաքին, բայց ոչ կարաց մերձիլ ի բերդն, այլ ի բացեայ յաւուրս բազումս նստեալ պաշարեաց զքաղաքն: Իբրեւ ետես զի առանց դրբի եւ հրազէն զնտակաց ոչ էր հնար առնուլ զնա, զի ոչ ունէր ընդ իւր զայսպիսի գործիս, եթող զնա եւ դարձաւ զնաց ի Ֆալիան: Չտեղի էառ անդէն եւ ոչ եւս համարձակեցաւ երթալ ի վերայ Թաւրիզու:

Իբրեւ լուաւ Աբդուլլա փաշայն Թաւրիզու, թէ աղուանն յետս դարձաւ ի Յամատանայ, գրեաց առ սուլտանն իւր, թէ «Աղուանն յետս դարձաւ ի Յամատանայ յաւելուլ զզօրս եւ դարձեալ յարձակիլ ի վերայ նորա եւ յետ այնորիկ գալ ի վերայ Թաւրիզու»: Յայնժամ սուլտանն զչորս սուրհանդակս յղեաց առ Յասան փաշայն հրովարտակօք՝ ասել նմա, թէ «Կացուցի զքեզ զօրագլուխ զօրացն, որք են ի կողմանսդ յայդոսիկ, եւ հրաման ետու զօրաժողով լինիլ եւ երթալ ի վերայ Յամատանայե:

Իբրեւ ի միտ էառ Յասան փաշայն զբանս հրովարտակին, ձեռն էարկ զմեծ բազմութիւն զօրաց կուտել: Է ցեղ մի քրդաց բաշիլան անուանեալ, ազգ ժպիրի, այլադէմ, գազանասիրտ, արիւնարբու, որոց տեսիլ երեսացն՝ զտեսօղն պակուցանէ: Առաքեաց առ ազգս այս ի եւ էառ ի նոցանէ զետօն հազար սպառազէն զրահաւոր: Է եւ ազգ մի մարջանի արաք անուանեալ, եւ ի սոցանէ էառ զուրթն հազար քաջամարտիկ: Է եւ ազգ մի արբիլաւանդ կոչեցեալ, եւ ի սոցանէ էառ զչորեքտասան հազար: Արդ զտոսա ի վերայ իւրոց հնգետասն հազարացն յաւելեալ՝ եւ այլ եւս՝ եղեն չորս բիւր երեք հազար չորեք հարիւր պատերազմօղ սպառազէնք: Եւ ինքն Յասան փաշայն էր այր ահարկու, դաժանատեսիլ, անզութ, յորմէ ամենայն ոք սարսեր: Եւ յետ աւուրց այսպիսի պատրաստութեան իւրոյ, չու արար ամենայն զօրօքն հանդերձ, խաղաց զնաց եւ եհաս ի գաւառն, որ յայլազգեաց բարբառս Չաղով կոչի: Ընկալաւ զնա Ահմետ բէկն Չաղովու բազում շքով. եւ եղել նմա մնալ անդէն ամիսս երկուս: Եւ հրամայեաց Ահմետ բէկին տալ յիւրոց անտի զօրս իբրեւ երկու հազար չորեք հարիւր: Եւ նա ոչինչ կարաց ապուսել նմա յերկիւղէն, այլ զերկուս արս յիւրաքանչիւր տանէ առեալ՝ հաւաքեաց զերիտասարդս իբրեւ հնգետասան հազար, ամենեքեան

գրահաւոր ծիւղորեալ եւ այլ զինու զարդու վառեալք ի պատերազմ. որք յաւելան ի զօրս Յասան փաշային, եւ բովանդակն եղև վաթսուն եւ ութ հազար չորեք հարիւր: Ապա ել ի Չաղովոյ գնալ ի Յամատան, եւ հասեալ ի գաւառ մի Քասրա անուանեալ՝ զտեղի եառ աուրս ինչ: Անտի գնաց ի Գիրենդ եւ ի Գիրինդոյ ի Յառնավայ, ի Յառնաւոյ ի Մայտաշ, եւ ի Մայտաշոյ ի Քրմանշա, եւ անդէն եհար զնա տեր եւ հիւանդացաւ, ուր եւ մեռաւ իսկ յետ եօթն աւուրց:

Եւ զօրն այնուհետեւ ոչ կարաց խաղալ անտի: Եւ էր նորա որդի մի Ահմետ անուամբ. զսա հրամանատար իւրեանց կացուցանել կամեցան ամենայն զօրքն: Եւ վասն սմին իրի խորհուրդ արարեալ մեծամեծքն՝ հրովարտակս առաքեցին ի Կոստանդնուպօլիս առ սուլտանն՝ ծանուցանել նմա զմահն զօրագլխին իւրեանց: Եւ վաղվաղակի զչորս փառաւոր սուրհանդակս հրովարտակօք առաքեաց առ նոսա ասել, թէ «Չորդի Յասան փաշային, որ է Ահմետ փաշայ, կացուցի ի տեղի հօր նորա՝ երթալ ի վերայ Յամատանայ»: Եւ ել ի Քրմանշայէ Ահմետ փաշայն, որդի Յասանին, ամենայն զօրօքն երթալ ի Յամատան: Խաղաց զնաց եւ եհաս, բանակեցաւ ի տեղի մի, ուր գոյ մեծ իջեվան մի Բեսթուն կոչեալ՝ ի Շիսալի իշխանէ շինեալ: Եւ անտի գնաց ի Սահանա, որ է աննման, գեղեցիկ քաղաք մի: Անտի գնաց ի Քանկավառ, որ է աշտարակաւոր գիւղաքաղաք մի եւ եգիտ զնա ամայի, զի բնակիչք նորա պարսիկք ամենեքեան փախուցեալք էին յերկիւղէ ասպատակչաց: Եւ անտի անցեալ զնաց ի Սայդավա, որ է քաղաք փոքրիկ: Յայսմ վայրի ընդդէմ ելին նմա պարսիկքն, թեպետ եւ սակաւք էին. մարտ եղեալ պատերազմեցան ընդ նմա զԺԱ [11] օր եւ անկան սրով սուսերի: Եւ օսմանցին եառ զքաղաքն եւ ասպատակեաց զնա: Եւ յետ նուաճելոյ զայն բերդն՝ ել ի ճանապարհ՝ հասանիլ ի Յամատան:

Եւ զի անտի ճանապարհն յոյժ սարելից էր եւ դժուարագնաց, ոչ կարէին զմեծամեծ թօփսն ընդ այն ճանապարհ տանիլ: Չվաթսուն թօփ ունէին, եւ էր ի նոսա յոյժ մեծագոյն թօփ մի, զոր բարբառով իւրեանց Ասլանթօփ կոչէին. զսա մանաւանդ ոչ կարէին տանիլ: Վասն այսորիկ ոչ գնացին ընդ այն ճանապարհ, այլ դարձան յետս եւ ընդ այլ ճանապարհ երթեալ՝ հասին ի գեօղ մի Լակլար անուանեալ, որոյ գիւղականքն յոյժ աղքատք էին: Մատեան սոքա առ փաշայն եւ ողբով մեծաւ ծանուցին նմա զտառապանս եւ զթշուառութիւնս իւրեանց: Գթացաւ ի նոսա փաշայն, եւ թոյլ ետ ումեք խուել զոք ի նոցանէ. եւ կոչեալ զմի ոմն ի յանուանի զինուորաց իւրոց, որ էր սեբաստացի, ի հայոց ազգէ, ուրացեալ, նմա ետ զամենայն գիւղօրես գաւառին այնորիկ եւ պատուիրեաց նմա պահել զգուշութեամբ եւ ինսամարկել: Ելին անտի օսմանցիքն եւ գնացին հասին ի գիւղաքաղաք մի Սալիայվա անուանեալ, եւ նորա բնակիչքն փախուցեալ յերկիւղէ ասպատակչաց ի Յամատան ամրացեալք էին: Եւ յետ բնակելոյ իւրոյ ի տեղուջն եւ կալոյ իննսուն օր՝ ետես փաշայն, զի պարսիկք Յամատանայ ոչ յարձակեցան ընդդէմ իւր:

Եւ յետ վեց աւուրց յառաջ խաղաց օսմանցին եւ եհաս ի տեղի մի, որ յայլազգեաց բարբառս Եէնկի-չայ անուանի, կէս ժամու ճանապարհաւ հեռի ի Յամատանայ: Յայնժամ Ռամազան իշխանն Յամատանայ զզօրս իւր վառել եւ պատրաստեալ ի պատերզմ՝ ել նոքօք արտաքս ի քաղաքէ անտի եւ յարձակեցաւ ի կռիւ: Եւ պատերազմն եղև ի դաշտին Լալին անուանեալ: Եւ զօրքն պարսից, որք ի Յամատան էին, ըստ պատմելոյն ոմանց՝ էին իբրեւ երեք հարիւր հազարք: Ի դիմի հարաւ օսմանցին պարսիցն, որք ի Յամատանայ յարձակեցան ի վերայ իւր, եւ եհար զնոսա սրով սուսերի եւ հրագինաւ: Երիցս անգամ զօրն պարսից յարձակեցաւ ի քաղաքէ անտի ի վերայ օսմանցոց եւ ոչ կարաց յաղթել նոցա եւ փախուցեալ յետս՝ եմուտ ամրացաւ ի քաղաք անդ:

Եւ օսմանցին յառաջ մատուցեալ զգօրսն պաշարեաց զքաղաքն ի չորից կողմանց: Եւ կառոյց զամենայն դօրսն ընդդէմ քաղաքին եւ սկսաւ հրդեհել եւ քակտեալ զամենայն փայտակերտ շինուածս քաղաքին, եւ զյիսուն եւ չորս աւուրս պատերազմեալ՝ ոչ կարաց առնուլ զքաղաքն: Եւ եղել ի յիսուն եւ հինգերորդում աւուր, որ օրն էր երկուշաբթի, օսմանցին ի չորից կողմանց քաղաքին յառաջ մղեաց զգօրսն՝ միսիլ ի քաղաք անդ եւ այլ ո՛չ մնալ արտաքս: Եւ ահա այն ամենայն բազմութիւն անթիւ զօրացն աղաղակաւ մեծաւ յառաջ մխտցեալ՝ զերկիր թնդացուցին եւ հասին ի տակ պարսպին, զի ի ներքս մխտցին: Եւ խնեցան առ յատակաւ պարսպին մարդ ի վերայ մարդոյ, եւ որք ի բերդին էին զօրք, զամենայն հրազէնս իւրեանց միանգամայն հեղեալ ի վերայ խոցա՝ տապաստ արկին զայնչափ բազմութիւն խոցա միանգամայն վաղվաղակի, իբրեւ զտերեւս ծառոց ի սաստիկ խիստ կարկոտոց: Եւ տկարացան խոցա աղարտել զպարիսպն եւ կամ ի վեր ելանել: Եւ դարձան յետս եւ հեռացան ի պարսպէ անտի, եւ գնացին ի բանակս իւրեանց: Եւ հանդես արար փաշայն զօրաց իւրոց եւ ետել, զի երկուտասան հազարք ի խոցանէ անկեալ էին յայնմ արշաւանի: Յրաման ետ զդօրսն անդադար արձակել եւ զաւուրս ԻԵ [25] զԿ [60] դօրս արձակելին եւ այնու եւս ոչ կարացին զքաղաքն առնուլ: Ապա խորհեցաւ փաշայն ական հատանել առ պարսպին եւ զբարութ լցեալ անդ՝ զգետինն եւ զպարիսպն միանգամայն պատռել:

Եւ էր ի գօրուն ի հայոց ազգէ ոմն կարուակ Ղարա-Բիբար անուամբ, կարնեցի, որ քան զայլ ականահատսն առաւել հմուտ էր գործոյն եւ ճարտար: Մատեաւ սա առ փաշայն եւ խօսեցաւ ընդ նմա վասն իրիս այսորիկ: Եւ հրաման ետ նմա փաշայն՝ յառաջադէմ եւ գլուխ լինիլ ականահատացն: Եւ ի մետասան աւուրս արարին եւ վճարեցին զականն. լցին ի ներքս զբարութ եւ պատրաստեցին, որ ինչ պիտոյ էր ի նոյն: Եւ եղել յաւորն ուրբաթու, յետ ամենայն պատրաստութեանց՝ սաստկացուցին զպատերազմն եւ յանկարծակի հուր լուցեալ ի բարութն՝ հրդեհեցին: Եւ պատահեցաւ ականն եւ միանգամայն պարիսպն, եւ կես բերդին ել յերկինս: Եւ վաղվաղակի յառաջ փութացեալ զօրացն օսմանցուց՝ ի բերդն գեղան եւ զազանաբար յարձակեալք՝ կոտորեցին սրով սուտերի զամենայն ընդ առաջ ելեալսն: Եւ փախեաւ իշխան քաղաքին յանձանօթս եւ գերծաւ: Իսկ զունդք զօրաց բերդին եւ մեծամեծք խոցա, որք էին Ալի-Շահբաս, Ալի-Քրբիթ, Ալի-Յասան բէկն, ի նախանձ բարկութեան բրդեալք ի տեղիս տեղիս պնտեցան ի կռիւ, մարտ եղին ընդդէմ զօրացն օսմանցուց: Եւ իբրեւ անյոյս ի կենաց՝ խստագոյնս պատերազմեցան զաւուրս եօթն յետ պատահելոյ պարսպին, այլ ոչ կարացին զբերդն եւ զանձիս իւրեանց ապրեցուցանել:

Կոտորեցին զնոսա օսմանցիքն եւ առին յաւար զստացուածս քաղաքին, զոսկի եւ զարծաթ անհամար բազում: Մանաւանդ զի ի քաղաքին յայնմիկ յաճախութիւն վաճառականաց լինէր: Եւ զընչաւետ վաճառականս, յկովապաշտ մլթանիս բազմութիւնս գտեալ ի պանդոկս՝ կոտորեցին եւ զանհամար դրամս խոցա, զորս ի յարկեղ, զորս ի պահանորդս ետ զորս ի ներքոյ սփռոցաց գտեալ՝ առին եւ լցեալ եղեն: Եւ այնչափ էր յաճախութիւն դրամոց ի պանդոկս, մինչեւ աստ եւ անդ սփռեալ կային եւ ժողովելով ոչ սպառէին: Եւ եղել իբրեւ կոտորեցին զամենայն ընդդիմամարտսն, բուռն հարին զանգէնսն գերի վարել. եւ գերեցին զանհամար անձինս, զկանայս եւ զերիտասարդս, զպատանիս եւ զօրիորդս. իսկ զժերս եւ զմատաղ մանկունս, իբրեւ ծանրացուցիչս անձանց իւրեանց՝ կոտորեցին: Յասին գերիչքն յեկեղեցին եւ գտեալ անդ զբազումս ի հայոց ազգէ ապաստանեալս՝ գերի առին զնոսա ընդ որս հաճեցան, եւ կոտորեցին յորս ոչ անխայեցին ապրեցուցանել: Եւ լցաւ ամենայն բանակն խոցա աւարաւ եւ գերեօք: Իբրեւ վախճան եղել այսչափ եւ այլ բազում չարեաց խոցա, հրաման ետ փաշայն զդիակունս կոտորելոցն ի քաղաքէ անտի ի բաց հանել, զի քաղաքն մի՛ նեխտցի: Եւ հանին զնոսա ի քաղաքէն եւ լցին ի բացի:

Եւ էին զօրուն օսմանցւոց համատանցի վեց մեծամեծ վաճառականք, որք ընդ փաշային յերկրէն օսմանցւոց եկեալ էին եւ էին արք անուանիք. անուն միոյն մահտեսի Յարութիւն, երկրորդին՝ Մատթեոս, երրորդին՝ Մանասէ, չորրորդին՝ Մասեհ, հինգերորդին՝ Վարդան, վեցերորդին՝ Պետրոս: Սոքա մտին առ փաշայն եւ աղերս արկեալ առաջի նորա, խնդրեցին զգերիսն զայնսիկ, որք ի Յայոց ազգէ են, ազատ արձակել, ասելով, թէ «Մեք ի վաղ ժամանակաց հետէ բովանդակ ազդաւ մերով ծառայք եմք հարկատու, ուր եւ իցեմք յիշխանութեան ձերում: Եւ դուք էք տիրօղք եւ ինամարկուք ազգին մերոյ. եւ արդ ձեր եմք մեք եւ ընդ տէրութեամբ եւ ինամօք ձերովք կեցեալ ծառայք եմք եւ պարծիմք ի տէրութիւն ձեր: Եւ արդ յայսպիսի աւուրս մեծի յաղթութեան քոյ, ընդ որ յոյժ ուրախանամք, շնորհեսցես մեզ զնոսա, որք յազգէ մերմէ են, վասն կենաց քոց, զի ամենայնիւ ուրախ լիցուք ի մեծի ցնծութեան աւուրս այսորիկ»: Ընկալաւ զաղաչանս նոցա փաշայն եւ հրամայեաց ի բաց արձակեալ զամենայն հայ գերիսն եւ եղև նոցա ուրախութիւն մեծ: Բայց ոչ ամենեցուն եղև ազատիլ, զի ոմանք թողին ազատ, եւ ոմանք՝ ոչ: Արդ, Ահմետ փաշայն ամ մի նստաւ ի Յամատան եւ յետ այնորիկ առաքեցաւ ի Բաղտատ:

## Թ

Յամին հազարերորդի հարիւրերորդի եօթանասնեւվեցերորդի հայկազեանս թուականի [1727], Ահմետ սուլտանն օսմանցւոց զՂարա Մուստաֆայ փաշայն առաքեաց նստիլ ի Յամատան եւ Ահմետ փաշային հրամայեաց ելանել ի Յամատանայ եւ երթալ ի Բաղտատ, այն ինքն է՝ Բաբիլոն: Յայնմ ամի հրեշտակս առաքեաց աղուանն առ Մուստաֆայն ասել, թէ «Յամատան մեզ անկ է առնուլ, եւ ընդէ՞ր դուք բռնացեալ ի վերայ երկրիս պարսից՝ առիք զայն: Եւ արդ դարձուցէք մեզ զայն իրաւամբ, ապա թէ ոչ, մեք ելանեմք ի վերայ ձեր եւ առնումք զայն սրով մարտի»: Յայնժամ փաշայն հրովարտակս առաքեալ առ սուլտանն իւր՝ զեկոյց նմա զբանս զայս, եւ նա պատասխանի արար նմա, թէ «ՉԱհմետ փաշայն փութանակի բազում զօրօք առաքեցից ի վերայ աղուանին»: Եւ վաղվաղակի առաքեաց զհրովարտակ առ Ահմետ փաշայն, թէ «Կացուցի զքեզ ընդհանրական զօրագլուխ՝ երթալ ի վերայ աղուանից եւ ահա առաքեմ առ քեզ զերեսուն փաշայ»: Յայնժամ ձեռն էարկ Ահմետ փաշայն զզօրս կուտել եւ մինչեւ հասեալ էր Լ [30] փաշայիցն առ նա, զբազում զօրս հաւաքեաց ի բաբելացւոց: Իշխան ոմն էր յայնմ տէրութեան Շէյխ Նազըր անուանեալ. սա զԻԴԸ [24.000] վառեալ սպառազէն եհան յիւրմէ. ամենեքեան արաբք: Եւ յետ չորից ամսոց հասին առ նա Լ [30] փաշայքն զօրօք իւրեանց, եւ թիւ զօրաց նորա եղեն երեք հարիւր հազար յամենայն տեսակաց զինուորաց ի զանազան ազգաց յօսմանցւոց, ի մարաց, յասորեստանեայց, ի բաբելացւոց, յարաբացւոց եւ ի յայլ խառնաղանջից՝ մեծաւ բազմութեամբ:

Եւ յետ կատարելոյ ամենայն պատրաստութեանց մարտի՝ ել Ահմետ փաշայն ի Բաբիլօնէ ամենայն զօրօքն, չուեաց, խաղաց գնաց տալ պատերազմն ընդ աղուանից եւ եհաս բանակեցաւ ի տեղի մի, ուր էր գեղ մի Ղզրաբատ անուանեալ: Եւ անդ բաժանեաց զզօրսն յերիս առաջս, զի յոյժ բազում էր, եւ կարգեաց զանազան ճանապարհաւ գնալ, եւ ինքն՝ ընդ միում ի նոցանէ: Չորքս ոչ էառ ընդ իւր, զի զդրքսն, զօրս զառաջինն ունէր, ի Յամատան թողեալ էր, յորժամ էառ զնա եւ ամրացոյց. նա՛ զի հարկ եղև փութանակի տազնապաւ ելանել հասանիլ ի վերայ աղուանիցն: Եւ ի ճանապարհ առնելն նորա եհաս առ նա հրովարտակ ի Մուստաֆա փաշայն՝ աճապարել հասանիլ յօգնութիւն ի Յամատան եւ ասէր, թէ «Աղուանն մերձ է հասանիլ, պաշարել զմեզ»: Եւ յայնմ բանէ ստիպեալ փութացոյց զընթացսն եւ անցեալ ընդ բազում գաւառս՝ եկն եհաս եմուտ ի գաւառն Յամատանայ եւ բանակեցաւ ի տեղի

մի Չաֆրան անուանեալ: Լուաւ Մուսթաֆա փաշայն զհասանիլն Նորա եւ ել ընդ առաջ Նորա բազում խմբից զարդարելոց պատրաստութեամբ եւ այնպէս մեծաւ շքով ընկալաւ զնա: Բայց նա ի Յամատան ոչ կամեցաւ մտանել, այլ արտաքոյ ի տեղի մի, ուր մերձ է գետոյ մի Լալին անուանեալ, անդ բանակեցաւ: Հրեշտակս առաքեաց առ աղուանն՝ ազդ առնել նմա վասն պատերազմին: Եւ Նորա կալեալ զհրեշտակն՝ եղ ի դիպահոջ երկաթի կապանօք: Չայն լուեալ փաշային՝ ել փութանակի զնալ ի վերայ աղուանիցն: Եւ եկն եհաս ի Մարանդ, եւ տակաւին աղուանն ոչ ել ի պատերազմ: Եւ եւս զնաց յառաջ եւ եհաս ի տեղի մի ի մէջ Ֆալիանայ եւ Շանգվանայ եւ մնայր աղուանացն գալ: Եւ այնչափ բազում էր զօրն օսմանցոց՝ մինչեւ զմիմեանս չճանաչել:

Եւ յետ վեց աւուրց՝ անդէն մնալոյ Նոցա՝ եկն աղուանն բազում զօրօք եւ ճակատեցաւ ընդդէմ Նոցա: Եւ ի պատահիլն միմեանց երկոցունց կողմանց՝ յառաջնում Նուագի յաղթեցաւ աղուանն եւ ի փախուստ դարձաւ: Բայց յերկրորդում Նուագի յարձակելոյ Նորա ի վերայ օսմանցոց ճակատուն՝ եհար զնոսա եւ փախստական արար մինչեւ ի Յամատան: Եւ քթմնջիւն էր ի զօրուն: Ոմանք ասէին, թէ «Տեսանեաք, զի հուր յերկնից տեղայր ի վերայ մեր»: Այլք ասէին, թէ «Թեւաւոր օձք բազումք յարձակէին ի վերայ մեր»: Կեսքն ասէին, թէ «Երկիրն ծովացեալ երեւեր առաջի մեր ի պատերազմին»: Եւ այսպիսի ցնորիւք խռովեալ էր բանակն օսմանցոց: Իսկ զպատճառն խռովութեանս այսորիկ ոմանց ի պատմողաց զայս ասեն լեալ, զի սուլտանն աղուանից հմուտ էր յոյժ արհեստին մոզութեան եւ սովաւ հարեալ զզօրն օսմանցոց՝ ապշեցոյց զնոսա ցնորիւք: Բայց արդ, թէ ճշմարտիւ արար աղուանն զդիւթութիւն ինչ, թէ ոչ, անստոյգ է: Այլ մեք զայլ հաւանական պատճառս ունիմք, եւ է այս ինչ, զի աղուանքն ոչ են իբրեւ զպարսիկս, այլ մի են աղանդով ընդ օսմանցոց: Եւ վասն այսորիկ յորժամ պատերազմ լինի ի մէջ սոցա, եւ զօրն օսմանցոց տեսանէ, թէ պատերազմն այն ոչ է ի վերայ քաղաքի, յորմէ յաղթութեամբ իւրեանց յուսայցեն աւար առնուլ զստացուածս եւ գերել զկանայս եւ զմանկունս, խղճեն սուր արձակեալ ի վերայ Նոցա եւ ի փախուստ աճապարեն: Եւ կամ թէ կեղծաւորին խղճել՝ ասելով ընդ միմեանս, թէ «Նոքա աղանդակից եղբարք մեր են, եւ զիա՞րդ ոչ խղճեսցուք հարկանել զնոսա»: Ի վերայ այսորիկ էր եւ այս, զի աղուանից սուլտանի հայրն Էմիր անուանեցեալ էր եւ ինքն անտի հայրանունական անուամբ Էմիր-վէիզ մականուանեալ էր: Չոր լուեալ ամբոխին՝ համարէին թէ իսկապէս Էմիր է, այսինքն ի զարմէ կնտոյն իւրեանց սերեալ, զոր մեծապէս պատուեն եւ ոչ ամբառնան զձեռս ի վերայ այնպիսոյն առանց արհամարհանաց կնտոյն: Ուստի զօրքն, որք զնախասացեալ ցնորսն պատմէին միմեանց, ասէին թէ «Վասն այսորիկ այսպիսի զարհուրելի տեսիլք եղեն, զի Էմիր է նա, եւ մեք հակառակ նմա եղեալ մեղաք, եւ ոչ յաջողի մեզ յաղթութիւն»: Եւ անդ որպէս մեզ թուի, ստուգագոյն պատճառն այս եղել ի փախուստ դառնալոյ Նոցա:

Իբրեւ ետես Ահմետ փաշայն այսու օրինակաւ ամենայն բանակն իւր խռովեալ եւ սրտաբեկ, լքաւ, լուծաւ զօրութիւն սրտի Նորա, եւ հատաւ ի յուսոյ յաղթութեան զործոյ: Եւ խորհուրդ արարեալ ընդ մեծամեծս իւր՝ հրովարտակս գրեաց Նոքօք հանդերձ՝ առաքեալ ի Կոստանդնուպօլիս առ սուլտանն, ծանուցանել նմա զանցս պատերազմին իւրոյ, միանգամայն եւ զխռովութիւնն եւ զքթմնջիւն զօրացն, եւ ցուցանել նմա զվտանգն կոտորման զօրացն եւ ինդրել զիրաման հաշտութիւն առնելոյ ընդ աղուանից: Անսաց սուլտանն եւ հրաման ետ առնել զհաշտութիւն: Ապա Ահմետ փաշայն առաքեաց առ սուլտանն աղուանից զդեսպան՝ ասել նմա, թէ «Սուլտանն մեր հաճեալ է առնել ընդ ձեզ զհաշտութիւն»: Ընկալաւ սուլտանն զդեսպանն օսմացոց բազում պատուասիրութեամբ եւ յետ հաստատելոյ զդաշն խաղաղութեան, առաքեաց եւ ինքն դեսպան զոմն ի մեծամեծաց իւրոց, որում անունն է Բլուշ Մահմետ, եւ

հանդերձեաց գնա մեծագին ընծայիլք, պատուական ակամբք եւ մեծ փողով միով՝ երթալ ի Կոստանդնուպօլիս առ մեծ սուլտան օսմանցւոց: Եւ եղեւ ամենլ դեսպանին զերկար ճանապարհ երթալով ընդ կողմն Բաքիլօնի, եւ անտի ընդ Ասորեստան եւ ապա ի Յունաստան, ի բազում տեղիս զբազում աւուրս իջեվան արարեալ, յամեաց: Եւ մինչ (չ)եւ եր ժամանեալ ի Կոստանդնուպօլիս, մեռաւ Էմիր Վեիզ սուլտանն աղուանից, եւ նստաւ ի տեղի նորա Աշրաֆ սուլտանն. զի Միւրվէիզն, որ ըստ իւրում համբաւոյ չարաշուք կախարդ էր, հարեալ եղեւ ի դիւաց՝ ընկալաւ յնստուծոյ զպատուհասն իւր եւ այսահարեցեալ, ինքնին ծամեր զիւր միսն եւ այնպէս սատակեցաւ:

Արդ մինչդեռ հեռի էր դեսպանն ի հասանելոյ ի Կոստանդնուպօլիս, հրովարտակ տհաս նմա յԱշրաֆ սուլտանէն, թէ «Փութասչիր փութով հասանիլ ի Կոստանդնուպօլիս, եւ մի՛ յամիցես անդ, այլ փութանակի դարձ արա գալ, զի Թամազ որդին շահի ի Խորասան զօրաժողով եղեալ դիմէ գալ ի վերայ մեր»: Եւ նա անդէն վաղվաղակի, թողեալ զփիղն եւ զայլ ծանրութիւն աղիսիցն աճապարեաց գնալ փութով, եւ եկն տհաս ի Կոստանդնուպօլիս եւ ընկալեալ եղեւ մեծաւ պատուով եւ բազում երեւելի սպասուք ընդ առաջ ելանելով նմա: Եւ մտեալ դեսպանն առ սուլտանն՝ մատոյց զընծայսն իւր, եւ յոյժ հաճոյ եղեւ նմա ընծայքն: Եւ ետ նմա պարգեւս մեծամեծս եւ պատուեաց զնա խիլայիլք: Եւ ամենեցուն որք նորայքն էին, պարգեւս եւ ռոճիկս ետ իւրաքանչիւր ըստ արժանեաց: Ունէր ընդ իւր զհարիւր ձիաւորեալ աղուանս եւ զհնգետասան ճախրագործ ճարտարս ի հայոց յազգէ: Քանզի, ըստ որում պատմեցին մեզ, ի վերայ ուղտուց կազմեալ կառուցեալ ունէին զմանր դոբս, որոց իւրաքանչիւրն տանէր զարճիճս միակէս լտերս: Եկաց դեսպանն ի Կոստանդնուպօլիս զաւուրս վաթսուն եւ ապա դարձ արար ի գնալ Շօշ առ տէրն իւր:

Ընդ այն բազում ժամանակս, յորս լնոյր զընթացս դեսպանութեան իւրոյ, բազում անցք անցին ընդ աղուանսն, որք ի Շօշ կային: Քանզի Էմուր-վեիզ սուլտանն նոցա, որ դժնդակ կախարդ էր, ըստ որում համբաւիւր, հարեալ ի դիւաց այսահարեցաւ եւ ինքնին զմիսն ատամամբ ծուատելով սատակեցաւ: Եւ ի տեղի նորա նստաւ շահ Աշրաֆն: Յետ այսորիկ շահ Թամազն ի ձեռն Ղուլի խանին հզօրացեալ ի վերայ աղուանից՝ Էառ ի նոցանէ զՇօշ: Վասն այսորիկ դեսպանն իբրեւ եկն տհաս ի Յամատան, զիր տհաս առ նա ի Շօշայ, թէ շահ Թահմազ որդի շահ Յուսէինին եկն Էառ զՇօշ եւ կոտորեաց զաղուանից զօրսն: Եւ վասն գուժիս այսորիկ այլ ոչ կամեցաւ ի Շօշ գնալ, այլ անդէն եկաց յաւուրս բազումս: Եւ զի ինքն էր իշխան մեծ, որպէս ի վերագոյնդ պատմեցաք, ընտրեաց խորհրդով ընծայել զանձն ի հպատակութիւն շահ Թահմազին ոչ երթալ առ սուլտանն աղուանից: Եւ գնացեալ առ շահն՝ շնորհս եգիտ ի նմանէ եւ առ նա մնաց, եւ ետ նմա շահն զառաջին իշխանութիւնն իւր:

Այլ թէ ոչ շահ Թամազն որպէս Էառ զՇօշ, պատմեմք յառաջիկայ գլուխդ:

## Ժ

Որպէս ի վեր անդր ի սկզբան վիպասանութեանս այսորիկ պատմեցաք, շահ Թամազ որդի Յուսէին շահին ձեռն Էարկ զաթոռ թագաւորութեան հօր իւրոյ, որ յաղուանից յափշտակեցեալ էր, յետս դարձուցանել: Այլ ի պատճառս երկպառակութեանն, զոր աղուանն Էած ի վերայ, իշխանք թագաւորութեանն այնորիկ լուծեալք ի կապից միութեան գլխոյն՝ յանձինս իւրեանց բաժանեցան, եւ ոմանք նուաճեցան ընդ տէրութեամբ աղուանից: Եւ անյուրետեւ շահ Թամազին, որ գլուխ լինելով նոցա իրաւամբ ժառանգութեան՝ կոչէր զնոսա իբրեւ զանդամս ի միութիւն եւ ի

ձեռնատուութիւն, ոչ հնազանդէին, եւ վասն այսորիկ նա իբրեւ գլուխ մի լուծեալ յանդամոց՝ ոչինչ զօրեր առնել: Սակայն ետ ամաց ինչ աշխատ լինելոյ նորա ի սոյն՝ ինամօք Տեառն ամենայնի, որ զամենայն պետութիւնս թէ հաւատացելոց իւրոց եւ թէ անհաւատից ըստ հաճոյից կամաց իւրոց տնտեսէ, յաջողեցաւ նմա ի ձեռն միոյ յիշխանաց նորա, որոյ անուններ Թամազ դուլի, այր բարեբաղդ ըստ անցաւոր կեցադոյս եւ այր խոհական ըստ աշխարհիս եւ քաջ պատերազմօղ ի մանկութենէ:

Եւ եղև յամին հազարերորդի հարիւրերորդի եօթանասն եւ եօթներորդի հայկազեանս թուականի [1728] լուաւ շահ Թամազն զԹամազ դուլի խանի քաջամարտիկ լինելոյն, առաքեաց կոչեաց զնա առ իւր, եւ կացոյց զնա զօրավար ամենայն զօրաց իւրոց՝ երթալ ի վերայ Շօշայ ի մարտ: Պատասխանի ետ նմա Ղուլի խանն եւ ասէ. «Յանձն առնում ես զայս հրաման քո յօժարութեամբ. բայց զինչիւր մի ունիմ ի քէն, զոր թէ առնիցցես, ապա եւ ես յօժարութեամբ կարեմ ձեռն արկանել ի գործդ այդ. իսկ եթէ ոչ՝ ոչ կարեմ: Եւ այս ինչ է ինչիւրն, զի տացես ինձ զբացարձակ իշխանութիւն ի վերայ ամենայն իրաց թագաւորութեանդ, եւ դու միայն աթոռով պիտոյ ի վերոյ եղեալ՝ ի գործ ինչ մարտի ինքնին մի՛ ձեռն արկցես, այլ զամենայն՝ ինձ յանձնեալ թողցես»: Յօժարեցաւ Թամազն ընդ այս, վստահեցաւ ի հաւատարմութիւն նորա եւ շնորհեաց նմա զոր ինչորեաց: Ապա Թամազ դուլին հանդէս արար զօրացն, հազարաւոր սպառազինաց իւրոց, կարգեցաւ, պատրաստեցաւ ելանել ի պատերազմ ընդդէմ աղվանից եւ զամենայն որ միանգամ ապստամբեալ իցէ յիշխանութենէ թագաւորութեանն պարսից, նուաճել ի հնազանդութիւն, եւ որք ոչ հնազանդեսցին, կորուսանել:

Հասաներ ի վերայ իւրաքանչիւր քաղաքաց եւ գաւառաց, նուաճեր զնոսա եւ զապստամբսն կոտորէր: Եւ եկն նա մինչեւ ի Շօշ քաղաք եւ բանակեցաւ ի դաշտին, որ մերձ է քաղաքին միոյ ճանապարհաւ: Լուաւ վասն նորա Աշրաֆ սուլտանն աղուանից, եւ ել ընդդէմ նմա բազում զօրօք: Ի դիմի հարան միմեանց գաւուրս բազումս, եւ զդաշտն ծածկեցին դիակամբք: Յաղթահարեցաւ աղուանն եւ ի փախուստ դարձեալ՝ ի քաղաք անդ ամրացաւ: Եւ Ղուլի խանն յառաջ խաղացեալ եկն առաջի քաղաքին եւ պահեր զնա յաւուրս ինչ: Ապա ի գիշերի միում, մինչդեռ սպասեր Ղուլի խանն յարձակելոյ նորա միւսանգամ, ելին նոքա զանխլաբար ի քաղաքէ անտի ընդ դուռն, որ յայլ կողմն քաղաքին էր, եւ փախեան բազում աւարաւ զանձուց քաղաքին յաշխարհն իւրեանց: Իսկ Ղուլի խանն ձեռն էարկ մարտնչիլ ընդ քաղաքին եւ տեսանէր, զի հակամարտութիւն ինչ ի քաղաքէ անտի ոչ լինէր: Ապա հրաման ետ զօրացն՝ մերձենալ ի պարիսպն եւ ի դրունս քաղաքին եւ դարձեալ տեսանէր, զի ի ներքուստ ոչ ոք երեւէր: Խորտակեցին զդրունսն եւ ի ներքս զեղեալ՝ տեսին, զի ոչ ոք էր, եւ ծանեան, զինչ գործեալ էր աղուանն: Ահա այսու օրինակաւ առեալ եղև քաղաքն Շօշ: Եւ շահ Թամազն նստաւ յաթոռ թագաւորութեան հօր իւրոյ:

Իսկ աղուանից սուլտանն, որ փախուցեալ էր, հասեալ էր ի Շերազ քաղաք, ուր էին երկու ոմանք յիշխանաց իւրոց, որոց միոյն անունն էր Չըլալ եւ երկրորդին՝ Չաֆրան: Սոքա ունէին զզօրս մինչեւ զվեց հազար: Չաֆրան երեք աւուր ճանապարհաւ այսր քան զՇերազ էր, ի վերայ Աբուգուրան անուանեալ գետոյն բանակեալ, որ ի Բաղդիարու առ Շերազով անցեալ գայ: Եհաս, յարձակեցաւ ի վերայ նորա Ղուլի խանն, եւ կոտորեաց զզօրս նորա սրով սուսերի. եւ ինքն մագապուրծ գերծեալ փախեաւ: Եւ մինչդեռ անցանէր ընդ կամուրջ մի, հասին նմա զօրքն Ղուլի խանին, եւ նա ընկեց զինքն ի գետ անդ եւ եւ եանց ջուրն եւ գերծաւ: Իսկ Ղուլի խանն յառաջ խաղացեալ զօրօքն հանդերձ՝ եկն Եհաս ի Շերազ քաղաք, բայց ոչ միտեցաւ ի ներքս մտանել, այլ փոքր մի ի բացեայ բանակեցաւ: Ազգ եղև աղուանին գալուստ Ղուլի



խանին, ել արտաքս զօրօքն իւրովք, եւ դիմի հարաւ նմա: Եւ եղել անդ պատերազմ սաստիկ. ի պարտութիւն մատնեցաւ աղուանն եւ փախեցաւ յերեսաց Ղուլի խանին:

Այլ շահ Թամազն իբրեւ նստաւ յաթոռ թագաւորութեան հօր իւրոյ, հրեշտակս առաքեաց առ սուլտանն օսմանցոց հրովարտակօք՝ ասել նմա, թէ «Տուր ինձ զքաղաքս իմ, զորս առեր ի ժամանակս բռնաւորութեան աղուանին. զի այժմ ես աջողութեամբ Տեառն, հարի վանեցի զաղուանն յերկրես, առի զՇօշ, եւ դարձաւ յիս իշխանութիւնն հօր իմոյ»: Նովին օրինակաւ հրովարտակս առաքեաց ի ձեռս հրեշտակաց իւրոց առ արքայն մօսկովաց՝ խնդրել ի նմանէ զԿիլան: Անփոյթ արար սուլտանն օսմանցոց փութով պատասխանի առնել շահ Թամազին, զի յայնժամ ոչ կամէր զքաղաքսն, զորս մարտիւ էառ, անդէն ձրի դարձուցանել: Իսկ մօսկովն պատասխանի արար շահ Թամազին այսպէս. «Ես վասն յասպատակչաց պահպանելոյ զքաղաքսն քո՝ զբազում ծախս արարեալ, առի զԿիլան, եւ մինչեւ ցայժմ պահեցի, եւ այժմ պատրաստ եմ տալ զնա ցքեճ, յորժամ զայն ամենայն ծախս վասն նորա առ ի մէջն արարեալ՝ հատուցանիցես, եւ վասն իւրաքանչիւր ամի ութսուն հազար թուման, ի վերայ այնորիկ յաւելեալ զտոկոսին, վճարիցես»: Յանձն էառ շահ Թամազն զասացեալ պարտսն վճարել: Եթող մօսկովն զԿիլան եւ գնաց յերկիր իւր, եւ հաստատեաց զդաշն խաղաղութեան ընդ պարսից, զի շահ Թամազն վասն իւրաքանչիւր ամի յապաղելոյ վճարման պարտուցն զութսուն հազար թուման վճարիցէ:

Իսկ Ղուլի խանն յետ վճարելոյ գործոյն, որ առ Շերագով, ել անտի եւ գնաց ի վերայ Եզդու, զի եւ անդ բազում աղուանք էին: Եւ Թամուր անուամբ ոմս փաշայ օսմանցոց էր ի մէջ նոցա: Սա իբրեւ լուաւ թէ Ղուլի խանն գայ ի վերայ աղուանիցն, խոյս ետ, ել ի միջոյ աղուանից հարիւր հեծելովքն իւրովք, որք էին հարիւր սպառազէնք, եւ փախուցեալ գնաց մինչեւ ի Յամատան, ուր դեռ եւս կային օսմանցիք: Բայց ոչ եմուտ ի Յամատան, այլ աներեալ բերդ մի մերձ քաղաքին գոյ Չահտարան անուանեալ, զնա ամրացուցեալ անդ նստաւ ճովն [100-ովն] հանդերձ:

Այլ Ղուլի խանն ելեալ ի Շերագու զօրօքն հանդերձ՝ գնաց ի վերայ Եզդու, եւ մարտեալ ընդ աղուանից, եւ եհար զնոսա սրով սուսերի, եւ որք կարացին փախչիլ, նոքա միայն ապրեցան: Եւ նստաւ Ղուլի խանն յԵզդ գաւուրս ԻԸ [28]: Յետ այնորիկ դարձ արար՝ գնալ ի Շօշ: Իբրեւ լուաւ Թամազ շահն զգալուստ նորա, առաքեաց սուրհանդակս ընդ առաջ նորա՝ ասել ցնա, թէ «Լոռն, այսինքն զօրն Բաղդիարայ հզօրացեալ՝ զգիւղօրես մեր ասպատակէ եւ գերի վարէ. երթ ի վերայ նորա»: Լուաւ Ղուլի խանն եւ ճանապարհ արարեալ զչորեքտասան անուրս՝ եհաս անդ, եւ մարտեալ ընդ բաղդիարացիսն եւ եհար զզօրս նոցա սրով սուսերի: Չայս իբրեւ լուաւ շահ Թամազն, յոյժ ուրախ եղել եւ խիլայս փառաց առաքեաց Ղուլի խանին:

Յետ այնորիկ Ղուլի խանն առաքեաց առ շահ Թամազն ասել, թէ «Դեմ եղեալ եմ գնալ ի վերայ Դեսվէլ Շուշտարայ»: Չի Դեսվիլայ եւ Շուշտարայ ազն ասպտամբեալ յիշխանութենէ պարսից՝ հակառակ կային եւ զԻ2 [26] գիւղօրես ասպատակեալ եւ գերեալ էին: Յայնժամ գրեաց առ նա Թամազ շահն, թէ «Ընդ ամենայն տեղիս, որք միանգամ հակառակք եւ վնասակարք են տերութեանս մերում՝ ջնջեսցես»: Գնաց, եհաս Ղուլի խանն ի Դասվէլ-Շուշտար եւ մարտեալ ընդ ազգին այնմիկ գաւուրս չորեքտասան եւ յաղթահարեաց զնա, եւ զբազումս կոտորեաց սրով սուսերի եւ խաղացոյց զգետս արեան եւ զԺԵԴ [15.000] տուն գերի վարեաց եւ առաքեաց ի Խորասան, որ ի լեզուս այլոց ազգաց Մաշատ կոչի: Իբրեւ գիտակ եղել գործոյս այսմիկ շահ Թամազն, ուրախութիւն մեծ եղել նմա եւ հրամայեաց զքաղաքն ամենայն կերպասիւք եւ բեհեզօք զարդարեալ, եւ գաւուրս բազումս զհանդէս ուրախութեան

ամենի: Մանաւանդ աստի եղել պատճառն մեծի կոտորուածոյ երկուց ազգացս այսոցիկ, այսինքն է՝ բաղդիարացւոց եւ Դասսիլ-Շուշտարացւոց, զի յառաջ սոքա միաբան լեալ՝ օգնականք էին միմեանց, եւ յետոյ ի պատճառս նենգութեան իրիք եղելոյ առ միմեանս՝ խռովեցան: Եւ յորժամ Ղուլի խանն ել ի պատերազմ ի վերայ լոցա, նոքա անմիաբան լեալ՝ ոչ եղեն միմեանց օգնականք: Եւ Ղուլի խանն ԷՌ [7.000] զօրօք միայն գնոսա մի առ մի, սակաւ առ սակաւ կոտորեաց:

Եւ յետ յաղթութեանցս այսոցիկ Ղուլի խանն առաքեաց առ շահ Թամազն՝ գիտակ ամենի գնա գործոց իւրոց եւ ասել նմա, թէ «Կամիմ երթալ ի վերայ օսմանցւոց»: Թամազ շահն ոչ կամեցաւ զայս, այլ պատասխանի արար նմա շահ Թամազն, թէ «Ես հրեշտակս առաքեալ եմ առ նոսա՝ ասել թէ զքաղաքս մեր, զորս ի ժամանակս ձախորդութեանց մերոց յափշտակեցիք ի մենջ, դարձուցէք յետս, ապա թէ ոչ՝ պատասխանի ինչ արարէք մեզ: Եւ արդ բազում աւուրք են, յորմէ հետէ սպասեմ լրոյ յայնմ կողմանէ եւ չեւ եւս ընկալայ: Ակն կալցուք փոքր մի եւս եւ պատրաստեսցուք զօրս երթալ ի վերայ լոցա»:

## ԺԱ

Չկնի ի սպառ վանելոյ Ղուլի խանին զաղուանսն յաշխարհէն պարսից՝ հրեշտակս արձակեաց շահ Թամազն ի Կոստանդնուպօլիս առ օսմանցին հրովարտակօք հանդերձ, ի բաց պահանջել զքաղաքսն, զորս յափշտակեցին նոքա յիշխանութենէ իւրմէ: Արդ ի ժամանակին յայնմիկ փաշայ էր Յամատանայ Աբտրահիման անուամբ ոմն: Ազդ եղել նմա, թէ Ղուլի խաննն զզօրս ժողովէ գալ ի վերայ Յամատանայ. եւ առաքեաց փութանակի ի Կոստանդնուպօլիս հրովարտակս առ սուլտան Ահմետն՝ ասել նմա, թէ «Պարսիկն պատրաստեալ է գալ ի վերայ մեր ի մարտ»: Պատասխանի արար նմա սուլտանն, թէ «Պատրաստ լեր ընդդէմ կալ նմա, եւ ահա ես առաքեցիք քեզ զօրս ի թիկունս»: Ապա առաքեաց հրովարտակ առ փաշայն Յամթայ ժողովել զօրս եւ գնալ ի Յամատան: Եւ նորա ժողովեալ զզօրս ի Մուշ գաւառէ ի մարաց ազգէ, վարժս սրոյ, երեսուն եւ երիս հազարս: Չու արար, խաղաց գնաց ի Յամատան, եւ յաւելեալ ի զօրսն, որք անդ էին, եղեն քառասուն եւ հինգ հազար: Իսկ սուլտանն օսմանցւոց ընկալեալ զդեսպանս պարսից՝ պահեր ի դիպահոջ, եւ ոչ փութանակի առնէր բանից հրովարտակին պատասխանի, մինչեւ՝ որ ինչ պիտոյ իցէ մարտի, պատրաստեսցի: Այլ Աբտրահիման փաշայն Յամատանայ դարձեալ գրեաց առ սուլտանն, թէ «Սակաւ է զօրն մեր եւ ոչ բաւէ ընդդէմ զօրացն պարսից»: Եւ գրեաց առ փաշայն Եդեսիոյ (որ է Ուրհա), առաքել զզօրս ի Յամատան: Եւ նորա ժողովեալ զթօթն հազար զինուորս ի մարաց սիկարեանս, եւ կացուցեալ լոցա զօրագլուխ զոմն, զոր Թօխմախ անուանէին, առաքեաց ի Յամատան: Իբրեւ հասին անդ, հրաման ետ Աբտրահիման փաշայն լոցա երթալ ի տեղի մի, զոր Նահավանդ ասեն, երեք աւուր ճանապարհաւ հեռի յՈւլուկերտոյ պարսից քաղաքի:

Իբրեւ ազդ եղել Ղուլի խանին, թէ օսմանցին զդեսպանն իւրեանց ի դեսպահոջ կալեալ պահէ, ստուգեաց ի միտս իւր, թէ օսմանցին խաղաղութամբ ոչ տայ ի բաց զքաղաքս, զորս Էառ, այլ պատրաստի ի պատերազմ, յաւել եւ ինքն ժողովել զզօրս բազումս: Եւ ել գնաց ի յՈւլուկերտ, որ մերձ է Նահավանդու երից աւուրց ճանապարհաւ, եւ անդ էր բանակն օսմանցւոց: Չաւուրս 29 եկաց անդ, եւ ոչ եղել լոցա ազդ առնել միմեանց վասն պատերազմի: Ապա Ղուլի խանն առաքեաց առ Աբտրահիման փաշայն Յամատանայ՝ ասել նմա, թէ «Խաղաղութամբ տուք մեզ ի բաց զՅամատան, զոր առիք ի մենջ ի ժամանակի վրդովման թագաւորութեանս մերոյ, ապա թէ ոչ՝ մեք մեզէն եկեալ առնումք պատերազմաւ»: Եւ առաքեաց Աբտրահիմանն

ասել նմա, թե «Ժուժեա ինձ գաւուրս Ժ [10], եւ ես այդմ բանի պատասխանի արարից»: Չայս յայն սակս ասաց, զի Ալի փաշայն, որ ի ժամանակին յայնմիկ երկրորդ էր սուլտանին օսմանցոց, գիրս ի ծածուկ առաքեալ էր առ եւ առ Իբրահիմ փաշայն Թաւրեզու, եւ առ Յիւսէին փաշայն Սիւնի կամ Սինու, թէ «Յորժամ Ղուլի խանն գայ պաշարէ զքաղաքն, տուք նմա զքաղաքն խաղաղութեամբ եւ մի մարտնչիք»: Եւ այսմ սուլտանն ոչ էր գիտակ: Եւ վասն այսորիկ այսպիսի բաիւք ժամանակ պայմաներ, որպէս զի նա ի յանցանել ժամանակին վառեալ ի պատերազմ եկեսցէ զօրօք, յանդիման լիցի քաղաքին եւ ապա ըստ բանի գրելոյ վեզիրին՝ տացէ զՀամատան: Իստ պատճառն այսպիսի ծածուկ տալոյն զհրաման՝ այս էր, զի եթէ յայտնապէս գայս հրամանս տայցէ վեզիրն, ընդվզեալ յառնէին ընդդէմ նմա եւ հարկէին զսուլտանն դատապարտել զնա, եւ եթէ ոչ, զնա եւս յաթոռոյ իջուցանէին: Վասն այն ի ծածուկ արար նա զհրամանս գայս:

Իսկ Ջին Հասան փաշայն Քրմանշայու եւ Թամուր փաշայն, զորմէ յառաջ քան գայս կարգեալ զլուխդ պատմեցաք, թէ զՉահտարանայ բերդն ամրացուցեալ նստաւ, ոչ գիտէին, թէ այսպիսի ծածուկ հրաման եղեալ ի վեզիրէն, զի սոքա ոչ էին հնազանդուք եւ մտերիմք վեզիրին. վասն այսորիկ առ սոսա ոչ գրեաց զանյախի գիր: Ապա Աբտըրահիման փաշայն առաքեաց, կոչեաց զԹամուր փաշայն գալ ի Համատան: Եւ նա որ յայնժամ ունէր զօրս իբրեւ վեց հազար, եկն ի Համատան զօրօքն հանդերձ: Եւ եղեւ յաւուր միում, յորժամ խորհուրդ առնէին փաշայքն, ասէ Թամուրն ցԱբտրահիմանն, թէ «Հանցուք զամենայն դոբսն բերդիս այսորիկ եւ մեր զօրօք ելեալ արտաքս՝ յառաջ խաղասցուք ի վերայ բանակին պարսից, յանկարծակի յարձակիցուք ի վերայ նոցա, եւ կարճեսցին նոքա այնուհետեւ գալ պաշարել զբերդս մեր»: Պատասխանի ետ Աբտրահիման փաշայն, թէ «Ոչ կարեմք գայդ առնել, զի ոչ գոյ մեզ հրաման ի սուլտանէն եւ կամ յերկրորդէն՝ զդոբս ի բերդէս հանել եւ կամ ինձ ընդ առաջ զնալ Ղուլի խանին եւ մարտնչիլ: Ինձ գրեալ սուլտանին, թէ կաց մնա՛ դու ի բերդիդ, եւ եթէ եկեսցէ Ղուլի խանն, յայնժամ յղեա՛ ընդդէմ նմա զԹամուր փաշայն վեց հազար զօրօք ի մարտ, իսկ դու մնա՛ ի ներքս եւ զբերդն պահեա»: Եւ յետ վճարելոյն խորհրդոյն՝ առաքեաց զԹամուր փաշայն վեց հազար զօրօք ընդդէմ Ղուլի խանին, որ մերձ էր ի Համատան հասանիլ:

Գնաց Թամուր փաշայն եւ եհաս ի տեղի մի մերձ Ուլուկերտոյ, եւ բանակեցաւ առ ջրովն, որ երկրին բարբառով Աբիմուշ է անուանեալ: Լուաւ Ղուլի խանն զգալուստ նորա, եւ եկն ճակատեցաւ ընդդէմ նմա երկոտասան հազար զօրօք ընտիր պարսկականօք: Եւ զերիս ժամս պատերազմեալ կոտորեցին զմիմեանս: Ի պարտութիւն մատնեցաւ զօրն Թամուրայ եւ ի գիշերայն փախուցեալ եկն ի Համատան: Իսկ ինքն Թամուրն աճապարեալ զնաց ի բերդի իւր, զոր Չահտարան ասեն, որպէս ի վերագոյն պատմեցաք: Իբրեւ ետեւ Աբտըրահիման փաշայն գայսպիսի էլս պատերազմին եւ զփախուստ Թամուրին, ի նմին գիշերի առեալ զկանայս իւր եւ զուստերս եւ զդստերս իւր՝ էլ ի Համատանայ եւ փախեաւ ԽԵ [45] հազար զօրօքն: Իբրեւ առաւօտ եղեւ, եւ ոչ մի ոք յօսմնցոց մնաց ի քաղաքի անդ, այլ ամենեքեան ցրուեցան: Ղուլի խանն զառաջինն երկնչէր ի Թումարէն, թէ մի՛ գուցէ դարձեալ զօրաժողով լինիցի եւ աշխատեցուցէ զինքն, պնտեցաւ զհետ նորա մինչեւ ի բերդն Չահտարան՝ ձեռքակալ առնել զնա: Այլ նորա փախստական եղեալ անտի՛ զնաց ի Թաւրեզ, որ յայնժամ դեռեւս ի ձեռս օսմանցոց էր: Եւ ոչ կարաց Ղուլի խանն զնա ըմբռնել: Գիր ինչ անկեալ էր ձեռս Թամուրին, յորում գրեալ էր ի վեզիրէն առ Աբտըրահիման փաշայն Համատանայ եւ առ այլ երկու փաշայսն, թէ «Ի գալ Ղուլի խանին ի վերայ քաղաքիդ, թողէք զդա նմա եւ դուք խոյս տուեալ ի նմանէ՛ մի՛ մարտնչիցիք»: Չայս գիրս Թամուրն ի ծածուկ առ ինքն պահեալ՝ ոչ ինչ ասաց եւ ոչ

եցոյց փաշային Թաւրիզոյ, մինչեւ յերկու ամիս: Իսկ Ղուլի խանն եկեալ հասեալ ի Յամատան՝ եզիտ զնա այնպէս լքեալ, եմուտ ի ներքս: Եւ այսու օրինակաւ Էառ զքաղաքն զայն: Եւ զաւուրս բազումս, զորս եւ գտանէին յօսմանցոց ազգէ, կալեալ բերէին առ Նա, եւ Նա հրաման տայր սպանանել, եւ կոտորէին:

Ապա գտին պարսիկքն զհինգ քրիստոնէայս, որոց չորքն էին յազգէ հայոց, եւ մինն յասորոց. որք յօսմացոց երկրէ եկեալ էին, ոմն ի Բաբելոնէ, որ կոչիւր Սարուխան, ոմն ի Կարնոյ, որ կոչիւր Ղարա-Բիբար, որ եւ ականահատ լեալ էր, ոմն մուշեցի՝ Թոռուն անուանեալ, ոմն կոստանդնուպօլսեցի՝ Յանա կոչեցեալ, եւ այլ ոմն նիւուեացի՝ Աբդի անուանեալ. եւ սա էր ասորի: Սոքա էին վաճառականք, եւ մնացեալ էին ի քաղաքի անդ. եւ գտին զնոսա պարսիկքն՝ թագուցեալ ի տան կարգաւորացն ֆռանգաց, եւ ածին առաջի Ղուլի խանին: Յարց փորձ արար զնոսա Ղուլի խանն, թէ ուստի՞ եւ ո՞րպիսիք ոյք իցեն եւ զի՞նչ ունիցին: Նոքա վկայութեամբ ոմանց հաստատեցին, թէ «Վաճառականք եմք», եւ ցուցին նմա, թէ զինչ ապրանս բերեալ էին: Ապա հարց փորձ արար, թէ որքան դրամոյ էին ինչք իւրաքանչիւր իւրեանց: Պատասխանի ետ Սարուխանն, որ բաբելացի էր, եւ ասէ. «Ես զմետաքս եւ զայլ բազում ինչ բերեալ էի՝ առ ի վաճառել ի զօրս քո, եւ ոմն ի զօրուէդ Էառ յինէն զվեց քսակ փողոյ զմետաքսն իմ եւ զքսան եւ չորս քսակի զպանգար եաշմաղ եւ զվեշտասան քսակի սամուր, ղախում, սադրաջ, ճլղաւայ, ռեվանդ. եւ այժմ ոչ տայ ինձ ո՞չ զապրանս իմ եւ ոչ զզինս նոցա»: Ասէ Ղուլի խան. «Ճանաչե՞ս զնա արդեօք»: Պատասխանի ետ այրն, թէ «Այո, ճանաչեմ»: Յայնժամ հրաման ետ Ղուլի խանն, հրամայեաց գտանել զնա եւ բերել առաջի իւր: Եւ գտեալ ածին առաջի նորա: Եւ իբրեւ ստուգեաց թէ այնպէս է, որպէս ասաց վաճառականն, Էառ ի ձեռաց նորա զայն ամենայն եւ ետ տանիլ ի տուն իւր: Իսկ զհայ վաճառականն միսիթարեալ՝ ասաց. «Ես զքեզ ոչ սպանանեմ, այլ ազատ արձակեմ, զնա՛, ուր եւ կամիս. բայց զինչս քո ոչ տամ քեզ, զի զայն Աստուած ինձ ետ: Քնա՛ խաղաղութեամբ, եւ Աստուած տացէ քեզ դարձեալ»: Սոյնպէս եւ զինչս այլոցն ամենեցուն քրիստոնէիցն Էառ եւ յանձն արար զնոսա առն միում քրիստոնէի համատանցոյ ի հայոց ազգէ Մանասէ անուամբ, եւ հրամայեաց նմա զպիտոյս դարմանոյ նոցա տալ, ցորքան կացցեն ի քաղաքի անդ, եւ երբ ինդրեսցեն զնալ, արձակեսցէ զնոսա երթալ: Եւ Նա այնպէս արար. եւ յետ աւուրց ինչ ելեալ զնացին իւրաքանչիւրն յերկիր իւրեանց:

Արդ, Ղուլի խանն Նստաւ ի քաղաքի անդ զաւուրս ամսոյ միոյ: Եւ յետ այնորիկ ամեալ ընդ իւր զօրս իբրեւ հնգետասան հազար՝ չոգաւ առնուլ զՍիւն քաղաք եւ Էառ զնա: Եւ էին անդ բազում հրեայք ընչաւետք. կալաւ զնոսա եւ խոշտանգեալ զանիւր՝ Էառ ի նոցանէ երկու հարիւր յիսուն եւ վեց թումբն փող: Այլ եւ ի թուրքաց պարսից, որք յոյժ ընչաւետք էին, կեղեքեաց զնոսա. յոմանց Էառ զ20 թումբն, յոմանց զ30 թումբն յոմանց զ50, զ60, եւ յայլոց զ100, ըստ յաւել եւ ըստ նուազ ընչաւետութեան նոցա: Յետ այսորիկ զիշխանն Սիւնայ, որոյ անունն էր Սըփանվերտի, յոյժ կշտամբեաց, եւ կամեր սպանանել զնա դատաստանաւ: Զանգի ասաց, թէ «Յորժամ յարձակեցաւ օսմանցին ի վերայ գաւառացն մերոց, դու իշխան էիր եւ ընդէ՞ր ոչ ելեր ընդդէմ նմա ի պատերազմ առ պաշտպանութիւն գաւառացն, այլ ետուր նմա զքաղաքսն, եւ յաւեր եած զաշխարհն մեր»: Բայց յաղագս աղաչանաց ոմանց մտերիմ իշխանաց իւրոց շնորհեաց նմա զկեանսն, եւ Էառ ի նմանէ զերիս հազար թումբն փողս:

## ԺԲ

Յետ այսորիկ Ղուլի խանն եթող ի Սիւն քաղաքի զօրս իբրեւ երկու հազար ի պահպանութիւն, եւ ինքն ԺԸ [18] հազար զօրօք ել զնաց ի վերայ Թաւրիզոյ: Եւ եհաս

ի տեղի մի, որ երկրին բարբառով Սախրզ անուանի, եւ անտի մինչեւ ի Թաւրեզ վեց աւուր ճանապարհ է ի միջի: Եւ բանակեցաւ անդ զաւուրս երիս: Ազդ եղեւ օսմանցոց, թէ Ղուլի խանն մերձեալ է հասանիլ ի վերայ քաղաքիս: Յայնժամ Թամուր փաշայն եմուտ առ փաշայն Թաւրիզոյ եւ ասէ. «Ահա Ղուլի խանն գայ ի վերայ մեր, եւ որպէս լսեմք, մերձ է հասանիլ ի տեղիս այս. առցուք ի զօրաց քաղաքիս, ելցուք արտաքս, եւ մինչ չեւ եկեալ պաշարեալ է նա զքաղաքս, ի դիմի հարցուք նմա եւ վանեալ զնա ի բաց հալածեսցուք»: Հաճոյ թուեցաւ փաշային Թաւրիզոյ բանս այս, եւ սկսաւ կարգել, կազմել, վառել եւ պատրաստել զգօրսն:

Եւ մինչդեռ սոքա յայս պատահեալ էին, Ղուլի խանն յաւուրն երրորդի ի մտանել արեւուն վառեցաւ, կազմեցաւ, պատրաստեցաւ ամենայն զօրօքն եւ ել ի ձի եւ զվեց աւուր ճանապարհն զայն գիշեր եւ զվաղորդայն մինչեւ յօր հասարակ վճարեաց: Եւ այնպէս տագնապաւ ընթացաւ զճանապարհն՝ մինչեւ զարմանալ ամենեցուն. քանզի յանկարծակի տեսին զինքեանս ի սահմանս Թաւրիզոյ հասեալ: Եւ օսմանցիքն ոչ կարծէին զնմանէ այսպիսի ինչ լինիլ, եւ յանկարծակի տեսին զնա արդէն հասեալ առաջի քաղաքին, զոր համարէին թէ յետ վեց աւուր գալոց է: Ի քաղաքէ անտի ել ճակատն օսմանցոց պատերազմիլ ընդդէմ նմա, եւ ուղղեցան ի կողմն Մարանդու եւ բաղխեցան ընդ միմեանս երկոքին ճակատքն: Բայց փաշայն Թաւրիզոյ զանխլաբար խոյս տուեալ փախեաւ, եւ մնաց միայն Թամուրն վեց Ռ [6.000] զօրօք ի բերդին պատերազմիլ ընդդէմ Ղուլի խանին: Եւ զաւուրս եօթն խիստ պատերազմեցաւ ընդ Ղուլի խանին, զի էին ի զօրս նորա բազում զազանասիրտք եւ զօրաւորք ուժով, վարժք մարտի պատերազմի ի լուրիկեցոց եւ յառվանիդացոց եւ յայլ խուժադուժ ազգաց: Եւ զարմանալի էր այսչափ զդէմ ունիլն սոցա զայսչափ աւուրս, զի վեց հազ արք ընդդէմ ԺԸ [18] հազարաց կռուէին: Եւ եղեւ անկանիլ բազում զօրաց յերկոցունց կողմանէ:

Իբրեւ ետես Թամուրն, զի երեք հազարք ի վեց հազար զօրացն իւրոց կորեան, հատաւ նա ի յուսոյ յաղթութեան, եւ խորհեր թէ իւ իւիք զանձն ապրեցուցանել մարթասցի: Ապա հանդէս արար զօրաց իւրոց, խօսիլ սակաւ ընդ հազարապետս իւր եւ ասէ. «Դուք ինքնին տեսանէք, զի զօրն պարսից յոյժ բազմապատիկի առաւել քան զմերս է, եւ ոչ գոյ յոյս մեզ, թէ մեք այսչափ սակաւ զօրօք զքաղաքն զայս յերեսաց այնչափ պարսկական զօրացն ապեցուցուք: Եւ արդ յայսմիտետ ոչինչ օգուտ լինի, թէ մեք ի բերդի աստ փակեալ մնասցուք, քանզի որչափ եւ ընդդիմամարտիցուք, քաղաքս այս ելանէ ի ձեռաց մերոց: Եւ ընդէ՞ր զուր տարապարտուց զանձինս մեր կամակար մտօք կորուսանեմք. ելցուք ի բերդէս եւ յընդարծակ դաշտի մարտիցուք, եւ եթէ մեք սոցա յաղթեսցուք, կալցուք մեզ զսա, իսկ եթէ նոքա զմեզ յաղթեսցեն, փախիցուք յերեվան եւ զանձիս մեր ապրեցուցուք»: Հաճոյ թուեցաւ բանս այս հազարապետացն: Ապա Թամուր զերիս հարիւրս եթող ի բերդի անդ պահապանս, եւ ինքն այլ ամենայն զօրօքն ել արտաքս մարտնչիլ ընդդէմ Ղուլի խանին: Եւ էր ինքն արկեալ զիւրեւ զրահս երկաթիս, նոյնպէս եւ երիվար նորա ձրահիւք պատեալ: Ի դիմի հարաւ Ղուլի խանն երկու հազար ութ հարիւրով ընդ ԺԸ [18] հազարին: Եւ անկան ի զօրաց նորա բազումք, եւ ինքն երեք հարիւրով միայն փախեաւ դէպ յերեվան. եգիտ զփաշայն Թաւրիզու եւ կամեր ձեռս ամբառնալ ի վերայ նորա յաղագս միայն թողլոյ զինքն ի մարտի ընդդէմ Ղուլի խանին եւ փախչելոյն. այլ ոչ կարաց, քանզի փախեաւ:

Եւ եառ Ղուլի խանն զԹաւրեզ եւ զորս եգիտ ի զօրացն օսմանցոց, զամենեսեան կոտորեաց: Չամրոց մի արարեալ էր իր մէջ քաղաքին օսմանցին, զայն բոլորովին աղարտեալ հիմնայատակ արար: Եւ նստաւ ի քաղաքի անդ երկու ամիս, մինչեւ կուտեաց զօրս բազումս իբրեւ ԻԴ [24] հազար՝ ելանել զնալ ի վերայ Երեվանայ:

Այսչափ անցք անցին ընդ զօրս օսմանցոց, եւ քաղաքք ելին ի ձեռաց: Եւ թագաւորն օսմանցոց ոչ իմանայր, այլ միայն երկրորդն նորա. քանզի որպէս ի վերագոյնդ պատմեցաք, զայն հրովարտակն թոյլ տալոյ պարսկին առնուլ զքաղաքսն՝ ինքնին միայն առանց հրամանի սուլտանին առաքեալ էր առ երիս փաշայսն, եւ սուլտանն ոչ գիտեր:

## ԺԳ

Յորժամ զօրս ժողովէր Ղուլի խանն ի Թաւրեզ, եւ խորհէր զնալ ի վերայ Երեւանայ, որ ժԲ [12] աւուրց ճանապարհաւ հեռի է ի Թաւրեզոյ, լուր եհաս նմա ի Խորասանայ, թէ աղուանն զօրս ժողովեալ է գալ ի Յարաթու ի վերայ Մաշատու, եւ ունի զքառասու հազար մարտիկս: Իբրեւ ստուգեաց զքանս զայս, եթող զգնալն յԵրեւան եւ չու արար, խաղաց զնաց ի Մաշատ, որ է այն ինքն Խորասան պարսից: Եւ կացեալ անդ աւուրս ինչ՝ հանդէս արար զօրաց իւրոց եւ ել զնաց ի վերայ Յարաթու, որ է քաղաք աղուանից, որք անուանեալ կոչին սրաւուր աղուանիք գոռ պատերազմօղք: Եհաս մերձ Յարաթու Ղուլի խանն եւ բանակեցաւ: Ել ի Յարաթոյ աղուանն ընդդէմ Ղուլի խանին, եւ զԺԲ [12] աւուրս զցայգ եւ զցերեկ պատերազմեցան: Ապա աղուանն դարձեալ եմուտ ի քաղաք անդ եւ ոչ ել արտաքս յաւուրս ինչ: Եւ Յարաթն է յոյժ ամրագոյն քաղաք դժուարայաղթ: Եւ եղեւ նոցա բազում անգամ ի բերդէ անտի ելանել, յարձակիլ ի վերայ զօրացն պարսից, եւ ոչ կարացին յաղթել նոցա, այլ անկան սրով սուսերի:

Իբրեւ իննսուն եւ մի օր եղեւ պաշարման քաղաքին, նուագեցաւ կերակուր նոցա, եւ սով սաստիկ եղեւ՝ մինչեւ զմիմեանց միսն ուտել: Ազդ եղեւ Ղուլի խանին վասն այնպիսի անցիցն նոցա, եւ հրաման ետ զօրուն՝ մի՛ հարկանել զոք յաղուանից, յորժամ ելանեն արտաքս ի բերդէն եւ մտանեն ի բանակս առնուլ զկերակուր: Եւ ապա նեղեալ նոցա ի սովու՝ սկսան սակաւ առ սակաւ գալ շրջիլ ի բանակն եւ զանձինս իւրեանց յագեցուցանել: Եւ ոչ զոք խուէին զինուորք Ղուլի խանին, այլ խաղաղութեամբ ընդունէին զնոսա, եւ նոքա գային ի բանակն եւ երթային, մինչեւ զօրագլուխն նոցա եւս եկն արտաքս, եւ կալան զնա եւ ածին առաջի Ղուլի խանին: Եւ նա ընկալաւ զնա եւ ետ զգեցուցանել նմա ծիրանիս ի պատիւ, եւ բազում շքով ունէր զնա առ իւր: Եւ այսպիսի խորագիտութեամբ եւ պատրանօք էառ զՅարաթ քաղաքն: Եւ կալեալ զմեծամեծ իշխանսն՝ բանիւք խաղաղութեան եւ քաղցրութեան յինքն անկոյց զնոսա եւ մեծացոյց, եւ արար իւր զօրապետս: Իսկ զգերդաստանս քաղաքին ոչ գերեաց եւ ոչ ասպատակեաց, այլ զնոսա տունս տունս առաքեաց, սփռեաց զնոսա ի զանազան քաղաքս պարսից: Եւ զօրս աղուանիցս այսոցիկ հնազանդեցոյց իւր զօրս լինիլ: Յետ այսորիկ կացոյց իշխան ի վերայ Յարաթու զոմն ի յիւրոց անտի, եւ ինքն եթող զնաց ի Մաշատ, որ է այն ինքն Խորասան, եւ անդ եկաց:

Ընդ այն ժամանակս յաշխարհէ Օզբէկաց յարուցեալ էր այր մի, որ իբրեւ զաւազակ շրջեալ ասպատակէր զբազում զաւառս եւ կոտորէր սրով, եւ Օզբէկայ թագաւորն զնա ոչ կարացեալ էր ըմբռնել: Եւ եղեւ նմա գալ մտանել ի սահմանս Խորասանայ պարսից: Վասն սորա լուեալ էր Ղուլի խանն, թէ է այր զօրաւոր պատերազմօղ, եւ զոր ինչ մի անգամ առնէր ի տեղիս տեղիս, կամէր զնա ձեռն արկանել: Իբրեւ լուաւ, թէ ահաւանիկ նա շրջի ի սահմանս Խորասանու, հանդերձեցաւ պատրաստեցաւ երեք հազար քաջ սպառազինօք եւ հասեալ ի վերայ նորա՝ կոտորեաց զզօրս նորա եւ զինքն ձերբակալ արար եւ եբեր ի Մաշատ. եւ էր ի կալանս զաւուրս յիսուն, եւ ապա սպան զնա: Իբրեւ լուաւ զայս Օզբէկի թագաւորն, ուրախ եղեւ:

## ԺԴ

Յետ այսորիկ Ղուլի խանն առաքեաց զդեսպան առ թագաւորն Օգբէկի հրովարտակօք հանդերձ՝ ասել նմա, թէ «Առաքեսցես մեզ զհազար թումեն փող, ապա թէ ոչ՝ պատրաստ լեր, զի գալոց եմ ի վերայ քոյ ի մարտ պատերազմ: Իբրեւ էառ թագաւորն զհրովարտակն այնպիսի բանից, կալաւ վաղվաղակի զայրն, որ դեսպան էր, եւ եղ յերկաթս ի դիպահոց: Լու եղեւ Ղուլի խանին, զոր ինչ արար թագաւորին Օգբէկի, եւ զօրս պատրաստեաց երթալ ի պատերազմ ի վերայ նորա:

Բայց աստանօր պատշաճ է մեզ յառաջագոյն գրել փոքր մի զեղելոց առ ի օսմանուոց, եւ ապա ըստ կարգի զայս սկսեալս պատմել: Թամուրն, որ առ Թաւրեզ քաղաքաւ պատերազմեր եւ փախեաւ, գտեալ էր դիպուածով իւրիք զայն թուղթն զոր գրեալ էր Ալի փաշայ վեզիրն օսմանցւոց սուլտանին առ փաշայն Թաւրիզու եւ առ այլ ոմանս, թէ «Յորժամ գայ Ղուլի խանն, տուք զքաղաքն եւ մի՛ պատերազմիք ընդ նմա»: Չայս զիրս նորա առեալ գնաց ի Կոստանդնուպօլիս, եւ մտեալ առ սուլտանն՝ եցոյց նմա, եւ թէ զքանի քաղաքս վասն հրովարտակիս այսորիկ ետուն պարսից՝ փաշայք քաղաքացն զեկոյց նմա, եւ զբազում ամբաստանութիւնս զփաշայիցն արար առաջի նորա: Իսկ սուլտանն, որ այսոցիկ ամենեցուն ոչինչ տեղեկութիւն ունէր, տիր զայրացաւ եւ հրաման ետ սպանանել զնա եւ զայլ ոմն կացոյց ի տեղի նորա: Չսոյն գործս վեզիրին իբրեւ իմացան ծառայք սուլտանին, այսինքն է՝ զօրքն ամենայն, բողոք բարձին առ սուլտանն, թէ «Մեք ոչ կամիմք զհաշտութիւն առնել ընդ պարսից, զի զհասարակաց սանն զինուորական դասուն մերոյ աւար առեալ նոցա՝ ի ձեռս նոցա կայ, եւ այս մեզ վատահամբաւութիւն եւ նախատինք մեծ է, զոր ոչ կարեմք տանիլ: Կամիմք զխազմ առնել ընդ նոսա եւ հանել զայն սանն ի ձեռաց նոցա»:

Յայնժամ սուլտանն վաղվաղակի առաքեաց զսուրհանդակս հրովարտակօք հանդերձ առ Ահմետ փաշայն Բաբիլոնի՝ ասել նմա, թէ «Կացուցի զքեզ ընդհանրական զօրագլուխ՝ երթալ ի պատերազմ ի վերայ Յամատանու»: Իբրեւ ընթերցաւ նա զհրովարտակն, ձեռն էարկ փութանակի զզօրս ի մի վայր խմբել, զվեց հազար մարտիկ սպառազէն, զերիս հազար սպահիս, զհինգ հազար արաբացիս, զվեց հազար մարս եւ զվեց հազար բաշիլանս եւ զայլ բազում խուժանս: Եւ եղեն ամենայն ընտրեալ սպառազէնքն իբրեւ ԻՉ [26] հազար վառեալք ի պատերազմ: Յանդերձեալ պատրաստեցաւ ամենայն պիտոյիւք մարտի, եւ էլ գնաց ի վերայ Յամատանու: Իբրեւ եհաս մերձ քաղաքին ի տեղի մի Լաբլար անուանեալ, անդ բանակեցաւ: Եւ սկսաւ զզօրսն կարգել, զախոյանս կառուցանել եւ զդրբսն ուղղիլ ընդդէմ քաղաքին, եւ ամենայն պատերազմական զօրօքն զնա պաշարել:

Ազդ եղեւ Թամագ շահին պարսից, որ ի Շօշ նստեր, եւ էլ նա հարիւր հազար զօրօք հասանիլ ի պաշտպանութիւն քաղաքին, մինչ չեւ ժամանեալ էր Ահմետ փաշայն անդ՝ զպաշարումն քաղաքին մատուցանել: Ընդ այն ժամանակս Ղուլի խանն էր ի կողմանս Խորասանայ. լուր եհաս նմա յաղագս գալստեան օսմանցւոյն: Եւ յառաջագոյն գրեաց նա առ Թամագ շահն՝ ոչ լինի ձեռնամուխ պատերազմելոյ ընդդէմ օսմանցւոյն, այլ մնալ գալստեան իւրոյ, քանզի գիտակ էր նորին վատասրտութեան: Եւ էր նա բանակեալ ի տեղի մի, որ Կարմիր սար կոչի: Իբրեւ ետես զի օսմանցին եկեալ հասեալ տեղի մարտին՝ ոչ տայ դուլ զօրուն, այլ յառաջ մղէ պատերազմիլ, ոչ անսաց բանից Ղուլի խանին, այլ վաղվաղակի յառաջ մատոյց զճակատն իւր ընդդէմ օսմանցւոց: Ի դիմի հարան միմեանց երկոքին ճակատքն եւ թացին զդաշտն արեամբ կտորրելոցն: Ի փախուստ դարձաւ զօրն շահ Թամագին, եւ անկան ի նմանէ ԼԸ [38] հազար սպառազէնք, եւ օսմանցին զօրացեալ յաղթեաց պարսիցն: Իբրեւ ետես շահն,



զի այնչափ զօրօք ոչ կարաց գդեմ ունիլ օսմանցոց, յետս դարձաւ գևալ ի Շօշ: Եւ հասեալ անդ՝ զՄայեար անուամբ խանն առաքեց ի դեսպանութիւն առ Ահմետ փաշայն, որ ընդհանրական զօրագլուխ էր օսմանցոց զօրուն, խօսիլ ընդ նմա ի խաղաղութիւն եւ տալ նմա զՅամատան եւ առնել զհաշտութիւն: Յանձն էառ Ահմետ փաշայն առնել զհաշտութիւն, եւ առեալ զՅամատան՝ հաստատեաց զդաշն խաղաղութեան: Եւ զոմն ի մեծամեծաց իւրոց Իբրահիմ անուանեալ, որ էր զօրագլուխ աջակողմեան թելին, իշխան կացոյց քաղաքին, եւ ինքն դարձ արար գևաց ի Բաբիլոն:

## ԺԵ

Ընդ այն ժամանակս Ղուլի խանն, որ խորասան էր, ընդ աղուանսն կռուէր: Քանզի արքայի աղուանն բռնացեալ դիմեալ էր գալ ի պատերազմ ի վերայ Շօշայ: Եւ Ղուլի խանն ընդդէմ ելեալ նմա ի ճանապարհին՝ ոչ թոյլ տայր գևալ հասանիլ ի Շօշ, եւ զաւուրս երեսուն եւ երկուս մարտեաւ ընդ աղուանից եւ կոտորեաց զնոսա սրով սուսերի մինչեւ ի սպառիլ զօրաց լոցա, եւ դարձաւ ի խորասան: Իբրեւ լուաւ զոր ինչ միանգամ արար շահն ընդ օսմանցիս, զհարդ վատութեամբ կորոյս զզօրս իւր եւ ետ զՅամատան ի ձեռս օսմանցոյն եւ դաշինս խաղաղութեան կռեաց ընդ նմա՝ յոյժ զայրացաւ, եւ զհնարս խորիէր ըմբռնել գևա եւ յարգելս դնել, որպէսզի իւր ձեռս մնացէ կառաւարութիւնն բովանդակ թագաւորութեանն: Քանզի տեսանէր, զի նա էր այր վատախորհուրդ եւ անարի կնատ ոմն, եւ ամենայն խորիւրդք եւ գործք նորա ոչ էին ի շինութիւն թագաւորութեանն, այլ ի յաւեր եւ ի կործանումն: Ապա Ղուլի խանն հանդերձեցաւ պատրաստեցաւ բազում զօրօք երթալ ի Շօշ: Եւ էր թիւ զօրաց նորա ԽԸ [48] հազար հեծելոց եւ վեց վեց հազար հետեւակաց: Եւ արար ամենեցուն զրահս երկաթիս, եւ յօրինեաց զամենեսեան զինու զարդու եւ ել ի խորասանայ՝ չու արար խաղաց եւ եկն եհաս ամենայն զօրօքն ի Շօշ: Բայց ոչ ի քաղաք անդ եմուտ, այլ ի բացեայ ի տեղի մի Աշրաւապատ անուանեալ, բանակեցաւ:

Մինչ չեւ եկեալ հասեալ էր Ղուլի խանն ի Շօշ, ոմանք ի մեծամեծաց շահին ասէին ցնա. «Տէ՛ր մեր արքայ, Թամազ խանն՝ որ դիմեալ է գալ առ քեզ, ո՛չ ուղիղ սրտիւ գայ. զի որպէս մեք լսեմք զնմանէ, եւ նորա գործքն եւ շարժումն յայտ առնեն, դիմեալ է նա գալ առ քեզ նենգութեամբ, արկանել զքեզ ընդ ձեռամբ եւ զթագաւորութիւն քո յափշտակել: Ո՞չ իմանաս, թէ որքան զօրօք գայ նա, եւ ընդէ՛ր այսքան բազմութեամբ զօրաց գայ, եթէ ուղիղ մտօք առ քեզ գայ»: Այսպիսի բանիւք բազում անգամ նախագուշակք եղեն նմա հորհրդականք նորա, այլ նա ոչ հաւատաց: Եւ բաց ի սոցանէ էր եւ այլ ոմն քրիստոնեայ իշխան ի հայոց ազգէ Դաւիթ բէկ անուանեալ, քաջ խորհրդական: Եւ սորա իմացեալ եւ իրազէկ եղեալ դաւոյ Ղուլի խանին եւ երկուցեալ ի մեծամեծ չարեաց, զորոց կասկածէր, թէ հասանելոց են ի վերայ շահին եւ թագաւորութեան նորա, յետ անցանելոյ երից աւուրց ի վերայ այնք բանից, ի գիշերի միում եմուտ առ շահն եւ սրտացաւութեամբ բարեկամութեան խոսեցաւ նմա ի ծածուկ առանձին եւ ասաց, թէ «Գիտասցի՛ր, տէ՛ր մեր արքայ, զի Ղուլի խանն ոչ ուղիղ մտօք գայ, այլ թշնամութեամբ, եւ մեք ստուգիւ տեղեկացեալ եմք, զի նա գայ ըմբռնել զքեզ եւ դնել յերկաթի կապանս, եւ զթագաւորութիւն քո ինքն գրաւել. եւ ահա նա մերձ է վաղիւ ի միւսում աւուր հասանիլ. եւ արդ, տե՛ս, թէ որպէս զգուշացիս ի նմանէ»: Յայսմ վայրի ապա միտք շահին զարթեաւ եւ սկսաւ մտախոհ լինիլ եւ ի յուղելոյ խորհրդոցն իւրոց եւ ի տազնապելոյ սրտի նորա՝ քունն հատաւ յաչաց նորա եւ ոչ կարաց ի քուն լինիլ զայն գիշերն ամենայն: Եւ իբրեւ առաւօտ եղէւ, հրամայեաց զամենայն իշխանս իւր ի դարպաս իւր կոչեալ եւ խորհեալ ընդ նոսա՝ հաստատեաց զմիտս իւր ամենայն զօրօքն իւրովք, զորս վասն մարտի ի պատրաստի ունէր ելանել արտաքս ի քաղաքէն եւ ի զգուշութեան կայ յերեսաց Ղուլի խանին, որ

գայր ի Շօշ յիսուն եւ չորս հազար սպառազինօք. եւ այնպէս արար: Եւ այսու օրինակաւ շահ Թամազն զառաջինն ի զգուշութեանց եկաց, բայց յետոյ ի մարդելոյ՞ շողոթորդութեանց ևորա պատրեցեալ ըմբռնեցաւ ի նմանէ, որպէս կարգաւ ունիմք պատմել:

Արդ իբրեւ եհաս Ղուլի խանն ի Շօշ եւ բանակեցաւ փոքր ինչ հեռի ի քաղաքէն, ազդ եղել նմա զոր ինչ արար շահն, եւ ի կասկածանս անկաւ, թէ յայտնեցեալ է նմա խորհուրդն իւր: Ապա իջեալ յերկվարցէ իւրմէ՝ հետի ընդ ոմանց իշխանաց իւրոց եկն յողջոյն շահին եւ անկեալ առ ոտս ևորա՝ վերերելոյթ խոնարհութեամբ եւ սիրով՝ երկիր եպագ նմա եւ ասաւ. «Չի՞ է, տէ՛ր իմ արքայ, զի այսպէս բացօթեայ եղեալ ես. մի՞ գուցէ վասն իմ զբան ինչ չարութեան սուտ լուեալ՝ երկուանաս զհաւատարմութենէ իմմէ. որ թէ այսպէս է, գիտասջի՛ր, տէ՛ր իմ, զի թշնամոյ է բանդ այդ: Չի ես որպէս ի սկզբանէ միամտութեամբ սրտի ծառայ էի տեսնն իմում եւ զամենայն հրամանս քո կատարեի, եւ ուր զինչ առնել առաքեիր զիս՝ երթեալ առնելի, նոյնպէս եւ այժմ առ ոտս քո եկի, զի զոր ինչ եւ հրամայիցես ինձ, զնոյն արարից: Քանզի ես ինձէն առանց հրամանի տեսնն իմոյ ոչ ձեռնամուխ լինիմ յինչ, այլ յամենայնի ըստ հրամանաց քոց զնամ: Եթէ հրամայես ինձ ի ևորասան գնալ՝ ի ևորասան երթամ, եւ եթէ ի Ղազուին՝ ի Ղազուին. իսկ եթէ ի վերայ օսմանցւոյն՝ ի վերայ օսմանցւոյն զնամ. զոր ինչ եւ հրամայիցես, ծառայ պատրաստական եմ եւ զնոյն առնել»: Արդ սոյնպիսի կեղծաւոր բանիւք եւ այլ բազում մարդելոյ՞ շողոթորդութեամբ գողացաւ զմիտս ևորա եւ հաւատացոյց զնա եւ դարձոյց զնա ի քաղաքն:

Իբրեւ եմուտ շահն ի քաղաքն, կոչեաց զՂուլի խանն առ ինքն եւ զմեծարանս արարեալ նմա՝ նստոյց զնա ի վերոյ քան զբազում մեծամեծս իւր: Ապա ասաց շահն ցՂուլի խանն, թէ «Չամենայն զօրս քո բերցես ի քաղաքս, եւ դու եւս ի քաղաքի աստ նստցիս, եւ մի՛ արտաքոյ»: Պատասխանի ետ Ղուլի խանն. «Պատրաստ եմ կատարել զհրաման տեսնն իմոյ. բայց եթէ զամենայն զօրս իմ մուծից ի քաղաքս, զբազում նեղութիւնս հասուցանեն քաղաքացւոց»: Չսոյն եւ զայլ պատճառս շաղաւաշուրթն բանիւք յօղեալ՝ հաճեաց զնա: Եւ նա ասաց. «Բարւոք է, մի՛ բերցես ի քաղաքս, այլ կացցեն առ դրան քաղաքիս»: Եւ այնպէս զօրք ևորա կային արտաքոյ քաղաքին բանակեալ: Եւ յայնմիտեւ կեղծաւորեալ խոնարհութեամբ եւ մարդելոյ՞ շողոթորդութեամբ վարելով ընդ նմա՝ յինքն անկոյց զսիրտ ևորա, մինչեւ ամենայնիւ հաւատաց, թէ նա ամենեւին անխարդախ մտերիմ բարեկամ իւր է: Եւ զամենայն իշխանութիւն իւր եւ զկառավարութիւն եւ զհրամանատարութիւնն բացարձակ ետ ի ձեռս ևորա, եւ ասեր ցմեծամեծս իւր, թէ «Չինչ եւ առնիցէ Ղուլի խանն, ի՛մ հրաման տուեալ է նմա, հաճոյ է ինձ եւ ընդունելի»: Եւ ասաց ցՂուլի խանն, թէ «Չամենայն ինչ զոր եւ կամիցիս, արասցես. բայց զայս մի բան մի՛ արասցես, այսինքն է՝ թէ զդաշն, զոր ես ընդ օսմանցւոյն կռեցի, մի՛ ջրեցես եւ մի՛ կռուիցիս ընդ նմա, զի ոչ է բարի զբան թագաւորի շրջեալ»: Պատասխանի ետ Ղուլի խանն եւ ասաց, թէ «Չամենայն ինչ, զոր տերն իմ արքայ հրամայէ, այնպէս արարիցէ:

Ապա սկսաւ հանդես առնել զօրաց իւրոց եւ զօրավարաց եւ տեսանել, թէ մի՞ գուցէ փախուցեալ իցեն ոմանք ի զօրուէն, կամ ի զօրավարաց, եւ պակասիցի թիւն: Սոյնպէս արար եւ զզօրս շահին, տեսանել թէ քանի են, եւ զթիւն երկաքանչիւրոց ի միտ էառ: Եւ զայս գործս ստեպ առնէր եւ զթիւս իւրոցն եւ ևորա զօրացն ի մտի պահէր եւ զնոսա ընդ միմեանս խորամանկութեամբ բաղդատեր: Եւ զայս գործս շահն ի նմանէ ոչ արգելոյր եւ շահն լռիկ կայր եւ ինչ ոչ ասեր նմա. մանաւանդ ասեր, թէ «Նա, զոր ինչ առնէ, բարւոք առնէ»: Յետ այսորիկ խորամանկն այն սկսաւ զզօրս շահին աստ եւ անդ ցրուել. զվեց հազարն ի ևոցանէ ի Թաւրեզ առաքեաց, զհինգ հազար՝ ի Ղազբին,

գերկու հազար՝ ի Մազանդարան. ըստ այսմ եւ զայլ ամենայն ընտիր ընտիր գունդս ի զօրացն առաքեաց սփռեաց աստ եւ անդ: Ապա սակաւ յաճախել զալ ի տուն շահին եւ հանապազ շողոթորդական բանիւք եւ կեղծաւորեալ սիրով իւրով զսեր նորա ի վերայ իւր առաւելով:

Եւ եղև զի շահն հրաւիրեաց զնա ի խրախուրթին իւր. եւ զնացեալ ուրախացոյց զնա: Եւ յետ վեց աւուրց եւ ինքն համարձակեցաւ հրաւիրել զնա յիւր խրախուրթին: Քանզի յառաջմէ համբաւ սուտ հանեալ էր զիւրմէ, թէ զնալոց է յերկիր իւր, ուստի աղաչեաց զշահն ասելով թէ «Ես զնալոց եմ յերկիրն իմ. վասն որոյ, մինչ չեւ եմ զնացեալ, ինկորեմ ի տեսնել իմմէ արքայէ, զի զայս մեծ շնորհս առնիցես ծառայի քում. եկեսցես մի անգամ ի խրախուրթինն, զոր ծառայ քո ըստ աղքատութեան իւրում առնելոց է, եւ մի՛ արհամարհիցես: Եւ ոչինչ փառք եւ պատիւ ինձ լինիլ մարթ է առաւել գերագոյն, քան զայս, զոր ինձ առնիցես՝ զալով ի յաղքատայարկ խորան ծառայի քոյ եւ ուրախ լինելով ընդ նմա»: Լուաւ նմա շահն եւ զնաց ի խրախուրթին նորա: Եւ արար նմա զխրախուրթին մեծ, յոյժ շքեղ, արժանի արքայական մեծութեան, ի ի յարկի իւրում:

Եւ եղև ի յերկարիլ խրախուրթեանն, յորժամ ուրախութեամբ ուտէին, եւ շահն զուարճացեալ էր, ասէ ցնա Ղուլի խանն. «Չխնդիր մի ունիմ ինկորել տեսնել իմմէ արքայէ, եւ աղաչեմ մի՛ անտես առնիցես զհայցուածս ծառայի քոյ»: Եւ նա ասէ. «Ինկորեա՛, եւ կատարեցից զայն»: Ասէ Ղուլի խանն. «Ես լուեալ եմ զքէն, տեր իմ արքայ, զի ըմպես զգինի. եւ արդ, եթէ կամք իցեն տերութեանդ, հրաման տուր մեզ բերել զսակաւ մի գինի ի սեղանս, զի առաւել լիցի ուրախութիւնս մեր»: Ասաց շահն. «Բարուք ասացեր, բերցի՛ գին: Եւ առաքեաց Ղուլի խանն ի Ջուղա առ հայս եւ զԼ [30] դորակ գինի բերին ի տանէ Քալանդար Յօհաննիսի: Եւ սկսան ուրախ լինիլ, ուտել եւ ըմպել մինչեւ ի խոր գիշեր, եւ զուարթացեալ սիրտ շահին եւ էարբ յովով գինի, մինչեւ արբեցեալ թմրեցաւ: Իբրեւ եղև հասարակ գիշեր, եւ Ղուլի խանն եւ ասէ ցթիկնապահ զօրս թագաւորին. «Գնացէք դուք այսուհետեւ ի քուն լինիլ, զի շահն արդէն ի քուն եմուտ»: Իսկ շահն յայնժամ յոյժ արբեալ, անզգայացեալ կայր ի սենեկին միում միայն:

Եւ եղև իբրեւ ի բաց զնացին անտի թիկնապահք նորա, եմուտ խորամակ Ղուլի խանն միայնակ ի սենեակ նորա եւ հանեալ ապտակս երեսս նորա, որպէս առնէ ոք յերեսս մանկան, եւ բուռն հարեալ զնմանէ՝ կապեաց զնա պարանաւ: Եւ ապա կոչեաց ի զօրաց իւրոց զարս զօրաւորս՝ ուժով եւ կրկին կապեցին զնա եւ զոտս նորա պնդեցին ի շղթայս: Եւ արկին զնա ի սենեակ մի եւ փակեալ պահէին: Եւ իբրեւ առաւօտ եղև, փութանակի ըմբռնեաց ամենայն զիշխանս նորա, մինչ չեւ իմացեալ էր նոցա զգործն զոր արար, եւ կոտորեաց զնոսս սրով սուտերի:

Յետ այսորիկ եմուտ ի տուն շահին եւ էառ անտի զկին նորա եւ զքոյրն նորա եւ զմայր նորա եւ զազգականուհիս նորա եւ զայլ կանայս տան նորա, տարաւ ի տուն իւր: Չքոյր նորա էառ յիւր կնութեան, իսկ զայլ կանայսն հարճս արար իւր: Բայց զմայր նորա ընդ նմա առաքեաց ի հորասան: Եւ եղև յորժամ զշահն կապանօք ի հորասան առաքեր, ազդ եղև քաղաքացւոցն, թէ կապեալ զնա եւ տանին ի հորասան մարքն հանդերձ, ամենեքեան խռովեցան եւ սուգ մեծ զգեցան եւ ողբային, բայց ոչ ոք կարեր ի թիկունս հասանիլ նմա, թափել զնա ի ձեռաց թշնամեաց: Եւ Ղուլի խանն յետ առաքելոյն զշահն ի հորասան՝ ինքն նստաւ ի Շօշ քաղաքի, եւ վարեր զթագաւորութիւն նորա:

Եւ յետ աւուրց ինչ կոչեաց զամենայն զօրավարս իւր եւ զգունդս բազումս ի զօրացն, եւ եկին առաջի նորա, եւ ասէ ցնոսա. «Գիտե՞ք, թէ առ ինչ զձեզ կոչեցի»: Եւ նոքա ասեն. «Ոչ գիտեմք, բայց պատրաստ եմք առ ամենայն հրամանս տեառնդ մերոյ»: Եւ ասէ. «Վասն այսորիկ զձեզ ժողովեցի, զի զորդին շահին, զոր ի հորասան առաքեցի, թագաւորեցուցուք ի տեղի նորա, եւ յանուն հասցին ամենայն դրամք թագաւորութեանս պարսից, եւ սորա անուամբն արասցուք զամենայն գործ թագաւորութեանն, եւ սորա անուամբն պատերազմեսցուք, զի համաստեղութիւն սորա յոյժ բարի է, եւ ինքն է բարեբաղդ: Իսկ հայր սորա շահ Թամազն էր այր արբշիռ լօթի եւ խելաթափ ոմն, որ ոչ կարէր զերկիրն պահպանել եւ վասն այնորիկ ես առաքեցի զնա ի հորասան, որպէսզի գուցէ ողջասցի եւ յինքն դարձցի ի ցնդիմանէն»: Չայս պատճառն յառաջ բերեալ շինէր զմիտս ժողովրդեանն: Բայց արդ, որդին, զոր առաջարկէր թագաւորեցուցանել, էր վեցամսեայ ստնդիայ՝ շահ Ապպազ անուանեալ: Արդ զսա բանիւք հաւանութեան զօրացն թագաւորեցոյց ի տեղի հօր նորա, եւ առաքեաց ի Կազբին՝ անդ սնուցանել զնա: Եւ սովաւ շինեաց զմիտս զօրացն եւ քաղաքացւոցն, եւ խաղաղեցոյց զնոսա, եւ ոչ եղել վրդովումն ի նոսա եւ ոչ աղմուկ, այլ մանաւանդ հաճեալ ընդ գործ նորա՝ սիրեցին զնա, եւ գովէին զխոհեմութիւն նորա եւ զինամարկութիւն:

## ԺԶ

Յետ այսորիկ լուան արք Բաղդիարայ, զոր ինչ արար Ղուլի խանն ընդ շահ Թամազն, ի մի վայր ժողովեցան, եւ զոմն ի միջոյ իւրեանց շահ կացուցին եւ զօրաժողով եղեն զալ ի վերայ Շոշայ ի վրէժխնդրութիւն շահին: Եւ եկին հասին մերձ Շօշայ, եւ զգիւղօրէս գաւառին ասպատակեալ՝ զբազումս գերի վարեցին եւ զբազումս սրով կոտորեցին. եւ այսպէս զիննսուն եւ եօթն գիւղս յաւեր ածին: Չայս լուեալ Ղուլի խանին՝ ել բազում զօրօք զնալ ի վերայ Բաղդիարայ: Իբրեւ տհաս ի սահմանս նորա, ազդ եղել արանցն Բաղդիարայ, եւ փախուցեալ գնացին մտին ամրացն ի բերդ մի Ջմլան անուանեալ եւ ոչ ելին արտաքս: Եւ էր բերդն այն ամուր յոյժ, որոյ մի կողմն առ իւր ունի զԱբուգուրան անուանեալ գետն, եւ ի միւս կողմանէ բարձրաբերձ սայրասուր սար դժուարաւ: Նմին իրի Ղուլի խանն թողեալ զայն՝ եկն եմուտ ի Յաւուզա, որոյ կէսն է արապ, կէսն՝ լօռ, կէսն՝ խորիջի, կէսն՝ շիա, եւ այսպէս զանազան ազգք են: Իբրեւ ազդ եղել իշխանին Յաւուզայ, որոյ անունն էր Ալիմարդան խան, թէ Ղուլի խանն գայ, մեծամեծ ընծայիւք եւ բազում մեծարանօք զնաց ընդ առաջ նորա: Եւ Ղուլի խանն բազում պատուասիրութեամբ ընկալաւ զնա եւ ծիրանիս զգեցոյց նմա եւ զօրագլուխ կարգեաց զնա՝ երթալ ի վերայ Բաղդիարայ: Եւ էր անուն իշխանին Ալիմարդան խան:

Եւ ինքն չու արար անտի եւ եկն ի Քրմանշայ եւ անդ կացեալ զաւուրս L [30] հանդէս արար զօրաց իւրոց եւ ապա ել անտի՝ երթալ ի Բաբիլոն, եւ եկն տհաս ի Մայտաշ, անտի ի Յառնաւա, անտի Քրենտ, անտի ի Քուիթօռա, որ ստուգաբանի ի մարաց բարբառս մանկամարդոյ սար, զի ելք նորա այնչափ դժուարին է, ընդ որ եթէ ոք ծեր իցէ, ոչ կարէ ընդ այն անցանել: Արդ՝ ընդ այս ճանապարհ անցեալ Ղուլի խանն ԻԴ [24] ժամ՝ ետես, զի ընդ այսչափ տեղիս ոչ ինչ երթելեկութիւն մարդոյ էր: Եւ պատճառն է, զի Քուիթօռայ է սար մի, որոյ մի կողմն է սահմանն օսմանցւոց, եւ միւսն՝ պարսից: Եւ ճանապարհն նորա է մի միայն, եւ ոչ առաւել, եւ ի նմին ճանապարհի է իջեվան մի ճանապարհորդաց, որ ի բարբառս մարաց՝ Խունայի Մեհմուն անուանի: Արդ յիջեվանի յայսմիկ ի զօրացն օսմանցւոց պահապանք կային, որք զճանապարհն այն պահէին, եւ այսմ գիտակ էր Ղուլի խանն: Յորժամ հասարակ գիշեր եղել, ել երթալ եւ պատուէր ետ ամենայն զօրացն ընդ ճանապարհն ընդ այն ոչ

գնալ, այլ իւրաքանչիւր ոք զծին հետեալ զկնի իւր՝ ընդ սարն ելանել եւ գնալ. եւ ինքն նոյնպէս առաջի նոցա երթայր: Արդ ընդ լերինս ընդ այսոսիկ անցեալ գնացին եւ ի մերձենալ ծագման արեւուն մտին ի սահմանս օսմանցւոց, եւ զօրքն օսմանցւոց ոչ իմացան գանցանելն նոցա:

Եւ եկին մտին ի Չաղով, եւ էր իշխան նորա ոմն, որոյ անունն է Ահմէտ բէկ, եւ ոչ կարաց իմանալ գալուստ Ղուլի խանին: Զանզի նա պահապանս կացուցեալ էր ի ճանապարհին, եւ վասն այսորիկ ոչ հաւատայր թէ Ղուլի խանն այնպէս առանց ուրուք իմանալոյ կարէր անցանել ընդ այն եւ գալ: Արդ՝ իբրեւ ետես զնա յանկարծ մտեալ ի Չաղով, ել ընդդէմ նորա տագնապաւ, վեց հազար զօրօք, պատերազմիլ ընդ նմա: Եւ յառաւօտէ մինչեւ ի հասարակ օր պատերազմեցան: Ի պարտութիւն մատնեցաւ Ահմէտ բէկն, եւ հարան զօրք նորա սրով սուտերի, եւ ինքն փախստական եղել: Մի ոմն ի դաճար ազգէ զհետ նորա պնտեալ մինչեւ ցժամ մի՝ եհաս նմա, եհար զնա նետիւ, եւ նետն ի գլուխ նորա մխեցեալ մնաց: Եհաս նմա եւ ձերբակալ արար զնա եւ առեալ տարաւ առ Ղուլի խանն, եւ զ 113 թումեն դրամ պարգեւս յաղթութեան ընկալաւ ի նմանէ:

Չվեց օր եկաց Ղուլի խանն ի Չաղով եւ յետ այնորիկ կալաւ զճանապարհն Բաքիլօնի: Եւ իբրեւ զերիս ժամս գնացին, հասին ի գետ մի, զոր Չանգանոյ ջուր անուանեն: Եւ գետս այս ընդ այն աւուրս յոյժ աճեցեալ բարձրացեալ յորդ գնայր: Չտեղի էառ անդէն Ղուլի խանն ժամս ինչ եւ տարակուսեալ խորհէր ընդ իւրսն՝ միթէ կարիցեն անցանել թէ ոչ: Եւ ապա ասէ ցամենայն հեծելագօրսն. «Որ զիս կամի, անցցէ ձիով ընդ գետս այս զհետ իմ»: Չայս ասաց եւ ինքն յառաջ քան զամենեստան մխեցաւ ի ջուրն եւ էանց յայնկոյս, եւ հեծելոցն քաջալերեալ՝ մտին զկնի նորա եւ անցին յայնկոյս. այլ ի նոցանէ ի ջուր անդ ընկղմեալ՝ կորեան անձիւք իբրեւ հարիւր: Իսկ հետեւակն մնացին յայնկոյս գետոյն: Եւ արար վասն նոցա կազմել յերկաթի շղթայից հաստ առասանս երկուս, զորոց զծայրս յերկուց կողմանց յեզերս գետոյն ամրացուցին եւ ի վերայ նոցա տախտակս ի փայտից շարադրեալ եւ հող արկեալ ի վերայ՝ անցս կազմեցին եւ զամենայն հետեւակն անցուցին յայնկոյս: Եւ յետ նոցա զդրբսն եւ զայլ կազմածս իւրեանց անցուցին: Յառաջն կամեր գնալ ի վերայ Բաբելոնի, բայց յետոյ փոխեաց զխորհուրդ իւր եւ դէմ եղ զնալ ի Զարբուտա:

Եւ եկն եհաս ի Լէյլան գիւղ, որոյ բնակիչքն բազում հպատակութեամբ եւ պատուով ընկալան գնոսա, զի աղանդով համաձայն էին պարսից: Եւ էառ անտի գտանուտերն ընդ իւր առաջնորդ ճանապարհի եւ սպառազինեալ տաներ զնա ընդ զօրս իւր: Բայց իբրեւ ելին ի Լէյլանայ, ուղղեցաւ զնալ ի վերայ Բաքիլոնի, եւ եկին բանակեցան ն Ղարաթաբա եւ անտի եկին ի Ղզրաբատ եւ գտին զնա ամայի, զի բնակիչքն փախուցեալ մտեալ էին ի Բաքիլօն: Այլ արդ, թէ ընդէ՞ր երբեմն ընդ այս եւ երբեմն ընդ այլ ուղղէր զգնացսն եւ ոչ ի մի կողմն ընթանայր՝ այս էր պատճառն. զի կամեր զօսմանցիսն գրգռել ի մարտ, այլ ոչ ոք ի պետաց տեղեաց ել ընդդէմ մարտնչիլ: Ի Ղզրաբատայ չուեալ եկին հասին ի Մանդալի, եւ անտի ելին զնալ ի Յիլա, եւ մինչ չեւ էր նոցա հասեալ անդ՝ երկու իշխանք պարսից, որոց միում անուն էր Ալի Մարդան եւ միւսու՝ Բաբա, եկին հասին առ Ղուլի խանն ԼՌ [30.000] զօրօք, զի յառաջագոյն ինքն պատուիրելով ժամադիր եղեալ էր նոցա՝ այսպէս առնել: Եւ այնուհետեւ ինքն ոչ կամեցաւ զնալ ի Յիլա. զնոսա զերկոսին առաքեաց անդ:

ԺԷ

Իսկ ինքն զտեղի առեալ յաւուրս ինչ՝ ել գնաց ի վերայ Բաբիլոնի, եւ հասեալ քանակեցաւ ի տեղին Իմամ-Ազամ անուանեալ, միոյ ժամու ճանապարհաւ մերձ քաղաքին: Եւ էին անդ բազում շէխք տաճկաց, որք են օրինագետքն կամ մատենագետքն նոցա: Սոցա զպատուական խիլայս տուեալ՝ յոյժ պատուեաց: Եւ նոքա այնուհետեւ մոլեալք ի սեր նորա՝ գրեցին ի բազում տեղիս առ բազում իմամս, որք իբրեւ քուրմք են տաճկաց, եւ գովեցին զնա եւ յորդորեցին զնոսա ի հպատակութիւն նորա՝ ցուցանելով նոցա՝ զորչափ ինչ մեծարանս արարեալ էր անձանց իւրեանց: Չոր լուեալ նոցա ամենեցուն՝ յանձն առին յօժարութեամբ ի հպատակութիւն մատուցանել նմա զինքեանս ժողովրդովք տեղւոյն: Եւ արարին այնպէս: Յայսմ վայրի լուր եկն Ղուլի խանին, թէ Ալի Մարդանն, Բաբա խանն, զորս ի վերայ Յիլու յղեաց զօրօք, առեալ են զՅիլա եւ նուաճեալ են զժողովուրդն եւ անցեալ ընդ ջուրն Շատիկ՝ դիմեալ են զնալ յԻմամալի, եւ կամ յԻմամ(մ) Մուսա: Եւ վաղվաղակի գրեաց առ նոսա, թէ «Մի՛ երթայք ի վերայ դոցա, զի արդէն նոքա հպատակք եղեն մեզ»: Եւ նոքա այնուհետեւ թողեալ զայն տեղիսն՝ եկին մտին զօրօք իւրեանց ի սահմանս Բաբիլոնի, յայն կողմն ջրոյն, եւ անդ զանհամարն յօսմանցոց կոտորեցին սրով սուտերի, միևչեւ ասել, թէ անկոխն այն մեծ շաղախեցեալ արեամբ՝ նեխեցաւ, եւ ի հոտոյ դիականց անկելոց ի բազում ժամանակս ոչ ոք կարէր անցանել: Ապա Բաբա խանն եկն քանակեցաւ ի տեղի մի Ղարշու-Եախա անուանեալ յայլազգեաց բարբառս յայնմանէ՝ զի է մեծ քաղաք մի յայնկոյս գետոյ, որ է առաջի Բաբիլոնի:

Արդ, իբրեւ հասին Բաբա խանն եւ Ալի Մարդանն ի վերայ Բաբիլոնի, սոքա յայնմ կողմանէ պաշարեցին, եւ Ղուլի խանն՝ յայսմ կողմանէ: Այլ զի ոչ ունէին զդոքս, քանզի Ղուլի խանն ոչ առնոյր ընդ իւր զդոքսն վասն փութանակի յեղակարծիւ հասանելոյ ի վերայ քաղաքի եւ բերդի, ուր եւ արշաւեր, ուստի իբրեւ եղեն քառասուն աւուրք պաշարման, ապա բերեալ եղեն դոքք ի Չաղովու, ուր յառաջմէ թողեալ էր: Եւ սկսան կառուցեալ զնոսա հանդէպ քաղաքին եւ արձակել: Եւ այնպէս սոքա ի մէջ բերդին ձգէին, եւ օսմանցիքն ի վերայ բանակի սոցա: Այլ զի դոքքն օսանցոց կարի առաւել մեծագոյնք էին քան զսոցայն, եւ յառաւել հեռագոյն տեղիս հասուցանել կարէին զգնտակսն, զի մի նոցանէ տանէր բարուրթս իբրեւ լտերս ութսուն, վասն այսորիկ թեպէտ եւ ի բացուստ պատերազմեր բանակն Ղուլի խանին, բայց եղեւ, զի անգամ մի ի յարձակեալ օսմեացոց զդոք մի ի բերդէ անտի՝ զնտակն եհաս անկաւ ի մէջ բանակի նոցա, եւ եհար սպան միանգամայն զհարիւր ոգիս: Չայս վնասս կրեալ՝ ի բաց հեռացոյց Ղուլի խանն զճակատն իւր ի տեղւոյնէ անտի: Եւ այնուհետեւ թեպէտ դոքքն օսմանցոց ոչ հասանէին նոցա, բայց նաեւ դոքքն իւրեանց ոչ կարացին ձգել զգնտակ ի բերդն: Եւ նստեալ կացին առանց արձակելոյ զդոքս յաւուրս իբրեւ ԾԵ [55]: Ապա օսմանցին դարձեալ արձակեաց զայն մեծ դոքն, եւ ի սաստիկ դրդմանէն խախտեցաւ պարիսպ բերդին, եւ բազում տունք փլան, եւ այնուհետեւ օսմանցին զայս դոքս ոչ ի գործ եած: Իբրեւ յիսուն եւ հինգ աւուրք եղեն պաշարման քաղաքին, օսմանցիքն վառեալք զինու յանկարծակին ելին արտաքս ի բերդէ անտի՝ յարձակիլ միանգամայն ի վերայ պարսից: Եւ եղեն երկու առաջք՝ ընդ երկուս դրունս ելանելով, որոց միում անունն էր Սպիտակ դուռն, եւ միւսն՝ Իմամ Ազամայ դուռն: Քսան եւ չորք հազարք եքին ի Սպիտակ դրանէն, եւ տասն հազար՝ յԻմամ Ազամայ դրանէ, ամենեքին օսմանցի զինուորք: Այլ փաշայն ոչ ել արտաքս եւ զքնակս քաղաքին ոչ եթող ելանել արտաքս. եւ այս էր պատճառն, զի կէսն ի նոցանէ պարսիկ էր, կասկածեր փաշայն՝ մի՛ գուցէ ելեալ արտաքս՝ յաւելցին ընդ զօրս Ղուլի խանին:

Արդ, իբրեւ ետես Ղուլի խանն զդիմելն օսմանցոց ի վերայ իւր, առանց դոքի յառաջ մատոյց զճակատն իւր: Իսկ օսմանցին ընդ իւր բերեալ զտասն պատրաստեալ դոքս՝ սակաւ արձակեալ ի վերայ ճակատուն պարսից: Եւ յայնժամ Ղուլի խանն զզօրս իւր ի

չորս առաջս բաժանեաց, զի մի՛ բովանդակ զօրն ի դրբիցն վտանգեսցի: Այլ օսմանցին մէն մի անգամ արձակեալ զդոբսն՝ զերկրորդ նուագն ոչ կարաց յաւելուլ, քանզի մինչդեռ նոքա զդոբսն լնուլ պատրաստեալ պարապէին, եհաս ի վերայ նոցա ի չորից կողմանց ճակատն պարսից, եւ արգելան ի վերստին արձակելոյ զնոյնս: Եւ խառնեցան ի միմեանս երկոքին ճակատքն, եւ կոտորեցին զմիմեանս սրով եւ թվանգաւ մինչեւ ցեօթն ժամս: Եւ զօրն օսմանցւոց յաղթեցեալ փախեալ, եմուտ ի ներքս ի քաղաք անդ եւ այլ ոչ ել արտաքս:

Իսկ Ղուլի խանն մինչեւ յուրթուն եւ ուրթ օր բանակեալ զքաղաքաւն՝ պաշարեալ պահեր: Եւ սով սաստիկ եղել ի ներքս քաղաքին, մինչեւ շան մտոյ մի ոխայն քառասուն մարչիլ եղել. եւ ոչ գտանիւր: Ապա Ղուլի խանն զգունդս զինուորաց առաքեաց ի կողմս Նինուէին եւ հարին զգիւղօրես եւ զաւանս նորա. զերիտասարդսն կոտորէին սրով եւ զմատաղ մանկունսն եւ զկանայս գերի վարէին: Բայց ի Նինուէ ոչ մերձեցան, զի չունէին զբաւականութիւն զօրաց, այլ հասեալ մինչեւ ի տեղի մի, զոր տաճիկքն Եօնուզ անուանեն յանուանէ Յովնանու մարգարէին, եւ անտի դարձան յետս:

Արդ իբրեւ ինն ամիսք եղեն պաշարելոյ քաղաքին, Մահմուտ սուլտանն օսմանցւոց առաքեաց ի Բաբիլօն ընդդէմ Ղուլի խանին զԿաղ Օսման փաշայն երկու հարիւր յիսուն հազար զօրօք: Իբրեւ եառ զլուր նորա Ղուլի խանն, իրեշկակս առաքեաց ի ներքս ի քաղաք անդ՝ խօսիլ ընդ նոսա խաղաղութեամբ եւ ասել ցւիմէտ փաշայն, որ իշխանն էր Բաբիլօնի, թէ «Տո՛ւր ինձ զբերդն խաղաղութեամբ, եւ արասցուք զհաշտութիւնս»: Պատասխանի արար Ահմէտ փաշայն, թէ «Ընդէ՞ր ինդրես զբերդս. ե՛րթ մրտի՛ր ընչդ զօրս օսմանցւոց, եւ եթէ կարասցես աղարտել զզօրսն օսմանցւոց, յայնժամ ունիցիս զբերդս զայս»: Արդ, իբրեւ եհաս Կաղ Օսմանն ի Բաբիլօնի, զզօրս իբրեւ վեց հազար եթող առաջի բերդին եւ ինքն մնացեալ զօրօքն ել գնաց ընդդէմ նմա:

Եւ Կաղ Օսմանն աճապարեաց, կալաւ զջուրն, եւ Ղուլի խանն ոչ կարաց յառաջ ժամանել նմա եւ զջուրն ունել: Իբրեւ ետես Կաղ Օսմանն, զի Ղուլ խանն գայ մերձեանայ, հանդերձեցաւ պատրաստեցաւ ամենայն զօրօքն ընդդէմ նմա: Ունէր նա զդոբս իբրեւ հարիւր եւ հինգ, այլ Ղուլի խանն ոչ էր բերեալ զդոբս: Կարգեաց Ղուլի խանն զճակատն իւր ընդդէմ օսմանցւոց՝ յարձակիլ ի վերայ նոցա փութանակի. զերկոտասան հազար թվանկաւորսն յառաջ կացոյց եւ զայլ զինու վառեալսն՝ զկնի նոցա: Ապա բաղխեցան ընդ միմեանս երկոքին ճակատքն, եւ յաղթեաց զօրն Ղուլի խանին օսմանցւոց զառաջին նուագն: Եւ փախուցեալ գնաց մերձ ի ջրոյն ի հեղեղատ մի մեծ եւ խոր եւ անդ ախոյեանս կառուցեալ զօրս օսմանցւոց՝ արձակեր զհրացանս եւ հարկանէր զզօրսն պարսից յաջողութեամբ: Չի էին նոքա յերեսս երկրի յամենայն կողմանց բաց, եւ դիպէր նոցա զնտակն արձակեալ. իսկ զօրացն պարսից ոչ յաջողիւր հարկանել զնոսա, զի էին ի խորս հեղեղատին ծածկեալք, եւ ոչ դիպէր նոցա ինչ ի զնտակաց: Եւ ծարաւեցաւ զօրն պարսից, եւ ոչ ունէին՝ ուստի առցեն զջուր, զի որպէս յառաջագոյն ասացաք, զօրն օսմանցւոց ի հասանիլն իւրում ի սահմանս քաղաքին Բաբիլօնի՝ յառաջ զջուրն կալաւ, եւ պարսիկն ոչ կարաց վաղ աճապարել եւ զջուրն ունիլ: Եւ յորժամ ի պատճառս սաստիկ ծարաւութեան զթվանկաւորսն, զորս յառաջադէմ կարգեալ էր ի ճակատուն, յետս դարձոյց՝ երթալ զջուր ըմպել, եւ ջուրն կէս ժամու ճանապարհաւ հեռի էր: Յայնժամ զօրն օսմանցւոց արտաքս ելեալ՝ իբրեւ գյորդ անձրել եւ իբրեւ զխիտ կարկուտ զգնտակս ի թվանկաց տեղեաց ի վերայ պարսկական զօրացն եւ աղարտեալ զճակատն նոսա՝ ցիր եւ ցան ի փախուստ դարձոյց զնոսա, եւ ի փախուցելոցն սակաւ հեծեալքն միայն զերծան, իսկ որք հետեւակք էին, ի սուր սուսերի մաշեցան ամենեքեան: Եւ ոչ եթէ նուագութիւն ջրոյն միայն եղել պատճառ խորտակմանս այսորիկ, այլ եւ այս, զի յետ ժամու միոյ մարտին շնչեաց



հողմն սաստիկ ընդդեմ ճակատուն պարսից, որ զամենայն փաշին աւագախառն եւ զծուխս բարութացն առ հասարակ յերեսս նոցա արձակեալ՝ զաչս նոցա խնոյր: Միանգամայն եւ սաստիկ տօթն եղանակին, որ ի գաւառին յայնմիկ առաւել դժնդակ լինի, կիզեզր զնոսա. զի այնչափ սաստիկ ջերմ ամառն լինի ի գաւառին յայնմիկ, մինչեւ ասեն թէ՛ եւ զհանդերձս առանց հրոյ մրկեալ կիզու: Եւ ի ցրուեալ զօրաց կէսքն ի կողմն Մանտալիոյ գնացին, եւ կէսքն՝ ի կողմն Ղզրաբատու, եւ ոմանք ի կողմն Չաղովայ: Իսկ ինքն Ղուլի խանն անգիտելի ի զօրացն ընդ կողմն ինչ փախուցեալ զնայր, եւ ոչ գտիէին զօրքն, թէ ապրեալ իցէ արդեօք, կամ թէ սպանեալ:

Եւ էին ի զօրս պարսից վեց քրիստոնեայք յազգես մերմէ որք էին հարիւրապետք Ղուլի խանին եւ ունէին զօրս հարիւրաւորս. անուն միոյն՝ Դաւիթ, զոր Գօրըցիցի բէկ ասեն, երկրորդն էր Ատովմեան որդի Աբիճան, երրորդն էր չաբնեցի Այոյին բէկ Աղաճանն, չորրորդն՝ չաբնեցի Մուսիսեան որդի Բալիզն, հինգերորդն՝ ճաղակերեանց Թօփուզի որդի Յախնազարն: Արդ ի սոցանէ Յախնազարն ընդ Ղուլի խանին գնացեալ էր ի փախչիլն նորա, եւ ոչ ոք գիտեր: Իսկ այլքն ի Չաղով քաղաք գնացեալ էին ի փախչիլն: Եւ էր անդ եկեալ շօշեցի պարսիկ իշխան ոմն, որոյ անունն էր ճան: Նա ասաց հայոց. «Դուք մնացէք աստ եւ մի՛ ելանէք աստի. ես միւսանգամ դառնամ ի վերայ օսմանցւոց ձեօք հանդերձ»: Իսկ նոքա ոչ լուան նմա, զի ասացին. «Մէք մինչ չեւ գտեալ իցեմք զՂուլի խանն, ոչ երթամք միւսանգամ ի վերայ օսմանցւոյն»: Եւ ելեալ անտի ուղղեցան դէպ ի Յամատան եւ եկին ի Քրմանշա:

Լուր եկն թէ իշխանն Յամատանայ ուրախութիւն արարեալ է, թէ Ղուլի խանն հասեալ է անդ եւ ի գլուխս ճանապարհաց դէտս կացուցեալ է, զի փախուցեալքն ի զօրաց իւրոց մի՛ ցրուցին, այլ առ ինքն ժողովեցին: Եւ այսպէս ապրեալքն ի սրոյ՝ ժողովեցան առ նա: Եւ հանդես արարեալ զօրուն՝ տեսն զի վեց իշխան գերծեալ էր: Եւ ի միջոյ փախուցելոցն զհարիւր երկուտասան մեծամեծս սպան վասն վատասրտութեան նոցա եւ փախստեան: Եւ զպակասեալն ի զօրաց իւրոց ելից, որչափ կարաց, եւ ի տեղի կոտորելոց իշխանացն զայլս կացոյց իշխանս, քանզի յիննսուն եւ երկու հազար զօրաց ԺԵ [15] հազար միայն մնացեալ էր:

## ԺԸ

Ապա Ղուլի խանն հնգետասան հազար զօրօք հանդերձեցաւ զնալ միւսանգամ ի վերայ Կաղ Օսման փաշային: Չու արար ի Յամատանայ, խաղաց գնաց եւ յեօթն աւուրս զհնգետասան աւուր ճանապարհն վճարեաց եւ եհաս ի Չաղով: Եւ անտի յերիս աւուրս տազնապաւ եհաս ի Քարթուտ: Ապա յանկարծակի ի լեռնոտանէ միոյ զիշերայն ելեալ՝ եհաս յեղակարծիւ ի վերայ բանակի Օսման փաշային յառաւօտու, մինչդէռ բազումք ի զօրաց նորա ի քուն էին, եւ ամենեքեան առ հասարակ անկազմ անպատրաստ կային: Խռովեաց զբանակն եւ եհար կոտորեաց զնոսա եւ զՕսման փաշայն ձերբակալ արար եււ հատեալ զգլուխն նորա՝ յղեաց ի Բաբիլօն առ Ահմէտ փաշայն: Եւ յայսմ վայրի զօրքն Ղուլի խանին կոտորեցին ի զօրացն օսմանցւոց անելի քան զքառասուն եւ հինգ հազար, եւ զմնացեալսն ի փախուստ դարձուցին:

Յետ այսորիկ Ղուլի խանն դիմեաց զնալ ի վերայ Բաբելոնի: Իբրեւ եհաս, ոչ ձեռն Էարկ պատերազմիլ, այլ դաշինս խաղաղութեան արար եւ եղբայրագիր եղեւ ընդ փաշայի քաղաքին, որ էր Ահմէտ փաշայն, սբանչանալով ընդ հաւատարմութիւն նորա, զոր պահէր առ սուլտանն իւր: Խօսեցաւ ընդ նմա եւ ասաց, թէ «Սիրտ իմ վառեցաւ ի սեր քո վասն այդպիսի հաւատարիմ բարուցոյ յայսմիկ, զի ես զինն ամիս պաշարեալ զքաղաքդ զայդ՝ զքեզ ի նեղ արկի սովով եւ սրով, եւ դու ոչ ետուր զբերդդ

ինձ՝ զհաւատ եւ զարդարութիւն պահելով ընդ սուլտանին քում եւ պահելով զտերութիւն եւ զանուն սուլտանին քոյ: Յայսմիտոտ մի՛ լիցի ի մէջ մեր թշնամութիւն ամենեւին, այլ սեր եղբայրական մինչեւ ի մահե:

Ապա Ղուլի խանն դարձ արարեալ անտի՝ զնաց ի Յաւուզա: Եւ առեալ ընդ իւր զԱլի Մարդան խանն եւ զԲաբա խանն՝ զնաց ի վերայ Բաղդիարայ: Չի բաղդիարացիքն լուեալ, թէ Ղուլի խանն յաղթեցաւ յօսմանցւոց, ապստամբեալք էին եւ կացուցեալ էին իւրեանց թագաւոր զոմն Ալի անուամբ եւ զօրս կուտեալ էին զալ ի վերայ Շօշայ՝ առնուլ զնա եւ տիրել ամենայն թագաւորութեանն պարսից, որպէս ի վեր անդր յայտ արարաք: Իսկ Ղուլի խանն յայսմ ժամանակի ոչ ունէր զօրս անելի քան զհնգետասան հազար: Չի թեպէտ զառաջ քան զառաջին մարտն Օսման փաշային ունէր զիննսուն հազար, բայց յորժամ զառաջինն աղարտեցաւ ի նմանէ, կոտորեցան բազումք ի նոցանէ, եւ մնացին հնգետասան հազար միայն, որպէս ի վեր անդր գրեցաք: Սակայն Ալի Մարդան խանն եւ Բաբա խանն, երկոքին սոքա միանգամայն ունէին զԼՌ [30.000] զօրս, զորս Ղուլի խանն յաւել ի զօրս իւր, եւ եղեն իւր [45] հազար: Եւ ելեալ զնացին ի տեղի մի Ջմլան անուանեալ, մերձ Բաղդիարայ: Բաղդիարացիքն ընդդէմ ելին նմա եւ պատերազմեցան ընդ Ղուլի խանին սաստիկ՝ զաւուրս ութուտասան: Եւ ապա յաղթեաց նոցա Ղուլի խանն եւ կոտորեաց ի նոցանէ այնչափ բազումս՝ մինչեւ ասել թէ գետք խաղացին յարնէ նոցա: Եւ յետ կոտորելոյ զօրսն՝ էառ զբաղաքն եւ գրի վարեաց զքնակիչս նորա: Չքառասուն եւ ութ հազար տունս գերի վարեաց եւ առաքեաց խորասան, այն ինքն է՝ Մաշատ: Ոչ զամենեսեան միանգամայն ի մի տեղի, այլ բաժանեալ զանձինսն գերիս հարիւր ի միում նուագի ի մի քաղաք, զհազարս ի միւս քաղաք, եւ զայլս ի յայլ քաղաք վտարեաց: Եւ ի տանիլն զնոսա յիւրաքանչիւր տեղիս, ուր եւ հանդիպէին ի ճանապարհին, բնակիչք տեղւոյն վճարէին զծախս ճանապարհին եւ այնպէս յուղարկէին զնոսա, մինչեւ ամենեքեան սփռեցան յիւրաքանչիւր տեղիս:

Յետ այսորիկ Ղուլի խանն ել անտի զնալ ի վերայ Շերագու: Իշխան տեղւոյն էր ոմն Մահմետ անուանեալ, ապստամբ հակառակ Ղուլի խանին: Չսա յառաջագոյն Ղուլի խանն առաքեալ էր իր վերայ Բլուջի՝ նուաճեալ զնա, զի Բլուջն էր անհնազանդ եւ ապստամբեալ ի Ղուլի խանէն: Եւ Մահմետ խանն փոխանակ նուաճելոյ զնոսա ի հնազանդութիւն Ղուլի խանին, ինքն գլխովին ապստամբեալ ի նմանէ՝ զօրս ժողովեալ էր անդ ընդէմ Ղուլի խանին եւ խոնարհեր զնալ ի վերայ Շօշայ: Եւ զնացեալ ի Բանդար գաւառն՝ զբազումս կոտորեաց ի սուր սուսերի, որք ոչ միացան զկնի իւր: Իսկ զնոսա որք միտեցան՝ յաւել ի զօրս իւր, եւ զնաց ի Շերագ եւ պատրաստիւր զնալ ի վերայ Շօշայ:

Ազդ եղել Ղուլի խանին, թէ նա այնպէս առնել պատրաստի, հրեշտակս առաքեաց առ նա՝ ասել, թէ «Չի՞նչ է այդ գոր դու առնես. դու ի սկզբան հաւատարիմ ծառայ մեր էիր եւ զայնչափ բարերարութիւնս ընկալեալ ես. քանզի ես զքեզ այդչափ բարձրացուցեալ՝ ի վերայ բազում իշխանաց իշխան կացուցի: Եւ այժմ զի՞նչ եղել քեզ, որ այդպէս ընդվզեալ օտարանս ի մէջ, եւ ընդհակառակն մերում իշխանութեանս զէն առնուլ զօրաժողով լինիլ նկրտիս: Ապաշաւեա՛ դու ի խոտորմանէ այդի եւ ի բաց կաց ի չարութենէդ, մի՛ գուցէ զստուերս ածօցէ աչաց քոց հացն իմ»: Չայսպիսի խաղաղութեան խրատս բազում անգամ գրովք արար Մահմետ խանին Ղուլի խանն, այլ նա ապախտ արար զբանսն նորա եւ առաքեաց ասել նմա հրովարտակօք, թէ «Բացադրեալ եմ ես զգլուխ իմ ի ճանապարհիս, զոր կալայ. որպէս եւ կամեսցի Աստուած՝ այնպէս արասցէ ընդ իս եւ ընդ քեզ: Կամ ես զքեզ, եւ կամ դու զիս ի կենաց աստի վճարեսցես. այսպէս իմասցիս:»

Չայս իբրեւ լուաւ Ղուլի խանն, յայնմ հետե ոչ եւս յաւել խօսիլ ընդ նմա: Կարգեաց զգունոս զօրաց իւրոց, եւ ել գնաց ի վերայ Շերագու, որոյ իշխանն էր Մահմետ խանն: Իբրեւ մերձենայր ի քաղաք անդ, ազդ եղել Մահմետ խանին գալուստն նորա. ել ի քաղաքէ անտի ի դաշտավայրն՝ պատահիլ նմա: Եւ եղել ի դիմի հարկանիլն նոցա ի փախուստ դարձան զօրքն Մահմետին, եւ հարան սրով սուսերի, եւ ինքն մագապուրծ փախստական եղեալ՝ անկաւ յամրոց մի մերձ Բանդարայ, որ անուանի Այվազայ բերդ: Եւ էր տէր ամրոցին այնորիկ շէխ մի Չափար անուանեալ, եւ ինքն էր յոյժ հմուտ արուեստին կախարդութեան, զոր ժողովուրդք գաւառին սուրբ համարին եւ ամենայն բանից նորա հաւատան, վասնզի զբազում եւ զգանազան դիւթական արուեստիւ գործս նորա տեսեալ՝ սքանչելիս համարէին ամենել: Արդ Մահմետ խանն իբրեւ եհաս անդ, եմուտ առ նա եւ պատմեաց նմա զանցսն, որք անցին ընդ նա, եւ աղաչեաց զնա միջնորդել վասն իւր առ Ղուլի խանն. քանզի գիտեր զի նա ի մեծի համարի էր առ Ղուլի խանն, եւ ամենայն աղաչանք նորա ընդունելի լինէր նմա:

Ընկալաւ շէին զհայցուածս նորա եւ առաքեաց զիրս աղերսանաց վասն նորա առ Ղուլի խանն՝ ասել նմա, թէ «Վասն սիրոյն զոր առ իս ունիս, ընկալ զՄահմետ խանն, որ զղջացեալ ի ստահակութենէ իւրմէ՝ կամի դառնալ ի հպատակութիւն վստմութեանդ. ներեա՛ սմա եւ մահու մի՛ սպանաներ, թեպէտ եւ արժանի է»: Եւ գրեաց պատասխանի առ նա՝ ասելով, թէ «Եղիցի այդպէս. վասն քոյ աղաչանացդ ոչ սպանից զնա. եւ արդ առաքեա՛ զնա առ իս»: Յայնժամ շէին եցոյց Մահմետ խանին զխոստումն Ղուլի խանին, եւ նա վստահացեալ գնաց առ Ղուլի խանն: Եւ եղել յորժամ յանդիման եղել նմա, ասէ ցնա Ղուլի խանն. «Գիտե՛ս արդեօք զայնու ժամանակաւ եղեալ իրսն, մինչդեռ ես ի Բաբիլոն էի եւ հրովարտակս առաքեցի առ քեզ ասել, թէ՛ մի՛ այդպէս ստահակիր, մի՛ ընդհակառակն իմ գումարիր, եւ դու պատասխանի գրեցեր առ իս՝ որպէս եւ կամք իցեն Աստուծոյ ամենել, արասցէ. կամ դու բառնաս զիս ի կենաց աստի, եւ կամ ես զքեզ: Եւ արդ, այժմ ահաւաղիկ Աստուած ետ զքեզ ի ձեռս իմ, ուստի իրաւ է ինձ սպանանել զքեզ»: Պատասխանի ետ Մահմետ խանն, թէ «Որպէս եւ կամիս, այնպէս արա. ահաւասիկ կամ ես ի ձեռս քո»: Ասէ Ղուլի խանն. «Թեպէտ եւ արժանի ես դու մահու, սակայն վասն շէինն, որ աղաչեաց զիս չսպանանել զքեզ, ոչ սպանից, այլ տաց քեզ փոքր մի պատուհաս»: Ապա հրամայեաց միում ի մանկտոյնն՝ բրել զերկուս զաչս նորա: Եւ յետ կարացուցանելոյն՝ շնորհեաց նմա զճ [100] թուման դրամ եւ ասէ, թէ «Երթ, զեկամուտն այսչափ դրամոց կեր եւ վասն իմ աղօթս արա»: Եւ ետ զնա ի ձեռս հնգետասան յուղակաւորաց եւ առաքեաց ի Մաշատ: Եւ յետ այսորիկ ել անտի ինքն եւ եկն ի Շօշ՝ զպատրաստութիւն զօրաց ամենել եւ երթալ ի վերայ Շրվանայ եւ Շամախու: Եւ յետ պատրաստութեանցն ել անտի գնալ ի վերայ Շամախու եւ Շրվանայ:

## ԺԹ

Արդ ի ժամանակին, յորժամ շահ Թամազն զՇօշ քաղաքն թափեաց ի ձեռաց աղուանից սուլտանին, որպէս ի վեր անդր պատմեցաք, Կիլան էր ի ձեռս մօսկովաց: Իբրեւ էառ շահ Թամազն զՇօշ, հրեշտակս առաքեաց առ օսմանցոց սուլտանն՝ հրովարտակօք ասել նմա, թէ «Տո՛ւր ինձ զքաղաքս իմ, զորս ամեր ի ժամանակս բռնաւորութեան աղուանին, զի այժմ ես յաջողութեամբ Տեառն զօրացեալ հարի եւ ի բաց վանեցի զաղուանն յերկրես եւ նստայ յաթոռ թագաւորութեան հօրն իմոյ»: Պատասխանի ետ սուլտանն օսմանցոց եւ ասէ, թէ «Պարտ է քեզ նախ զԿիլան ի ձեռաց մօսկովացն ամնուլ եւ ապա առ ի մէնջ, եթէ ունիս զիրաւունս ինչ՝ պահանջել»: Նովին օրինակաւ հրովարտակս առաքեաց ի ձեռս հրեշտակաց իւրոց առ արքայն մօսկովաց՝ խնդրել զԿիլան ի նմանէ: Եւ նա անդէն պատասխանի արար, թէ «Ես

վասն յասպատակչաց պահպանելոյ զքաղաք քո՝ զայնչափ բազում ծախս արարեալ առի զԿիլան եւ պահեցի մինչեւ ցայժմ: Եւ արդ պատրաստ եմ տալ զնա ցթեզ, եթէ զայն ամենայն ծախս, վասն նորա առ ի մենջ արարեալ՝ հատուցանիցես, եւ վասն իւրաքանչիւր ամի ութսուն հազար թուման ի վերայ այնորիկ յաւելեալ զտոկոսիսն վճարիցես»: Յանձն էառ շահ Թամազն զասացեալ պարտսն վճարել: Եթող մօսկովն զԿիլան եւ զնաց յերկիր իւր եւ հաստատեաց զդաշն խաղաղութեան ընդ պարսից, զի շահն յիւրաքանչիւրում ամի զութսուն հազար թուման վճարիցէ:

Իբրեւ կատարեցաւ ամն եւ եհաս ժամանակ ընդունելոյ զխոստացեալ դրամն, հրեշտակս առաքեաց մօսկովն առ պարսիկս՝ պահանջել ի նմանէ զդրամն: Եւ հրեշտակն այն՝ էր կարնեցի Սիմոն անուամբ ոմն ի հայոց ազգէ: Արդ, իբրեւ եկն եհաս նա ի Շօշ, ետես զի շահն, յորմէ զդրամն ինկորիցեն, ոչ գոյր անդ, զի նա արդէն ի Ղուլի խանէն կապանօք ի հորասան էր առաքեցեալ: Եւ զմտաւ ածեալ թէ ոչ ոք է, զինքեան յանձնեցեալ գործն առնելոյ նպաստ լիցի, տարակուսեալ վարաներ: Ապա Ղուլի խանն կոչեաց զնա առ ինքն եւ խօսեցաւ ընդ նմա եւ ասէ. «Ուստի՞, առ ո՞ր եւ առ ի՞նչ եկեալ ես դու աստ»: Պատասխանի ետ Սիմոն դեսպանն. «Ես ի մօսկովաց արքայէն զհրովարտակ բերել եմ առ շահն»: Ասէ Ղուլի խանն. «Տո՛ւր ցիս զհրովարտակն, զի տեսից թէ զինչ ինկորէ թագաւորն քո ի շահէն մերմէ»: Պատասխանի ետ Սիմոն. «Ոչ կարեմ ես զայդ առնել, զի հրովարտակն այն առ շահն է առաքեցեալ եւ ոչ առ քեզ: Այլ պարտ է ինզ նմա հասուցանել զգիրն»: Ասէ Ղուլի խանն. «Եթէ այդպէս է, ապա նի՛ստ դու աստ զժամանակ ինչ, մինչեւ եւ երթայց, վճարեցից զպատերազմն, զոր առնելոց եմ ընդ աղուանին, որ յարուցեալ է ընդէմ մեզ, եւ յետ դառնալոյ իմոյ անտի տաց բանից քոց պատասխանի»: Եւ ետ նմա ապարանս բնակելոյ ի Շօշ եւ ինքն զնաց ի պատերազմ:

Արդ, նստաւ անդ Սիմոն դեսպանն զամս երկուս, մինչեւ Ղուլի խանն դարձաւ ի Շօշ: Կոչեաց դարձեալ Ղուլի խանն զՍիմոն դեսպանն, խօսեցաւ ընդ նմա եւ ասէ. «Տո՛ւր ցիս զգիրն արքային քոյ, եւ ես արարից նմա զպատասխանի»: Պատասխանի ետ Սիմոնն, թէ «Ես ոչ կարեմ զայն գիրն տալ քեզ, բայց այժմ զայս ունիմ ասել, թէ թագաւորն իմ իմացեալ, զոր ինչ միանգամ արարեր դու ընդ շահն, առաքեաց առ իս ասել քեզ, թէ յետ առնելոյ քոյ այդպէս՝ դու ես այժմ տեր երկրիդ, դու ինքնին դատ արա. պարտականն իմ յերկրի քում է. կամ տուր զնա ի ձեռս իմ, եւ ես առից ի նմանէ զհրաւունս իմ, եւ կամ դու հատո՛ր ինձ զոր պարտի նա»: Պատասխանի ետ Ղուլի խանն, թէ «Նա որ պարտական է քեզ, եւ ի՛նչ է պարտական. զի նա տիմար զինեմոյ ոմն էր, անխելութեան տայր զինքն եւ յանխելս եղեալ՝ զերկիրն մեր ետ օսմանցուց: Բայց վասն պարտուցն, զոր պահանջէ ի մենջ թագաւոր ձեր, զայս ունիմ ասել ցթագաւորն ձեր, թէ շահն մեր ոչ էլ ընդդէմ ձեր ի պատերազմ. եւ դու ընդէ՞ր ելեր ի վերայ քաղաքին մերոյ եւ ի զուր զայնչափ ծախս արարեր եւ առեր զքաղաքն: Միթէ ոք կամէ՞ր զԿիլան յափշտակել, եւ դու թափեցեր զնա ի ձեռաց նորա վասն մեր: Է՞ր աղագաւ առեր զնա եւ պահեցեր ընդ քոյ իշխանութեամբ զայսքան ամս»: Չայսպիսի բանս խօսեցաւ Ղուլի խանն ընդ Սիմոն դեսպանին, եւ զօրացաւ բան նորա ի վերայ նորա:

Եւ յետ մետասան անուրց այլ ոմն մեծ դեսպան յերկրէն մօսկովաց եկն ի Շօշ հինգ հարիւր արամբ եւ այլ բազում սպասուք եւ շքով եւ էր նա մեծազգի եւ թագաւորին մօսկովաց ընտանի: Իբրեւ եղեւ նմա մտանել ի քաղաքն, արժանաւոր մեծարանօք ընկալեալ եղեւ: Եւ կարգեաց Ղուլի խանն տալ նմա զպէտս սեղանոյ, զնպարակս եւ զըմպելիս. եւ զգինին ըմպելի պատուական տային նմա ի Ջուղայոյ: Եւ յետ վեց անուրց եմուտ դեսպանն առ Ղուլի խանն եւ զհրովարտակն արքայի իւրոյ մատոյց նմա, եւ

խօսեցան ընդ միմեանս բազում շքով եւ պատուասիրութեամբ: Իբրեւ դարձաւ անտի ի դարպաս իւր, առաքեաց Ղուլի խանին ի ձեռն արանց իւրոց պատուաւորաց ընծայս, զմի պատուական հայելի եւ զժամացոյց մի յոսկոյ մեծագին: Ընդ որս յոյժ հաճեցաւ Ղուլի խանն եւ ընկալաւ զնոսա:

Այլ որպէս ի վեր անդր ասացաք, Ղուլի խանն զօրս պատրաստել էր գնալ ի վերայ Շրվանայ եւ Շամախու ի պատերազմ ընդդէմ Աղուանից: Ընդ իւր էառ զդեսպանսն եւ ուղղեցաւ գնալ յայն կողմ, եւ եկն եհաս ի Թաւրեզ: Չտեղի էառ անդէն աւուրս ինչ, եւ ահա եկն ի Մօսկովայ այլ դեսպան բարկութեամբ եւ սրտմտութեամբ ի թագաւորէն՝ ասել նմա, թէ «Ընդէ՞ր գերկոսին հրեշտակս իմ պահես առ քեզ եւ ոչ արձակես զնոսա բերել ինձ զպատասխանի»: Ապա Ղուլի խանն զՍիմոն դեսպանն արձակեաց եւ երկուց մնացելոցն պատասխանի արար ասել արքային իւրեանց, թէ «Ոչ եմք մեք պարտական տալոյ ինչ քեզ, զոր պահանջես. եւ եթէ պատերազմ առնել կամիս, պատրաստեալ եմք ի մարտ պատերազմի ելանել ընդդէմ քեզ. զայս գիտասջիր, զի ոչինչ տամք քեզէ:

Եւ արձակեալ զհրեշտակսն գնալ, չու արար ինքն զօրօքն հանդերձ, եւ եկն եհաս ի դաշտն Երեվանայ եւ անդ բանակեցաւ: Չի յայնժամ Երեվան էր ի ձեռն օսմանցոց: Ազդ եղել օսմանցոյն զալուստն Ղուլի խանին, այլ նա ոչ ել ընդդէմ նմա ի մարտ, այլ եկաց մնաց ի քաղաքի անդ եւ պահեր զբերդն: Ապա Ղուլի խանն յառաջ մղեալ զզօրսն՝ պաշարեաց զքաղաքն:

Իսկ օսմանցին ամենեւին ոչ ձեռնամուխ եղել պատերազմիլ եւ ոչ զդոք մի արձակել, այլ զխաղաղութեան նշան կանգնեալ՝ բանս առաքեաց առ նա՝ տալ նմա զքաղաքն: Յրաման ետ Ղուլի խանն, զի որք ի քաղաքի անդ տաճիկք էին, որք կամիցին մալ՝ մնացեն, եւ որք կամիցին երթալ՝ երթիցեն խաղաղութեամբ ուր եւ կամիցին: Եւ այնպէս արարին: Բայց զնոսա, որք մեցատուսք էին՝ կեղեքեաց. յոմանց զ50 թուման էառ, յոմանց 20, յոմանց 40 եւ յոմանց 10, ըստ գոյիցն իւրաքանչիւրոց: Սոյնպէս արար եւ քրիստոնէիցն, որք անդ գտան:

## Ի

Յետ այսորիկ ի մասնէ զօրաց իւրոց պահապանս եթող քաղաքին, եւ ինքն ել անտի գնալ ի վերայ Գանջայ: Եւ եհաս ի տեղի մի, որ այլազգեաց բարբառով Ղօրուղ անուանի, եւ է այն մերձ Արամուզայ եւ Արախուզայ, զի ունի ի մի կողմն իւր զԱրամուզ, եւ ի միւս կողմն՝ զԱրախուզ, ի տեղի մի, զոր յայլազգեաց բարբառս Գօգ-Զլիսա կոչեն: Եւ պատճառն այսպէս անուանելոյն այս է, զի անդ է եկեղեցի մի կապոյտ երանգով, ուր վաղնչական աւանդութեամբ պատմելոյն, առ ժամանակօք շահ Աբբասին բազում աղօթաւոր ճգնաւորք լեալ են: Եւ ի դիմելն շահ Աբբասին՝ գնալ երբեմն ի վերայ նոցա՝ երկիրն բոխեալ զջուր՝ յկապոյտ ծովակ մի արարեալ է առաջի երեսաց նորա, եւ յայսմանէ ոչ կարացեալ է յառաջ խաղալ եւ հասանիլ ի գիւղն յայն, եւ եկեղեցին այն Կապոյտ անուանեալ՝ ի միջի է մնացեալ ծովակին, եւ յամենայն կողմանց ի ծովակէ անտի շուրջ պատեցեալ: Եւ շահ Աբբասն յայն սակս դիմեալ է ի վերայ այն գեղջն գնալ, զի կարծեալ էր, թէ բնակիչք տեղւոյն իցեն ազգ անծանօթ, որք ոչ ունին զհնազանդութիւն տերութեան իւրոյ: Արդ իբրեւ այս նշանս եղեալ է, ըստ որում ի վաղնջուց այսպէս աւանդութեամբ պատմեն, զայս տեսեալ շահ Աբբասին՝ այնուհետեւ զզօրն յետս դարձուցեալ է ասելով, թէ «Տեսից միանգամ եւ գիտակից, թէ որպիսի ինչ հնարք է այս»: Ապա արձակեաց զարս ի տեղիսն որք շուրջ կան, եւ բերին ի քրիստոնէից զոմանս, եւ եհարց զնոսա, թէ «Ո՞րք, կամ յորմէ՞ ազգէ են, որք բնակին ի տեղիս յայս, յորում զայսպիսի հնարս կամ զարմանալիս տեսի»: Նոքա

պատասխանի ետուն նմա եւ ասէն, թէ «Սոքա քրիստոնէայ կրօնաւորք են, որք զգայգ եւ զցերեկ աղօթս առնեն եւ զճանապարհն Աստուծոյ խոկան»։ Ասէ շահ Աբբասն. «Եթէ դոքա աղօթաւորք են, ես ընդ դոսա ինչ ոչ ունիմ»։ Եւ յայնմիտէտ անուն տեղոյն կոչեցաւ Գոգ-Քլիսա, զոր շահ Աբբասն անուանեաց։ Իսկ տեղին, որ Արախուզ անուանի, այսպէս անուանեցեալ է ի խուզմանէ ոչխարաց, զորոց ասրն առեալ՝ կրօնաւորաց սքեմս առնեն։ Իսկ Արամուզն ի մզելոյ, այսինքն ի կթոյ ոչխարաց անուանեցեալ է։ Չայս ամենայն ականդեն բնակիչք տեղոյն։ Այլ մեք դարձցուք անդրէն ի կարգ բանիցն, զորս առաջի ունիմք պատմել։

Արդ, ի Ղօրուղ անուանեալ դաշտի անդ զօրքն Ղուլի խանին գերիվարս իւրեանց յարօսս տուեալ՝ թողին արածիլ զաւուրս 25, եւ ապա անտի գնացեալ հասին ի Գանջա քաղաք, զի ցայնժամ քաղաքն այն էր ի ձեռս օսմանցւոց եւ լի էր օսմանցով։ Ընդդէմ էին նմա օսմանցիքն, եւ եղէ պատերազմ սաստիկ զաւուրս երեսուն։ Եւ զհեղեղս արեան գնացուցեալ՝ ապա Էառ զԳանջա եւ ի սուր սուլերի սատակեաց զօսմանցին։ Մերձ նմա է գեղ մի, որ Քլիսա-քանթակ անուանիւր։ Բազումք յօսմանցւոց անտի փախուցեալ յերեսաց պատերազմին՝ ի տունս հայոց թագուցեալ կային։ Ազդ եղէ զօրացն Ղուլի խանին, գնացին գտին զնոսա եւ ի սուր սուլերի սատակեցին զամենեսին։

Ի Գանջայոյ ելեալ Ղուլի խանն գնաց ի վերայ Շամախու եւ Էառ գնա, նոյնպէս եւ զՇրուան։ Եւ յետ ամենայնի այսորիկ գնաց ի վերայ լակզի թաթարաց, որոց իշխանի անունն էր Յաճի Տաւուրթ բէկ։ Չսա եւս յաղթեաց եւ Էարկ երկրին հարկ եւ զբազում դրամս Էառ յերկրէն Լէկզու։ Եւ անտի խաղաց գնաց ի Վրաստան, ուր մեծամեծ իշխանքն եւ ազատորդիքն վրաց ընդ առաջ ելեալ՝ փառօք մեծաւ ընկալան գնա ի Մցխիթ քաղաքն։ Եւ նա զպատուական խիլայս զգեցոյց նոցա։ Չեւ եւս եկեալ էին ազատորդիքն Կախեթոյ, կոչեաց զնոսա, եւ նոքա եկին յողջոյն նորա։ Եւ զնոսա եւս առաւել խիլայիւք պատուասիրեաց՝ զլօղիկս ազնիւս եւ զձիս նժոյգս պարգեւելով նոցա. զի սոքա առաւել հզօրք էին եւ ոչ էին նուաճեցեալք ընդ բռամք պարսից եւ ոչ երկնչէին ի Ղուլի խանէն։

Եւ եղէ ետ այսպիսի պատուասիրութեանցս՝ յաւուր միում խոսեցաւ ընդ գլխաւորին ազատացս այսոցիկ, որոյ անունն է Չօհրաք, եւ ինդրեաց զդուստր նորա յիւր կնութիւն։ Պատասխանի ետ Չօհրաքն եւ ասէ. «Յոյժ բարի է ինդիրն տեառն իմոյ, եւ ես ինձէն յօժարութեամբ ընծայեցից գնա քեզ, եւ արասցես զիս իշխան երկրիս»։ Յանձն Էառ Ղուլի խանն առնել զան իշխան ըստ հայցուածոյ նորա։ Բայց քանզի կասկածէր, թէ նա ի գիշերի միում եւ ոչ տայ ինքեան զդուստր իւր, զի քրիստոնէայ էր Չօհրաքն, որպէս եւ ամենայն ազգն վրաց, նմին իրի ծածուկ պատուիրանաւ պահապանս կացուցեալ էր զգուշանալ, զի մի՛ փախիցէ։ Եւ յետ աւուրց ինչ կոչեաց Ղուլի խանն զՉօհրաքն եւ ասէ. «Ես ինդրեցի ի քէն առնել զքան մի, եւ դու խոստացար ինձ առնել. եւ արդ, որպէ՛ս արարեր»։ Պատասխանի ետ Չօհրաքն եւ ասէ. «Բարի է հրաման քո, ապա արձակեա զիս երթալ կատարել զհրաման քո եւ բերել քեզ զօրհորդն»։ Ասէ Ղուլի խանն. «Գիրս առաքեա՛ ի տուն քո եւ պատուիրեա՛, զի բերցեն»։ Պատասխանի ետ Չօհրաքն եւ ասէ. «Այսպէս արարից, որպէս եւ հրամայեցեր»։ Ապա գրեաց Չօհրաքն զարձակագիր մի՛ առաքել զդուստրն իւր ընդ մօր նորա ի Մցխիթ, զի Ղուլի խանին հարսնացի։ Եւ զայլ գիր մի ծածուկ գրեաց, թէ «Այսպէս ծանիցեն քրիստոնէայքն երկրին իմոյ, զի այրս այս կալեալ է զիս եւ բռնադատե տալ ինքեան զդուստր իմ ի կնութիւն. մի՛ առաքեսցեն զդուստր իմ՝ տալ անօրինիս այսմիկէ։

Իբրեւ տեսին զբան երկրորդ հրովարտակին մարդիկ երկրին, մանաւանդ մեծամեծքն, ի նախանձ բարկութեան բրդեցան, ի մարտ պատրաստեցան ընդդէմ անօրինին յարձակիլ, զանձիս իւրեանց դնել եւ ոչ կատարել զցանկութիւն անհաւատին: Եւ զպատգամաւորսն ունայն յետս դարձուցին: Եկին պատգամաւորքն առ Ղուլի խանն եւ ասէն, թէ «Ոչ ետուն զաղջիկն մարդիկ երկրին եւ զմեզ սրով սպանանել կամէին, եւ մեք մագապուրծ գերծեալ փախեաք»: Յայնժամ բարկացաւ սրտմտութեամբ Ղուլի խանն ի վերայ Չօհրապին եւ ասէ. «Չի՞նչ է այս, զոր դու արարեր ինձ, զիա՞րդ ոչ գրեցեր առ նոսա զգործունեայ բանս յղելոյ զաղջիկն, եւ նոքա ոչ յղեցին: Եւ ահա մահու մեռանելոց ես դու ի ձեռաց իմոց»: Յառաջ մատեաւ Չօհրապն եւ ասէ. «Եւ վասն այնորիկ ասացի տեառն իմում, թէ զիս կարգեա՛ր իշխան երկրին, զի նոքա ոչ են ինձ հնազանդ, որպէսզի ամենեքեան հնազանդեսցին ինձ քոյին հրամանաւդ, եւ նուաճեցից զնոսա ի քում տերութեանդ հնազանդութիւն, եւ դու ոչ արարեր. եւ ես զի՞նչ ունիմ նոցա առնել»: Յայնժամ Ղուլի խանն հաստատեաց զիշխանութիւն նորա ի վերայ երկրի նորա, եւ հրովարտակս տուեալ նմա՝ առաքեաց զնա յերկիր իւր երթալ, զամենեսեան հնազանդեցուցանել իշխանութեան Ղուլի խանին:

Էառ Չօհրապն զհրովարտակն կնքեալ կնքով Ղուլի խանի եւ զերկուս յարանց պատուաւորաց Ղուլի խանին՝ զնաց յերկիր իւր: Եւ եղել ի հասանիլն նորա անդ՝ ժողովեցան առ նա մեծամեծք երկրին եւ զգիրն ընթերցան, յորում գրեալ էր Ղուլի խանն, թէ «Չսա ի վերայ ձեր իշխան կարգեցի»: Ի բարկութիւն բրդեցան իշխանքն եւ խորհուրդ արարեալ ի մէջ իւրեանց՝ զմիւսն յերկուց անտի, որք ի Ղուլի խանէն ընդ Չօհրապին եկեալ էին՝ սպանին, եւ զմիւսն առաքեցին առ նա պատմել նմա որ ինչ եղելն, զի այլ մի եւս վստահեսցի իշխել ի վերայ իւրեանց: Եկն եհաս զերծեալ այրն առ Ղուլի խանն եւ պատմեաց նմա զամենայն որ ինչ եղել, եւ յաւել ասել նմա, թէ՛ «Եւ Չօհրապն, զոր դու իշխան կացուցեր երկրին, ապստամբեալ ի քէն՝ չէ քեզ հնազանդ, եւ նա ետ զընկերն իմ սպանանել»: Իբրեւ լւաւ Ղուլի խանն զբանս զայս, բարկացաւ յոյժ եւ առեալ զգօրս իւր՝ զնաց պատերազմիլ ընդ նոսա, բայց ոչ կարաց զվրէժ իւր ի նոցանէ առնուլ, այլ ի պարտութիւն մատնեալ ի փախուստ դարձաւ, եւ եկն եմուտ ի Սցիսիթ եւ այլ ոչ եւս յաւել պատերազմիլ ընդ նոսա եւ անտի ելեալ եկն յերեվան:

## ԻԱ

Յետ գումարելոյն օսմանցւոց ի վերայ տեառն իւրեանց սուլտան Ահմետին եւ իջուցանելոյ զնայ աթոռոյն՝ իբրեւ նստաւ սուլտան Մահմուտն ի տեղի նորա, զԶեօբուրլի օղլի Աբդուլլա փաշայն զօրավար կացոյց եւ առաքեաց զնա երեք հարիւր հազար զօրօք՝ երթալ ի Պարսս, եւ եկն եհաս նա ի Կարս: Ազդ եղել Ղուլի խանին դիմելն նորա յաշխարհն Պարսից. զօրաժողով եղել, եւ էր պատրաստութիւն նորա յիսուն եւ երեք հազար զրահաւոր ձիաւորաց, եւ երկոտասան հազար հետեւակաց, եւ լցեալ էր բանակ նորա յերեվանայ մինչեւ յէջմիածին: Եւ ետ ամենայնի պատրաստութեան՝ ել անտի զնալ ընդդէմ օսմանցւոց եւ եկն ի Թալիշ: Եւ ի Թալիշու ելեալ ի ճանապարհ՝ եկն ի տեղի մի Մաղարա անուանեալ, որ մերձ է ի դաշտն յԱրփաչայ անուանեալ՝ յանուանէ Առփայչայ գետոյն՝ որ անդ է: Եւ տաներ ընդ իւր զ28 հազար ձի ասպաստանիկ ի պատրաստութիւն եւ ի զգուշութիւն, զի ի պակասիլ երիվարաց զօրուն՝ անտի առնուլ մարթասցին: Երկրորդ պատճառն այսպիսի ձիոյ պատրաստութեան էր այս, զի զերից աւուրց ճանապարհն միանգամայն ի միում զիշերի առնէր նա, եւ զհինգ կամ զչորս աւուրց ճանապարհն ի միում աւուր կատարեր. եւ այնպէս շտապով տազնապաւ մղէր զգօրսն, զի լիցի նմա յանկարծակի յեղակարծիւ հասանիլ ի վերայ հակառակամարտիցն իւր, եւ անպատրաստ գտեալ զնոսա՝ խռով արկանել ի վերայ նոցա եւ տկար առնել: Արդ, յայսպիսի շտապն ընթացից հարկ լինէր



բազմաց երիվարաց պայթիլ, եւ նա յապաստանեացն փոխանակեալ՝ նուագութիւն երիվարաց ոչ լինէր: Ապա ելեալ ի Մաղարոյ եւ անցեալ զգտն Արփա-չայ՝ զնաց ի տեղի մի Սուբատան անուանեալ, եւ անդ բանակեցաւ եւ այլ ոչ առաջ խաղաց:

Ազդ եղեւ օսմանցն զալուստ Ղուլի խանին, եւ փութացաւ շուրջ զախոյանն կազմել եւ զգօրսն յախոյան անդ մուծեալ՝ ճակատեցոյց, եւ ոչ մղեաց յառաջ խաղալ վերայ պարսից: Խօսիլ սկսաւ Ղուլի խանն ընդ զօրավարս եւ ասէ. «Լուարո՛ւք ինձ, քաջ զօրականք իմ, եթէ զօրն օսմանցն ելցէ արտաքս յախոյանէ անտի, գիտասջիք, զի Աստուած մե՛զ տուեալ է յաղթութիւնն. իսկ եթէ ոչ ելցէ յախոյանէ անտի, Աստուած նոցա՛ է պատրաստեալ յաղթութիւնն: Եւ արդ, այժմ մեք զառաջինն դիմեսցուք ի վերայ նոցա. եւ յորժամ նոքա միանգամայն զիրազէս հեղուն ի վերայ մեր, մեք յետս դարձցուք, որպէսզի նոքա համարիցեն զմեզ փախչիլ յերեսաց նոցա եւ ելցեն յախոյանէ անտի՝ պնտիլ զկնի մեր: Եւ յորժամ ելանեն, նոյնժամայն դարձցուք հարկանել զնոսա, զի այնուհետեւ նոքա զախոյանն եւ զկարգաւորութիւնն ի բաց թողեալ՝ տկարանան, եւ ցրուեալ ի փախուստ դառնան»: Չայս ասաց Ղուլի խանն եւ անդէն վաղվաղակի յարձակեցաւ ի վերայ ճակատուն մեծաւ տազնապաւ:

Իբրեւ առաջին հարկանումն եղեւ նոցա առ միմեանս, յետս դարձոյց Ղուլի խանն զգօրս իւր յերեսաց օսմանցն, եւ զնացին իբրեւ զժամու միոյ ճանապարհ, եւ եցոյց նոցա՝ իբր թէ ի փախուստ դարձաւ: Չայն տեսեալ օսմանցն՝ ամենայն մարտիկքն նոցա ելեալ յախոյանէ անտի՝ դիմեցին ի վերայ զօրուն պարսից, զի համարեցան թէ նոքա զանգիտեալք ի փախուստ դարձան: Եւ էր զօրն օսմանցն այնչափ, մինչեւ աչաց մարդկան ոչ զօրել եզերչօք պարփակել ի տափարակ դաշտի՝ հայեցեալ ի բարձանց, զի զամենայն բլուրս եւ զծորս, զլէրինս եւ յարս տեղոյն մարտի լցեալ էր բազմութիւն զօրացն օսանցն եւ անդր քան զնոսա երկրածիգ սփռեալ, որք ի խաղալն իւրեանց իբրեւ զորդունս յերեսս երկրի եռային: Արդ, իբրեւ այն ինչ եղեւ բաւականս համարել ելանելոյ եւ մեկնելոյ նոցա յախոյանէ անտի՝ դարձաւ Ղուլի խանն յետս զօրօքն հանդերձ՝ ճակատիլ ընդդէմ պնտելոցն զկնի իւր: Եւ խառնեցան ի միմեանս երկոքին ճակատքն, եւ սկսան կոտորել զմիմեանս: Եւ ծածկեցին զդաշտն եւ զամենայն ճանապարհն դիակամբք անկելոց. եւ տոգորեցաւ ամենայն հողն արեամբ պատերազմօղ զօրաց: Եւ անդ էր ոչ քար, եւ ոչ հող տեսանել, այլ զմարմինս անկելոց, առաթուց կոխելոց երիվարաց եւ հետեւակաց: Ի պարտութիւն մատնեցաւ զօրն օսմանցն, յաղթական եղեւ Ղուլի խանն ի վերայ նոցա, եւ պնտեալ զկնի փախուցելոցն՝ եհար զնոսա մինչեւ ի Մժնկերտ եւ մինչեւ ի Յասան Ղալայ: Եւ կալան զԱբդուլլա փաշայն կենդանի եւ ածին առաջի Ղուլի խանին, եւ սպան զնա եւ հրաման ետ թաղել զնա, եւ ի վերայ նորա շինել յարկս ի ծածկոյթ բռեալս կրով, զի երեւելի լիցի շիրիմ նորա ի պարծանս իւր: Եւ առին ի բանակէ անկելոցն զաւար բազում:

Յետ այսորիկ Ղուլի խանն յառաջ խաղացեալ զօրօքն հանդերձ՝ եկն մինչեւ ի սահմանս Վանայ: Եւ ի գաւառի անդ, ուր ամենայն գիւղօրէքն են ազգիս հայոց ընդ իշխանութեամբ օսմանցն, ասպատակեցին: Եւ զբիրաւոր մանկունս, զկանայս եւ զերիտասարդս գերեալ առաքեաց ի հորասան պարսից:

Ապա դարձ արարեալ անտի՝ եկն յաշխարհն Պարսից, բայց ոչ կամեցաւ զնալ մտանել ի Շօշ, այլ հասեալ ի տեղի մի Տամդան կոչեցեալ՝ անդ բանակեցաւ: Եւ առաքեալ կոչեաց զամենայն իշխանս եւ մեծամեծս պարսից, եւ ամենեքեան եկին: Ապա ի հանդէս ժողովեալ զնոսա՝ խօսիլ սկսաւ ընդ նոսա եւ ասէ. «Գիտե՞ք արդեօք, թէ վասն էր կոչեցի զձեզ: Ահա այս քանի՜ ամ է, զի ես վասն ձեր սուսեր առեալ՝ մինչեւ ցայսօր զթշնամիս ձեր՝ զաղուանն, զօսմանցին եւ զմօսկովն ի բաց հալածեցի յերկրես, եւ

զամենայն քաղաքս թագաւորութեանս պարսկականի թափեցի ի ձեռաց Լոցա, եւ այժմ վճարեալ զամենայն՝ դարձայ եկի աստ: Եւ անդ, յետ Լուաճելոյ իմոյ զամենայն թշնամիս եւ ի յաներկեւան խաղաղութիւն հաստատելոյ՝ պարտ է ձեզ զթագաւոր Լստուցանել: Եւ իշխանքն յուշ եղեալ բանիցն՝ լռիկ կային, մինչեւ Լա զբանս զայս երիցս կրկնեաց: Ապա երկու ոմանք ի մեծամեծ իշխանացն պատասխանի տուեալ ասեն. «Բարուք ասացեր, տէ՛ր մեր. եթէ կամք են տեառնդ, զշահ Թամազն բեր, Լստո՛յ յաթոռ իւր, եւ լիցի թագաւորն մեր»: Ընդ որ բարկացեալ Ղուլի խանն՝ հրաման ետ վաղվաղակի զնոսա սպանանել, սպանին զնոսա: Դարձեալ կրկնեաց Լա զառաջին բանն եւ ասէ, թէ «Դուք զի՛նչ ասեք վասն բանիս այսորիկ»: Եւ Լոցա ամենեցուն զահի հարեալ պատասխանի ետուն Լմա ի մի բերան եւ ասեն երիցս անգամ. «Դո՛ւ ես թագաւոր մեր»: Ապա ասէ Ղուլի խանն. «Եթէ ճշմարտութեամբ զիս թագաւորեցուցանել կամիք, տուք ինձ զձեռագիր»: Եւ Լոքա ամենեքեան առ հասարակ գրեցին զհրովարտակ եւ կնքեցին, թէ «Դուլի խանն է մեր թագաւոր, եւ բաց ի Լմանէ չիք մեր այլ թագաւոր»: Եւ ետուն զհրովարտակն ի ձեռս Լորա եւ արարին Լմա Լաւակատիս թագաւորի աւուրս բազումս եւ թագաւորեցուցին զնա: Եւ յետ վճարելոյ ամենայնի այսորիկ՝ առաքեաց Լա հրեշտակս առ սուլտանն օսմանցւոց Մահմուտն, եւ ինդրեաց զամենայն գերեալսն յերկրէն Պարսից յետս դարձուցանել: Ընկալաւ սուլտանն զհրեշտակն բազում պատուասիրութեամբ, եւ հրաման ետ ժողովել յիրաքանչիւր գաւառաց զգերեալսն յերկրէն Պարսից եւ ազատ արձակեալ զնոսա իւրաքանչիւր յերկիր իւրեանց: Եւ որչա՛փ հնար եղել, յետս դարձուցան գերիքն, եւ հաստատեցաւ դաշն խաղաղութեան ի մէջ պարսից եւ օսմանցւոց: